ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐ ԱԶԳԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՒԱԶԴ ԱՒԱԳԵԱՆ

Մարալ Անի Աւագեան
Ծնուել է 10 Յունիսի, 1957թ.
Մահացել է 6 Մայիսի, 2006թ.

Գիրքը նուիրւում է
Մարալ Անի Աւագեանի
յիշատակին, որը մահացաւ
2006թ.-ի մայիսի 6-ին

ՀՏԴ 323 (479.25) : 342.5 (479.25)
ԳՄԴ 66.3(2Հ) + 67.99(2Հ)
Ա 770

Ա 770 Աւագեան Արտաւազդ
Հայաստանը իր ազգի եւ պետականութեան պաշտպան.- Եր.: «ՆԱԽԻՋԵՒԱՆ» հրատարակչութիւն, 2006.- 175 էջ:

Ա $\frac{0803010413}{0140(01)2006}$ 2006թ. ԳՄԴ 66.3(2Հ) + 67.99(2Հ)

ISBN 99941-978-1-9

©«Նախիջեւան» հրատ., 2006թ.
©Ա.Աւագեան

9(47.925)
Ա-77

Արտաւազդ Աւագեան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐ ԱԶԳԻ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆ

3914

ՆԱԽԻՋԵՒԱՆ
հրատարակչութիւն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 13 ՏԱՐԻ ---------- 6

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ---------- 14

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԴԱՒԱՃԱՆՆԵՐՆ ԻՐ ԻՍԿ ՄԷՋ ---------- 19

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՉԷ ---------- 23

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԱՂՔԱՏԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ---------- 28

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ ---------- 33

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ---------- 36

ԶԳՈՒՇԱՑԻ՛Ր ՀԱՅԱՍՏԱՆ, ԳԱՆԱՉԻՐ ՔՈ «ՄԷԿԱՇԽԱՐ-
ՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ» ---------- 43

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԳԱՆԱՉՈՒՄԸ ---------- 46

ՄՈՒԹ ՈՒԺԵՐ ---------- 49

ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ ---------- 55

ՄԱՍՈՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՅՏ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ---------- 57

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿԱՏԱՂԻ ԳՐՈՀ
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ ---------- 62

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ---------- 67

ՕՐԷՆՔԸ ---------- 69

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ---------- 82

ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ---------- 95

ԵՒՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ---------- 118

ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ---------- 124

ԱՄԷՆ ՈՔ ՊԷՏՔ Է ԻՄԱՆԱՅ ԱՐՏԱՔԻՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ ---------- 147

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ---------- 159

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԾԳՆԱԺԱՄԸ ---------- 165

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ---------- 166

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ ---------- 172

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 13 ՏԱՐԻ

Ես նոր եմ վերադարձել դէպի Հայաստան կատարած երեքշաբաթեայ այցելութիւնից, որի նպատակն էր աւելի խորութեամբ տեղեկանալ ազգի քաղաքական եւ սոցիալական վիճակի մասին: Ես հարցրեցի Հայաստան մի քանի անգամ այցելածներին, թէ արդեօք առաջընթաց կայ երկրում, եւ ընդհանուր պատասխանն այն էր, որ բազմաթիւ փոփոխութիւններ են եղել նախորդ այցերից յետոյ: Ես նոյնպէս նկատեցի փոփոխութիւններ 1997 թուի իմ նախորդ այցի նկատմամբ: Զգացւում էր բաւական մեծ ակտիւութիւն ներքին ենթահամակարգերի, ճանապարհների, ստորգետնեայ խողովակների անցկացման, շինութիւնների վերանորոգման գործընթացում՝ շնորհիւ Քըրք Քրքորեանի բարեգործութեան (Աստուած նրան օրհնի): Ինչպէս նաեւ կառուցուել են բաւական շատ բարձրորակ ճաշակով ռեստորաններ: Հնարաւոր է գնումներ կատարել փոքր անհատական խանութներից կամ մեծ բարձրակարգ խանութներից, որտեղ վաճառւում են աշխարհի մթերքները:

Սակայն այնտեղ դեռեւս կային մուրացկաններ, որոնք անընդհատ մեզնից փող էին ուզում, երբ մենք քայլում էինք փողոցով: Մի երեկոյ մեր տան զանգը տուեց մի կին եւ խնդրեց դրամ՝ իր երեխաներին կերակրելու համար: Մենք այցելեցինք մի ընտանիք, որը բնակւում էր Երեւանի ծայրամասում գտնուող Թափառաշրջիկների փողոցում, որտեղ էին տեղափոխուել Գիւմրիի աղէտալի երկրաշարժից յետոյ: Նրանք կարողացել էին ձեռք բերել միայն առաջին յարկում գտնուող մի երկու սենեականոց բնակարան՝ նրանց հինգ հոգու համար: Նրանց բաղնիքը գտնւում էր տնից դուրս եւ չունէր լուացարան եւ ցնցուղ: Իրենց Գիւմրիի տան հողում այժմ կառուցուել է նոր շէնք, եւ տեղի իշխանութիւնները չեն կամենում նրանց փոխհատուցում տալ իրենց հողի դիմաց՝ չնայած նրանց դիմումներին: Այլ խօսքերով նրանց սեփականութիւնը յափշտակուել է նրանցից:

Ճանապարհին մենք տեսանք նորակառոյց տներ, որոնք կարող են մրցակցել ԱՄՆ-ում մէկ միլիոն դոլլարանոց տների հետ: Այնտեղ փաստօրէն գոյութիւն չունի միջին դաս, որը հանդիսանում է ցանկացած ազգային ուժի հիմքը: Հայաստանում պաշտօնապէս աղքատութիւնը գնահատւում է 45 տոկոս:

Գոյութիւն ունի նաեւ ճանապարհային երթեւեկութեան վայրիութեան, քաոսայնութեան ու անօրինականութեան աւելացում: Անցորդները չունեն անվտանգութեան ոչ մի երաշխիք: Ես անձամբ ականատես եղայ մի պատահարի, երբ մեր տակսին կանգնած էր խաչմէրուկում եւ մի աղջիկ փորձեց անցնել միւս մայթը, արագ սլացող մի մեքենայ նրա դիմաց դուրս եկաւ եւ չհասցնելով արգելակել՝ հարուածեց աղջկան, որի հետեւանքով աղջիկը կոտրեց ձեռքը: Վարորդը տուժածին իր մեքենայով տարաւ դէպի հիւանդանոց:

Փաստօրէն չկայ ճանապարհային երթեւեկութեան ոչ մի օրէնք: Միակ օրէնքը, որը կարելի է նկատել, ոստիկաններն են՝ իրենց մեքենաների մօտ կանգնած, որոնք կանգնեցնում են ուղեգիծը փոխած վարորդներին իրենց ազդանշանային դրօշակներով եւ տուգանում: Բազմաթիւ հնամաշ տակսիները մեծ արագութիւններով սլանում են այլ փոխադրամիջոցների մէջտեղով եւ ձեր հոգին ձեր բերանը կը հասնի, մինչեւ ձեզ տեղ կը հասցնեն:

Փոփոխութիւններ են նկատւում նաեւ հեռուստահեռարձակման բնագաւառում: Կան 29 հեռուստատեսային ալիքներ, որոնցից 19-ը հեռարձակում են սեռական բնոյթի ու բռնութիւններ պարունակող հաղորդումներ: Ամերիկեան CNN հեռուստատեսութեան հիմքի վրայ լիցենզաւորուել են երկու հեռուստատեսութիւններ, որոնք ցուցադրում են նոյն ծրագիրը: Մօտ մէկ տարի առաջ ՀՀ կառավարութիւնը չեղեալ համարեց հայկական որակեալ անկախ հեռուստատեսութեան՝ Ա1+ ի հեռարձակման իրաւունքը եւ դրա փոխարէն եթերի թոյլատուութիւն տուեց Շարմ հեռուստատեսութեանը, որը հեռարձակում է անորակ, անիմաստ հաղորդումներ: Ոչ մի հեռուստաալիք չի ցուցադրում դասական երաժշտութիւն, որով հարուստ է Հայաստանը: Հայաստանի կառավարութեան այդ գործողութիւնը խօսքի ազատութեան սահմանափակում էր՝ ենթադրեալ ազատ ժողովրդի հանդէպ: Եթէ կառավարութիւնները խրախուսեն խօսքի ազատութիւնը, ապա ազգերը կը ծաղկեն ու կը բարգաւաճեն: Իսկ եթէ կառավարութիւնը ճզմում է ազատ խօսքը, ապա դա բռնապետութիւն է: Երբ կառավարութիւնը անտեսում է իր երկրի հասարակութեան մէջ ներմուծուած ան-

բարոյականութիւնը, ապա հէնց ինքն էլ վարակուած է դրանով:

Մի երեկոյ հեռուստացոյց դիտելիս տեսայ, թէ ինչպէս են հայ մայրերն ու հայրերը խնդրում կառավարութիւնից չփակել իրենց դպրոցները, որպէսզի իրենց երեխաները ստիպուած չլինեն երկար ճանապարհ անցնել այլ թաղամասում դպրոց գնալու համար: Նրանք չգիտէին սակայն, որ Համաշխարհային բանկի՝ փոխառութիւն տալիս հիմնական պահանջը դպրոցների քանակի կրճատումն ու ուսումնական ծրագրի վերանայումն է: Նոր ուսումնական ծրագիրը զուրկ պիտի լինի երեխաների մէջ հայրենասիրութիւն ներարկելու յատկութիւնից: Այլ նրանք կը դաստիարակուեն որպէս աշխարհի երեխաներ: Նրանց թիրախը հայրենասիրութիւնն է, քանի որ նրանք գիտեն, որ հնարաւոր չէ ապականել հայրենասէր ժողովրդին: Միաժամանակ Հայաստանի կառավարութիւնը թոյլ է տալիս ոչ հայ օտարերկրացիներին որդեգրել այն երեխաներին, որոնց ծնողները, չկարողանալով կերակրել նրանց, յանձնել են մանկատներին: Անտեսւում է նաեւ տղաների ու աղջիկների վաճառքը: Ոչ մի քայլ չի իրականացւում պաշտպանելու այն աղջիկներին, որոնց խոստանում են արտասահմանում աշխատատեղեր, այդ թւում նաեւ Թուրքիայում, սակայն նրանց դարձնում են անառակներ:

Երեւանի փողոցներում մենք տեսնում էինք պարապ մարդկանց փոքր խմբեր, իսկ մեծ փողոցներում, ինչպէս օրինակ Տիգրան Մեծ եւ Հանրապետութեան փողոցներում, հարիւրաւոր մարդիկ անգործ կանգնած սպասում են, թէ երբ ինչ-որ մէկը նրանց գործ կ'առաջարկի: Ես նրանցից բազմիցս լսեցի «մենք աւելի լաւ էինք ապրում կոմունիստների ժամանակ» արտայայտութիւնը: Դա ազատութեան օգտին չի խօսում: Որքան էլ որ տնտեսութեան զարգացման միտումը յատկանշական չէ կառավարութեանը, բնակչութիւնը ցանկութիւն եւ հնարամտութիւն ունի միջոցներ հայթայթելու համար: Կառավարութիւնը հարստութիւն չի ստեղծում, բայց մարդիկ ստեղծում են: Կառավարութիւնը հայ երիտասարդներին պէտք է սովորելու ուղարկի Աւստրիական տնտեսութեան ֆօն Մայսի դպրոցը, որը ուսուցանւում է Աուբբրնի համալսարանում (Ալաբամայ նահանգում): Դրա փոխարէն կառավարութիւնը երիտասարդներին ուղարկում է սովորելու Մասաչուսէթ

նահանգի Բոսթոնի Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի դիւանագիտական դպրոցում, որտեղ սովորեցւում է մէկ-աշխարհական(գլոբալիստական) գաղափարներ՝ ազգայինի փոխարէն եւ կատարւում է ուղեղի լուացում: Պէտք է ջանքեր ներդրուեն Երեւանի պետական համալսարանի դիւանագիտական դպրոցի զարգացման համար, որտեղ պէտք է ուսուցանուի Համաշխարհային դիւանագիտութիւն՝ ներառելով իր մէջ նաեւ հայկական ազգային գաղափարախօսութիւնը եւ գեներալ Գարեգին Նժդեհի (որը 1920թ.-ին պաշտպանեց Զանգեզուրը՝ ներկայիս հարաւային Հայաստանը) փիլիսոփայութիւնը: Բացի այդ կառավարութեան անդամները պէտք է իմանան Ադամ Սմիթին, որը շոտլանդացի քաղաքական տնտեսագէտ ու փիլիսոփայ էր եւ 1776թ.-ին նրա սկզբունքները Ամերիկայի հիմնադիրները հիմք ընդունեցին Ամերիկայի Հանրապետութիւնը հիմքերը ստեղծելու համար: Հայաստանի քաղաքական կուսակցութիւններին օգտակար կը լինի Ադամ Սմիթի «Ազգային հարստութիւն» գիրքը ուսումնասիրելը: Ոմանք գոռում-գոչում են Թուրքիայի հետ սահմանը բացելու օգտին՝ երկրի տնտեսութիւնը բարելաւելու համար: Սակայն նրանք չգիտեն, որ ներկայումս Հայաստանում գոյութիւն ունեցող տնտեսութիւնը կը յեղեղուի Թուրքիայի հսկայական տնտեսութեամբ: Դա կը լինէր Թուրքիայից կախուածութեան մէջ մտնելու հրաւէրք: Տխուր է, որ հայուրամեակների ընթացքում թուրքերի ու նրանց դաշնակիցների կողմից հայերի հանդէպ ատելութիւնը չի ճանաչուել ու հաստատուել հայերի մտածելակերպում:

Ես բազմիցս գրել եմ, որ Հայաստանի ապագայ տնտեսական կայունացմանն ուղղուած ամենակարեւոր քայլը, որ պէտք է անի կառավարութիւնը, դա արտաքին ներդնողներին վաճառուած ոսկու հանքերի ետգնումն է: Տասնամեայ ետգնման բանակցութիւններ պէտք է վարուեն դրանց ներկայ սեփականատէրերի հետ, որից յետոյ ցանկացած եւ ամբողջ հանածոյ ոսկին պէտք է պահանուի նորակառոյց ստորգետնեայ պահեստարաններում՝ բանակի հսկողութեան ներքոյ: Տնտեսական ճգնաժամի դէպքում հայկական դրամը կը պաշտպանուի ոսկու տոկոսների միջոցով:

Ես Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հետ տեսակցութիւն ունեի ժամը 3-ին եւ ստիպուած եղայ սպասել մէ-

կուկէս ժամ, եւ երբ վերջապէս նրա գրասենեակից դուրս եկան երեք կանայք, ինձ ասացին, որ դրանք մարդու իրաւունքների պաշտպաններ էին: Դա լաւ օրինակ է այն բանի, որ ՄԱԿ-ի միջոցով Հայաստան են ներթափանցում կանանց իրաւունքների պաշտպանութեան պահանջները, որոնք ենթադրում են աբորտի իրաւունքի տարածում եւ ընտանիքի կազմի կարգաւորում:

Ես հանդիպում ունեցայ նաեւ Ազգային ժողովի գործունեայ պատգամաւորներից մէկի՝ Զանգեզուրի տարածքից ընտրուած պարոն Սերժ Մկրտչեանի հետ: Նա յիրաւի անկեղծ հայրենասէր էր: Ցաւօք սրտի, ՀՀ Ազգային Ժողովի 131 պատգամաւորների մեծամասնութիւնը տարուած են անձնական շահերով, որը նրանց խանգարում է քուէարկելու համազգային շահեր հետապնդող օրինագծեր:

Ես նաեւ աւելի քան մէկ ժամ զրուցեցի Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի հետ, որը այդ ժամանակ Երեւանում էր: Նա շատ տպաւորիչ անհատականութիւն էր: Այստեղ տարածուած է այն ասեկոսը, թէ իբր պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը յունիսի 17-ին Մոնտէ Կառլոյի կազինոներից մէկում տարուել է հսկայական փողեր: ՀՀ մաքսատան պետ Արմէն Աւետիսեանը, որը վարում է 100 հազար դոլլարի արժողութեան մեքենայ, պաշտպանութեան նախարարին օժանդակութեան կարգով հսկայական դրամներ է ուղարկել կառավարական ֆոնդից: Այժմ նախարարը Բելոռուսում է, ուր քննարկում է մի շարք պետական նշանակութիւն ունեցող ռազմական հարցեր:

Հայաստանի կառավարութիւնը կարծում է, թէ միանալով այնպիսի միջազգային կազմակերպութիւնների, ինչպիսիք են Եւրամիութիւնը, Եւրոպայի Խորհուրդը, Առեւտրի միջազգային հիմնադրամը եւ այլն, ձեռք կը բերի ընկերոջ կարգավիճակ: Այնինչ այսպիսով վերոյիշեալ կազմակերպութիւններին իրաւունք է տրուում միջամտել երկրի ներքին գործերին: Նրանք թելադրում են երկրի կառավարման սկզբունքները: Հայաստանը վերածուել է փորձադաշտի տարբեր միջազգային ծրագրերի եւ քաղաքականութեան համար՝ քաղաքականութիւն, որից շատ պետութիւններ ուղղակի հրաժարուել են: Հայաստանի այժմեան ղեկավարութիւնը բացարձակապէս չի տիրապետում կառավարման համար առաջնային նշանակութիւն ունեցող գործօնի, որն է պատմական փորձը:

Գոյութիւն ունեն ուժեր, որոնք ձգտում են վերացնել Հայաստանը որպէս պետութիւն: Նրանց շօշափուկներն արդէն ներթափանցել են ազգի մէջ՝ իրենց կաշառակեր դրամաշնորհներով եւ ազգային մշակոյթի այլասերմամբ: Հայաստանի արտաքին գերատեսչութիւնը խաղում է այս ուժերի հաստատած կանոններով, միամտօրէն կարծելով, թէ քաղցր խօսելու դէպքում մենք ընդունուած կը լինենք աշխարհում: Իրականութիւնը ճիշտ հակառակն է. երբ վճռականօրէն պաշտպանում ես ազգդ, յարգանք ես ձեռք բերում, անկախ նրանից, թէ ինչքան փոքր է ազգդ: Երբ համբուրում են նրանց ոտքերը, ի պատասխան նրանք բացի պարզ արհամարհանքից, ոչինչ չունեն անելու:

Արմէնպրեսսի 2003թ.-ի հոկտեմբերի 23-ի նորութիւններից մէկում ասւում է. «Համաշխարհային Բանկի ներկայացուցիչները ժամանել են Հայաստան՝ կառավարութեան հետ քննարկելու երկրում առաջիկայ 4-6 տարում բարեփոխումները շարունակելու օժանդակութեան համար», այնինչ «բարեփոխում» բառի տակ պէտք է հասկանալ նրանց կողմից պարտադրուած պայմաններ:ՀՀ Աժ նախագահ Արթուր Բաղդասարեանը շեշտեց, որ Համաշխարհային բանկի Հայաստանի օգնութիւնը հիմնականում ուղղուած է լինելու կրթութեան եւ առողջապահութեան ոլորտներին: Ըստ երեւոյթին նա պէտք է իմանայ, որ Համաշխարհային բանկը ծրագրել է կառավարել, ապա վերացնել ազգութիւնները:

Ազգային ինքնակառավարման գերազանց օրինակ է Բելոռուսը: 1994 թ.-ին ընտրուած նախագահ Լուկաշենկոն մօտ 10 տարի հակագլոբալիստական պայքարի փայլուն օրինակ է : Նա յայտնի է Համաշխարհային բանկի հետ իր կոշտ քաղաքականութեամբ (ընդհուպ մինչեւ երկրից վտարում): 1995-ին Լուկաշենկոն երկրում սկսեց սեփականացման գործընթացը, բայց նկատելով, որ սեփականութեան առիւծի բաժինն ընկնում է լաւ կապեր ունեցող օլիգարխներին, նա անմիջապէս դադարեցրեց սեփականաշնորհումը եւ տնտեսութեան մեծ մասը դրեց պետական վերահսկողութեան տակ: Այս քաղաքականութեան արդիւնքը դարձաւ Համախառն ներքին արտադրանքի նկատելի աճը: Ըստ ՄԱԿ-ի տուեալների, Բելոռուսիան նախկին սովետական երկրների համեմատութեամբ, ունի ամենաամուր ազգային տնտեսութիւնը: Գոր-

ծազրկութիւնն այստեղ մօտ 2.5 տոկոս է: Արժոյթի Միջազգային Հիմնադրամի վտարումից ի վեր, ՀՆԱ-ը աճել է ընդհուպ մինչեւ 6 տոկոս, իսկ տարեկան հաշուով՝ մինչեւ 4 տոկոս: Արձանագրուել է աշխատավարձերի կայուն աճ, որով եւ պայմանաւորուում է երկրի կենսամակարդակի աճը:

Նկատէք տարբերութիւնը. Բելոռուսիայի օրինակին հետեւելու փոխարէն, Հայաստանի ղեկավարութիւնը միջազգային դրամաշնորհներին թոյլ է տալիս քանդելու Հայաստանը:

Բելոռուսիայում ընդդիմութիւնը բաւական փոքրաքանակ է: Վերջերս հակակառավարական ցոյցից առաջ ընդդիմութեան ղեկավարները կանխագուշակում էին մօտ 20000 ցուցարարների առկայութիւն, այնինչ ցոյցին մասնակցեց ընդամէնը 1000 ցուցարար՝ բարձրացնելով անգլիալեզու հակակառավարական պաստառներ: Ինչպէս Սորրոսի հիմնադրամը, այնպէս էլ ՄԱԿ-ի Դեմոկրատիայի աջակցման ծրագիրը, համարեա յաջողուեցին կազմաւորել որոշակի ընդդիմադիր խաւ՝ ընդդէմ Լուկաշենկոյի: Այնինչ 2001թ.-ի սեպտեմբերի 9-ի նախագահական ընտրութիւններում ժողովրդի 75 տոկոսը իր վստահութեան քուէով հաստատեց նախագահ Լուկաշենկոյի կառավարման նոր ժամանակացոյցը (The American Free Press, October 13, 2003):

«Հայոց Աշխարհի» 2003թ.-ի հոկտեմբերի 14-ի համարում լոյս տեսած յօդուածում ասւում է. «Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը Հայաստանում եւ Ադրբէջանում չեն ուզում ուժեղ ղեկավարներ»: Պատճառը մէկն է. շատ աւելի հեշտ է կառավարել թոյլ առաջնորդներին: Երբ գա ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ժամանակը, նախագահ Քոչարեանը կ'ասի. «Ես ոչինչ չէի կարող անել. հզօրները այն ստիպեցին մեզ»:

Հայաստանի կառավարութիւնը երկիրը ղեկավարում է ներկայի, այլ ոչ թէ ապագայի համար: Հայաստանն այսօր ունի ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին բազմաթիւ թշնամիներ: Բայց բարեբախտաբար գոյութիւն ունեն հայրենասիրական շարժումներ, որոնք շատ զգօն են վերոյիշեալ բոլոր վտանգների համար: Դրանք մարդիկ են, որոնք մարտնչել են Ղարաբաղում՝ իրենց կեանքի գնով պաշտպանելով հայրենիքը: Նրանք միանգամայն գիտակ են Հայաստանի դարաւոր թշնամի մութ ուժերի գոյութեան

մասին: Ցաւօք սրտի նրանց հնարաւորութիւնները սահմանափակ են դրամական սղութեան պատճառով: Նրանք ձգտում են լսելի լինել: Համահայկական նիւթական հնարաւորութիւնները, թանգարաններ կառուցելու փոխարէն նախեւառաջ պէտք է ուղղուեն իրական այս հայրենասէրների շարժմանն աջակցելուն: Մի գուցէ երկրի բոլոր ոլորտներում անվտանգութեան ապահովումից յետոյ կարելի է մտածել շինարարութեան մասին:

Սփիւռքը պէտք է գիտակցի, որ Հայաստանում ազգի կործանման դէպքում ոչինչ այլեւս արժէք չի ունենայ: Աստուած, տուր մեր ղեկավարներին հայրենասիրութիւն, իմաստութիւն եւ քաջութիւն՝ աշխարհի ազգութիւնների շարքում մեր ազգի արդարացի արժանապատիւ եւ յարգալից տեղի ապահովման համար

Լիվոնիա, Միսսուրի, ԱՄՆ
Հոկտեմբեր 27, 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդէն 11 տարի է, ինչ Հայաստանը անկախ է: Սակայն զարմանալի չէ՞ միթէ, որ աւելի քան մի տասնամեակ անկախութիւնից յետոյ կրթուած եւ աշխատունակ իր ժողովրդով երկիրը դեռեւս գտնւում է տնտեսական տագնապի մէջ:

Ճիշտ է, որ Հայաստանը շրջափակուած երկիր է, սակայն անկախ այդ իրողութիւնից մի ժողովրդի տնտեսական բարեկեցիկ վիճակը կախում ունի առաւելապէս իր ղեկավարութեան խելացի եւ դրական ընթացքից. ղեկավարութիւն, որ ոչ միայն տոգորուած լինի հայրենասիրութեամբ եւ զոհաբերութեան ոգով, այլ նաեւ գիտակից եւ տեղեակ լինի իր քաղաքացիների տագնապների եւ խորքին:

Դեռեւս 1991-ից նորաստեղծ անկախ Հայաստանի անփորձ ղեկավարները տեղեակ չէին, թէ որոնք էին այն հիմնական կռուանները, որոնց վրայ պէտք է ստեղծէին առողջ տնտեսական վիճակ: Եթէ ժողովրդին տրուած լինէր իր հոգսերը հոգալու կատարեալ ազատութիւն, ապա տնտեսութիւնը ծաղկած կը լինէր անկասկած: Միայն ազատ ժողովուրդները կարող են ստեղծել յարատեւ բարգաւաճութիւն: Միայն ազատ ժողովուրդները կարող են ստեղծել այնպիսի պետութիւն, որտեղ այդ բարգաւաճութիւնը ենթարկուի չկաշկանդուի անօրէն տուրքերով եւ չխափանուի կառավարութեան կաշառակեր պաշտօնեաների կողմից:

Ազգային տեւական բարօրութիւն ստեղծելու շատ կարեւոր մի ազդակ է ապահով եւ պարկեշտ դրամական համակարգ ունենալը՝ հիմնուած 100 տոկոսով ոսկու պաշարի վրայ: Եթէ ժողովուրդը ոսկի ունի եւ կամ ապահովութիւնը, որ ըստ պահանջեալ հարկին կարող է ազատօրէն իր պետական թղթադրամը փոխել ոսկու, ապա այդ ժողովուրդը ունի այն, ինչ որ կոչում են «վեթոյ փաւուր» այսինքն՝ իր քաղաքական առաջնորդների կասկածելի դրամական գործառնութիւնների վրայ արգելք դնելու վեթոյի հնարաւորութիւն եւ իրաւունք,

-Ո՞վ ում պիտի վերահսկի:

Թղթադրամը ոսկիի փոխարինելու կարելիութեան պակասի հետեւանքով երկրի քաղաքական ղեկավարները կարող են ժողովրդին հեշտօրէն ստրկացնել: Իսկական հարցը կայանում է նրա մէջ, թէ ո՞վ ում է վերահսկում. քաղաքագէտները ժողովրդի՞ն, թէ՞ ժողովուրդը քաղաքագէտներին:

Ճակատագրական սխալ էր Հայաստանի ոսկու հանքերի շահագործումը յանձնել օտարներին:

Հանրապետական կառոյցը մարդու կողմից յղացուած կառավարման ամենակատարեալ պետական ձեւն է: Հանրապետութիւնը հիմնւում է իր սահմանադրութեան վրայ, որը կառավարման երեք գլխաւոր բաժանմունքներին՝ օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւններին ապահովում է հաւասար, բայց իրարից անկախ գործառնութիւն: Այլ խօսքով՝ իշխանութեան այս երեք թեւերից որեւէ մէկը ենթակայ չէ միւսին: Օրէնսդրականը պէտք է ժողովրդի կողմից ընտրուի տեղական շրջանակներում՝ առանց միջամտութեան: Ոչ մի անհատ իրաւունք չի կարող ունենալ ինքնակամ որոշելու ազգի ճակատագիրը: Այսօր ինչ որ տեղի է ունենում Հայաստանի տնտեսական բնագաւառում, միայն անհատական ագահութեան հարց չէ: Դա շատ աւելի ծանրակշիռ երեւոյթ է: Հայաստանը իր տնտեսութիւնը կարգի բերելու համար այնպիսի աղբիւրներից է ֆինանսական փոխառութիւններ ընդունում, որոնք միայն երեւութապէս են շատ հրապուրիչ եւ դիւրամատչելի, մինչդեռ իրականութեան մէջ խիստ վտանգաւոր են, քանի որ նպատակաուղղուած են շահագործելու եւ կեղեքելու երկրի արդիւնաբերութիւնը:

Այդ օգնութիւնները տրւում են ոչ միայն Արժոյթի միջազգային հիմնադրամին եւ Համաշխարհային բանկին որոշակի տոկոսներ վճարելու պայմանով, այլեւ յատուկ նախանշուած բնագաւառների մէջ օգտագործելու պարտաւորութեամբ. ազդակներ, որոնք միջոցներ են՝ քանդելու ժողովուրդների տնտեսութիւնները: Ֆինանսական օգնութեան դիմաց երկրի վրայ դրուած յիշատակուած եւ չյիշատակուած խիստ ծանր պայմաններն այնպիսին են, որ երկրի առաջընթացը կասեցնում են, օրինակ՝ կառավարութեանը պարտադրելով, որ երկրի հասութաբեր աղբիւրների վրայ այդ աղբիւրները քայքայող ու կազմալուծող տուրքեր դնի: Ճարտարագիտական ձեռնարկութիւնների, գիւղատնտեսութեան եւ փոքր անհատական ձեռնարկութիւնների վրայ դրուած բարձր ու խեղդող հար-

կերը պատճառ են դառնում, որ նրանք գոյատեւել չկարողանան եւ զոհ դառնան միջազգային (օրինակ՝ Ջորջ Սորոսին պատկանող) հիմնարկութիւններին, որոնք այդ գործառութիւններին տիրանում են չնչին գներով, բայց արդիւնքից կորզում են առիւծի բաժինը:

Կառավարութիւնն իր հերթին Համաշխարհային բանկից եւ Արժոյթի միջազգային հիմնադրամից շարունակում է գումարներ մուրալ՝ իշխանութիւնն իր ձեռքին պահելու եւ երկիրը կառավարել կարելիալու համար, մինչդեռ տնտեսութիւնը շարունակում է լճանալ:

Արտագաղթի մի այլ ազդակ:

Արտաքին ֆինանսաւորման մէկ այլ աղէտաբեր հետեւանք է օտար մշակոյթների եւ բարքերի պատուաստումը նորաստեղծ պետութեան մէջ: Օտար մշակոյթի եւ բարքերի ներթափանցումն ապահովում են կրթական եւ հումանիտար հիմնարկներ հիմնադրելու միջոցով: Դրանք երիտասարդ մտաւորականութեանը մղում են աւելի ու աւելի շատ արտագաղթելու աշխարհի տարբեր երկրներ: Հայաստանում գոյութիւն ունեն հայկական կրթական բարձր մակարդակի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ եւ գիտական հիմնարկներ՝ գիտահետազօտական ինստիտուտներ, որոնք կարիք ունէին միայն ֆինանսական օգնութեան եւ նման օժանդակութիւն ստանալու դէպքում ի վիճակի էին երիտասարդ սերնդին կրթելու առաւելապէս հայկական նկարագրով՝ միաժամանակ ապահովելով հայ գիտնականի եւ ուսանողի կապն ու գործակցութիւնը աշխարհի հետ: Կարճ ասած՝ Համաշխարհային դրամատան եւ Արժոյթի միջազգային հիմնադրամի արհեստականօրէն առաջադրած շինծու փոխառութիւններն ու յատկացումները առաջացրին լճացած տնտեսութիւն, որը հայ մշակոյթի վրայ օտար ազդեցութեան հետ միացած՝ յանգեցրեց այսպէս կոչուած «ուղեղների արտահանման», ինչը տկարացրեց նորաստեղծ անկախ Հայաստանը:

Այս ամբողջի բուն նպատակը վերջին հաշուով հայկական ոգու եւ հայ ազգի ծրագրուած քայքայումն է, երկրի բնակչութեան պակասեցումը եւ Հայաստանը «Միջազգային մի հողամաս» դարձնելն է:

Վիճակը ողբերգականօրէն ծանր է այն իմաստով, որ եթէ կառավարութիւնը մերժի ընդունել Արժոյթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային դրամատան յատկացումները, ապա այդ ուժերը կարող են երկիրը կանգնեցնել այդ նոյն ֆինանսական աղբիւրներից դրամական օժանդակութիւն ստացող դրացի որեւէ երկրի կողմից պատերազմ սանձազերծելու վտանգի առաջ:

Պէտք է ընդգծել, որ երբ Հայաստանի կառավարութիւնը անկարող է լինում ետ վերադարձնել փոխառութիւնը, պարտատէրերը սպառնում են կասեցնել նոր յատկացումների տրամադրումը: Սակայն «սպառնալիքների» որոշ ժամանակամիջոցից յետոյ պարտատէրերը յանկարծ այսպէս կոչուած «մարդասիրական» մօտեցում են ցուցաբերում, նորից համաձայնում են ֆինանսական ներարկումներ կատարել՝ բայց այս անգամ ուղղակի պարտադրելով նոր փոխառութիւնները օգտագործել վարկատու կազմակերպութիւնների որոշած նպատակների համար:

Օքքաւայի համալսարանի պրոֆէսոր Միքայէլ Կոսիդովսկին այս կացութիւնը լրիւ լուսաբանող մի յօդուածով հանգամանօրէն եւ մանրամասնութեամբ բացատրում է, թէ ինչպէս Արժոյթի միջազգային հիմնադրամը եւ Համաշխարհային դրամատունը հմտօրէն ծրագրում եւ վարպետօրէն գործադրում են այս կամ այն երկրի տնտեսական եւ ընկերային կառուցուածքի փլուզումը՝ այդ երկիրը հասցնելով ստրկական վիճակի:

Նշուած յօդուածն ամբողջութեամբ կարելի է կարդալ հետեւեալ ինտերնետ կայքում՝ web: http://www. emperors-clothes. com /articles/chuss/instru.htm

Մի քանի վիճակագրական հաստատումներ

1. Արժոյթի միջազգային հիմնադրամը չի քաջալերում ճարտարագիտական խոշոր ձեռնարկների հիմնումը Հայաստանում: Դրա պերճախօս օրինակը Հայաստանում Ջեներալ Մոթորզի եւ Միցուբիշիի գործարանների մասնաճիւղեր հիմնելու ծրագիրն էր, որը ենթադրւում է, չեղեալ նկատուեց ամերիկեան արտաքին գործերի նախարարութեան կողմից:

2. Միջազգային նշուած կազմակերպութիւնները Հայաստանի ներկայ կառավարութեանը պարտադրում են ճարտարագիտական խոշոր ձեռնարկութիւնները սեփականաշնորհել եւ յանձնել օտարներին:

3914

3. Հայաստանի կառավարութիւնը դրամական նպաստ է տալիս միայն փոքր ձեռնարկութիւններին՝ դրանցից պահանջելով ապագայ տուրքերը վճարուեն կանխաւ՝ առանց նկատի ունենալու երկրի քայքայուած տնտեսութիւնը:

4. 1994-ից ի վեր Հայաստանը Արժոյթի միջազգային հիմնադրամից մօտաւորապէս 170.000.000 դոլար փոխառութիւն է վերցրել՝ վճարելով 17.միլիոն դոլար տոկոս:

5.1992-ից մինչեւ 2001 Միացեալ Նահանգների միջազգային զարգացման գործակալութիւնը Հայաստանին տրամադրել է 1,3 միլիարդ դոլար:

Հարցը այժմ հետեւեալն է. արդեօ՞ք Հայաստանը իր ճակատագրի տնօրինումը պիտի զիջի համաշխարհային ոչ ընտրեալ մի դիւանակալութեան, որի նպատակն է հետեւողականօրէն շարունակել մեր երկրին պարտադրել այն քաղաքականութիւնը, որն արդէն երկրում առաջացրել է համատարած տնտեսական քաոս:

Կամ արդեօ՞ք Հայաստանը պիտի կարողանայ իրեն վերապահուած իրաւունքով ընտրել մի այնպիսի կառավարութիւն, որը իշխանութիւն ունենա միջազգային ֆինանսական կապիտալիզմի անողոք շահագործումից պաշտպանելու իր ժողովուրդը եւ իր երկրի բնական հարստութիւնները:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
Նոյեմբեր 2001թ.

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԴԱՒԱՃԱՆՆԵՐՆ ԻՐ ԻՍԿ ՄԷՋ

Հայաստանի առաջնորդները Երեւանում, ինչպէս օրինակ Ադրբեջանի Կոմունիստական կուսակցութեան նախկին անդամ Ռոբերտ Քոչարեանը, արտաքին գործերի նախարար, «Մէկ Աշխարհի» ջատագով Վարդան Օսկանեանը, «պաշտպանութեան» նախարար Սերժ Սարգսեանը, որը յայտնի է Մոնտէ Կառլոյ խաղատնից, Հայաստանի ճակատագիրը սպառնալիքի տակ են դրել:

2003թ. հոկտեմբերի 21-ին, դիմելով Երեւանում կայացած «Հայաստանը դէպի Եւրոպա ուղու վրայ» միջազգային կոնֆերանսի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանեանը նշեց. «Մտնելով Եւրախորհուրդ՝ Հայաստանն իրականացրել է այս կազմակերպութեանն անդամակցելու համար անհրաժեշտ պայմանների նուազագոյն մասը: Առաջին հերթին անհրաժեշտ է, որպէսզի հասարակութիւնը գիտակցի, որ Հայաստանը Եւրոպայի մի մասն է եւ ինտէգրացիային այլընտրանք չկայ: Մենք պէտք է շարունակենք մեր ուղին եւ մեր պետութիւնն ու հասարակութիւնը հասցնենք տրամաբանական կէտին՝ դառնալով եւրոպական ընտանիքի լիիրաւ անդամ»:

Այդ ժամանակուանից Հայաստանը դարձել է Եւրախորհրդի անդամ՝ սերտ յարաբերութիւններ հաստատելով Եւրամիութեան հետ: Օսկանեանի այս «սիրային» յարաբերութիւնները արհեստականօրէն ստեղծուած եւրոպական կազմակերպութիւնների հետ ոչինչ չտուեցին, բացի այն, որ Հայաստանին ներկայացուեցին պահանջներ, թէ ինչպէս կառավարուի երկիրը: Նա, ըստ էութեան, համագործակցեց հէնց այն հաստատութիւնների հետ, որոնց նպատակն է ոչնչացնել անկախ պետութիւնները: Միաժամանակ Հայաստանի իշխանութիւնները «ձրի» դրամ են ստացել Արժոյթի միջազգային հիմնադրամից եւ Համաշխարհային բանկից, ինչը էապէս թուլացրել է Հայաստանի տնտեսութիւնը:

Համաշխարհային բանկի հրապուրիչ 9 ԱՄՆ դոլլարի յարաբերութիւնը դպրոցական ծրագրերի համար հայկական սփիւռքի կողմից հանգանակուած 1 դոլլարի նկատմամբ կասկածելի է եւ անվստահելի: Այժմ նրանք են թելադրում, թէ ինչպէս պէտք է դպրոցները կառավարուեն: Դա կոչւում է «գրաւիչ» կամ «գայթակղիչ» կաշառք: Օրինակ՝ երբ Հայաստանի կառավարութիւնը հար-

կադրեց իր «2001 թուականի կրթական զարգացման ծրագիրը»: Դպրոցների «օպտիմալիզացիայի» ընդգծուած սկզբունքն ուղղուած էր դէպի հայկական կրթական համակարգի ոչնչացումը: Այս համակարգը յատուկ շեշտադրում էր առարկաները, արհեստները, մշակութային, ազգային ու կրօնական արժէքներ: Կառավարութիւնը հարկադրեց ընդունել օտար ու անծանօթ կրթահամակարգ, որը խրախուսում է այսպէս կոչուած սեռական կրթութիւնը, հոմոսեքսուալիզմը, աղանդներն ու այլատիպ պաշտամունքները դասարանում: Ազգային կրթական ռազմավարութիւնը պէտք է շարունակէր երիտասարդ սերնդին դաստիարակել ազգային շահերից ելնելով եւ ոչ թէ Համաշխարհային բանկի պահանջներին ընդառաջելով: Հայկական կառավարութիւնը պէտք է խստութեամբ զերծ պահէր ազգին տգիտութեան գիրկն ընկնելուց:

Տարիներ շարունակ Հայաստանի իշխանութիւնները թաքուն, վարագոյրների ետեւում բանակցութիւններ են վարում աշխարհը տնօրինողների հետ՝ ցանկանալով վերադարձնել Լեռնային Ղարաբաղի՝ դժուարութեամբ ձեռք բերուած անվտանգութիւնը խոստացուած /թուացեալ/ խաղաղութեան համար: Արդէն իսկ որոշուած է, որ Քելբաջարի, Ֆիզուլու, Ջէբրաիլի եւ Զանգելանի տարածքները պիտի վերադարձուեն Ադրբեջանին: Եթէ ուսումնասիրենք ներկայիս Ղարաբաղի քարտէզը, կը տեսնենք, որ այս տարածքները Ղարաբաղի արեւմուտքում եւ հարաւ-արեւելքում են: Ադրբեջանի փախստականները զինուած ուժերի հետ միասին կը զբաղեցնեն հողերը: Ապագայում դա կատարեալ դիրք կը լինի, որպէսզի Ղարաբաղը յարձակման ենթարկուի բոլոր անկիւններից: Որպէս օրինակ՝ բոսնիա-ալբանական թուրքերը անտեսեցին 1995թ. հոկտեմբերի 5-ին ստորագրուած Դեյթօնեան պայմանագիրը, որը նաեւ նախատեսում էր ՆԱՏՕ-ի հրամանատարութեան տակ գտնուող բազմազգ ռազմական ուժերի ներկայութիւնը: Ալբանացիները շարունակում էին սպանել քրիստոնեայ սերբերին, մինչդեռ այսպէս կոչուած խաղաղապահ զօրքերը ոչինչ չէին անում: Ինչու՞ պէտք է Հայաստանը խաղաղութեամբ պաշտպանեալ տարածքներում «համաշխարհային խաղաղապահ զօրքեր» ընդունի:

«Բանակցութիւնների» գործընթացն ունի իր առաւելութիւնները եւ խրախուսանքները: Հայաստանի կողմից բանակցողները պարգեւատրուում են բանակցելու համար: Դրամատունը նշում է.

«Մենք չենք կարող ֆինանսաւորել ձեզ, եթէ դուք չքննարկէք ձեր երկրի որոշ մասերի յանձնման հարցը»:

Սովորաբար ասում են. «Հայաստանն ուրիշ ի՞նչ կարող է անել, եթէ չընդունի ղարաբաղեան քննարկումները»: Քննարկումների ու բանակցութիւնների մասին խօսք էլ չէր լինի, եթէ Հայաստանի արտաքին գործերի նախարարը չխրախուսեր «միջազգային երկխօսութիւնը»: Մինչդեռ ոչնչի մասին պէտք չէր խօսել: Զրոյցները վերջացան եւ վերացան այն պահին, երբ Ղարաբաղը ազատագրուեց հայի արեան գնով: Թուրքիան երբեւէ անհանգստացե՞լ է եւ փորձել «խօսել» կամ «զրուցել» իր իսկ գրաւած տարածքների համար: Այն, որ Թուրքիան աւելի մեծ է, ոչինչ չի նշանակում: Սկզբունքը նոյնն է: Մի բան միշտ ասուել է եւ միշտ ճիշտ է դուրս եկել. «Եթէ դու ամուր ես կանգնած, նոյնիսկ եթէ փոքր ես, դու յարգուած ես: Եթէ դու թուլութեան դիրքերից ես խօսում, դու արհամարհուած ու ատելի ես եւ աւելի խոցելի»:

Ղարաբաղի նախագահ Արկադի Ղուկասեանը բազմիցս նշել է, որ առանց Ղարաբաղի ներգրաւման չի կարող ոչ մի պայմանագիր կնքուել: Եթէ հայրենասէրների կողմից ուժեղ բողոքներ ու յանդիմանութիւններ հնչեն պայմանագիր կնքելուց յետոյ, իշխանութիւնները կ'ասեն. «Աշխարհի հզօրները ստիպեցին մեզ այդպէս վարուել»: Այժմ, կարծես թէ, նախագահ Ղուկասեանին համոզել են Երեւանում, որ ընդունի պայմանագիրը, քանի որ եթէ չընդունի, ապա հետեւանքներն աւելի ծանր ու վտանգաւոր կարող են լինել ապագայում: Իրականում այն է, սակայն, որ նրանց կողմից հողերը վերադարձնելուց յետոյ հետեւանքները կը լինեն շատ աւելի ողբալի, քան վտանգաւոր: Մի՞թէ որեւէ հայ, որ առողջ է մտքով, կը ցանկանայ հնագոյն հայկական հողերը յանձնել մի կտոր թղթի փոխարէն:

Տարիներ առաջ բրիտանացի բարոնուհի Քերոլայն Քօքսը գրեց մի «Բաց նամակ հայ ժողովրդին»: Այդ բաց նամակից ընդամէնը մի քանի հատուած ներկայիս դէպքերը շատ լաւ կը մեկնաբանեն ու կը լուսաբանեն: Նա գրում է.

«Ես գրում եմ այս նամակը, որպէս մի մարդ, որ մեծ սէր ու հիացմունք է տածում հայ ժողովրդի նկատմամբ: Այդ սէրն է, որ ստիպում է ինձ ահազանգել»:

«Անկախութեան վերականգնումից տասը տարի անց Հայաստանը կարող է յայտնուել մի այնպիսի վտանգաւոր դիրքում, որ

Նրա անկախութիւնն ու նոյնիսկ գոյութիւնն ընդհանրապէս կարող են սպառնալիքի տակ դրուել: Հայկական իշխանութիւնների կողմից Ադրբեջանի հետ ներկայումս իրականացուող բանակցութիւնների հետ կապուած յոյսերը անվստահելի եւ խաբուսիկ են: Կովկասի իսլամիստ ուժերը հաստատուն կերպով որոշում են կայացրել եւ պատրաստ են «լուծել» Հայաստանի եւ Ղարաբաղի «խնդիրները» ուժի զօռով: Ոչ ոք, առաւել եւս Ադրբեջանը կամ Թուրքիան, չեն կանգնի նրանց ճանապարհին: Հաշուի առնելով սպառնալիքի ահաւորութիւնն ու միջազգային քաղաքական ու տնտեսական շահերի բարդութիւնն ու խճճուածութիւնը՝ շատ կարեւոր է, որպէսզի հայկական սփիւռքը անմիջապէս միաւորուի, որպէսզի օգնի հայրենիքին, քանի դեռ շատ ուշ չէ: Այժմ գործելը շատ աւելի կարեւոր է եւս մէկ եղեռնագործութեան իրականացումը կանխելու նպատակով, որպէսզի յետոյ չողբանք եւս մի ցեղասպանութեան համար»:

«Այժմ Հայաստանի իշխանութիւնները հսկայական ճնշման ներքոյ, փորձում են հասնել մի գործարքի, եւ կարծես թէ նահանջում են մինչեւ այն, որ դաւաճանեն բոլոր նրանց, ովքեր արիւն են թափել եւ ովքեր զոհաբերել են իրենց սիրելիներին յանուն Արցախի: Մի՞թէ դուք թոյլ կը տաք ձեր քաղաքական առաջնորդներին յանձնել Հարաւային Հայաստանի հողերը: Մի՞թէ թոյլ կը տաք, որ Արցախը վերադառնա մի անկայուն ու խոցելի կարգավիճակի՝ հասնելով ոչնչի այսքան արիւն թափելուց յետոյ»:

«Եթէ դէպքերի ներկայիս ընթացքը չընդհատուի, ձեր առաջնորդները Երեւանում ճակատագրական կերպով կը թուլացնեն եւ կը դաւաճանեն ձեր երկրին: Դուք անկարող կը լինէք պաշտպանել ինքներդ ձեզ նրանցից, ովքեր իրենց հաստատուն նպատակ են հռչակում գրաւել եւ ձեռք բերել Իսլամական Կովկաս, եւ բոլոր նրանք, ովքեր իրենց կեանքը տուեցին ձեր պատմական հողի համար, անտեղի զոհեր կը դառնան»:

Մի՞թէ Հայաստանի իշխանութիւններին չի հետաքրքրում այն հարցի պատասխանը, թէ Քերոլայն Քօքսին ի՞նչն է դրդում այդպէս մտածել:

Աստուած օրհնի Հայաստանը:

Բոքայ Ռաթոն, ԱՄՆ
Փետրուար 3, 2006թ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՉԷ

1990թ. Խորհրդային Միութեան անկումից յետոյ նորաստեղծ Հայաստանի առաջնորդները չգիտէին ազատ շուկայական տնտեսութիւն ստեղծելու ձեւերը: Առաջացած վակուումը յանգեցրեց անհատ արկածախնդիրների միջեւ պայքարի՝ տնտեսական ապահովութեան հասնելու համար: Դա վերածուեց մրցավազքի՝ ուղղուած վերեւներ հասնելուն եւ այնտեղից կառավարելուն: Մի քանի տարի յետոյ ստեղծուեց սահմանադրութիւնը, որում ներառուած չէին ներկառուցուածքային հսկողութիւնը եւ հաւասարակշռութիւնը: Հսկողութիւնն ու հաւասարակշռութիւնը առանձին անհատին չէին տրամադրի իշխանութիւն՝ որոշելու ամբողջ ազգի ճակատագիրը: Հսկողութիւնն ու հաւասարակշռութիւնը ներառուեցին Ամերիկայի սահմանադրութեան մէջ՝ իմաստուն ու հայրենասէր մարդկանց կողմից: Ոչ ոք չունէր այլ իշխանութիւն, բացի կառավարութիւնից նրան տրուածից: Այդ փաստաթուղթը կազմուել էր այնպէս, որ կառավարութիւնը չխանգարեր մարդկանց ազատ շունչ քաշելուն: Զարմանալի է, թէ ինչու 1778 թ.-ի ամերիկեան սահմանադրութեան մոդելը չկիրառուեց Հայաստանի կառավարութեան կողմից: Հայ ժողովրդի աշխատասիրութիւնը եւ ստեղծագործական ներուժը կարճ ժամանակում կը ծաղկեցնէին Հայաստանի տնտեսութիւնը՝ բարօրութիւն պարգեւելով նրա բնակչութեան աւելի մեծ տոկոսին:

«Յայտնուած առաջնորդները» չէին հասկանում, որ միայն ազատ մարդիկ են ստեղծում հզօր տնտեսութիւն, այլ ոչ թէ կառավարութիւնը: Նրանք չգիտէին կառավարութեան սահմանափակութիւնների մասին: Նրանք գիտէին միայն, թէ սոցիալիզմն է ստեղծում հարստութիւններ, բայց հարստութիւններ գողանալով: Գողանալով արտադրողներից եւ տալով միւսներին: Սակայն կառավարութեան պարտականութիւնը տնտեսութեան պաշտպանումն է, ոչ թէ դրա կառավարումը: Կառավարութեան միակ պարտականութիւնը պաշտպանութիւնն է, պաշտպանութիւնը իր իրաւասութեան տակ գտնուողներին՝ իրենց կեանքի եւ սեփականութեան հանդէպ արտաքին եւ ներքին ագրեսորներից, ինչպէս

նաեւ պարտաւոր է լուծել առաջացող վէճերը, եւ թողնել մարդկանց ազատօրէն ընթանալ դէպի իրենց նպատակները: Այդպիսի վերաբերմունքը կը յանգեցնէր ժողովրդի բարօրութեանը եւ Հայաստանի կառավարութեան հեղինակութեանն ու յաջողութեանը: Դրա փոխարէն կառավարութիւնը գերադասում է անհատական շահը խելամտութեանը, կառավարում է միջազգային դրամական հաստատութիւններից վնասակար պայմաններով փոխառութիւններ վերցնելով: Ի հարկէ, այդպիսի կառավարման համակարգը երկար չի դիմանայ, սակայն դա չի վերաբերուի այն փոքրաթիւ մարդկանց, որոնք այժմ օգուտներ են քաղում՝ մոռանալով ազգային շահի եւ բարօրութեան առաջնայնութիւնը:

Ստրկացնող փողերից հրաժարուելու վառ օրինակ է Գերնսի կղզին Լա Մանշի նեղուցում, որը 176 տարի առաջ տնտեսական ճգնաժամի մէջ էր: Այն ունէր պարտքեր, որոնք կործանում էին երկիրը: Իրենց համար բարեբախտաբար կղզում կային մարդիկ, որոնք մտածում էին տրամաբանօրէն: Նրանցից մէկը ասաց.«Մեր կառավարութիւնը մեզնից կտրում եւ տալիս է Անգլիայի բանկից փոխառած փողերը: Դրա փոխարէն եկէք հիմնենք մեր սեփական դրամատունը եւ ստեղծենք մեր սեփական դրամը»:

Դրա արդիւնքը եղաւ բարձր կենսամակարդակը: Ոչ մի գործազրկութիւն, զարգացած ենթահամակարգեր եւ ոչ մի կառավարական պարտք: Գերնսիի կառավարութիւնը ստեղծեց իր սեփական պարտամուրհակները, որոնք երկարաժամկէտ էին ու անտոկոս: Դրանք ուղղւում էին Գերնսիի տնտեսութեան կարիքներին եւ ետ էին գանձւում փոքր հարկերի միջոցով: Հարկերը փոքր կարող են լինել եթէ չկայ կառավարական պարտք եւ հետեւաբար պետութիւնը չի վճարում դրա տոկոսները: Գերնսին շարունակում է այդ անել եւ երբեւէ չի ունենում սղաճ: Նախկինում Գերնսին այնպիսի ահռելի պարտքեր ունէր, որ ամբողջ եկամտի 80%-ը վճարում էր միայն որպէս պարտքի տոկոս: Գերնսին աշխարհագրական դիրքով տարբերւում է Հայաստանից, սակայն սկզբունքը նոյնն է: Հայաստանի բանկերը անհարկի տոկոսներ են սահմանում՝ սեփականատէրերին ու ագարակատէրերին փոխառութիւններ տալու համար, քանի որ դա լաւ միջոց է նրանց ունեցուածքը գողանալու համար:

Այսօր Հայաստանի կառավարութիւնը այնպիսի հսկայական գումարներ է փոխառնում «մի աշխարհական» բանկերից, որ երբեք ի վիճակի չեն լինի վճարել դրանք: Միջազգային բանկերը Հայաստանին վարկեր են տրամադրում այն պատճառով, որ կարողանան Հայաստանին թելադրել, թէ ինչպէս կառուցել իր ապագան եւ ճակատագիրը: Հայաստանի սահմանադրութիւնը մօտ ժամանակներս պէտք է սահմանի, որ Հայաստանի կառավարութիւնը չպէտք է պարտքերի տոկոսները վճարի արտասահմանից փոխառնուած դրամական միջոցներից: Հայաստանի կառավարութիւնը պէտք է անմիջապէս տպագրի իր սեփական փողերը եւ դրա արժէքը կարգաւորի ոսկու պաշարներով յարաբերութեամբ: Հայաստանի ոսկու հանքերի կառավարման իրաւունքի վաճառքը ազգային յանցագործութեան դրսեւորում է: Այդ սխալը պէտք է ուղղուի խորհրդարանի պահանջով՝ որը կը հաստատի, որ ոսկու հանածոները չպէտք է դուրս գան երկրից: Այն /ոսկին/ պէտք է պահպանուի յատուկ պահեստում՝ բանակի հսկողութեան ներքոյ:

Ֆրանսիացի պետական գործիչ եւ տնտեսագէտ Ֆրեդերիկ Բաստիատը 1850թ.-ին ասել է.«Աստուած մարդուն տուել է այն ամէնը, ինչը անհրաժեշտ է, որպէսզի նա կարողանայ հասնել իր նպատակին: Նա ապահովել է մարդու ինչպէս սոցիալական, այնպէս էլ մարդկային տեսքը: Մարդու այդ սոցիալական օրգանները այնպէս են սահմանուած, որ նրանք կարող են ներդաշնակօրէն զարգանալ միայն ազատութեան մաքուր օդում: Հեռացրէք նրանցից օղակները, շղթաները, կարթերն ու փշերը, հեռացրէք արհեստական համակարգերը, հեռացրէք կառավարութեան ղեկավարների քմահաճութիւնները, նրանց հասարակական ծրագրերը, նրանց կենտրոնականացումը, նրանց հարկերը, նրանց կառավարական դպրոցները, նրանց պետական կրօնները, նրանց բանկային մոնոպոլիաները, նրանց կառուցուածքները, նրանց սահմանափակումները, նրանց հաւասարացումը հարկերի միջոցով, եւ նրանց կրօնապաշտական բարոյականութիւնները: Եւ այժմ, երբ մարդկութեան բարեգործներն ու օրինաստեղծները այդքան համակարգեր են հնարել հասարակութեան համար, կարո՞ղ են նրանք վերջացնել այնտեղ, որտեղից հարկաւոր էր սկսել: Կարո՞ղ են նրանք չեղեալ համարեն բոլոր համակարգերը եւ փորձեն

ազատութիւնը. ազատութեան համար պէտք է Աստծոյ եւ նրա գործունէութեան հանդէպ հաւատի հաւաստիացումներ» :

Որ Հայաստանը հանրապետութիւն չէ լաւ կարելի է արտայայտել 2003թ. Հայաստանի նոր խորհրդարանի կազմաւորման առիթով լրագրողներին տրուած հարցազրոյցից, որտեղ նորընտիր խորհրդարանականները ասում են, որ դեմոկրատիայի մակարդակը Հայաստանում բարձրացնելու են՝ երկրի օրէնսդրական դաշտը համապատասխանեցնելով միջազգային մակարդակին: Յայտարարութեան բանալին համապատասխանեցնել բառն է. եթէ Հայաստանը իրական հանրապետութիւն լինէր, ապա թոյլ չէր տայ ինչ-ինչ արտասահմանեան ինստիտուտների որոշել , թէ ինչը պիտի ընդունելի լինի Հայաստանի կառավարութեան համար: Դեմոկրատիա՞յ, որը կառավարութիւն է, որը կառավարւում է մարդկանց կողմից, իսկ հանրապետութիւնները կառավարւում են օրէնքներով:

2003թ. փետրուարի 19-ի ընտրութիւնների ժամանակ թեկնածուներից ոմանք գումարներ էին ստանում սփիւռքի մեծահարուստներից եւ հիմնադրամներից: Սփիւռքի դրամական օգնութիւնը Հայաստանին պէտք է քաջալերուի, սակայն լաւ կը լինի, որ այն ուղղուած լինի մարդասիրական կամ ներկառուցուածքային նպատակների: Իսկ եթէ դա ուղղւում է կուսակցութիւններին կամ թեկնածուներին, ապա դա անօրինական է: Հայաստանի ընտրութիւնների գործընթացը եւ դրա արդիւնքները միայն տեղի հայերի ներքին գործն է: Եթէ Հայաստանը հանրապետութիւն լինէր, ապա այս բոլոր պարամետրերը պէտք է խստօրէն պահպանուէին, ինչպէս նաեւ պէտք է Հայաստանում կարիք չլինէր արտասահմանեան դիտորդների՝ ընտրութիւնների արդարութիւնը եւ օրինականութիւնը ապահովելու համար:

Հայաստանի համար կարեւոր է այլ երկրների հետ առեւտրական եւ գործընկերային յարաբերութիւններ հաստատել, սակայն նոյնքան կարեւոր է, որ Հայաստանը զգուշանայ յարաբերութիւններ ունենալ անհատների հիմնած կազմակերպութիւնների հետ, որոնք հիմնուել են անկախ պետութիւնների ներքին գործերին միջամտելու նպատակով: Օրինակ Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութիւնը (OSCE), Եւրա-

խորհրդարանը, Եւրամիութիւնը, Եւրոպայի Խորհուրդը: Այս կազմակերպութիւնները չեն մտահոգւում, թէ ինչպէս է Հայաստանը կառավարւում, այլ նրանց միակ մտահոգութիւնը եւ նպատակը պատմական Եւրոպայի պետութիւններն ու ազգութիւնները վերացնելն է, ինչը ուղղուած է միջազգային կառավարութեան դիւական ծրագրերի իրականացմանը: Ներկայումս նրանց տարած քաղաքականութիւնը ուղղուած է Հայաստանը դարձնել մի ինչ-որ անճանաչելի երկիր. հայկական բանակը՝ միջազգային խաղաղապահների մի մասնիկ, հայկական մշակոյթը՝ կորցրած իր ինքնութիւնը, Հայաստանեայց ազգային եկեղեցին՝ միջազգային եկեղեցի/ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ/, ազգային հպարտութեան եւ հայրենասիրութեան բացակայութիւն:

2003թ. յունիսի 27-ին Համաշխարհային բանկի տնտեսագէտ Մորին Մակ-լաուգինը Բաքւում կայացած մի խորհրդաժողովում ասաց, որ ետխորհրդային երկրների կրթական համակարգը կարիք ունի բարեփոխումների: Բարեփոխում ասելով նա նկատի ունի ուղեղների լուացում եւ նոր սերունդին իրենց ուզած կերպով դաստիարակում, որով հնարաւորութիւն կ'ունենան Հայաստանը առաւել հեշտութեամբ կառավարել:

Հայաստանի խորհրդարանի նոր խօսնակ Արթուր Բաղդասարեանը յայտարարել է, թէ Հայաստանի քաղաքացիական քրէական օրէնսգիրքը պէտք է համապատասխանեցնի եւրոպական օրէնսդրութեան չափանիշներին: Սակայն Արթուր Բաղդասարեանը չգիտի, որ եւրոպական օրէնսդրութիւնը ստեղծուել է եւրոպական ազգերին ծուլելու համաշխարհային կառավարութեան հեռահար նպատակների իրականացման համար: Դրա վառ ապացոյցն է առանձին երկրի օրէնսդրութիւնը արտաքին ուժերի կողմից վճռելու փաստը. մի՞թէ Հայաստանում առկայ մտաւորականութիւնը չի կարող կամել սեփական երկրի օրէնսդրութիւնը:

Այսօր Հայաստանը հանրապետութիւն չէ, այլ իրականում այն պլուտոկրատիայ է (փողի իշխանութիւն):

Լիվոնիա, Միչիգան:
յունիսի 28, 2003թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՂՔԱՏԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Խորհրդային Միութիւնից անկախութիւն հռչակելուց ի վեր տնտեսական ցեղասպանութիւն է կատարւում Հայաստանում: Միջազգային ֆինանսական հաստատութիւնների կողմից իրականացուող կառուցուածքային փոփոխութիւնների ծրագրերը նպատակ են հետապնդում միջազգայնացնել երկրի մակրոտնտեսական քաղաքականութիւնը եւ այն դնել Միջազգային դրամական հիմնադրամի եւ Համաշխարհային դրամատան անմիջական ղեկավարութեան ներքո: Պատմութեան որեւէ այլ շրջանում «ազատ» շուկան այնքան մեծ դեր չի խաղացել «ինքնիշխան» պետութիւնների ճակատագիրը տնօրինելու հարցում, ինչքան այսօր:

Անցած երկու տասնամեակների ընթացքում Միջազգային դրամական հիմնադրամի եւ Համաշխարհային դրամատան կողմից զարգացող երկրներին պարտադրուած «մակրոտնտեսական կայունացման» եւ «կառուցուածքային կանոնաւորման» ծրագրերը (որպէս արտաքին պարտքերի վերանայման պայման) հարիւր միլիոնաւոր մարդկանց հասցրել են աղքատութեան: Հակառակ Բրեթըն Վուդի համաձայնագրի, որը նախատեսում էր «տնտեսական վերակառուցում» եւ հիմնական տարադրամների համաշխարհային գների կայունացում, կառուցուածքային կանոնաւորման այս ծրագրերը մեծապէս նպաստել են ազգային տարադրամների ապակայունացմանն ու զարգացող երկրների տնտեսութեան քայքայմանը: Դեռ աւելին, այդ ծրագրերի ազդեցութիւնը զարգացող երկրների հասարակութեան վրայ աւերիչ է եղել:

Միջազգային դրամական հիմնադրամը եւ Համաշխարհային դրամատունը կարողացել են դանդաղեցնել Հայաստանի տնտեսական զարգացումը՝ վարկեր տրամադրելով:

Միջազգային դրամական հիմնադրամը ուշադիր հետեւում է Կենտրոնական դրամատան գործունէութեանը եւ միջոցներ տրամադրում դրա վերակառուցման համար: Սա նշանակում է, որ պետութեան փոխարէն Միջազգային դրամական հիմնադրամն է տնօ-

ռինում երկրի դրամական քաղաքականութիւնը, որը նրան հնարաւորութիւն է տալիս անդամալուծել տնտեսական զարգացման ֆինանսաւորումը: Ներքին տնտեսական հնարաւորութիւնները դրամական քաղաքականութեամբ խթանել չկարողանալով, երկիրը դառնում է աւելի ու աւելի կախուած վարկի միջազգային աղբիւրներից, որի հետեւանքներից մէկը մեծացող արտաքին պարտքն է:

Քաղաքականութեամբ Պայմանաւորուած Վարկեր:

Վարկի կառավարման քաղաքականութիւնը սերտօրէն կապուած է մակրոտնտեսական բարեփոխումների հետ: Վարկի կառավարումը միջազգային վարկատու հաստատութիւնների կողմից այնպէս է կատարւում, որ տուեալ պարտապան երկիրը շարունակի ձեւականօրէն կատարել իր ֆինանսական պարտականութիւնները: Վարկ տրամադրելու նոր ձեւերի եւ վճարումների ժամկէտների վերանայման նուրբ արուեստի միջոցով վարկի հիմնագումարի վճարումը յետաձգւում է, իսկ տոկոսավճարների ժամանակին կատարումը՝ պարտադրւում: Սնանկանալու եզրին յայտնուած երկրի պարտքը սովորաբար վերանայւում է՝ փոխանակելով այն բաժնետոմսերով: «Նոր» վարկ է տրամադրւում, որպէսզի տուեալ պետութիւնը կարողանայ հին պարտքերի տոկոսները վճարել եւ այդպիսով խուսափել պարտազանցումից: Պարտապան երկրի հնազանդութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունի այս գործընթացում: Վարկատու կազմակերպութիւնը համաձայնւում է վերանայել վարկի պայմանները միայն այն դէպքում, երբ պարտապան երկիրը հետեւում է վարկի պայմանագրերին կցուած «քաղաքականութեանը»: Այսպէս վարուելով, վարկատու կազմակերպութիւնը փորձում է ամրապնդել պարտքի վճարումների կատարումը եւ աւելի նեղ վիճակի մատնել պարտապան երկրին, որպէսզի վերջինս չկարողանայ վարել անկախ ազգային տնտեսական քաղաքականութիւն:

Վերոյիշեալ վարկերի պայմանները չեն նպաստում իրական տնտեսական ակտիւութեան աճին, քանի որ վարկերը չեն օգտագործւում երկրի արտադրական կարողութիւնների մէջ ներդրումներ անելու նպատակով: Փոխարէնը, նրանք խրախուսում են սպառողական ապրանքների (մերսեդեսների) մեծաքանակ ներ-

մուծումը՝ արտահանման փոխարէն: Այս գործընթացի հետեւանքով հայրենական տնտեսութիւնը լճացել է, վճարումների հաշուեկշռի սղաճը մեծացել է, եւ արտաքին պարտքի բեռը աճել է:

Հողի Սեփականաշնորհում:

Համաշխարհային դրամատան բարեփոխումները ներառում են հողի սեփականաշնորհում եւ սեփականութեան կենտրոնացում փոքրաթիւ հողատէրերի ձեռքը: Հողամասերի գրաւադրման հետեւանքով ժամանակի ընթացքում առաջանում է հողազուրկ սեզոնային բանուորների դասակարգ:

Պետական ներդրումների անկման կազմակերպում:

Համաշխարհային դրամատան հանրային ներդրումների ծրագրի շրջանակներում յատկացուող վարկերը սովորաբար պահանջում են մրցակցային հիմունքներով միջազգային յայտեր (տենդեր), որի միջոցով հանրային ծրագրերի իրականացումը յանձնւում է միջազգային շինարարական եւ ճարտարապետական ընկերութիւններին: Այս ընկերութիւններն էլ վարկերի մի նշանակալի մասը իւրացնում են՝ ձեւակերպելով որպէս «խորհրդատուական» եւ «կառավարման» զանազան ծառայութիւնների վարձ: Տեղական հայկական ընկերութիւններին որպէս կանոն չեն ներգրաւում մրցոյթի մէջ, չնայած շինարարական աշխատանքների մեծ մասը կատարւում է տեղական ընկերութիւնների կողմից (էժան տեղական աշխատուժ օգտագործելով): Այլ կերպ ասած, ինֆրաստրուկտուրայի նախագծերի համար յատկացուած վարկերի մի մեծ մասը պարզապէս ձեռքից ձեռք է անցնում՝ ի նպաստ օտարերկրեայ ընկերութիւնների:

Պետական ձեռնարկութիւնների սեփականաշնորհում:

Կառուցուածքային փոփոխութիւնների իր ծրագրերով Համաշխարհային դրամատունը պարտապան երկրի ունեցուածքին տիրանալու նպատակ է հետապնդում՝ պետական ձեռնարկութիւնների սեփականաշնորհման միջոցով: Որպէս երկրի արտաքին պարտքը վերանայելու նախապայման պահանջւում է, որ պետական ձեռնարկութիւնները սեփականաշնորհուեն (երկրի ունեցուածքը գրոշներով վաճառուի): Երկրի ամէնից շահութաբեր եւ հեռանկարային ձեռնարկութիւնները ճանկւում են օտարերկրեայ ընկերութիւնների կողմից՝ պետական պարտքի դիմաց:

Տնտեսագիտութեան բնագաւառում Նոբելեան մրցանակի դափնեկիր Ջոու Սթիգլիցը, որը մինչեւ 1999 թուականը Համաշխարհային դրամատան գլխաւոր տնտեսագէտն էր, «Լոնդոն Օբզըրուըր» թերթում հանդէս է եկել այն դիտողութեամբ, թէ Միջազգային դրամական հիմնադրամն ու ԱՄՆ-ի Պետական գանձարանը ամէն ինչ արեցին, որ ռուսական ընտրութիւնները Ելցինի նախագահութեան օրօք իրենց ուզած արդիւնքը ունենան: Նա նաեւ դժգոհել է Նախագահ Ռուզուելտից յետոյ բոլոր ամերիկեան նախագահների կողմից պաշտպանուած գլոբալիզացիայի ծրագրից: Նա նկատել է հետեւեալը. «Պետութեան ղեկավարները սովորաբար չեն առարկում պետական ձեռնարկութիւնները ցածր գներով վաճառելուն: Փոխարէնը, նրանք օգտագործում են Համաշխարհային դրամատան պահանջները՝ լռեցնելու իրենց տեղական քննադատներին: Երկրի նախարարներին տրուող տաս տոկոս միջնորդավճարը կարծես իրականացնում է հարստանալու նրանց երազները: Գնից պարզապէս հանում են մի քանի միլիոն դոլար եւ փոխանցում շուեյցարական դրամատների իրենց հաշիւներին: Ամերիկեան կառավարութիւնը տեղեակ է այս ամէնին»: Աւելացնենք, որ օտարերկրեայ կազմակերպութիւնները ֆինանսաւորում են երկրի ղեկավարի վերընտրութիւնները այնքան ժամանակ, քանի դեռ նա պաշտպանում է վարկային պայմանագրերը:

Պարզ ասած, Հայաստանի ղեկավարները ստիպուած են վաճառել երկրի ունեցուածքը, որպէսզի կարողանան վճարել կառավարութիւնը վարելու նպատակով պարտքով վերցուած գումարների տոկոսները: Այսպիսի հանգամանքներում զարմանալի չէ, որ հայ ժողովուրդը չի կարողանում զարգացնել իր տնտեսութիւնը՝ օգտագործելով իր բնատուր արարիչ ձիրքերը:

Խորհրդային կարգերի ժամանակ Հայաստանը իր բախտը տնօրինելու ազատութիւն չուներ: Տասը տարուայ այսպէս կոչուած ազատութիւնից յետոյ շատ բան չի փոխուել. Խորհրդային Միութեան փոխարէն միջազգային ֆինանսական հաստատութիւններն են տնօրինում երկրի ճակատագիրը: Միակ տարբերութիւնը

այն է, որ Հայաստանի բնակչութիւնը ստիպուած արտագաղթում է երկրից, որով հայ ազգի բնաջնջման վտանգը մեծանում է: Սա, իհարկէ, միջազգայնապաշտների մտադրութիւնն է: Նրանք, ովքեր մնում են երկրում, նոյնպէս ենթարկւում են օտար մշակութային ազդեցութիւններին, որը աստիճանաբար փոխում է ազգի նկարագիրը: Միջազգայնապաշտների նպատակը «համաշխարհային կառավարութիւն» ստեղծելն է: Նրանց ճանապարհին միակ խոչընդոտը ազգայնականութիւնն է: Մեր միակ մխիթարութիւնը այս հանգամանքներում այն է, որ Հայաստանում գործում են ազգայնական խմբեր եւ հայրենասէր անհատներ, որոնք հասկանում են օտար ուժերի նպատակները Հայաստանում եւ կը գերադասէին մեռնել, քան հեռանալ հայրենիքից:

Հայաստանը պիտի դուրս գա միջազգայնապաշտների ճիրաններից: Այս գործընթացի հիմքերը հարկաւոր է պատրաստել շատ զգուշօրէն: Ամէնից առաջ, Հայաստանի ղեկավարութիւնը պարտաւոր է ունենալ անձնազոհ հայրենասիրական ոգի: Օտարերկրեայ ներդրումները պիտի խրախուսուեն, բայց ոչ այն ստրկացնող ձեւերով, որոնք պարտադրւում են միջազգային ֆինանսական հաստատութիւնների կողմից: Հայաստանի կառավարութիւնը պիտի վերանայի ոսկու հանքերի վաճառքի պայմանագրերը եւ դրանց տնօրինութիւնը փոխանցի Հայաստանի Խորհրդարանին: Հայաստանը պիտի հրաժարուի միջազգային ֆինանսական հաստատութիւնների վարկերից եւ ամրացնի իր ազգային դրամական համակարգը՝ ոսկու բաւականաչափ պաշար կուտակելով: Սա, անշուշտ, դուր չի գայ միջազգայնապաշտներին, որոնք կը ցանկանան ապակայունացնել երկրի առանց այն էլ երերուն տնտեսութիւնը: Հայաստանի հայրենանուէր կառավարութիւնը, սակայն, կը կարողանայ դիմակայել այդ ուժերին, եւ տնտեսութիւնը արագ կզարգանա:

Հայաստանը այս օրերին կանգնած է երկընտրանքի առաջ. կամ շարունակել ներկայ ընթացքով, որը տանում է դէպի ստրկութիւն եւ բնաջնջում, կամ պայքարել ազգային գոյատեւման համար:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
Փետրուար 23, 2002թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ

Հայաստանի ազգային պատմութիւնը կը յիշատակէ բազմաթիւ դէպքեր, որոնք թուլացուցած են եւ պառակտած մեր միացեալ ուժերը, եւ որոնց հետեւանքները եղած են աղէտալի ու կործանարար: Ներկայ փոքրատարածք Հայաստանի անկայուն եւ փխրուն դրութիւնը ուղղակի հետեւանք է նոյնինքն «բաժնեսցէ տիրեսցէ» հետեւողութեան:

Այսօր եւս ճշտօրէն կը կրկնուի այդ պատմական տեսարանը. ան «Թուրքեւհայկական հաշտութեան եանձնաժողովն» է: Պատմութիւնը ցոյց կուտայ, թէ հայ ժողովուրդին թշնամիները միշտ պինդ դիրք բռնած են, երբ մեզի հետ դէմ առ դէմ նստած «հասկացողութիւն» հետապնդած են: Յիշենք 1900-ական թուականներուն, երբ հայերը, առանց տեղեկացուած ըլլալու մութ ոյժերու մասին, երիտասարդ թուրքերուն իբր «եղբայր» համարեցին եւ այդպէս ալ ընդունեցին:

Այն հայերը, որոնք կը քաջալերեն «Թուրքեւհայկական հաշտութեան եանձնաժողով»-ին, այդքան պարզամի՞տ են, չե՞ն տեսներ (գիտակցաբար կամ ոչ) այդ խաւարածին ուժերը, որոնք՝ կազմ ու պատրաստ՝ կ'ուզեն բաժանեալ հայութիւն մը ստեղծել...

Հայաստանի ճակատագիրը սահմանուած է աշխարհի ներկայ կառավարողներէն, տէրեւտիրականներէն, որոնք իրենց եատուկ միջոցներով իրենց գծած ճանապարհը կը քաշքշին: Մենք ալ հարկադրուած ենք ընդունել իրենց արժէքները եւ կենցաղը, ինչպէս «ժողովրդավար պետութիւն», «քաղաքացիական հասարակութիւն», «անհատական ազատութիւն»: Հայկական այսօրուայ պետական հաստատութիւնները համաշխարհայնացման հետեւանօք օրէցօր աւելի կախեալ են աշխարհի տնտեսական սակաւապետութիւններէն (օլիգարխ). պէտք չէ յոյսը դնել այդպիսի ուժերու վրայ, որոնք կը ձգտին Հայաստանի մշակոյթը փոփոխութեան ենթարկել եւ ինքնակառավարման միջոցներ պարտադրել: Ասիկայ չկրնար Ազատ ազգ մը կազմաւորել:

Եթէ այսպէս շարունակուի, ժամանակը հեռու չէ, երբ մեր ըմբոնումները ժամանակավրէպ պիտի նկատուին: Մայր հայրե-

նիք, ընտանիք, հոգեկան եւ բարոյական արժէքներ յետամնաց պիտի սեպուին:

Շեղած կրօնքներ եւ պաշտամունքներ, խոտոր անհիմն յղացումներ, սեռային փոքրամասնութիւններ, դասալիք փախստականներ, հաշտարարներ, կաշառուած մարդիկ պիտի ըլլան մեր ընտրանին կազմողները: Այս անբարոյական հոսանքին դէմ ոչ մէկ դիմադրութիւն կայ Հայաստանի մէջ: Մենք չենք ուզէր դիմակայել թշնամին, իսկ ան սուտ բարեգործի քղամիդ զգեցած՝ կը սողոսկէ մեր մէջ:Թշնամին անգութ է եւ անողորմ, անոր անձնատուր չըլլանք: Ան որքան դուրսէն, նոյնքան ներսէն կ'աշխատի: Այս բարոյալքման եւ յուսահատութեան խելագար ընթացքը պէտք է կասեցուի:

Հայ անհատներու եւ կազմակերպութիւններու չպատկանէր հայրենիքի ճակատագրին եւ ներքին գործերուն միջամտելու գործնական քայլեր ընելու պարտաւորութիւնը: Ասիկայ կառավարութեան ասպարէզն է: Բայց ան տեղեակ պէտք է ըլլար ծածուկ եւ մութ ուժերուն գոյութենէն: Կառավարութիւնը դիւանագիտական ուսումնական եւ փիլիսոփայական ուղղութիւններու ազդեցութիւնէն հեռու պէտք է մնայ եւ իմաստութեամբ աշխատի հայ ժողովուրդին բարօրութեան համար: Մեր դիւանագէտները գեղեցիկ ճառերով կ'այցելեն Նոր աշխարհակարգ ստեղծելուն լծուած կեդրոնները՝ այդ աշխարհակարգին անդամ ըլլալու եօյսեր փայփայելով, բայց շատ շուտով պիտի հիասթափուին ճշմարտութիւնը գիտնալով: Այսօր Հայաստանը ունի բացայայտ տեսանելի ու նաեւ անտեսանելի թշնամիներ:

Անտեսանելի թշնամիին մէկ օրինակը Արժոյթի միջազգային հիմնադրամն է (International Monetary Fond), ինչպէս նաեւ համաշխարհային դրամատունը (World Bank): Երկուքն ալ բուռն ցանկութիւն կը եայտնին փողաւորելու Հայաստանի տնտեսութիւնը վերականգնելու աշխատանքները:

Ճիշտ այդ գումարները, պարտադրեալ նախապայմաններով խեղդուած եւ նախապայմաններով կորսուած, Հայաստանի տնտեսական դրութիւնը ճահճային վիճակի մէջ կը պահին դաւադրաբար եւ նոյնիսկ անկման կենթարկեն: Հայաստանը պէտք է իր ճակատագիրը իր ձեռք առնէ՝ ստեղծելով իր դրամը 50 տոկոս ոսկիով եւ

ցած տոկոսով (3-4%) փոխ տալով ժողովուրդին օրինաւոր գործեր բանալու համար, փոխանակ՝ ՄՊՔ եւ ՅՊ անխիղճ պայմաններուն հետեւելու: Եթէ 1990եւէն իսկ այս ձեւով պարկէշտ դրամական քաղաքականութիւն մը հաստատուէր, այսօր Հայաստանը կը կարողանար քալել դէպի աւելի բարգաւաճ եւ ծաղկուն իրավիճակի մը:

Հայկական համախմբումը (Armenian Assembly) պէտք է դադարեցնէ ամերիկեան ոգիի եւ բարքերու փոխադրումը Հայաստան: Այդպէս շարունակուելու պարագային՝ մեր երկիրը պիտի վերածուի մէկաշխարհական-գլոբալական տարածութեան: Հայկական համախմբումը իր շահին համար գացեր միացեր է այդ ազդեցութիւն ունեցող ուժերուն: Բայց չանդրադառնար, որ նոյն այդ ուժերը զինք որպէս գործիք կը գործածեն:

Բոքա Ռեյբըն,
Հոկտեմբեր, 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Իր յայտնի «Տուէ՛ք ինձ ազատութիւն կամ մահ» ճառի մէջ Վերջինիայ նահանգի Ռիչմոնդ քաղաքի Սուրբ Յովհաննէս եկեղեցում 1775 թուականի մարտի 23-ին Պատրիկ Հենրին ասաց. «Ես ուզում եմ իմանալ ողջ ճշմարտութիւնը, որքան էլ մեծ հոգեկան տառապանք դա պատճառի: Ուզում եմ իմանալ վատթարագոյնը՝ որպէսզի կարողանամ դիմագրաւել այն»:

Այս համբաւաւոր միտքը Հայաստանի կառավարութեանը ներշնչող ոգին պէտք է հանդիսանա:

Հայաստանի ներկայ կառավարութիւնը ըստ երեւոյթին անտեղեակ է ճշմարտութեանը եւ այդ պատճառով պատրաստ չէ դիմագրաւելու վատթարագոյնին: Նրանք չգիտեն ինչպէս ստեղծել ազատ պետութիւն գլոբալիզացիան իրականացնողների աննկատելի եւ նենգ ներխուժման պայմաններում:

Նախ եւ առաջ պէտք է հաստատել, որ մարդը իր իրաւունքները ստանում է կամ մարդուց, կամ իրաւունքներ ստեղծող աւելի բարձր մէկից: Եթէ չկայ աւելի բարձր մի հեղինակութիւն, մարդը միշտ փորձում է ստրկացնել մարդուն: Ազատութեան եւ խաղաղութեան Ամերիկայի առաջին մեծ պաշտպան Վիլեամ Պիթը գրել է. «Եթէ մարդիկ չկառավարուեն Աստծով, բռնակալները կը կառավարեն նրանց»:

Թւում է, թէ Հայաստանի կառավարութիւնը չի կարողացել նախապատրաստուել դիմագրաւելու վատթարագոյնին, պատկերացրած չլինելով պետականութեան ճանապարհի խոչընդոտները, երբ որոշ ուժեր փորձում են ստեղծել «համաշխարհային կառավարութիւն»: Նրանք խճճել են իրենց հէնց այն միջազգայնապաշտ կազմակերպութիւնների ցանցում, որոնք իրականում դէմ են փոքր եւ անկախ ազգութիւնների գոյութեանը:

Հետեւյալ հաստատութիւնները մի քանիսն են բազմաթիւ այն կազմակերպութիւններից, որոնք կոչուած են կառավարելու աշխարհը:

Միացեալ ազգերի կազմակերպութիւն:

Մեզ միշտ ասուել է, թէ ՄԱԿ-ը աշխարհի վերջին եւ լաւագոյն յոյսն է խաղաղութիւն պահպանելու համար: Ազգամիջեան խնդիրների խաղաղ ճանապարհով լուծումը եւ ազգերի համերաշխութիւնը բոլոր ազնիւ ժողովուրդների ձգտումներից են: ՄԱԿ-ը, սակայն, կատարեալ ձախողութեան է մատնուել խաղաղութիւն պաշտպանելու իր նպատակի մէջ: Այս կազմակերպութեան՝ 1945 թուականին հիմնադրումից ի վեր հարիւրաւոր պատերազմներ են տեղի ունեցել: Միջպետական կռիւները, պարտիզանական ապստամբութիւնները եւ ահաբեկչութիւնը շարունակում են խլել բազմաթիւ կեանքեր (Նիւ Ամերիքըն, հոկտեմբերի 22, 2002 թ., էջ 13):

Մարդկային այս աղէտները առիթ են հանդիսացել ՄԱԿ-ի շրջանակներում նոր կազմակերպութիւնների ստեղծման համար, որոնց բոլորի նպատակը նոյնն է՝ աշխարհը կառավարելը: Ակնյայտ է, որ ՄԱԿ-ը իր հիմնադիրների կողմից ծրագրուած սոցիալիստական համաշխարհային կառավարութիւն դառնալու համար զինուորական ուժի անհրաժեշտութիւն ունի: Այդ ուժը այնքան հզօր պիտի լինի, որ կարողանայ պարտադրել իր կամքը: Այս նպատակին են ծառայում, օրինակ, տարբեր պետութիւնների մասնակցութեամբ միացեալ ռազմափորձերը: Հայաստանի պարագայում այդպիսի ռազմափորձերը թուլացում են հայ զինուորների ազգային ոգին՝ նրանց ներշնչելով համաշխարհային բանակի մաս լինելու գիտակցութիւնը:

ՄԱԿ-ի նպատակը համաշխարհային կառավարութիւնն է եւ մէկ աշխարհը, որտեղ ազգային պետութիւններն ու մշակոյթները տեղ չունեն:

ՄԱԿ-ը նաեւ ծրագրում է համաշխարհային տուրք: Սթիւ Բոնթան իր «Համաշխարհային տուրքահաւաք» գրքում նշում է. «Համաշխարհային կառավարութեան ջատագովները ցանկանում են համաշխարհային տուրք մտցնել, որպէս ՄԱԿ-ը համաշխարհային կառավարութեան քայլ առ քայլ վերածելու ծրագրի մաս» (Նիւ Ամերիքըն Սփեշըլ Ռիփորթ, 22-ը հոկտեմբերի, 2001 թ.):

Հռոմի Ակումբ:

Հռոմի Ակումբը խիստ ազդեցիկ համաշխարհային հետազոտական հաստատութիւն է, որի հինական նպատակը աշխարհի

բնակչութիւնը երկու միլիարդով նուազեցնելն է, եթէ անգամ դա պահանջի պատերազմ, սով, համաճարակ կամ որեւէ այլ միջոց: Այս նպատակի հիմքում ընկած է շրջակայ միջավայրի պաշտպանութեան խաբէութիւնը: Դկ. Ժաքլին Կասունը իր «Պատերազմ աշխարհի բնակչութեան դէմ» գրքում զգայացունց տեղեկութիւններ է բերում աշխարհի բնակչութեանը հսկողութեան տակ պահելու բազմամիլիոն դոլար արժողութեամբ ծրագրերի մասին: Թոմաս Ֆերգուսոնը՝ Միացեալ Նահանգների Պետական Դէպարտամենտի բնակչութեան բաժնի Լատինական Ամերիկայի գրասենեակի պատասխանատուն, յայտարարել է. «Մենք կը գնանք ցանկացած երկիր եւ կ'ասենք՝ դէն նետէք զարգացման ձեր խղճուկ ծրագիրը: Մտածէք, թէ ինչ պէտք է անէք բնակչութեան չափերը կրճատելու համար: Եթէ համաձայն չէք եւ չէք ցանկանում դա անել ընտանիքի չափի փոքրացման ճանապարհով, վաղ թէ ուշ կը դառնաք մի երկրորդ էլ-Սալուադոր կամ Իրան, կամ, որն աւելի վատ է, Կամբոջիայ»: /Էքզեքիւթիւ Ինթելիջընս Ռիւիւ, 10-ը մարտի, 1961 թ./:

Եւրախորհուրդ:

Մեծ խանդավառութեամբ Հայաստանի՝ Եւրախորհրդի անդամ դառնալուց յետոյ, այս կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Վոլթըր Շվիմերը Հայաստանը դասակարգեց որպէս «պատերազմական վիճակի մէջ գտնուող երկիր» եւ Հայաստանի կառավարութիւնից սպառնալով պահանջեց համաձայնութիւն կնքել Ադրբեջանի հետ Ղարաբաղի հարցի առնչութեամբ: (Արմինֆո, Երեւան, յունիս, 2002 թ.): Հետաքրքիր է, ինչպէ՞ս կարող է Հայաստանը պատերազմի մէջ լինել, երբ արդէն եօթ տարի է անցել ռազմական գործողութիւնների աւարտից: Մի՞թէ Հայաստանի կառավարութիւնը չէր հասկանում, որ անդամակցելով մէկ-աշխարհական այդ կազմակերպութեանը, կորցնելու է իր անկախութիւնը:

Վոլթըր Շվիմերը նաեւ ասել է. «Մենք ապրում ենք գլոբալիզացիայի դարում երբ սահմաններ փակելը բնական աղէտ է բոլորի համար» (Արմինֆոյ, Երեւան, յուլիսի 2, 2002 թ.): Հարց է առաջանում՝ ինչու՞ է Եւրախորհրդի ղեկավարը այդքան մտահոգուած Հայաստանի սահմաններով: Եթէ պրն. Շվիմերը իսկապէս մտահոգուած է փակ սահմաններով, պէտք չէ՞ արդեօք, որ նա նախ

խօսի նրանց հետ, ովքեր փակել են Հայաստանի սահմանները: Ի դէպ, պատմութիւնը ցոյց է տուել, որ միշտ ուրիշներն են որոշել Հայաստանի սահմանները: Եթէ պրն. Շվիմերը մտահոգուած լինէր Հայաստանի ապագայով, նա Հայաստանը չէր անուանի «ճիշտ ճանապարհով ընթացող աշակերտ»: Լինելով աւստրիական խորհրդարանի Իսրայէլի հետ բարեկամութեան խմբի ղեկավարը 1976 թուականից մինչեւ 1999-ը, Պրն. Շվիմերը մի՞թէ չէր կարող համոզել Իսրայէլի կառավարութեանը, որ վերջինս դադարեցնի մարզել Ադրբեջանի զինուած ուժերին: /Իսրայէլը մասնակցում է ադրբեջանական ձեռնարկների, Ջոունզ Դիֆենս Ուիքլի, դեկտեմբերի 22, 1999 թ./:

Ո՞վ է կառավարելու Հայաստանը՝ պրն. Շվիմերը՞, թէ՞ Հայաստանի ժողովուրդը: Լրագրող Գեւորգ Սարգսեանը «Հայոց աշխարհ» թերթի անցեալ տարուայ յուլիսի 12-ի համարում գրում է. «Հայաստանը Եւրոպային աջակցող երկիր է»: Սա նման է 1908 թուականի հայերի ողջագուրմանը թուրքերի հետ՝ «մենք եղբայրներ ենք» ասելով: Հայերը կարող են եւ պէտք է յարաբերուեն Եւրոպայի հետ, բայց ոչ թէ հրամայուեն Եւրախորհրդի կողմից:

Ազատ Եւրոպա ռադիոկայան:

Ազատ Եւրոպա ռադիոկայանը, որը ֆինանսաւորւում է Միացեալ Նահանգների կառավարութեան կողմից, այսօր ազատութիւն չի հաղորդում: Ոմն Մաքս Լիբըրթի, 2001 թուականի դեկտեմբերին Հայաստանի համար մի հաղորդման մէջ հայ երիտասարդներին քարոզում էր կրօնական պաշտամունքներ, երկսեռականութիւն, ազատ սեռական յարաբերութիւններ եւ գովաբանում պոռնոգրաֆիայի աստղերին /Ազգ, դեկտեմբերի 10, 2001 թ./: Սա ազգային մշակոյթը արմատախիլ անելու բազմաթիւ ձեւերից մէկն է: Մի՞թէ Հայաստանի կառավարութիւնը չի նկատում սա: Եթէ նկատում են, ինչու՞ բողոք չեն ներկայացնում Միացեալ Նահանգների պետական դէպարտամենտին: Ի՞նչ է անում Հայաստանի կառավարութիւնը պաշտպանելու համար մեր ազգային նկարագիրը:

Միջազգային դատարան:

Միջազգային դատարանը գտնւում է Հոլանդիայի Հէյգ քաղա-

քում: Դատարանի գաղափարը որդեգրուեց գլոբալիզացիայի ջատագովների կողմից 1988 թուականի յուլիսի 17-ին Հռոմում կայացած մի համագումարի ընթացքում: Այս դատարանը իրաւունք ունի բեկանելու անկախ պետութիւնների դատարանների վճիռները: Օրինակ, այն պաշտպանում է կանանց իրաւունքները եւ երեխաների իրաւունքները ծնողների նկատմամբ այնպէս, որ իրականում քանդում է ընտանիքի հիմքերը: Այն կարող է նաեւ Ղարաբաղի կառավարութեան անդամներին դիտել իբրեւ պատերազմի յանցագործներ եւ նրանց դատի տալ: Դատարանը կարող է նաեւ դատել Հայաստանի զինուած ուժերի ցանկացած անդամի, անտեսելով Հայաստանի արդարադատութեան ատեանների վճիռները: Անցեալի ցեղասպանութիւնները, այդ թւում հայ ժողովրդինը, դատաքննութեան չեն դրուելու: Միջազգային դատարանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մէկը միջազգային այն կազմակերպութիւններից, որոնք հիմնուել են իրականացնելու Մակեւի՝ համաշխարհային կառավարութիւն դառնալու նպատակը:

Միջազգային Զարգացման Միացեալ Նահանգների Գործակալութիւն:

Սա ԱՄՆ-ի կառավարութեան կողմից ֆինանսաւորուող մէկ ուրիշ կազմակերպութիւն է: Անցեալ տարի այն ինը սեւամորթ ամերիկացի ուսանող ուղարկեց Հայաստան: Նրանք հայ պատանիներին սովորեցրին ամերիկեան հոկիյ-փոկիյ աճպարար պարեր էլեկտրական սահիկներով (Արմենիա-ուիկ, յուլիսի 5, 2002 թ.): Այս կազմակերպութեան առաջին նպատակը շրջակայ միջավայրի պաշտպանութեան քօղի տակ տարբեր երկրների տնտեսական զարգացման ընթացքը փոխելն է: Նրանց ցանկացած փոփոխութիւններից մէկը Հայաստանի ատոմակայանը փակելն է: Հետեւյալը մէկն է անկախ պետութիւնների նկատմամբ նրանց մտադրութիւնները արտահայտող հարցադրումներից. «Մշակուե՞լ է արդեօք երկրում շրջակայ միջավայրի պաշտպանութեան համապարփակ մի ծրագիր, որի շրջանակներում հնարաւոր լինի փոխել տնտեսական եւ հասարակական յարաբերութիւնները»: Տարօրինակ չէ՞ արդեօք, որ վերոյիշեալ սեւամորթ երիտասարդները չուղարկուեցին Աֆրիկայ՝ փոխելու իրենց իսկ տնտեսական եւ հասարակական յարաբերութիւնները:

Հայաստանի լրատուական միջոցների վերահսկումը:

Հայաստանի կառավարութեան կողմից Ա1+ եւ Նոյեան տապան հեռուստատեսային կայանների արտօնագրերի նորացման մերժումը խօսքի ազատութեան կաշկանդման մի օրինակ է: Այս կայանների տեղը եթերում գրաւել է Շարմ անունով փորձառութիւնից զուրկ մի ընկերութիւն, որի ծրագրերը կազմուած են հիմնականում սպորտի, նորաձեւութեան եւ երաժշտական հաղորդումներից: Հայաստանի կառավարութիւնը, հայկական որակեալ հեռուստատեսային եւ լրատուական միջոցները լռեցնելու փոխարէն պէտք է արգելի Սի էն էն-ի անվճար հեռարձակումը Երեւանում եւ շրջակայ տարածքներում: Սի էն էն-ի լրատուութիւնը նպատակ ունի ձեւաւորել նպաստաւոր մտածողութիւն եւ լի է բարոյազուրկ հաղորդումներով: Այն ոչինչ չի աւելացնում Հայաստանի մտաւոր եւ ազգային բարձրութեանը:

Միայն այն ժողովուրդները, որոնք մտքի ազատութիւն ունեն, կարող են դիմագրաւել թշնամիների ոտնձգութիւններին:

Եզրափակում:

Ամօթալի չէ՞ արդեօք, որ երբ սփիւռքահայ հայրենասէր շատ անհատներ ձեռնարկութիւններ են հիմնում Հայաստանում՝ նպաստելու երկրի բարգաւաճմանը, կառավարութիւնը ծանրաբեռնում է երկիրը միջազգային հիմնադրամներից եւ դրամատներից վերցուած մեծագումար պարտքերով: Հայաստանի կառավարութիւնը նոյնիսկ վաճառում է օտարներին երկրի ազգապատկան դարաւոր հարստութիւնները, ինչպիսիք են ոսկու հանքերը:

Ի՞նչն է, որ պատմութեան այս շրջանում մեզ հպարտ է պահում մեր հայ լինելով: Ա՞յն, որ անդամակցել ենք հակաքրիստոնեայ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին՝ 17 դար քրիստոնեայ լինելուց յետո: Թէ՞ այն, որ երբ աշխարհի չորս կողմերում ցրուած հայութիւնը երկու սերնդի ընթացքում իր ազգային ինքնութիւնը կորցնելու վտանգի մէջ է, Հայաստանում մեր ազգի գոյատեւման խնդիրը յանձնուած է պրագմատիզմին՝ մեր ազգային արժէքները պաշտպանելու փոխարէն:

Բարեբախտաբար, Հայաստանում հայրենասէրների պակաս չկա: Նրանք կը զոհուեն մայր հողում, բայց չեն լքի այն: Հայաս-

տանի հայրենասէր երիտասարդութիւնը այսօր ներշնչւում է Գարեգին Նժդեհի ազգասէր ոգով: Նժդեհը ոչ միայն զինուորական մեծ գործիչ էր, որ փրկեց Զանգեզուրը 1920 թուականին, այլ նաեւ մի մեծ փիլիսոփայ, որի սիբիրեան բանտում գրուած գործերը տարածուած են այսօր Հայաստանում: Տեղին է յիշել Նժդեհի հետեւեալ խօսքերը. «Երբ դաշնագիր ստորագրէք, իմ արիւնով ստորագրէք այն»: «Իմ կեանքում, խղճիցս բացի, երկու դատաւոր ճանաչեցի՝ Աստուածը եւ ժողովուրդը: Ես մեղանչեցի Աստծոյ դէմ, բայց երբեք ժողովրդի»:

Այսօրուայ հայրենասէրները, լաւ գիտակցելով Հայաստանի դժուար աշխարհաքաղաքական իրավիճակը, այնուամենայնիւ հպարտ են այն անձնազոհ հերոսներով, որոնք փրկեցին անփրկելի թուացող Ղարաբաղը: Պէտք է քաջալերել եւ զօրաւիգ կանգնել այս հայրենասէր անհատներին եւ կազմակերպութիւններին, որպէսզի ազգի առողջ կորիզը մնա անձեռնմխելի: Այդ ժամանակ միայն կարելի է խելացիօրէն լուծել բոլոր ազգային եւ Հայաստանին վերաբերող միջազգային խնդիրները:

Բոքայ Ռոբոն, Ֆլորիդա,
Յուլիս, 2002 թ.

ԶԳՈՒՇԱՑԻ՛Ր ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՒ ԱՋԻՐ ՔՈ «ՄԷԿԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ»

Մեզ՝ հայերիս, անհրաժեշտ է ոչ միայն հասկանալ միասնութեան յոյժ կարեւոր նշանակութիւնը հայոց պետականութեան գոյատեւման համար, այլ նաեւ տեսնել այն ուժերը, որոնք ազդում եւ առաջնորդում են աշխարհի հզօրների արտաքին քաղաքականութիւնը, որը կարող է իր ազդեցութիւնն ունենալ Հայաստանի վրայ:

Անցած ութսուն տարիների ընթացքում մեծ տերութիւնները աւելի ու աւելի են միջամտել այլ երկրների գործերին՝ աստիճանաբար վերածվելով համաշխարհային ոստիկանների: Նրանք ստեղծել են «Նոր Աշխարհակարգ», ինչպէս Պարսից ծոցի պատերազմի ժամանակ հայտարարեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը:

«Նոր Աշխարհակարգի» իրական իմաստը բոլոր պետութիւնների սերտաճումն է մէկ պետութեան՝ համաշխարհային տնտեսական իշխանութեան հաստատելու համար: Ազատ եւ անկախ պետութիւնները անէծք են Նոր Աշխարհակարգի կողմնակիցների համար: Միայոյս եւ մէկ ընդհանուր համաշխարհային կենտրոնի հետ կապված միջազգային եւ շրջանային հաստատութիւնների զարգացմամբ պետութիւնները կը կառավարվեն մի «համաշխարհային կառավարութեան» կողմից, որը իր վերջնական խօսքը կ'ունենայ աշխարհի գործերում՝ արտայայտելով հզօրների շահերը: Փոքր երկրների կենսական շահերը կը ստորոդասվեն հզօր երկրների շահերին: Մեծ տերութիւնները կը փորձեն ուժով համոզել, որ իրենց առաջնային շահերը նաեւ ցանկացած այլ երկրի շահերն են:

Նոր Աշխարհակարգի ժամանակ միջպետական սահմանները կը դառնան անտեղի եւ տարածքային վեճերը կ'ընկալվեն որպէս անցեալի մնացորդ եւ սպառնալիք՝ Նոր Աշխարհի անվտանգութեան համար: Միաշխարհական գաղափարախօսութեամբ ժողովուրդների պետական գիտակցութիւնը թուլացնելու նպատակով «Նոր Աշխարհակարգի» պաշտպանները կը մշակեն քաղաքականութիւններ եւ կը ձեռնարկեն քայլեր,որոնք պիտի քողարկվեն «գլոբալիզմ» եւ «ինտերնացիոնալիզմ» գաղափարների անվան

տակ: Կը խրախուսվի բազմազգ երկրների ձեւաւորումը եւ կը խոչընդոտվի ազգային պետութիւնների ստեղծումը: Այդպիսի երկրներում նոր օրէնքներ կ'ընդունվեն, որոնք կը խրախուսեն եւ նույնիսկ կ'արագացնեն ժողովուրդների ձուլումը այն նպատակով, որ ոչ մի էթնիկ խումբ չհավակնի որեւէ տարածքի՝ պատմական կամ ժողովրդագրական հիմքի վրայ: Որքան քիչ լինեն պետութիւնները, այնքան հեշտ կը լինի ղեկավարել աշխարհը: Որքան քիչ էթնիկ խմբեր եւ փոքրամասնութիւններ գոյութիւն ունենան, այնքան աւելի քիչ կը լինեն ազգամիջեան կոնֆլիկտները: Ինչքան շատ լեզուներ եւ մշակոյթներ ձուլվեն կամ անհետանան, այնքան աւելի հեշտ կը լինի զբաղվել ձեռնարկչատիրական գործունեութեամբ եւ վաճառել միանման ապրանքատեսակներ ամբողջ աշխարհում:

Միջազգային հաղորդակցութեան համակարգերը, որոնք ղեկավարում են նոյն «գլոբալ» ուժերը, նոյնպէս աշխատում են այդ ուղղութեամբ: Ճնշված եւ փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները՝ նպատակաուղղված ազգային ազատութեան եւ ինքնորոշման, կ'ընկալվեն որպէս « նոր չարիք», որի դէմ միջազգային հանրութիւնը պիտի պայքարի մեծ տերութիւնների գլխավորութեամբ: Սա հաստատվել է ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հայտարարութիւններով: Նա հայտարարեց, որ «ՆԱՏՕ-ն ներկայումս նոր թշնամի ունի. պետութիւնների անկայունութիւնը՝ առաջացած աղքատութեան, սահմանային խնդիրների եւ էթնոնացիոնալիզմի հետեւանքով»: Քաղաքականութիւն մշակող հաստատութիւնների մի ամբողջ բանակ պատրաստ է ազգային-ազատագրական պայքարը սահմանելու որպէս «էթնիկ կոնֆլիկտ»: Նրանք կանխամտածված հակադրվում եւ միջամտում են այս պայքարին՝ ձգտելով անկայունացնել իրադրութիւնը եւ նուազագոյնի հասցնել կոնֆլիկտի հետեւանքով ուժեղ եւ անկախ պետութիւնների առաջացման հնարաւորութիւնները: Դա սպառնալիք կլիներ նրանց համաշխարհային տիրապետութեանը:

Սա իր հերթին կարող է նշանակել աշխարհի հզօրների կողմից օգնութիւն այն երկրներին, որոնք իրենց վիճելի սահմաններում ունեն սահմանային խնդիր եւ հատկապես ազգային-ազատագրական պայքար: Սա կարող է հրահրել նաեւ նոր արյունահեղութիւններ՝ հանուն պետութիւնների տարածքային ամբողջականութեան՝ ի վնաս իրենց ազատութեան համար պայքարող ժողովուրդների:

Աշխարհի այս ձեւափոխութիւնը արագացաւ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ «ապագայով մտահոգված» հարյուր հասարակաստեղծ ինժեներների մի խմբի ստեղծմամբ, որի առաջին գործը եղաւ Վերսայլի հաշտութեան պայմանագիրը: Այս խումբը ձեւաւորեց «Միջազգային հարաբերութիւնների ինստիտուտի» միջուկը, որը հետագայում հիմնեց Նիւ Եորքի «Արտաքին հարաբերութիւնների խորհուրդ» եւ «Լոնդոնի միջազգային գործերի Թագավորական Ինստիտուտ» մասնաճյուղերը: Այդ ժամանակվանից ի վեր, այս համակարգը, որ ներկայացնում է հզօր տնտեսական եւ քաղաքական շահեր, վերածվել է այսօրուայ Եօթի խմբի եւ ներկայումս փորձում է ներքաշել Ռուսաստանին՝ որպես ութերորդ անդամ: Իշխանութեան այս կենտրոնացումը իրագործվել է Միավորված ազգերի կազմակերպութեան միջոցով: ՄԱԿ-ը ցուցադրաբար ստեղծուեց այն պատրանքով, որ նա վերջ կը դնի պատերազմներին: (Այդ դէպքում ինչո՞վ բացատրել Կորեայի, Վիետնամի, Արգենտինայի, Պարսից ծոցի, Սոմալիի եւ Բոսնիայի պատերազմները:) Դեռ աւելին, ՆԱՏՕ-ն, որի անդամ է Թուրքիան, վերածվել է ՄԱԿ-ի իրավապահ թեւի: Սրանով կարելի է բացատրել եօթի խմբի կողմից եւ՝ Թուրքիային, եւ՝ Ադրբեջանին ցոյց տրվող օգնութիւնը: Այս խումբը ներառում է հետեւեալ երկրները՝ Մեծ Բրիտանիայ, Գերմանիայ, Ֆրանսիայ, Իտալիայ, Կանադայ, Ճապոնիայ եւ ԱՄՆ:

Այս Նոր Աշխարհակարգում հայ ժողովրդի կենսական շահերը պաշտպանելու համար Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնները աւելի ու աւելի հզօր զինված ուժերի կարիք ունեն՝ աջակցված ուժեղ տնտեսութեամբ, բնակչութեան աճով, միացյալ ազգային գաղափարախոսութեամբ:

Արտաւազդ Աւագեան,
Անդրանիկ Պետրոսեան
սեպտեմբեր 1999

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Մուրադ Մուրադեանի «Նոր հայէացք Հայ-թուրքական հաշտեցման յանձնաժողովի մասին»(ՀԹՀՅ) գրքոյկը մանրազնին կերպով գնահատում է յիշեալ յանձնաժողովի գործունէութիւնը: Դոկտոր Մուրադեանը մատնանշում է այն սխալները, որոնք կատարուել են ՀԹՀՅ-ի ձախողման ժամանակահատուածում (2001թ.-ի յուլիսի 9-ից մինչեւ 2004թ. ապրիլի 15-ը):

Հաշտեցման այդ փորձը, որը կազմակերպել էին ոչ կառավարական կազմակերպութիւնները եւ որի մէջ ընդգրկուել էին Հայկական Համագումարի ու Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներ, պարունակում էր Հայաստանի հետ սահմանը բացելու վերաբերեալ Թուրքիային ուղղուած պահանջ:

Թուրք-հայկական սահմանի բացումը նշանակում է ազատ առեւտուր 70 միլիոնանոց երկրի հետ: Մի քանի տարուայ ընթացքում երկու միլիոն թուրքեր որպէս առեւտրականներ ու գործարարներ կ'երթեւեկեն ու կ'ապրեն Հայաստանում: Նրանք այլեւս կարիք չեն ունենայ ռմբակոծութիւնների՝ զաւթելու համար այն, ինչ որ մնացել է Հայաստանից: Հնարաւո՞ր է, որ Թուրքիան խոչընդոտներ ստեղծի հայկական ապրանքները իր տարածքով համաշխարհային շուկայ արտահանելու համար:

Դժբախտաբար Հայաստանի տնտեսական քաղաքականութիւնը 1990թ.-ից սկսած սխալ ուղով է գնում: Կոմունիստական տնտեսական մտածելակերպը վերանալուց յետոյ երկիրը սկսեցին կառավարել Համաշխարհային բանկի եւ Արժոյթի միջազգային հիմնադրամի փողերով կաշառուած ագահ արկածախնդիրները: Դրանք կաշառուեցին այն փողերով, որոնք ուղղուած էին երկրի տնտեսական լճացումը շարունակական դարձնելուն: Դրա հետեւանքով Հայաստանի բնակչութիւնը դիմեց զանգուածային արտագաղթի. տեղի ունեցաւ հէնց այն, ինչ ցանկանում էին Հայաստանի թշնամիները:

Մենք այնքան ժամանակ «Հաշտեցման» մասին չպէտք է մտածենք, քանի դեռ Հայաստանի գլուխ կանգնած է անհայրենասէր

կառավարութիւն: Կառավարութիւն, որն իր պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանին թոյլատրում է ժողովրդից քամուած միլիոններ վատնել Մոնտէ Կարլոյի խաղատներում: Նրա եղբայր Ալեքսանդր Սարգսեանը պատրաստւում է ընտանիքով գաղթել երկրից՝ բազմամիլիոնանոց ունեցուածք գնելով Կալիֆորնիայում: Որտեղի՞ց նրան այդքան գումար աղքատացած երկրում:

Կառավարութիւնը չի փորձում պաշտպանել իր ազգի մշակոյթը եւ չի պայքարում ապականուած մշակոյթների ներթափանցման դէմ:

Կառավարութիւն, որը դաշնակցել ու դաշնակցում է մէկ-աշխարհական կազմակերպութիւնների, օրինակ, Եւրամիութեան (քրիստոնէական ժառանգութիւնից հեռացած) եւ Եւրախորհրդի հետ, որը Հայաստանի կառավարութեանը թելադրում է ինչպէս կառավարել երկիրը: Հայաստանի Կենտրոնական բանկը համաշխարհային շուկայում ունցիան 400$ գնով վաճառել է 1.3 տոննա ոսկի: Որտեղի՞ց այդ ոսկին, եւ ինչպէ՞ս տնօրինուեց դրա վաճառքից գոյացած գումարը:

Հայաստանի կառավարութիւնը Արցախի հարցի շուրջ համաձայնագիր կնքելու ուղղութեամբ կուլիսների յետեւում գաղտնի բանակցութիւններ է վարում միջազգային ուժերի հետ: Համաձայնագրերի կարիք չկայ: Բոլոր համաձայնագրերը աւարտւում են 30.000 երիտասարդ հայկազունների զոհողութեամբ. բայց հայկական կառավարութեանը այդ հարցը կարծես թէ չի յուզում:

Խօսակցութիւններ են գնում Ղարաբաղի հարցը բաւարարել հայկական հողերի փոխզիջմամբ, քանի որ քմահաճ աշխարհը դա լաւ տարբերակ է համարել: Այդպիսի դիրքորոշումը անթոյլատրելի է:

Սրանք այն հիմնական խնդիրներն են, որոնց շուրջ պէտք է կենտրոնանայ հայ ժողովուրդը: Աշխարհասփիւռ հայութիւնը պէտք է իմանայ, որ Հայաստանում կան հայրենասէր անհատներ, ովքեր պատրաստ են մեռնել հայրենիքի համար, սակայն նրանք անզօր են դիմագրաւելու արտասահմանեան հզօր դրամատէր ուժերին, որոնք սատարում են իրենց պատկերացրած Հայաստանին:

Հայրենասէր Սփիւռքը դրամական եւ մարդասիրական օժանդակութիւն է ցուցաբերում Հայաստանին, սակայն սփիւռքի բազմաթիւ կազմակերպութիւններ չեն քննադատում Հայաստանի ներկայիս անհայրենասէր կառավարութեանը: Մի՞թէ դա իրենց դիրքն

ու արտօնութիւնները կորցնելու վախից չէ: Եթէ չես քննադատում քո հայրենիքի բռնապետական կարգերը, թուլացնում ես հայրենիքը, ներում ես նրա կատարած այն գործերը, որոնք պէտք է ուղղել:

Դոկտոր Սուրադեանը իր գրքոյկի 13-րդ էջում նշում է, որ Հայ-թուրքական հաշտեցման յանձնաժողովի անդամներից Դէյուիդ Ֆիլիպսը փաստօրէն «ԱՄՆ կառավարութիւնից անկախ անհատ չէր: Իսկ պարոն Մարկ Գրոսսմանը այդ ժամանակուայ ԱՄՆ կառավարութեան մէջ երրորդ մարդն էր»: Այս մարդիկ, որոնք ներքաշուել էին ՀԹՀՅ-ի մէջ, ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը թուրքամէտ ուղու վրայ դնելու մէջ մեծ ներդրում ունեն: ՀԹՀՅ-ի մէջ նրանք ներքաշուել են հայերի մէջ հեղինակութիւն ձեռք բերելու համար: Մինչդեռ սրանց հայրենակիցները Թուրքիային (որի նախնի երիտթուրքերը իրագործեցին հայկական եղեռնը) տանկեր ու ռազմական օդանաւեր են մատակարարում եւ վարժեցնում են ադրբէջանական զինուած ուժերը:

Եթէ մենք չենք կարողանում ճանաչել մեր թշնամուն, արժանի չենք ազգ կոչուելու: Հետաքրքիր է՝ հա՞յ, թէ՞ թուրք միտքն է յղացել հայ-թուրքական հաշտեցման յանձնաժողովի գաղափարը:

Յարգանքի է արժանանում նա, ով իրեն խրոխտ է պահում, թէկուզեւ փոքր է: Թոյլ խօսքը միայն արհամարհանք է առաջացնում թշնամու մօտ: Նախ զօրացրու ազգդ, եւ թշնամին ինքը կը դիմի հաշտութեան:

Մեր մտաւորականութիւնը պէտք է կարողանայ առողջ բանականութեամբ ճանաչել ճշմարտութիւնը եւ այդ դէպքում Հթիյ-ների կարիքը չենք ունենայ:

Բոքայ Ռեյթոն, Ֆլորիդա
19. նոյեմբերի, 2005թ.

ՄՈՒԹ ՈՒԺԵՐ

Աշխարհիս պատմութեան ամբողջ տեւողութեան գտնուած են ամբողջատիրական ոյժեր, որոնք խանգարած են մարդոց հանգիստը, անկայունութիւն առաջացուցած են միջազգային եարաբերութիւններուն մէջ, եւ ստեղծած՝ պատերազմներ եւ անաստուած (աթէիստական, ծանօթ. խմբ.) ու գաղտնի ընկերակցութիւններ: Հետեւաբար, ծայր աստիճանի կարեւոր է հպանցիկ ակնարկով մը ջանք ընել աւելի յստակօրէն հասկնալու համաշխարհայնացման (գլոբալիզացիոն) շարժումը ներկայ աշխարհի մէջ:

Քննարկութիւն մը Հիւսիսային Ափրիկէի մէջ կատարուած պեղումներու արդիւնքին, պիտի եայտնաբերէ գոյութիւնը քրիստոնէական բարգաւաճ քաղաքակրթութեան մը: Այդ շրջանի տիրապետող դէմքն էր Քարթէյնի (այսօրուան Թունուզը) մէջ բնակող Սուրբ Օգոստինոս Հայրապետը: Իսլամական կրօնի ծագումէն ետք (632 թուին) իսլամական յորդաներ արշաւեցին Քարթէյն, եւ սուրի ոյժով գրաւեցին զայն 752 թ.-ին, անոնք աւերեցին նաեւ Բիւզանդական քրիստոնէայ կայսրութեան մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը (այժմ՝ Իսթանպուլ):

Համաշխարհայնացման զօրութիւնը ու «համաշխարհային մէկ կառավարութիւն»ի տեսիլքը նորութիւն չեն: Դարերու ընթացքին գտնուած են անհատներ, որոնք ունեցած են նման տեսիլքներ, սակայն, ասոնք չեն իրականացած մինչեւ 1760 թուականը, երբ այն գոյութեան եկաւ Տիը Իլլիւմինաթի (The IlLuminati) անունի տակ: Իլլիւմինաթիեւն եղաւ յղացումը ծնունդով Հրէայ Ադամ Ուէյշոփթի (Adam Weishaupt) որ ընդունելով կաթոլիկութիւնը՝ միանգամայն եղաւ Յիսուսական (Jesuit), ու իբր դասախօս պաշտօնավարեց Պաւարիոյ Ինկոլսթատ համալսարանի մէջ՝ ուսուցանելով եկեղեցական կանոնագրութիւն: 1770թ.-ին ան հրաժարեցաւ քրիստոնէութենէ ու այնուհետեւ պաշտօնի կոչուեցաւ Ռոչիլտներու (Rothchilds) դրամատան կողմէ՝ նախաձեռնելու եւ կազմակերպելու Տիը Իլլիւմինաթիեւի (կեղծ Լուսակիրը): Ան ամբողջացուց այս գործը 1 Մայիսի, 1776թ.-ին: «Ծրագիրը»՝ որ ներշնչուած էր կարգ մը արմատական փիլիսոփայութիւններէն, եւ ուսուցուած

խորհրդաւոր ու գաղտնիմաց տանիմարքացիի մը կողմէ՝ Քոլ-մըր անունով, Ադամ Ուէյշոփ կատարելագործեց կազմակերպչական կառոյց մը որ պիտի ղեկավարէր հակաքրիստոնէական եւ հակամիապետական եւ յարձակողական շարժումը՝ համաշխարհային տարածքով՝ այն ակնկալութիւնով որ անոնց անկումէն ետք Իլլիմինաթին պիտի տիրէր աշխարհի: Նիու Եորք Թայմզ թերթին 23 Իւնուարի, 2000 թուակիրին մէջ երեւցաւ երկարապատում յօդուած մը «Տիեզերքի Տէրերը» վերտառութեամբ՝ Ռոչիլտներու Տունեւի մասին: Ըստ յօդուածագիրին, Ռոչիլտները 15 տարիներ տնտեսապէս նեցուկ կանգնեցան Ֆրանսական Յեղափոխութեան մէջ կռուող երկու հակընդդէմ կողմերու ռազմիկներուն: 1964եւին, ան իշխեց Անգլիոյ դրամատնային դրութեան վրայ, ու պարտադրեց ինքզինք Քրիստոնէայ Եւրոպայի վրան, ու կառավարութիւնները իրարու դէմ հանեց իր տնտեսական ոյժին միջոցաւ:

Ռոչիլտներու Տունը նաւ ֆինանսաւորեց Քարլ Մարքսի սկսած շարժումը 1848 թուին, ու միջոց դարձաւ Համայնավարութեան՝ ամբողջ աշխարհի վրայ տարածուելուն: Ան ֆինանսաւորեց նաեւ մութ ոյժերը՝ եւ կեղծուպատիր միջոցներու դիմելով ատելութիւն սփռեց ժամանակի ռուսական իշխանութիւններու դէմ: 1917 թուին անոնք սպաննեցին Ցարը, անոր կինը, չորս դուստրերը ու մանչ զաւակը, նաեւ միլիոնաւոր քրիստոնէաներ՝ արիւնահեղութեան եւ թշուառութեան մատնելով Ռուսիան՝ յաջորդ 65 տարիներուն: 1920եւին այդ մութ ոյժերը իրենց հակակշռին տակ առնելով Ռուսիան, միացան Թուրքիոյ մութ ոյժերուն հետ ու գրաւեցին պատմական Հայաստանի պատկանող հողերը՝ մեծ պետութիւններու խլացուցիչ լռութեան մէջ:

Մութ ոյժերը, զորոնք գոյութեան բերաւ Ադամ Ուէյշոփ, ժամանակի ընթացքին հող գտաւ նաեւ Ամերիկեան նոր հանրապետութեան մէջ անոր կազմաւորման տարիներուն: 1791եւին Ռոչիլտները կարողացան մենաշնորհի տիրանալ Ամերիկայի դրամատնային ցանցին մէջ: Մենաշնորհի այս համաձայնագիրը վերջ գտաւ 1811 թուին, որուն եաջորդեց 1812եւի Անկլօեւմիացեալ Նահանգներ պատերազմը որուն նպատակն էր պարտադրել Միացեալ Նահանգներու որ ընդունի շարունակուիլը 20 տարուայ անձնական երկրորդ դրամատան: 1828 թուին, էնտրիւ Ճեքսըն

Միացեալ Նահանգներու նախագահ ընտրուելով յայտարարեց՝ ըսելով, թէ «Ես չեմ հաւատար որ ազգային դրամատուն ունենալը օրինութիւն է, այլ անէծք մը՝ հանրապետութեան մը համար»: Երբ ան ընտրուեցաւ երկրորդ շրջանի մը համար, ան բացարձակապէս մերժեց վաւերացնել 2-րդ դրամատան գործարարութիւնը 10 յուլիս, 1832 թուին: Մինչեւ 1861, գոյութիւն չունէր անձնական մենաշնորհեալ դրամատուն, որուն հետեւանքով Միացեալ Նահանգներ բարգաւաճեցաւ առանց պարտքի: 1722 թուէն սկսեալ, մեծ թիւով գերիներ ներածուեցան Ա. Իւսթաթիըսէն Ցարլըսթն, եւ Հարաւային Քերըլայնայ որը ժամանակի ընթացքին պատճառ դարձաւ Քաղաքացիական պատերազմի՝ վայրագութիւն սփռելով Ամերիկայի տարածքին վրայ: Սպանուեւամերիկեան պատերազմը ճամբայ բացաւ՝ առաջին անգամ ըլլալով՝ միջազգայնականներու մուտքին որոնք պարտադրեցին Ամերիկայի որ մխրճուէր արտաքին պատերազմներու մէջ: Անկէ ի վեր, Ամերիկայի համար սկզբունքային դարձաւ ուրիշ ազգերու եւ երկիրներու գործերուն միջամուխ դառնալը՝ հակառակ ճօրճ Ուաշինկթընի ազդարարութիւններուն: Ուաշինկթընն ըմբռնեց, թէ ուրիշ ազգերու ներքին գործերուն միջամուխ ըլլալը կրնար խիստ աղէտալի ըլլալ յետագային՝ Ամերիկեան հանրապետութեան համար:

Անցնող 100 տարիներու ընթացքին «Բարի Ամերիկա»-ն փոխուած է ու դարձած ազգ մը՝ մեծամասնութեամբ Քրիստոնէայ, սակայն, ապակրօն մարդկայնապաշտ: Անիկայ կորսնցուցած է հասարակաց անգիր օրէնքի դրութիւնը՝ հիմնուած Քրիստոսի օրէնքներուն վրայ, ու որդեգրած է օրէնքի դրութիւն մը որ կը բխի անհատական զգացումներէ եւ դատումներէ: Գոյութիւն ունէր նախապէս մաքրակրօն կեանք մը Աստուծոյ ենթակայ, ամերիկեան պատմութեան առաջին հարիւր տարիներուն ընթացքին:

Ալեքսիզ Տը Թոքըուիլ (Alexis De Tocqueville) ֆրանսացի դիւանագէտ մը, ճամբորդելէ ետք Ամերիկայի տարածքին՝ անոր պատմութեան սկզբնական շրջանին, այսպէս եայտարարեց. «Ամերիկան մեծ է, քանի որ Ամերիկան բարի (կամ՝ բարեսէր) է: Երբ Ամերիկան դադրի բարի ըլլալէ, պիտի դադրի նաեւ մեծ ըլլալէ»: (De Tocqueville, Democracy in America, in 4 volumes, 1835եւ40)

20-րդ դարու սկիզբը տեսաւ մութ ոյժերու տակաւ ներմուծումը

«Բարի Ամերիկա»ելի մէջ: 1913ելին անոնք նենգութեան դիմելով հաստատեցին անհատական դրամատնային դրութիւն մը տոկոսային գործառնութեան հիման վրայ, զոր կոչեցին Դաշնակցային Պահեստ (Federal Reserve): Ասիկայ իրաւունք տուաւ միջազգային դրամատուներու որ դրամ տպեն եւ տոկոս պահանջէն անոր վրայ: Ասոր իբր հետեւանք, անոնք եաջողեցան ձեռք անցընել (գողնալ) այն հարստութիւնը զոր գոյացուցած էր Ամերիկեան ժողովուրդը: 1965ելին կառավարական ոյժ գործածուեցաւ արգիլելու աղօթքը եւ Աստուածաշունչի ընթերցումը հանրային դպրոցներէն ներս: Միւս կողմէն, անոնք քաջալերեցին գռեհիկ հագուելակերպի կանոնագրութիւնը եւ սեռային անբարոյականութիւնը: Աւելցան կառավարական կրթական նպաստները, մինչ միւս կողմէն իջաւ դպրոցներու կրթական մակարդակը: Տակաւ աճող կառավարական ընկերայնացումը (Increasing governmental socialism) պատճառ դարձաւ որ ազգային մշակոյթը տակաւ ապականի: Քրիստոնէայ աստուածաբանական դպրոցներէն ներթափանցեցին ապակրօն մարդկայնապաշտութեան ուսուցումները որոնք իրենց ազդեցութիւնը ունեցան նաեւ Հայաստանէայց Ազգային Եկեղեցիին ու անոնց առաջնորդներուն վրայ: Անգիտակ Ամերիկան արդէն կալանաւորուած էր, ու կը գործածուէր մութ ոյժերու կողմէ ոչ միայն յեղաշրջելու իր հոգիին նկարագիրը, հապա միջոց ծառայեցնելու զայն ու միջամուխ ըլլար ուրիշ ազգերու ներքին գործերուն: Հետեւանքը այն եղաւ որ Ամերիկա դարձաւ ոչ համակրելի ազգութիւն մը:

Լսուեցաւ հանրայայտ եկեղեցական առաջնորդի մը հետեւեալ կարգախօսը եւ «անմիջական անհրաժեշտութիւնը՝ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին վերակառուցման»:

Պատասխա՞ն- Անհրաժեշտ չէ որ Հայոց Եկեղեցին մասնակից դառնայ ուրիշ եկեղեցիներու եւ կրօններու վերակառուցման աշխատանքին. հերիք է որ ան պահպանէ իր ունեցած 1700 տարիներու Սուրբ Գրային ճշմարտութիւնները:

Երկրորդ առաջադրութիւնը- «Քրիստոնէութիւնը ոչեւբռնութենական կրօնք մըն է:

Պատասխա՞ն- «Ոչ բռնութենական» ասոյթը հնարուած է մութ ոյժերու կողմէ: Քրիստոնէութիւնը կը ջատագովէ ճշմարտութիւնը

ու կը հակառակէ չարին: Ապակրօն մարդկայնապաշտութիւնը իմացական պատերազմ է ճշմարտութեան դէմ:

Երրորդ առաջադրութիւն- «Միացեալ ազգերու կազմակերպութիւնը մեքենական ուղիղ սարքն է, ինչպէս նաեւ հարազատ շրջանակը՝ տիեզերական ճակատամարտ շղթայազերծելու համար»:

Պատասխան- Միացեալ ազգերու կազմակերպութիւնը գործիք է մութ ոյժերուն՝ ստեղծելու համար մէկ աշխարհի քաղաքական եւ տնտեսական գերութեան դրութիւնը, Բաբելոնի Աշտարակ մը: Մեքենական վերջնագոյն սարքը՝ պատերազմ շղթայազերծելու:

Պօղոս Առաքեալի՝ Կորնթացիներու ուղղած առաջին նամակէն (Գլուխ 3. 10-11)

Աստուծոյ ինծի տուած շնորհքին համաձայն, եւ՝ որպէս փորձառու ճարտարապետ՝ հիմ մը դրի ես, իսկ ուրիշ մը կը շինէ անոր վրայ:

Սակայն, ամեն անձ ուշադիր պէտք է ըլլայ՝ թէ ինչպէ՞ս կը շինէ:

Օրինակ մը միայն, բազմաթիւ հակաքրիստոնէայ մութ ոյժերէն.-

Գաղտնիմաց (Occult) կազմակերպութիւններէն «Համաշխարհային Բարիկամեցողութիւն» (World Goodwill), եւ «Լիւսիզ խնամակալութիւն» (Lucis Trust), հիմնուեցան Ալիս Պէյլիի կողմէ որ աստուածիմաց (theosophist) մըն է (կրօնական վարկած մըն է որ հիմնուած է Աստուծոյ բնութեան շուրջ խորհրդաւոր ինքնահայեցողութեան վրայ): Անոնք հրատարակեցին գովազդի գրքոյկ մը «Միջազգային Միասնականութեան Մարտահրաւէրը» խորագիրով: Ասիկայ խնամքով կը բացատրէ թէ պէտք է զօրաւիգ կանգնիլ Միացեալ Ազգերու ջանքերուն՝ միացնելու բոլոր ազգերը եւ ջնջելու ներկայիս գոյութիւն ունեցող ազգայնականութեան ծեւերը: Կը եայտնուի նաեւ թէ «Քրիստոնէաներ անտարբեր են ու անհաղորդ, հետեւաբար, բացասական են եւ կործանարար: Համաշխարհային խաղաղութիւնը պիտի չիրականանայ մինչեւ որ անոնք հաշուեյարդարի չենթարկուին: Կամ կը փոխուին, կամ ալ կը մեռնին»:

Պատասխան- Քրիստոնէայ Հայերը պիտի չփոխուին, ու պիտի չմեռնին:

Հայաստան պիտի շահի երբ չկրկնէ այն սխալները զոր «Բարի Ամերիկան» գործեց: Հայաստան վերադառնալու է իր արմատներուն առանց անգիտանալու գոյութիւն ունեցող աշխարհը: Ան պէտք է ճանչնայ մեր օրերու մութ ոյժերը, որպէսզի կարէնայ յա-

ջողութեամբ պաշտպանել ինքզինք՝ անոնց դէմ: Հայաստանի արմատներուն բարի ու ազնիւ ըլլալուն պատճառաւ է որ ցեղը տոկուն մնաց դարերու ընթացքին: Անոր հոգեկան յատկութիւնները պէտք է պաշտպանուին զանոնք նօսրացնելու ձգտող ոյժերու դէմ: Ժառանգութեան պաշտպանութիւնը չարիք մը չէ. սուտ մարգարէները պաշտպանելն է չարիքը: Աստուծոյ Խօսքին հաւատալն է (եւ ոչ թէ Եկեղեցական համընդհանրացումը եւ Ecumenism) որ ուժեղ պահեց ընտանեկան կառոյցը: Հայաստանեայց Եկեղեցին պէտք է պաշտպանէ (պահպանէ) իր քրիստոնէական հաւատքին մաքրութիւնը արտաքին մոլար ազդեցութիւններու դէմ: Հայաստանի դրամական շրջանառութեան դրութիւնը պէտք է պարկեշտ ըլլայ եւ ոչ վաշխառուական: Հայաստան չքացնելու է «մուրացկան ազգ»ի գոյավիճակը որպէսզի չենթարկուի Արժանթինի վիճակին: (միլիառաւոր տոլար պարտական՝ IMF-ի եւ Համաշխարհային Դրամատան- World Bank): Ան վտարելու է տաճարէն լումայափոխները, որպէսզի վայելէ ազատութեան եւ բարգաւաճութեան պտուղները՝ որոնց արժանի է:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
Յունուար, 2002

ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ

Նախքան Հայկական Առաքելական Եկեղեցւոյ խորհրդակցական ժողովը, որ պիտի կայանայ Անթիլիասում, Լիբանան, յառաջիկայ Նոյեմբերի 17-20, 2003թ., Եկեղեցիների համաշխարհային խորհուրդի ընդհանուր քարտուղար դոկտըր Կոնրադ Վան Ռայզըրը հետեւեալն է յայտարարել.«Մենք պէտք ունենք ներշնչուելու սրբազնական այն հոգեկան կորովով, որ առաջնորդեց Եկեղեցիների համաշխարհային խորհուրդի հիմնադրմանը՝ վերարժեւորելու եւ խորհրդածելու փոփոխուող ժամանակները»:

Քրիստոս չ'ճանաչեց «վերարժեւորում» եւ «ժամանակ», սակայն դոկտըր Ռայզըր հոգ չի անում այդ առնչութեամբ: Եւ փոփոխութիւն ինչի՞: Աշխարհատիրութիւ՞ն՝ փոխարէն Քրիստոսի քարոզչութեան:

Դոկտըր Ռայզըրի նպատակադրումը «համաշխարհային համընդհանուր մի կրօն է»:

Ունիվերսալ «համաշխարհային» մէկ եկեղեցիի գաղափարը նորութիւն չէ: Հակաքրիստոս մութ ուժերի երազանքն է եղած այդ՝ դարերից ի վեր: Ինչպէս բոլոր կեղծ մարգարէները, որոնք հակաքրիստոնէական «քողարկուած ճակատներ»-ը խաբէութեամբ օգտագործում են «Աստուծոյ թագաւորութիւն» անուան տակ: Նրանց թագաւորութիւնը չէր պատկերացւում որպէս հոգեկան մի հասարակութիւն, ուր այր եւ կին պէտք է ծնուէին անհատական կապով միացած Յիսուս Քրիստոսին իբր փրկիչ, այլ իբրեւ հաւաքական մի հասարակութիւն, ուր պիտի իրագործուէր «աղքատութեան վերացումը», «հարստութեան վերաբաշխումը», «արդիւնաբերութեան անարդարամտութիւնների ուղղում»՝ ստեղծելով «տնտեսական արդարութիւն», եւ սակայն միաժամանակ քաօս եւ դասակարգային ատելութիւն:

Քրիստոսի եւ իր առաքեալների ուսուցումը «այս աշխարհէն» չէր: Քրիստոս չ'եկաւ փրկելու հրեաներին հռոմեացիների լուծից: Քրիստոնէութիւնը քաղաքական եւ տնտեսական ազատագրում չէր, այլ մեղաւորի ազատագրումը մեղքից: Հոգեկան ազատագրումը Փրկչի նպատակն էր: Նա պէտք չունե՛ր Համաշխարհային

եկեղեցիների մի խորհրդի՝ փոփոխելու, բարեփոխելու կամ «վերակշռադատելու» իր կրօնը:

Բազմաթիւ օրինակներ կան անցեալում ապացուցելու, որ Համաշխարհային եկեղեցիների խորհուրդը մասնակցել է եւ օժանդակել բռնարարական գործունէութեան որի մէկ օրինակը միայն՝ 1970 թուին ցեղախտրութեան դէմ պայքարելու ծրագրի հանդիսաւոր յայտարարութիւնն էր, որի առթիւ օգտագործելով մասնաւոր մի ֆօնտից գումարներ, Համաշխարհային եկեղեցիների խորհուրդը ֆինանսաւորեց 19 «ազատագրական» շարժումներ Աֆրիկայում. սակայն հետագայ քննութիւններից պարզուեց որ ֆինանսաւորուած 19 խմբակցութիւններից 14-ը պարտիզանական եւ տերորիստական գործունէութիւն ունէին:

Հայաստանեայց Եկեղեցիի դարաւոր պատմութեան ընթացքին միշտ եղել են իրեն պաշտպանողներ որոնք թոյլ չեն տուել կայսրերի, թագաւորների, ցարերի եւ Համաշխարհային եկեղեցիների խորհրդի, որ փոխեն կամ սրբապղծեն Ազգային Եկեղեցին: Նրանք պաշտպանել են մեր Մայր Եկեղեցին իրենց կեանքով:

Այսօր Հայ Ազգային Եկեղեցիի գերիշխող առաջնորդները հմայուած են «փոխուող ժամանակներ» թմբկահարող ձայներից, մինչդեռ քրիստոնեայ ղեկավարների արժեւորման չափանիշը պէտք է լինի՝ թէ որքան անձնուիրաբար նրանք ընդունում եւ ընկալում են Յիսուս Քրիստոսը: Հայ եկեղեցւոյ պահպանողները պէտք է առաջնորդեն Հայաստանեայց Ազգային Եկեղեցին՝ բարձրացնելով համայնքի կորովը: Ո՞վ Խրիմեան Հայրիկ, ու՞ր ես դու:

Լիվոնիա, Միչիգան
2003թ., Օգոստոս 20

ՄԱՍՈՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՅՏ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մասոնական կազմակերպութիւններին հարող մարդկանց մեծամասնութիւնը տեղեակ չէ, թէ իրականում ինչ է ուսուցանում մասոնականութիւնը: Նմանատիպ կազմակերպութիւններին անդամագրուելը շատ ժամանակ տեղի է ունենում հասարակական որոշակի նպատակներով, որոշներն էլ անդամագրւում են հեղինակային գործօններից ելնելով: Թափանցելով մասոնական օթեակ, մարդիկ հանդիպում են բազմաթիւ նշանների, որոնք ունեն տարատեսակ գաղտնի նշանակութիւններ: Նոյնիսկ մասոնական առաջնորդները շատ լաւ գիտակցում են, որ նմանատիպ կազմակերպութիւններ անդամագրուող մարդկանց մեծամասնութիւնը իրականում չի գիտակցում մասոնականութեան ուսմունքի բուն էութիւնը:

Փաստօրէն մասոնականութիւնը գիտակցաբար մոլորութեան մէջ է գցում մասոնական օթեակներ նոր անդամագրուած անձանց՝ նրանցից թաքցնելով մասոնականութեան իրական ուսմունքը:

Բոլոր նորեկները մուտք են գործում մասոնական Օթեակ: Այստեղ նրանք ծնկի իջած հաւատարմութեան երդում են տալիս որեւէ սուրբ գրքի վրայ, անկախ նրանից դա Աւետարան է, Ղուրան թէ Վեդա, որը ընդունելի է օթեակի հասարակութեան մեծամասնութեան համար: Սկսնակ-աշակերտների համար ամերիկեան մասոնական օթեակներում որպէս ուսուցագիրք առաջարկւում է Աւետարանը: Այլ բառերով ասած՝ նոյնիսկ Աւետարանը մասոնական ուսմունքի մէջ իրենից որոշակի գաղտնի խորհրդանիշ է ներկայացնում, որը տարածւում է մասոնականութեան կողմից, առանց որեւէ կասկածների:

Գոյութիւն ունի՞ արդեօք որոշակի բախում քրիստոնէութեան եւ մասոնական գաղափարախօսութիւնների միջեւ: Ուսումնասիրելով մասոնական գրականութիւնը, միանգամայն ակնյայտ է դառնում քրիստոնէութեան եւ յատկապէս ֆրանկոմասոնականութեան միջեւ խորը հակասութիւնը:

Մասոնականութիւն ընդունած անձը ի սկզբանէ միանում է

«կապոյտ օթեակին», որը սկսնակների հաւաքատեղի է: «Կապոյտ օթեակի» ներկայացուցիչները կարող են ձեռք բերել առաջին մասոնական աստիճանակարգերը. 1. Սկսնակ աշակերտ. 2. Վարպետ խորհրդի անդամ. 3. Վարպետ մասոն: Այս երեք աստիճանների ձեռքբերման դէպքում (որն ի դէպ պարգեւատրւում է): Այս սկզբնական աստիճաններով պարգեւատրուելուց յետոյ կարելի է հասնել միւս աստիճաններին Եօրք Ռայթում կամ Սքոթիշ Ռայթում: Եօրք Ռայթում մասոնը պարգեւատրւում է եւս 10 աստիճաններով: Սքոթիշ Ռայթում պարգեւատրութեան աստիճանաւորումը հասնում է մինչեւ 33-րդ աստիճանը:

Ո՞վ է մասոնականութեան Աստուածը

Մասոնական արարողութիւններին եւ միջոցառումներին մասնակցելու համար պէտք է հաւատալ եւ երկրպագել «Բարձրեալին». արդեօ՞ք այդ բարձրեալը այն է, որին երկրպագում ենք մենք՝ քրիստոնեաներս, թէ՞ մասոնները երկրպագում են մէկ այլ ուժի: Բայց այդ ուժը միակը չէ, որին երկրպագում են մասոնները. գոյութիւն ունեն բազմաթիւ աստուածութիւններ, որոնք երկրպագւում են մասոնականութեան կողմից՝ դրանք են՝ Օսիրիսը, Բաքոսը, Դիոնիսիսը, Ադոնիսը եւ այլն:

Օսիրիսը հին Եգիպտոսում մեռեալների աստուածն էր, որը նաեւ հանդիսանում էր արեւի աստուածը, ինչպէս նաեւ յայտնի էր շատ այլ անուններով: Դիոնիսիսը հին Յունաստանում հաճոյքների, գինու եւ գինարբուքների աստուածն էր: Այն Հռոմում անուանւում էր որպէս Բաքոս, Հին Պարսկաստանում՝ Միտրաս, Ասորիքում՝ Ադոնիս: Արեւի երկրպագութիւնը՝ դիմակաւորուած տարբեր աստուածների եւ խորհրդանիշերի ձեւով, մեծ դեր ունի մասոնականութեան հաւատամքի մէջ:

Մասոնական կանոնակարգերի եւ Աւետարանի միջեւ հաջորդ բախումը աստղաբանութիւնն է. մասոնական օթեակները կազմուած են ըստ աստղաբանական 12 նշանների, այնինչ աւետարանը չի ընդունում զոդիակի վերոյիշեալ նշանները: Մասոնականութեան հակասական սիմուոլներից է օձը, որին երկրպագում են, որպէս փրկութեան խորհրդանիշի. այնինչ Աւետարանի մէջ օձը համարւում է նեռի խորհրդանիշը:

Մասոնականութեան մէջ հիմնաքարային նշանակութիւն ունի

«Առաւօտեան վառ լոյս» արտայայտութիւնը: Նոր կտակարանի մէջ ասւում է (22:16) «Ես Յիսուսն եմ՝ Դաւիթի սերունդը եւ Առաւօտեան Վառ Աստղը»: Արդեօ՞ք մասոնականութեան պաշտամունքի առարկան՝ «Առաւօտեան վառ լոյսը» նոյն Քրիստոսն է: Գոյութիւն ունեն մի քանի փաստարկներ, որոնք հերքում են այս միտքը: Սակայն գլխաւոր փաստարկը հետեւեալն է.

Իր մի գրքում տպուած պատկերը բացատրելիս, յայտնի մասոնական Արթուր Եդուարդ Ուայթը մասնաւորապէս ասում է. « Հանճարեղ ոգու աջ ձեռքում երկրագունդն է: Այն հաւասարակշռւում է ձախ ձեռքում բռնած ջահով, որը խորհրդանշում է Առաւօտեան Աստղը կամ Լուցիֆերին»: Մասոնական տեսանկիւնից այս խորհրդանիշի ամբողջական իմաստը յաղթանակող լոյսի գալուստն է: Իսկ երբ ասւում է մասոնականութեան լոյսի մասին, նրանք ի նկատի ունեն Լուցիֆերին, իսկ Լուցիֆեր ինքնին նշանակում է «Լոյս բերող»: Նոյն Աւետարանում նախազգուշացւում է Չարի գալիքը՝ լոյսի հրեշտակի տեսքով:

Մէկ այլ մասոն գրող՝ Ֆոսթեր Բէիլին ասում է. «Փուլ առ փուլ նրանք՝ Իմաստութեան Տիրակալները աջակցելու են յարմար թեկնածուի մասին գիտակցութեան ձեւաւորմանը, մինչեւ կը գայ ժամանակը, երբ նա կը մտնի լոյսի մէջ եւ կը գայ որպէս լուսակիր, որը, որպէս լուսաւորիչ, կ'աջակցի լուսաւորել մարդկութեանը»: Իմաստութեան Տիրակալները (իրականում նեռերը) հոգեւոր առաջնորդներ են, որոնք ենթադրաբար առաջնորդում են մարդկութեանը դէպի Միասնական Աշխարհակարգը, իսկ Լուսաւորիչները կազմակերպութիւն է, որը հիմնադրուել է 1776թ. մայիսի 1-ին, ճիզուիտ քահանայ Ադամ Ուէիշապտի կողմից, իսկ լուսաւորիչ բառը ծագել է Լուցիֆերի անուանումից: Լուսաւորչութիւն կոչուած շարժումը կոչուած է հաստատելու «Համաշխարհային նոր Կարգը» կամ «Մէկ Համաշխարհային կառավարութիւն»: Լուսաւորչութեան ծննդեան օրը՝ 1776թ. մայիսի 1-ը, նշուած է ցանկացած ամերիկեան դոլլարի թղթադրամի վրայ: Դոլլարի թղթադրամի հետեւի ձախ մասում նկարուած է բուրգ, որի վրայ աչք է, որը փոխարինել է բուրգի գագաթնային քարին: Նաեւ նշուած հետեւեալ տառախումբը՝ "MDCCLXXVI" , որ նշանակում է 1776 եւ ներքեւի ժապաւէնի վրայ գրուած է հետեւեալ նախադասութիւնը՝

"NOVUS ORDO SECLORUM" , որի անգլերէն թարգմանութիւնն է՝ "New World Order" , իսկ հայերէնը՝ «Նոր Աշխարհակարգ»: Վերոյիշեալ բուրգի վրայի Կանխատեսութեան աչքը կամ ամենատես աչքը մասոնականութեան ամենակարեւոր նշաններից է: Այն խորհրդանշում է Մասոնականութեան գլխաւոր աստուածութիւնը՝ «Տիեզերքի մեծ ճարտարապետին»: Ըստ Աւետարանի, Քրիստոսը յատկանշւում է որպէս գլխաւոր անկիւնաքար (ըստ Մաթէոսի 21:42; Պետրոս 2:6-7, Մարկոսի 12:10; Ղուկասի 20:17 եւ այլն): Այնինչ դիտելով Բուրգին, միանգամայն ակնյայտ է դառնում, որ գլխաւոր անկիւնաքարը հեռացուած է եւ նրա փոխարէն տեղադրուած է Կանխատեսութեան աչքը՝ Սատանայի խորհրդանիշ: Աւետարանը սոյն երեւոյթի մասին նախազգուշացնում է, ասելով՝ «Սէրը դէպի դրամը ամենայն չարիքի աղբիւրն է :

Անգլիացի մի քահանայ՝ Վինդեքս գրական մականունով, գրում է, որ «Որպէս մասոններ, մենք հաւատում ենք խորհրդանշական երրորդութեան գոյութեանը եւ որ Յիսուս Քրիստոսը Նրա որդին է եւ մեր տէրը»: Այս արտայայտութիւնը շատ լաւ է հնչում եւ շատ մարդկանց կարող է հաւատացնել, որ մասոնականութիւնն ու քրիստոնէութիւնը համատեղուած են միմեանց հետ: Այնուամենայնիւ, մի փոքր մօտից դիտարկելով այս արտայայտութիւնը, պարզ է դառնում, որ սա զուտ խորհրդանշային երրորդութեան պաշտամունք է: Դա հաւատք չէ առ մեր Տէր Աստուած: Այնինչ Վինդեքսը շարունակում է. «Որպէս մուսուլման մասոններ, մենք հաւասարապէս հաւատում ենք, որ Մուհամմեդը Նրա մարգարէն է»: Ապա նա աւելացնում է մի շատ պարզաբանիչ արտայայտութիւն. «Այս լրացուցիչ եւ երկրորդական հաւատքների հետ մասոնականութիւնը ոչինչ չունի անելու եւ իր անդամներին տալիս է կատարեալ ազատութիւն՝ մեկնաբանելու Աստծոյ էութիւնը այնպէս, ինչպէս իրենց յարմար է»:

Ուշադրութիւն դարձրէք, որ նա քրիստոնէութիւնը համարում է «լրացուցիչ եւ երկրորդական» հաւատք եւ այնուհետեւ պարզորոշ յայտնում է մեզ, որ «Մասոնականութիւնը ոչինչ չունի անելու այս ստորադաս ուսմունքի հետ»: Այսպիսով մասոնը, գիտակցաբար թէ անգիտակցաբար երկրորդական դեր է մղում իր քրիստոնեական հաւատամքը եւ նրա փոխարէն առաջնային տեղ է յատ-

կացնում մասոնականութեանը: Մատթէոսը 6:24 յիշեցնում է մեզ. «Ոչ մի մարդ չի կարող ծառայել երկու տիրոջ, քանզի նա կ'ատի մէկին եւ կը սիրի միւսին կամ կը հպատակուի մէկին եւ կ'արհամարհի միւսին: Դու չես կարող ծառայել Աստծուն եւ մամոնային»:

Մասոնները իրենց հաւատացողներին չեն յիշեցնում Յիսուսի անունը (որպէսզի չվիրաւորէն հրէաներին, մուսուլմաններին եւ այլ կրօնների ներկայացուցիչներին): Ալբերթ Մաքեյի հրատարակած գիրքը՝ «Ազատմասոնականութեան հանրագիտարանը», բաղկացած է մօտ 1000 էջից: Այս հանրագիտարանը պարունակում է տեղեկութիւն աշխարհի երեսին գոյութիւն ունեցած բոլոր աստուածութիւնների վերաբերեալ, բայց այստեղ մէկ բառ անգամ չկայ Յիսուս Քրիստոսի մասին: Սա շատ էական եւ միեւնոյն ժամանակ չարագուշակ բացթողում է:

Շրներների (կազմակերպութիւն, որը բաց է միայն այն մասոնների համար, որոնք ստացել են իրենց 32-րդ աստիճանը) ծէսերին մասնակցելու համար տրուող երդման տեքստը հետեւեալն է. «Թող Ալլահը, արաբների, մուսուլմանների եւ մահմեդականների աստուածը, մեր հայրերի աստուածը, պաշտպանի ինձ»: Այստեղ ոչ միայն նշւում է Ալլահի անունը, այլեւ նրան համարում են «մեր հայրերի աստուած»: Այս երդումը կատարւում է Ղուրանի վրայ: Նոր կտակարանում ասւում է. «Մի երդուիր ոչ երկնքի, ոչ երկրի, ոչ այլ ուրիշ բանի վրայ» (James 5:12): Աւետարանը նաեւ զգուշացնում է. «Մի յիշատակիր օտար աստուածների անունը»:

Հեղինակը՝ Դոկտ. Քեթի Բեօրնզը, ունի աւետարանական փիլիսոփայի աստիճան, վերջին 19 տարուայ ընթացքում զբաղուել է արդի դարաշրջանի շարժումներին վերաբերող նիւթերի ուսումնասիրմամբ:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
2003 դեկտեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿԱՏԱՂԻ ԳՐՈՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Մի քանի տարի է արդեն, ինչ Հայաստանում սուր պայքար է մղվում հայրենասիրութեան դէմ: Պայքարը այսօր հասել է իր գագաթնակետին եւ կործանիչ ազդեցութիւն է ունենում երկրի վրա:

Դարեր ի վեր մարդու երազանքն է եղել իշխել Աշխարհին եւ տիրանալ նրա հարստութիւններին: Հաջողվել է ստեղծել ՄԱԿ-ը, որն իբր թէ կոչված է Աշխարհին բերելու խաղաղութիւն, սէր, միասնութիւն եւ ապահովութիւն: Հետաքրքիր է, այդ ու՞մ աշխարհին: ՄԱԿ-ի ապակեպատ ապարանքներից լսվող խաղաղութեան կոչերը խլացուցիչ են եղել, մինչդեռ պատերազմների պատրաստութիւնը՝ շարունակական եղելութիւն: Ստեղծվել է այնպիսի մի քաոս, որի մէջ ինքնիշխան ազգերը անհրաժեշտ են համարում կառավարվել մէկաշխարհական այս «մարդասիրական» կազմակերպութեան կողմից: Ազատ մարդը իր միամտութեամբ ինքն իրեն շղթաների տակ է դրել:

1856 թուականի հուլիսի 14-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դիզրաելին, որն իր ժամանակի անվանի դիվանագետներից էր, ցնցող մի հայտարարութիւն արեց Համայնքների պալատում: Նա ասաց. «Մի ուժ կայ, որին մենք հազվադէպ ենք անդրադառնում՝ գաղտնի կազմակերպութիւնները: Աւելորդ է ժխտել, որովհետեւ չի կարելի քողարկել այս իրողութիւնը, որ Եւրոպայի մեծ մասը՝ Իտալիան, Ֆրանսիան եւ Գերմանիայի մեծ մասը պատված են գաղտնի ընկերակցութիւնների ցանցով, ինչպէս երկրագնդի մակերեսը՝ երկաթուղիներով: Որ՞ն է նրանց նպատակը: Նրանք չեն փորձում քողարկել այն: Նրանք դէմ են սահմանադրական կառավարութեանը: Նրանք չեն ցանկանում բարելավել գոյութիւն ունեցող հաստատութիւնները: Նրանք ձգտում են փոխել հողի սեփականութեան ներկայ հարաբերութիւնները, դուրս շպրտել այսօրվայ հողատերերին եւ վերջ տալ կղերական հաստատութիւններին»:

Այս գաղտնի միութիւնները, որոնք նկարագրում էր Դիզրաելին, գերհարուստների աւելի հարստանալու նպատակով միակ դավադրութիւնը չէր: Հարկաւ, Աստվածաշնչում ասված է, որ

դրամասիրութիւնը ամէն չարիքի արմատն է: Այս մարդկանց՝ չափազանց մեծ հարստութան եւ իշխանութեան հասնելու ցանկութիւնը, սակայն, նրանց դավադրութեան հիմնական դրդապատճառը չէ: Գլխավորը Աստծոյ եւ նրա որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդէպ նրանց ատելութիւնն է:

Դեպի «մէկ աշխարհ» գլոբալիզացիայի տանող ճանապարհին այս մարդկանց համար գլխավոր խոչընդոտը հայրենասիրութիւնն է եւ ազգայնականութիւնը: Նրանց նպատակը ազգութիւնների միջեւ սահմանների ջնջումն է եւ ռասաների միախառնումը, որը պէտք է դիւրացնի մարդկութեան ստրկացումը:

Հայաստանի նման փոքր երկրի համար շատ դժվար է դիմագրավել իր գոյութեանը սպառնացող այս ուժերին: Հայաստանը թուլացնելու առաջնահերթ ձեւերից մեկը ժողովրդի մէջ հայրենասիրութեան գիտակցութիւնը մեռցնելն է: Սա կատարվում է ազգի մշակույթը քայքայելով, դրամի միջոցով ղեկավարների մէջ ընչաքաղցութիւն առաջացնելով, տնտեսութեան լճացմամբ ժողովրդին արտագաղթի մղելով եւ նրան իր քրիստոնեական կրոնից հեռացնելով՝ աղանդների, անաստվածութեան, միասեռականութեան եւ անբարոյականութիւն ներմուծման միջոցով:

Անբարոյականութեան ներմուծումը պէտք է կասեցվի:

Ազգային այնպիսի հարստութիւններ, ինչպիսին են ընտանեկան ամուր կապերը, բարոյական, մշակութային եւ կրոնական արժեքները պէտք է պահպանվեն ժողովրդի կողմից, նույնիսկ եթէ կառավարութիւնը թերանում է դրանում: Այս հաստատութիւնների պահպանումը ազգի պաշտպանութեան լավագոյն զէնքն է թշնամու շատ աւելի մեծ թնդանօթների դէմ, որովհետեւ այդ մութ ուժերը զինում ու մարզում են Հայաստանի դարավոր թշնամիներին:

Մի քանի տարի առաջ, բարոնուհի Քերոլայն Քօքսը մի բաց նամակ ուղղեց հայ ժողովրդին: Այդ նամակում նա մեծ սէր եւ հիացմունք է յայտնում հայ ժողովրդի հանդէպ եւ միեւնոյն ժամանակ զգուշացնում. «Հիմայ ձեզ սպառնում է խաղաղութիւնը եւ անկախութիւնը կորցնելու վտանգը: Եթէ արագ չգործէք, կը կորցնէք ոչ միայն Արցախի սուրբ հողը, այլ նաեւ Հայաստանը»: Նա շարունակում է. «Եթէ ներկայ դէպքերի ընթացքը չկասեցվի, ձեր ղեկավարութիւնը Երեւանում ճակատագրականօրէն կը տկարացնի եւ

կը դավաճանի ձեր երկրին»: Արդեօք բարոնուհի Քօքսը գիտի՞ մի բան, որը Հայաստանի ժողովուրդը եւ կառավարութիւնը չգիտեն: Եթէ այդպես է, պէտք չէ՞ արդեօք, որ նրան հարցնեն այդ մասին, կամ ինքը՝ բարոնուհի Քօքսը յայտնի կառավարութեանը:

Անտարակոյս, նոյն այն մութ ուժերը, որոնք կործանեցին քրիստոնեայ Սերբիան, այսօր նպատակ են դրել կործանելու քրիստոնեայ Հայաստանը: Նոյն այդ ուժերն էին, որ Հայաստանը դրել էին «Չարիքի առանցք» պետութիւնների շարքում: ԱՄՆ-ի կառավարութիւնը ստիպված եղաւ Հայաստանը հանել այդ ցուցակից (ժամանակավորապես), որովհետեւ Իրաքի դէմ պատերազմի ժամանակ չէին ցանկանում աւելի ընդդիմութիւն առաջացնել:

Բարեբախտաբար, հայրենասիրութիւնը դեռեւս ողջ է Հայաստանում: Զանգեզուրի պաշտպան Գարեգին Նժդեհի ազգասէր ոգին շարունակում է արմատներ ձգել հայ երիտասարդութեան մէջ:

Նժդեհի համար «Աստծոյ տանը նուիրուածութիւնը» նշանակում էր նուիրուածութիւն հայրենիքին, իր նախահայրերի հողին, որը նա սիրում էր ուժգնօրէն: Նա խոսում էր հայ ազատագրական դարաւոր պայքարի մասին, հայկական մեծ հեղափոխութեան, թշնամու հետ անհաւասար եւ հերոսական կռիւների, անկախ հանրապետութեան հռչակման եւ կորստի, հայ ժողովրդի թշնամիների՝ թուրքերի եւ խորհրդային իշխանութիւնների, կորցրած անկախութեան վերականգնման կարեւորութեան եւ հայ ժողովրդին իր հանդէպ հավատով եւ անհաղթելիութեան ոգով զինելու անհրաժեշտութեան մասին:

Նժդեհը խոսում էր հայ ժողովրդի առաքինութիւնների մասին, որոնք բխում են նրա ազգային ակունքներից: Նա հեռու էր ցեղի այն հիվանդագին եւ սխալ մէկնաբանութիւնից, որն օգտագործվեց նացիստների կողմից ցեղային գերազանցութեան իրենց գաղափարախօսութեան մէջ: Նժդեհը ցեղը տեսնում էր որպէս մարդկային արժանապատուութեան, հպարտութեան եւ ինքնաւստահութեան մարմնավորում:

Նժդեհը կալանաւորուեց Բուլղարիայում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եւ աքսորուեց Սիբիր, ուր նա մահացաւ 1955 թուականին: Նրա աճյունը տեղափոխվել է Հայաստան եւ ամփոփվել Խուստուփ լեռան լանջին, Սպիտակաւոր վանքի բակում: Սիբիրեան բանտում գրված նրա յուշերը բերվել են Հայաստան: Վերջերս Երեւանում հրատարակվել է մի գիրք Նախիջեւանահայոց Ազգային խորհրդի նախագահ Ռաֆայէլ Համբարձումեանի խմբագրութեամբ, որտեղ մանրամասնօրէն ներկայացուած են Գարեգին Նժդեհի կեանքը, գործը եւ փիլիսոփայութիւնը:

Արժէ անդրադառնալ Հայաստանի անկախութեան կորստին հաջորդած այն քաղաքական ինտրիգներին, որոնք տեղի ունեցան 1920 թուականի վերջերին: Հայաստանում խորհրդային կարգերի հռչակումից հետոյ, 1920 թուականի դեկտեմբերին Ադրբեջանը հեռագիր ուղարկեց Հայաստանի խորհրդային կառավարութեանը, որտեղ նա հրաժարվում էր Ղարաբաղի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի շրջաններից: Սահմանային խնդիրները հայտարարվեցին լուծված: 1921 թուականի մարտի 16-ին բոլշեւիկեան Ռուսաստանի եւ Թուրքիայի «մութ ուժերի» միջեւ կնքվեց Մոսկվայի Դաշնագիրը, որով չեղյալ հայտարարվեց 1920 թուականի դեկտեմբերի համաձայնագիրը, և, օգտվելով Հայաստանի վատ վիճակից՝ նրանք զաւթեցին Հայաստանի պատմական տարածքները: 1921-ի հոկտեմբերի 13-ին Կարսի դաշնագիրը վերջնականապէս հաստատեց Նախիջեւանի ու Ղարաբաղի գողութիւնը, որից հետոյ հետեւողականօրէն արմատախիլ արվեց Նախիջեւանի բնիկ հայ բնակչութիւնը: Հայերը սերնդէ սերունդ աշխարհից շարունակաբար պէտք է պահանջեն, որ վերադարձվեն իրենց բոլոր պատմական հողերը:

Այսօր Հայաստանում գոյութիւն ունի քիչ ճանաչված, բայց լաւ կազմակերպված մի շարժում, որը կոչվում է Նախիջեւանի հայութեան Ազգային խորհուրդ: Շարժումը հիմնված է Գարեգին Նժդեհի փիլիսոփայական սկզբունքների վրա: Նախիջեւանի հայերի այս շարժումը վիճարկում է Նախիջեւանի հայկական հողերի անօրինական կցումը Ադրբեջանին: Նրանք կոչ են անում ռուսական Դումային չեղեալ յայտարարել 1921 թուականի մարտի 16-ի Մոսկվայի բոլշեւիկ-թուրքական անօրինական դաշնագիրը, որը ստորագրված է իբրեւ «բարեկամութեան եւ եղբայրութեան» դաշնագիր: Նախիջեւանահայոց Ազգային խորհրդի նման հայրենասիրական շարժումները պէտք է սփիւռքի առաւելագոյն ուշադրութեանն արժանանան, որովհետեւ նրանք պատնեշ են ընդդէմ պարտվողականութեան առաջ եւ նրանց հետեւորդները կը մեռնեն իրենց հողի վրայ՝ այն լքելուց առաջ:

Չմոռանանք, որ աւելի քան 5,000 հայ երիտասարդ զոհվեց Ղարաբաղի կռիւների ժամանակ՝ մեր պատմական հողերը պաշտպանելիս: Արդեօք կարո՞ղ ենք մենք՝ ողջերս, խօսել թուլութեան դիրքերից եւ քմահաճօրէն որոշել ճակատագիրը այն հողի, որը ձեռք է բերուել մեր օրերի Նժդեհների արեան գնով: Դա համազօր կը լինէր դաւաճանութեան:

Հայաստանի երիտասարդութիւնը պէտք է գոտեպնդվի հայրենասիրութեան ոգով, որպեսզի ոչ մի թշնամի, ներքին կամ արտաքին, չկարողանայ խորտակել երկրի ապագան: Հայ ժողովուրդը չպիտի մոռանայ արցախեան պատերազմի ժամանակ զոհված իր բոլոր Նժդեհների արեան գինը:

«Այն օրից, երբ հայը վախենայ մահից, այդ օրուանից օտարը կը թագավորի Հայաստանում»

Գարեգին Նժդեհ

«Ազատութիւնը պաշտպանելու կոչված ծայրահեղականութիւնը մոլորութիւն չէ»:

Ծերակուտական Բերրի Գոլդուաթր

Սփիւռքի գլխաւոր քաղաքական կուսակցութիւնները, եկեղեցիներն ու կազմակերպութիւնները, անկախ իրենց քաղաքական տարբերութիւններից ու շահերից, պէտք է անմիջապէս ստեղծեն «Ազգային պաշտպանութեան խորհուրդ»: Նրանք պէտք է դադարեն պաշտպանել իրենց անհատական շահերը, մինչեւ Հայաստանի շահերը պաշտպանված չլինեն: Ամենաառաջնային խնդիրն այսօր Ազգային պաշտպանութեան խորհուրդը կեանքի կոչելն է: Անհատական հպարտութիւնը պէտք է մի կողմ դրվի եւ փոխարինվի հավաքական ազգային հպարտութեամբ: Երկրի ինքնիշխանութիւնը կորցնելուց յետոյ կորցնելու քիչ բան կմնա: Հայրենասիրութեամբ տոգորված մի մարմին պէտք է իրադրութիւնն իր ձեռքն առնի, քանի դեռ ուշ չէ:

Բոքայ Ռաթոն, Ֆլորիդա
Փետրուար, 2003թ.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի անկախացումից ի վեր այստեղ գործում են տարբեր միջազգային կազմակերպութիւններ, որոնք հիմնել են այստեղ իրենց կենտրոնները՝ օգնելու զարգացող Հայաստանին:Այստեղ հումանիտարիզմի, մարդու իրաւունքների պաշտպանութեան, հետազօտական տարբեր առաքելութիւններ իրականացնում են այնպիսի միջազգային կազմակերպութիւններ, ինչպիսիք են՝ Ամերիկեան զարգացման հիմնադրամը, ԵԱՀԽ-ն, ՄԱԿ-ը եւ այլն: Այս կազմակերպութիւնները գործում են հիասքանչ մարդկային հնչեղութիւն ունեցող իրաւունքների համար: Մարդու իրաւունքների պաշտպան կառոյցները, որոնք անզիջում պայքար են մղում մարդու իրաւունքների համար, այդուհանդերձ երբեք չեն խօսում մարդու պարտականութիւնների մասին, ինչը բաւականին կասկածելի է դարձնում նրանց գործունէութեան բնոյթը:

Օրինակ 1. ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը Հայաստանում վարձում է 100 մարդու, որոնք ֆինանսաւորւում են ՄԱԿ-ի ազգաբնակչութեան ոլորտում գործնէութեան համար ֆոնդի՝ Միացեալ ազգերի կազմակերպութեան՝ Բնակչութեան գործունէութեան ֆոնդի կողմից:

Ծրագրերից մէկը նախատեսում էր պատրաստել աբորտի մասնագէտ կանանց, որոնք պէտք է կարգաւորէին ընտանիքի քանակը՝ կրթութեան քօղի տակ: Դոկտ. Մերի Զոն, Ամերիկայի առողջապահութեան եւ ծառայութիւնների նախարարութեան երեխաների եւ ընտանիքների հարցով բաժնի քարտուղարի տեղակալը, յայտարարեց. «Եթէ ուզում ենք երեխաների հաւասարութիւնը ընտանիքներում, ապա պէտք է գիտակցենք, որ այն ուղղակի գոյութիւն չունի. որպէսզի հասնենք այդ հաւասարութեանը, մենք պէտք է վերցնենք նրանց ընտանիքից, եւ հասարակութիւնը կը բարձրացնի նրանց դերը»: Սա մօտաւորապէս նման է 1918 թուականին կոմկուսի ռուս մանկավարժի յայտարարութեանը.«Մենք պէտք է հեռացնենք երեխաներին իրենց ընտանիքների խիստ ազդեցութիւնից եւ նացիոնալիզացնենք նրանց»:

Գոյութիւն ունեցող մարդու իրաւունքների կազմակերպութիւնների գործունէութիւնն արդարացուած է միայն ազգի ներքին խնդիրներին խառնուելու համար: Կան աւելի քան 5000 այսպիսի կազմակերպութիւններ. հարց է առաջանում. ո՞վ է ֆինանսաւորում այս խմբերը:

Օրինակ 2. Ամերիկայի պետխորհրդի, Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան խորհրդի դիտորդական առաքելութիւնների համատեղ յայտարարութիւնը, որտեղ գնահատուեցին 1999թ.-ի մայիսի 30-ի ընտրութիւնները, Հայաստանի կառավարութեանն առաջարկվեց վերանայել եւ բարեփոխել ընտրական համակարգում եղած թերութիւնները:

Հայ ժողովուրդը իր բարձր ակադեմիական ընդունակութիւններով եւ աշխատասիրութեամբ ինքնակառավարման համար աւելի ընդունակ է: Կառավարումը նրանց իրաւունքն է, առանց արտաքին ուժերի օժանդակ օգնութեան:

Մարդու իրաւունքների համաշխարհային շարժման պատմութեան վրայ ընկած է ազգերի քայքայման պատասխանատուութիւնը: Հիանալի օրինակ են մարդու իրաւունքների ակտիւիստներ, հումանիտարիստներ Լենինը, Տրոցկին, Զինովիեւը. մարդիկ, որոնք խոստանում էին ուտոպիական հասարակութիւն իր կարգուկանոնով: Արդիւնքը յետագայ 65 տարիներն էին, որոնց ընթացքում մարդկութիւնը կրեց այնպիսի տանջանքներ, ինչպիսիք պատմութիւնը դեռ չէր տեսել: Այս համաշխարհային կազմակերպութիւնները, որոնք անհանգստանում են եւ ցանկանում են տալ լաւ արհեստավարժ խորհուրներ հայկական կառավարութեան եւ ժողովրդի բարօրութեան համար, կը յաջողուէին, եթէ միայն հաւաքէին իրենց վրանները եւ հեռանային իրենց երկրները՝ իրենց սեփական խնդիրները լուծելու համար: Նրանց համար աւելի լաւ կը լինէր խորհուրդներ տալու փոխարէն ստեղծել աշխատատեղեր, որոնք փաստօրէն ստեղծում են իրական հարստութիւնը:

Լիվոնիա, Միչիգան
16 օգոստոսի, 1999թ.

ՕՐԷՆՔԸ

«Օրէնքի» մասնագէտները ըստ ֆրանսիացի պետական գործիչ ու տնտեսագէտ Ֆրեդերիկ Բաստիէի (1850թ.)

Կեանքը Աստծու պարգեւն է

Մենք Աստծուց ստացել ենք պարգեւ, որն իր մէջ պարունակում է մնացած ամէն ինչ: Այդ պարգեւը կեանքն է՝ ֆիզիկական, գիտակցական եւ բարոյական կեանքը: Սակայն կեանքը չի կարող շարունակուել միայն ինքն իրենով: Այդ պատճառով արարիչը մեզ է վստահել նաեւ իր տուած պարգեւը պահպանելու, կատարելագործելու ու զարգացնելու հնարաւորութիւնը: Այդ պայմանները իրագործելու համար մարդն օժտուել է սքանչելի ձիրքերով: Արարիչը հոգացել է նաեւ այն մասին, որ մարդը շրջապատուած լինի բնական հարստութիւնների ահռելի պաշարներով: Այդ բնական պաշարների օգտագործումը կազմակերպելու նպատակով մենք դրանք փոխակերպում ենք զանազան մթերքների: Այս գործընթացը անհրաժեշտ է, որպէսզի մարդկային կեանքը ընթանայ իր հաստատուն հունով:

Կեանք, ձիրքեր, արտադրողականութիւն, այլ խօսքով՝ անհատականութիւն, ազատութիւն, սեփականութիւն. այս համատեքստում է ամբողջական մարդ արարածը: Եւ չնայած քաղաքական առաջնորդների նրբամիտ ու ճարտար հնարքներին, այս երեք աստուածատուր պարգեւներն են, որ պէտք է վեր դասուեն ցանկացած մարդկային օրէնսդրութիւններից: Կեանքը, ազատութիւնն ու սեփականութիւնը գոյութիւն չունեն, քանի որ մարդը ստեղծել է օրէնքներ: Իրականութիւնն այն է, որ կեանքը, ազատութիւնն ու սեփականութիւնը գոյութիւն են ունեցել վաղօրօք, եւ հենց դա է մարդուն ստիպել ստեղծել օրէնքներ:

Իսկ ի՞նչ է օրէնքը: Դա անհատական իրաւունքի պաշտպանութեանն ուղղուած համընդհանուր կազմակերպութիւն է:

Մեզանից իւրաքանչիւրը Աստուածատուր տրուած իրաւունք ունի պաշտպանել իր անձը, ազատութիւնը եւ սեփականութիւնը: Սրանք երեք հիմնական կենսական անհրաժեշտութիւններն են,

որոնցից իւրաքանչիւրի պաշտպանութիւնը ամբողջապէս կախուած է մնացած երկուսի պաշտպանութիւնից: Ինչի՞ համար են մեր ընդունակութիւնները, եթէ ոչ մեր անհատականութեան կատարելագործման համար: Եւ ինչի՞ համար են մեր սեփականութիւնները, եթէ ոչ մեր ընդունակութիւնները կատարելագործելու: Եթէ ամէն մի անհատ իրաւունք ունի պաշտպանել իր անձը, իր ազատութիւնն ու սեփականութիւնը՝ նաեւ ուժի միջոցով, ապա սրանից հետեւում է, որ մարդկանց խումբը իրաւունք ունի իր համար կազմակերպել համընդհանուր ուժ՝ իր վերը նշուած իրաւունքները մշտապէս պաշտպանելու համար: Հետեւաբար հաւաքական իրաւունքի սկզբունքները, գոյութեան պատճառներն ու օրինականութիւնը հիմնուած են անհատական իրաւունքի վրայ: Եւ համընդհանուր ուժը չի կարող տրամաբանօրէն ունենալ այլ նպատակ կամ առաքելութիւն, քան հէնց այդ իրաւունքների պաշտպանութիւնը:

Այսպիսով, քանի որ անհատը չի կարող օրինական կերպով ուժ գործադրել այլ անհատի անձի, ազատութեան կամ սեփականութեան դէմ, հէնց նոյն պատճառով էլ ընդհանուր ուժը չի կարող օրինականօրէն գործի դրուել ոչնչացնելու մարդկանց խմբի ազատութիւնը, անձանց կամ սեփականութիւնը:

Օրէնքի պատշաճ դերը

Օրէնքի համար չկայ առաւել մեծ պահանջ, քան յանցագործութեան բացակայութիւնը:

Այն անպայմանօրէն կարիք ունի որոշակի ուժի գործադրման, սակայն արդեօ՞ք կարելի է օրէնքը խելամտօրէն կիրառել այլ նպատակների համար, բացի մարդկանց իրաւունքների պաշտպանութիւնը: Ես մերժում եմ նրանց, ովքեր այդ նպատակներից այն կողմ են պարզում օրէնքի ձեռքը եւ հետեւաբար այն կիրառում են ընդդէմ մարդկանց իրաւունքների:

Սա ամենաճակատագրական ու ամենաանտրամաբանական հասարակական այլասերումն է, որ կարելի է պատկերացնել: Եւ հասարակական յարաբերութիւնների այս ոլորտում առկայ հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ընդունել այն ճշմարտութիւնը, որ օրէնքը պէտք է լինի համակարգուած արդարութիւն:

Արդարացի եւ հանդուրժողական կառավարութիւն:

Եթէ ազգն իր ինքնակառավարման հիմքերում դրել է այս սկզբունքները, ապա կարծում եմ որ այդ դրոյթները կ'ամրագրուեն ոչ միայն մարդկանց մտքերում, այլ նաեւ գործողութիւններում: Կարծում եմ նաեւ, որ այդպիսի ազգը կ'ունենայ առաւելագոյնս ընդունելի, պարզ, ձեռնտու, արդարացի ու հանդուրժողական կառավարման համակարգ՝ անկախ դրա քաղաքական ձեւից: Այդպիսի կառավարման համակարգի ներքոյ իւրաքանչիւր անհատ ամբողջովին կը գիտակցի իր ունեցած արտօնութիւնները, ինչպէս նաեւ իր գոյութեան ամբողջ պատասխանատուութիւնը: Այդ պարագայում բնակչութեանն այլեւս յարկ չի լինի դիմելու կառավարութեանը, որպէսզի վերջինս պաշտպանի իւրաքանչիւր անձի նկատմամբ յարգանքը, աշխատելու ազատութիւնը եւ այդ աշխատանքի պտուղները քաղելու իրաւունքը:

Նման պարագայում մարդիկ, հասնելով յաջողութիւնների, չեն մտածի դրա համար շնորհակալութիւն յայտնել պետութեանը, եւ հակառակը՝ հանդիպելով անյաջողութեան, չեն մեղադրի դրանում պետութեանը (դա նոյնը կը լինէր, եթէ հողագործը մեղադրէր պետութեանը կարկտի կամ ցրտահարութեան համար): Պետութիւնը լցուած կը լինէր միայն արդար կարգերի գովաբանութիւններով:

Կարելի է ասել, որ իրերի այդպիսի զարգացման դէպքում բնակչութեան պահանջներն ու պետութեան բաւարարուածութիւնը կը լինեն տրամաբանական փոխյարաբերութեան մէջ: Այդ դէպքում մենք չենք տեսնի աղքատ ընտանիքներ, որոնք չունենալով հաց, պահանջում են գրագիտութիւն ու կրթութիւն: Չեն լինի նաեւ մայրաքաղաքների, աշխատուժի ու բնակչութեան զանգուածային տեղափոխութիւններ՝ սկզբնաւորուած օրէնսդրական որոշումներից:

Կառավարութեան կողմից իրականացուող այդպիսի տեղափոխութիւնների հետեւանքով անորոշ ու անյուսալի են դառնում բնակչութեան գոյութեան հիմնադրոյթները: Բացի դրանից, այդպիսի քայլերը պետութեանը ծանրաբեռնում են յաւելեալ պարտականութիւններով:

Օրէնքի ամբողջական այլասերումը:

Ցաւօք օրէնքի մէջ յստակօրէն չեն սահմանւում դրա պատշաճ գործառոյթները: Եւ երբ այն գերազանցում է իր գործառոյթները, ապա դրա հետեւանքով յաճախ տեղի են ունենում անհետեւողական ու վիճարկելի քայլեր: Սակայն դա ամբողջը չէ. օրէնքը յաճախ գործում է իր առաքելութեանը հակառակ՝ արդարութիւնը պահպանելու փոխարէն այն ոտնահարելով, իրաւունքները պաշտպանելու փոխարէն սահմանափակելով ու ոչնչացնելով դրանք: Նոյն այդ օրէնքը անազնիւ անձանց տնօրինութեանն է յանձնում հաւաքական ուժը, որոնք այն օգտագործում են անվտանգ կերպով մարդկանց շահագործելու, նրանց ազատութիւնը եւ սեփականութիւնը յափշտակելու համար: Օրէնքը կողոպուտը փոխակերպել է իրաւունքի, որպէսզի անարգել կերպով թոյլատրի այն: Եւ վերջապէս օրէնքը փոխակերպել է օրինական ինքնապաշտպանութիւնը յանցագործութեան՝ նպատակ ունենալով պատժել մարդկանց ու ժողովուրդների օրինական ինքնապաշտպանութեան փորձերը:

Սեփականութիւն եւ կողոպուտ:

Մարդը կարող է ապրել ու բաւարարել իր պէտքերը միայն անդադար աշխատանքով՝ իր ձիրքերը անընդհատ փոխակերպելով բնական ռեսուրսների:

Սա է սեփականութեան հիմքը: Սակայն միւս կողմից մարդ կարող է գոյատեւել եւ բաւարարել իր կարիքները՝ նաեւ այլոց աշխատանքի արդիւնքը զաւթելով ու սպառելով: Հէնց այս գործընթացն էլ կարելի է համարել կողոպուտի հիմքը:

Սակայն քանի որ մարդը ի բնէ հակուած է խուսափել տառապանքից, իսկ աշխատանքը ինքնին տառապանք է, ապա մարդը կարող է դիմել կողոպուտի, քանի որ այն կենսական ռեսուրսներ հայթայթելու աւելի հեշտ միջոց է: Դա հէնց պատմութիւնն է ապացուցել: Եւ ահա այսպիսի նախադրեալների առաջ յաճախ անզօր են թէ կրօնը, թէ բարոյականութիւնը: Այդ հանգամանքում կողոպուտը կարելի է վերացնել միայն այն դէպքում, երբ կողոպուտը կը դառնայ աւելի տառապալից ու վտանգաւոր, քան աշխատանքը:

Այժմ արդէն ակնյայտ է դառնում, որ օրէնքի բուն նպատակն է հաւաքական ուժի ճնշմամբ արգելակել աշխատելու փոխարէն

կողոպուտ կատարելու օրէցօր ահագնացող միտումը: Օրէնքի բոլոր միջոցառումներն ու գործողութիւնները պէտք է ուղղուած լինեն պաշտպանելու սեփականութիւնը եւ պատժելու կողոպուտը:

Սակայն մեծամասամբ օրէնքը ստեղծում է մէկ մարդ կամ մարդկանց մի խաւ: Եւ քանի որ օրէնքը չի կարող գործել առանց տիրապետող ուժի համաձայնութեան ու օժանդակութեան, այդ ուժն էլ պէտք է շահագրգռուած լինի օրէնքը ստեղծող մարդկանց շահերի պաշտպանութեամբ:

Ահա այս փաստերը, աւելացրած նաեւ մարդու մէջ առկայ այն յատկանիշը, որով մարդը ձգտում է նուազագոյն ջանքերի գնով ապահովել իր կենսական պահանջների բաւարարումը, թոյլ են տալիս որոշակիօրէն բացատրել օրէնքի համընդհանուր այլասերման փաստը եւ այդ երեւոյթի զարգացման միտումները: Այսպիսով պարզ է դառնում նաեւ այն պարադոքսը, որ օրէնքը անարդարութեան դէմ պայքարելու փոխարէն անպարտելի զէնք է դառնում նոյն այդ անարդարութեան համար: Հասկանալի է դառնում նաեւ այն հանգամանքը, թէ ինչու են յիշեալ օրէնսդիրները ձգտում մնացած մարդկութեան անհատական անկախութիւնը վերափոխել ստրկութեան, ազատութիւնը՝ ընկճուածութեան, նրանց աշխատանքը՝ կողոպուտի: Դա կատարւում է օրէնսդիր կողմի ուժի ու հնարաւորութիւնների համապատասխան եւ ի շահ հէնց նոյն ուժի:

Օրինականացուած կողոպուտի զոհերը:

Մարդիկ սովորաբար ըմբոստանում են այն անարդարութեան դէմ, որի զոհեր են: Այդ պատճառով երբ կողոպուտը կատարւում է այն մարդկանց օգտին, ովքեր ստեղծում են օրէնքները, ապա շահագործուող (կողոպտուող) խաւերը աշխատում են մուտք գործել օրէնսդիր ոլորտ խաղաղ կամ յեղափոխական ճանապարհներով: Կախուած շահագործուող խաւի կրթուածութեան մակարդակից, իշխանութեան հասնելու նրանց ձգտումը հետապնդում է երկու միանգամայն տարբեր նպատակներ.

ա. հասնելով իշխանութեան վերացնել օրինականացուած կողոպուտը,

բ. ձեռք բերելով իշխանութիւն՝ մասնակցութիւն ունենալ այդ կողոպուտին:

Ժողովրդի համար իսկական դժբախտութիւն է, եթէ կողոպուտի զոհ դարձած ժողովրդական զանգուածների մէջ գերակշռում է իշխանութեան հասնելու նպատակներից վերջինը. երբ իշխանութիւնը զաւթում է եւ նոր մարդիկ են սկսում մասնակցութիւն ունենալ օրէնքի ստեղծմանը (կողոպտելու ակնկալիքով): Այդ պարագայում մարդիկ փորձում են հաւասարակշռել իրենց հակոտնեայ շահերը, որպէս լուծում գտնելով համընդհանուր կողոպուտը: Արդիւնքում ստացւում է, որ հասարակութիւնում տեղ գտած անարդարութիւնները արմատախիլ անելու փոխարէն, պատասխանատուները դրան տալիս են համընդհանուր բնոյթ:

Հենց որ կողոպտուող խաւերը ձեռք են բերում քաղաքական իշխանութիւն, նրանք ստեղծում են ճնշամիջոցների մեխանիզմներ՝ ուղղուած այլ խաւերի դէմ: Նրանք չեն փորձում վերացնել օրինականացուած կողոպուտը (դա աւելի մեծ կարողութիւններ կպահանջեր, քան նրանց լուսաւորուածութեան աստիճանն է ներում): Ընդհակառակը նրանք շարունակում են իրենց խարդախ նախորդների վարած օրինականացուած կողոպուտի քաղաքականութիւնը՝ չնայած որ վերջին հաշուով դա հակառակ է իրենց շահերին: Կարծես թէ անհրաժեշտ է, որ նախքան արդարութեան թագաւորութեան գալուստը ամէն ոք տառապի իրեն արժանի հատուցմամբ, ոմանք իրենց չարութեան, ուրիշներն էլ իրենց անհասկացողութեան պատճառով:

Օրինականացուած կողոպուտի արդիւնքները:

Հասարակութեան համար անհնար է պատկերացնել աւելի մեծ այլասերութիւն ու չարիք, քան օրէնքի վերածումը կողոպուտի գործիքի:

Որո՞նք են հասարակութեան այդ չարիքի պատճառած հետեւանքները: Դրանք բոլորը ներկայացնելու համար հատորներ անհրաժեշտ կը լինէին, ուստի մենք կը ներկայացնենք դրանցից առաւել ակնառուներն ու աղէտալիները:

Առաջին հերթին դա վերացնում է արդարութեան ու անարդարութեան միջեւ եղած տարբերութիւնները:

Ամէն մի հասարակութիւն կարող է գոյատեւել միայն օրէնքների նկատմամբ յարգանքի որոշակի աստիճանի առկայութեան դէպքում:

Որպէսզի օրէնքները յարգեն, անհրաժեշտ է դրանք յարգելի դարձնել:

Եթէ օրէնքները հակասում են բարոյականութեանը, ապա քաղաքացին ստանում է դաժան այլընտրանք. կամ զրկուել բարոյական սկզբունքներից, կամ կորցնել յարգանքը օրէնքների նկատմամբ: Նշուած երկու պարագաներն էլ համազօր չարիքներ են եւ մարդու համար դժուար կը լինի ընտրութիւն կատարել դրանց միջեւ:

Փաստօրէն մարդկանց մտածողութեան մէջ օրէնքը եւ արդարացիութիւնը ընկալւում են որպէս միեւնոյն հասկացութիւններ: Մեր մէջ կայ մի համոզմունք, որով ամէն մի օրինական երեւոյթ ընկալում ենք որպէս ճշմարտացի: Այս համոզմունքը այնքան խոր արմատներ է ձգել հասարակութեան մէջ, որ շատերը թիւրըմբռնմամբ «արդարացի»են համարում այն ամէնը, ինչը որ օրէնքն է այդպէս սահմանել: Այդպիսով որպէսզի կողոպուտին տրուի արդարացի ու մարդկանց խղճի համար ընդունելի բնոյթ, հարկաւոր է միայն օրէնքով այդպէս սահմանել:

Ինչպէս ճանաչել օրինականացուած կողոպուտը:

Իսկ ինչպէ՞ս է հնարաւոր ճանաչել այդ օրինականացուած կողոպուտը: Բաւական հեշտութեամբ: Եթէ օրէնքը վերցնում է որեւէ մէկին պատկանող ինչ-որ բան եւ տալիս է նրան, ում դա չի պատկանում, ապա դա հէնց մեր մատնանշած երեւոյթն է: Նոյնպէս նաեւ եթէ օրէնքը օգուտ է տալիս որեւէ քաղաքացու՝ ի վնաս մէկ ուրիշի՝ անելով այն, ինչը անհնար է, որ տուեալ քաղաքացին կարողանար իրագործել՝ առանց յանցանք կատարելու:

Այս օրէնքը ոչ միայն ինքնին չարիք է, այլ նաեւ արգաւանդ հող է այլ չարիքների բարգաւաճման համար, որովհետեւ այն անպայման պատճառ է հանդիսանում պատասխան գործողութիւնների: Եթէ այսպիսի օրէնքը անմիջապէս չեղեալ չյայտարարուի, ապա դա անպայմանօրէն կը թափանցի ամբողջ համակարգով մէկ, կը բազմանայ եւ կը զարգանայ, այդ դէպքում շատ աւելի դժուար կը լինի դրա դէմը առնելը: Այն անձնաւորութիւնը, որը շահում է այդպիսի օրէնքից, անպայման կը բողոքի ու կ'ըմբոստանայ իր ձեռք բերած «իրաւունքների» կորստեան դէմ: Նա կը պնդի, թէ պետութիւնը պարտաւոր է օժանդակել ու պաշտպանել իր մասնաւոր ձեռնարկատիրութիւնը, թէ այդ օրէնքի տուած հնարաւորութիւն-

ները իրեն թոյլ են տալիս աւելի մեծ գումարներ ծախսել եւ հետեւաբար բարձրացնել իր աղքատ բանուորների աշխատավարձը:

Պէտք չէ խաբնուել անձնական շահերից բխող այսպիսի սոփեստութիւններին: Այդ փաստարկների ընդունումը կարող է յանգեցնել օրինականացուած կողոպուտի արմատաւորմանը ամբողջ պետական համակարգում:

Փաստացի դա արդէն տեղի է ունեցել: Այսօրուայ մոլորութիւնն այն է, որ փորձ է արւում հարստացնել բոլորին՝ ի վնաս մնացած բոլորի, կողոպուտը դարձնել համընդհանուր՝ այն կարգաւորելու պատրուակով:

Սոցիալիզմը օրինականացուած կողոպուտ է:

Պարոն դը Մոնտալենբերտը մեղադրւում էր այն բանում, որ ձգտում էր սոցիալիզմի դէմ պայքարել բիրտ ուժի միջոցով: Սակայն դատելով իր արտասանած հետեւեալ մտքից, կարծում ենք, որ նա պէտք է զերծ մնա այդպիսի մեղադրանքներից. «Սոցիալիզմի դէմ մեր մղելիք պատերազմը պէտք է ներդաշնակութեան մէջ լինի օրէնքի, ազնուութեան ու արդարութեան հետ»: Սակայն պր-ն դը Մոնտալենբերտը սխալ կերպով է արտայայտուել, քանի որ սոցիալիզմի դաւանած սկզբունքները գտնւում են բացառապէս օրէնքի շրջանակներում: Սոցիալիստները ձգտում են իրագործել օրինականացուած եւ ոչ թէ անօրինական կողոպուտ: Նրանք ձգտում են այլ մոնոպոլիստների նման օրէնքը դարձնել իրենց սեփական զէնքը: Եւ եթէ օրէնքը սոցիալիզմի պաշտպանն է, ինչպէ՞ս կարող է այն գործածուել սոցիալիզմի դէմ: Քանի որ կողոպուտը հովանաւորւում է օրէնքի կողմից, բնականաբար այն չի վախենում դատարաններից, ժանդարմներից ու բանտերից: Ընդհակառակը վերջիններս կարող են նոյնիսկ օժանդակել կողոպուտին:

Այսպիսի իրավիճակը կանխելու համար առաջին հերթին պէտք է օրէնսդրական լծակներում բացառել սոցիալիզմի առկայութիւնը, չթոյլատրել սոցիալիստների մուտքը օրէնսդրական պալատ. սակայն դա չի յաջողուի այնքան ժամանակ, քանի դեռ օրինականացուած կողոպուտը շարունակում է մնալ օրէնսդիր մարմինների հիմնական գործունէութեան ասպարէզը: Հակառակ կարծիքը առնուազն անտրամաբանական է, եթէ ոչ անհեթեթ:

Սոցիալիզմի գրաւչութիւնը:

Այս հարցում մենք բախւում ենք մեր ժամանակների ամենատարածուած սխալի հետ: Սոցիալիստները չեն բաւարարւում օրէնքի արդարացիութեան դրոյթով. այն պէտք է նաեւ լինի մարդասիրական: Ինչպէս նաեւ բաւարար չեն համարում այն դրոյթը, թէ օրէնքը պէտք է երաշխաւորի մարդու բնատուր ձիրքերի անկաշկանդ ու անվնաս օգտագործումը ի նպաստ ֆիզիկական, մտաւոր եւ բարոյական ինքնակատարելագործման:Նրանք գտնում են, որ օրէնքը պէտք է նաեւ ուղղուի ժողովրդի մէջ աւելացնելու բարեկեցութիւնը, կրթուածութիւնն ու բարոյականութիւնը:

Սա է սոցիալիզմի հիմնական գրաւչութիւնը: Եւ մենք կրկնում ենք, որ օրէնքի կիրառման այս երկու ձեւերը իրար հանդէպ լիակատար հակադարձութեան մէջ են: Մենք պէտք է ընտրութիւն կատարենք դրանց միջեւ. քաղաքացին չի կարող միաժամանակ եւ ազատ, եւ անազատ լինել:

Ժամանակաշրջանների խառնաշփոթը:

Սոցիալիզմը, անտիկ գաղափարների նմանութեամբ, որոնցից էլ ծագում է, շփոթութիւն է ստեղծում հասարակութեան եւ պետութեան տարբերութիւնների միջեւ: Դրա պատճառով էլ կառավարութեան որեւէ որոշման դէմ առարկութիւններ ծագելու դէպքում սոցիալիստները վճռում են, որ առարկողները չեն ցանկանում կառավարութեան տուեալ որոշումը ի կատար ածուի ընդհանրապէս:

Եթէ մենք առարկում ենք պետական կրթութեան գաղափարը, ապա սոցիալիստները վճռում են, թէ մենք դէմ ենք կրթութեանը ընդհանրապէս: Մենք առարկում ենք պետական կրօնի գաղափարը, սակայն սոցիալիստները պնդում են, թէ մենք դէմ ենք կրօնին ընդհանրապէս: Մենք ասում ենք, թէ դէմ ենք պետականօրէն հարկադրուող հաւասարութեանը, իսկ նրանք ներկայացնում են, թէ մենք դէմ ենք հաւասարութեանը ընդհանրապէս: Եւ այսպէս շարունակ: Դա նման է մօտաւորապէս այն բանին, որ սոցիալիստները յայտարարեն, թէ մենք չենք ուզում, որ մարդիկ հաց ուտեն, ելնելով նրանից, որ մենք պետական ցորենի պաշարների ընդլայնման դէմ ենք առարկում:

Գերմարդու գաղափարը:

Սոցիալիստների կողմից մարդասիրութեան վերաբերեալ շահարկուող խնդիրը մի բնական հարց է առաջ բերում. եթէ մարդու մէջ կան ի բնէ վատթար հակումներ, ապա ինչպէ՞ս է ստացուել, որ սոցիալիստների մէջ դրանք բացակայում են եւ նրանց մօտ մշտապէս լաւ հակումներ են: Մի՞թէ նրանք չեն պատկանում մարդկային տեսակին: Թէ՞ նրանք կարծում են, որ իրենք ստեղծուած են առաւել լաւորակ կաւից, քան մնացած մարդիկ:

Ըստ նրանց, հասարակութեան կայունութիւնը պէտք է պահպանուի հէնց իրենց կողմից, քանի որ այն կողմնորոշուած չլինելով ճիշտ ուղղութեամբ, մարդու բնական վատթար հակումների պատճառով անխուսափելիօրէն ընթանում է դէպի կործանում: Օրէնսդիրները պնդում են, որ անհրաժեշտ է դադարեցնել այդ ինքնաոչնչացման ընթացքը եւ հասարակութեանը տալ ճշմարիտ ուղղութիւն: Ըստ երեւոյթին այդ օրէնսդիրները իրենց մտաւոր ընդունակութիւններն ու շնորհները երկնքից են ստացել, որն էլ նրանց թոյլ է տալիս իրենց աւելի բարձր դասել մարդկութեան մնացած հատուածից: Ուրեմն թոյլ տուէք նրանց ներկայացնել իրենց գերազանցութեան պատճառով իրենց պատշաճ կոչումը: Նրանք պէտք է լինեն մեր՝ իրենց հոտի հովիւները: Իրերի այդպիսի դրուածքը բնականաբար ենթադրում է, որ նրանք բնականօրէն գերադաս դիրք ունեն մարդկութեան մնացած հատուածից: Եւ բնականաբար մենք լիովին արդարացի կերպով նրանցից կարող ենք պահանջել իրենց այդ գերադասութեան ապացոյցները:

Քաղաքականութիւն եւ տնտեսութիւն:

Այժմ եկէք անդրադառնանք մի հարցի, որը համառօտակի քննարկուեց մեր այս յօդուածի սկզբում: Տնտեսութեան եւ քաղաքականութեան փոխյարաբերութիւնները՝ քաղաքական տնտեսութիւնը:

Ըստ երեւոյթին տնտեսագիտութիւնը որպէս գիտութիւն սկսել է զարգանալ շատ աւելի վաղ, քան քաղաքագիտութիւնը:

Ըստ էութեան տնտեսագիտութիւնը գիտութիւն է, որը որոշում է մարդկանց շահերի ներդաշնակ կամ հակամարտ լինելը: Եւ տրամաբանական է, որ դա աւելի վաղ առաջացած լինի, քան քաղաքագիտութիւնը, որը առաջ եկաւ որոշելու կառավարութեան պատշաճ գործառոյթները:

Տնտեսագիտութեան սկզբնաւորմանը անմիջապէս հետեւեց եւ քաղաքագիտութեան սկզբնաւորման ակունքներում հնչեց հետեւեալ հարցը. ի՞նչ է օրէնքը, ինչպիսի՞ն պէտք է այն լինի, ո՞րն է դրա գործունէութիւնը, որո՞նք են օրէնքի սահմանները, տրամաբանօրէն ո՞ր կէտում է դադարում օրէնսդիրի արդարացի իշխանութիւնը:

Մենք որոշակիօրէն կը պատասխանենք այս հարցերին:

Օրէնքը համընդհանուր ուժ է, որը կազմակերպուած է դիմագրաւելու անարդարութեանը: Կարճ ասած՝ օրէնքը արդարութիւնն է:

Օրէնքի պատշաճ գործառոյթները

Սխալ է այն տեսակէտը, թէ օրէնսդիրը բացարձակ իշխանութիւն ունի մեր անձերի ու սեփականութեան վրայ: Մարդիկ ու նրանց սեփականութիւնը գոյութիւն են ունեցել բաւական երկար ժամանակ, մինչեւ որ առաջ են եկել օրէնսդիր մարմինները եւ հետեւաբար օրէնսդրի պարտաւորութիւնն է միայն երաշխաւորել դրանց անվտանգութիւնը:

Սխալ է այն կարծիքը, թէ օրէնքը իրաւասու է կանոնակարգել մեր խղճմտանքը, մտքերը, կամքը, կրթութիւնը, մեր կարծիքները, աշխատանքը, առեւտրական գործունէութիւնը, մեր ձիրքերն ու հաճոյքները: Օրէնքի պարտաւորութիւնն է միայն պաշտպանել այս իրաւունքների ազատ արտայայտումը, ինչպէս նաեւ որեւէ մէկին չթոյլատրել բռնանալ այս իրաւունքների ազատ կիրառման դէմ:

Քանի որ օրէնքը պահանջում է նաեւ ուժի գործադրում, ապա արդարացի կը լինի այդ ուժը կիրառել միայն այնտեղ, որտեղ դրա անհրաժեշտութիւնը կայ: Ամէն մի անհատ իրաւունք ունի ուժ կիրառել իր օրինական ինքնապաշտպանութեան համար: Այդ պատճառով էլ համընդհանուր ուժը, որն իրենից ներկայացնում է անհատական ուժերի համակցութիւն, կարելի է օրինականօրէն կիրառել միայն նշուած նպատակի համար. դա չի կարող օրինականօրէն կիրառուել այլ նպատակների համար:

Օրէնքը լոկ անհատական իրաւունքների պաշտպանութեանն ուղղուած համակարգ է: Օրէնքը արդարութիւնն է:

Օրէնքը եւ բարեգթութիւնը միեւնոյնը չեն:

Օրէնքի կոչումը մարդկանց հարստահարումը եւ նրանց ունեցուածքի կողոպուտը չէ եւ այն երբեմն գործում է մարդասիրական ոգով: Օրէնքի առաքելութիւնը մարդկանց անձի եւ ունեցուածքի պաշտպանութիւնն է:

Բացի այդ, պէտք է ասել, որ օրէնքը կարող է մարդասիրական լինել այն դէպքում, եթէ այն արգելում է մարդկանց հարստահարելուն ու նրանց ունեցուածքը կողոպտելուն ուղղուած գործողութիւնները: Սակայն միւս կողմից դրանով օրէնքը չի կարող խուսափել մարդկանց ու նրանց սեփականութիւնների վրայ ազդեցութիւն ունենալուց: Եւ օրէնքի ցանկացած տիպի գործողութիւնների դէպքում այն որոշակիօրէն բռնանում է մարդկանց ազատութեան ու սեփականութեան վրայ՝ նոյնիսկ եթէ դրանց պաշտպանում է զանազան ոտնձգութիւններից:

Օրէնքը արդարացի է, պարզ է ու հասարակ, ճշգրիտ է ու յստակ սահմանափակումներով: Ամէն մի աչք կարող է տեսնել այն եւ իւրաքանչիւր միտք կարող է ընկալել այն: Որպէս արդարութիւն օրէնքը սահմանափակ է, անփոփոխ եւ անփոխարինելի: Արդարութիւնը սրանից ոչ աւել է, ոչ էլ պակաս: Եթէ փորձ է կատարւում անցնել օրէնքի այս պատշաճ սահմաններից, օրէնքը դարձնել կրօնական, եղբայրական, համահաւասար, մադասիրական, արդիւնաբերական, կրթական կամ գեղարուեստական, ապա այդպիսի փորձ անողները անպայմանօրէն խճճւում են չհետազօտուած տարածքներում, ընկնում անորոշութեան ու անյստակութեան մէջ, ընթանում դէպի պարտադրուած ուտոպիայ, կամ էլ աւելի վատ՝ դէպի ուտոպիաների բազմութիւն: Դա անպայման յանգեցնում է իշխանութեան զաւթմանն ու դրա պարտադրմանը ժողովրդին:

Սա ճիշտ է ու բացատրւում է նրանով, որ մարդասիրութիւնն ու եղբայրութիւնը, ի հակառակ արդարութեան, չունեն ճշգրիտ սահմանափակումներ: Եւ անյայտ է, թէ դա սկսուելով մինչեւ ու՞ր կը հասնի: Եւ արդեօք օրէնքը կարող է ինքն իրեն արգելակել:

Եկէք այժմ պարզապէս ընդունենք ազատութեան սկզբունքը:

Աստուած մարդկանց տուել է բոլոր հնարաւորութիւնները իրենց նպատակները իրագործելու համար: Նա ապահովել է

մարդու ինչպէս հասարակական, այնպէս էլ մարդկային կերպարանքը: Մարդու հասարակական օրգաններն այնպէս են սահմանուած, որ նրանք կարող են ներդաշնակօրէն զարգանալ միայն ազատութեան յստակ մթնոլորտում: Ուրեմն թող հեռու գնան շառլատաններն ու կազմակերպիչները, նրանց շրջանակները, շղթաները, թակարդները եւ աքցանները:

Կորչեն նրանց արհեստական համակարգերը: Կորչեն կառավարական աստիճանաւորների քմահաճոյքները, նրանց հասարակականացուած ծրագրերը, նրանց կենտրոնականութիւնը, պետական դպրոցները, յարկերը, նրանց պետական կրօնները, նրանց բանկային մենաշնորհները, կորչեն նրանց կանոնակարգումները, սահմանափակումները, հարկերի միջոցով համահաւասարեցումները, նրանց բարեպաշտ բարոյականութիւնները:

Այժմ, երբ արդէն օրէնսդիրները եւ «բարեգործները» հասարակութիւնների վրայ բազմաթիւ անօգուտ փորձեր են կատարել, կարո՞ղ են նրանք արդեօք վերադառնալ այնտեղ, որտեղից որ սկսել են. կարո՞ղ են արդեօք մերժել բոլոր համակարգերը եւ փորձել ընդամէնը մի բան՝ ազատութիւնը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ընդամէնը մէկ բան ընդունել Աստծուն եւ նրա գործերը:

Կազմեց Արտաւազդ Աւագեանը՝
Լիվոնիամ Միչիգան
30 ապրիլի 2002թ.:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գարեգին Նժդեհին ես հանդիպել եմ 1933թ.-ին ԱՄՆ Միչիգան նահանգի Դեթրոյթ քաղաքում գործող ՀՅԴ «Ազատամարտ» ակումբում: Նա խօսեց հիմնականում երիտասարդ հայերից բաղկացած մեր խմբի հետ: Ես այդ ժամանակ 15 տարեկան պատանի էի: Գարեգին Նժդեհը խօսեց հայ ցեղի ու դրա հաւերժացման խորը զգացումով, եւ նրա խօսքերը խորապէս ոգեշնչող էին: Նա ի վերջոյ կարողանում է ստեղծել Ամերիկայի հայկական երիտասարդական կազմակերպութիւնը՝ ԱՄՆ-ում առաջին եւ ամենակատարեալ հայկական երիտասարդական հայրենասիրական կազմակերպութիւնը: Այդ պահից սկսած՝ ես ՀՅԴ - ի նուիրուած աջակիցներից էի, մինչեւ որ 1975թ. որոշեցի, որ պէտք է հեռանամ Դաշնակցութիւնից: Ես սկսեցի նկատել, որ այդ կուսակցութեան ղեկավարութիւնը հետեւողականօրէն աջակցում է public office- ի ձախամէտ սոցիալիստ թեկնածուներին: Գարեգին Նժդեհը ՀՅԴ-ից դուրս է եկել 1937թ.-ին:

Եկէք այժմ դիտարկենք, թէ որոնք էին այս տարիների ընթացքում Հայ Յեղափոխական Դաշնակցութեան սոցիալիստական ուղղուածութեան գործողութիւնները:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը երկարատեւ բանավէճերի ու վէճերի հետեւանքով կազմաւորուել է 1890թ. –ին:

Սոյն հետազօտութեան համար հիմք է դարձել Հայկական հարցի մասին Մարտին Շատիրեանի 1958թ.-ին հրապարակած յօդուածը, որը կոչւում էր «ՀՅԴ հիմնադիրների ազգային անկախութեան նպատակները»:

Նշուած աշխատութեան 98-րդ էջում ասւում է. «Այդ ժամանակ քաղաքական դաշտում առաջնակարգ տեղ էր զբաղեցնում «Նարոդնայայ վոլէայ»* [Ժողովրդի կամք] կուսակցութիւնը, որը յետագայում ծնունդ տուեց «Ռուսաստանի սոցիալ-յեղափոխական կուսակցութեան», որը քաղաքական դաշտում առաջնային դիրքեր զբաղեցրեց մինչեւ 1-ին համաշխարհային պատերազմի բռնկումը՝ շնորհիւ իր ընդարձակ ճիւղաւորմանն ու ահաբեկչական մեթոդների»:

105-րդ էջում Շատիրեանը գրում է. «ՀՅԴ առաջին քաղաքական ծրագիրը նախագծուել է 1892թ.-ին: Դրա ներածական մասը ամբողջութեամբ վերցուած էր «Նարոդնայայ վոլէայ»-ի ծրագրից եւ աւելի շատ սոցիալիստական ու դասակարգային բնոյթի էր, քան հայրենասիրական ու ազատագրական (ի նկատի ունի Թրքահայաստանի ազատագրումը), ինչպիսին պիտի լինէր, եթէ հաշուի առնուէր ժողովրդի մեծամասնութեան տրամադրուածութիւնն ու ցանկութիւնը»:

Քրիստափորն* ու իր կուսակից ընկերները այնքան հեռու գնացին այդ ուղղութեամբ, որ ՀՅԴ գաղափարական հիմքում դրեցին «սոցիալիստական սկզբունքներ»՝ աւելի շատ նմանուելով «Նարոդնայայ վոլէային»: Դա պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ այդ ժամանակի առաջադէմ ու ծայրայեղական մտաւորականութիւնը գիւղացիական խնդիրը լուծելու միակ ճանապարհը համարում էր կոմունիստական կառոյցների հիմնումը:

«Եթէ համայնավարութիւնը հաշուարկուած էր բարելաւելու Ռուսաստանի հսկայածաւալ գիւղացիութեան վիճակը, ապա այն չէր մեղմելու Թուրքահայաստանի կացութիւնը, որտեղ ջարդերից ուժասպառ հայութիւնը ձգտում էր միայն մէկ բան՝ անկախութիւն: Քրիստափորը որպէս Դաշնակցութեան հիմնադրոյթ ընդունեց համայնավարութիւնը՝ նոյնութեամբ փոխառելով «Նարոդնայայ վոլէայ» կուսակցութեան պլատֆորմը՝ որեւէ լուրջ ջանք չը գործադրելով այն պատշաճեցնել հայկական իրականութեանը: Միանգամայն պարզ էր, որ Դաշնակցութեան ծրագրի այդ խմբագրութիւնը չէր արտայայտում նրա անդամների մեծամասնութեան կարծիքը:

Այդ նոյն ժամանակ Ռոստոմը (Ստեփան Զօրեան) Թիֆլիս է վերադառնում Ժնեւից (Շուէյցարիայ), որտեղ նա ուսանել էր՝ ազդուելով Եւրոպայում սփռուած կոմունիստական գաղափարներից:

---

* «Նարոդնայայ վոլէայ» կուսակցութիւնը հրէայ սոցիալիստների ստեղծած կազմակերպութիւն էր, որը քարոզում էր Ռուսաստանի փլուզումը: Հեղինակի ծանօթագրութիւն:

** Շատիրեանը ի նկատի ունի ՀՅԴ երեք հիմնադիրներին՝ Քրիստափոր Միքայէլեանին, Ռոստոմին (Ստեփան Զօրեան) եւ Սիմոն Զաւարեանին, Հեղինակի ծանօթագրութիւն:

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԵՂՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Քաղուածք Executive Intelligence Review magazine-ից (մայիսի 6, 2005)

Երիտթուրքերը ծագում էին 19-րդ դարում սկիզբ առած ծրագրից, որը ազգային-ազատագրական շարժումներ սկսելու ճանապարհով՝ Բրիտանական կայսրութեան հակառակորդ կայսրութիւնների հիմքերը քայքայելու համար առաջ էր քաշել լորդ Պալմերսթոնը (Մաձձինիի երիտասարդ Իտալիան, երիտասարդ Գերմանիան, երիտասարդ Թուրքիան եւ այլն): Բրիտանիայի ներգրաւուածութիւնը 20-րդ դարի երիտթուրքական շարժման մէջ ուղղակի էր ու զանգուածային: Բրիտանացի Սըր Ուինդամ Դիդզը կամաւոր կերպով ծառայութեան մտաւ օսմանեան ոստիկանութիւնում, որը ղեկավարում էին եւրոպական սպաները: 1910թ.-ին նա դարձաւ երիտթուրքերի կառավարութեան ղեկավար դէմքերից մէկը՝ աշխատելով ներքին գործերի նախարարութիւնում, որը յետագայում ղեկաւարեց Թալէաթը, որի հէնց այդ պաշտօնին լինելու ժամանակ էլ իրականացուեց եղեռնը: 1913թ. -ին երիտթուրքերը կատարեցին պետական յեղաշրջում: Էներ փաշան զբաղեցրեց ռազմական նախարարի պաշտօնը, Ջեմալ փաշան դարձաւ Կ. Պոլսի ռազմական կառավարիչը, Թալէաթը մնաց ներքին գործոց նախարար:

Միութիւն եւ առաջադիմութիւն (Իթթիհաթ վէ թերաքքի) կոմիտէն առաջ քաշեց պանթուրքականութեան եւ պանիսլամականութեան գաղափարները: Պանթուրքականութիւնը քարոզում էր Ասիայի եւ Ռուսաստանի թուրքալեզու բնակչութեան միաւորում: Այդ գաղափարը զարգացրել է հունգարացի* թուրք սիոնիստ Արմինիուս Վէմբերին, որը սուլթանի խորհրդականն էր՝ միաժամանակ հանդիսանալով Փալմերսթօնի եւ Բրիտանական արտաքին գործոց նախարարութեան (British Foreign Office) գաղտնի գործակալը: Պանիսլամութիւնը, որը ըստ էութեան ենթադրում էր հասութիւն Ռուսաստանի հետ, անգլիական գործակալ Ուիլֆրեդ Բլանթի մտայղացումն էր, որը առաջ եկաւ 1870-ականներին: Բլանթը, որը ներկայիս Զբիգնեւ Բրժեզինսկու գաղափարական նախորդն էր, իսլամը դիտարկում էր որպէս Ռուսաստանը վերացնելու միջոց:

Բրիտանիան, սատարելով թուրք ազգայնական ու պանիսլամիստական շարժումները, միաժամանակ աջակցում էր Օսմանեան կայսրութեան դէմ ուղղուած ազգային-ազատագրական ելոյթները: Օրինակ արաբների ազգային ընդվզումը առաջնորդում էր բրիտանական գործակալ Լոուրենսը, նոյնատիպ աջակցութիւն էին ստանում նաեւ սերբական, ալբանական, բուլղարական ու այլ էթնիկ խմբերի ապստամբութիւնները Օսմանեան կայսրութեան դէմ:

Անգլիացիները աջակցում էին նաեւ որոշ հայ ազգային շարժումների, որոնց նրանք յուսադրում էին Մեծ Հայաստան ստեղծելու խոստումներով, որը պէտք է ընդգրկէր տարածքներ Թուրքիայից, Իրանից ու Ռուսաստանից: Բրիտանացիները մօտաւորապէս նոյն տարածքներն էին խոստանում նաեւ քրդերին՝ խրախուսելով նրանց ազգային ապստամբութիւնները:

Որոշ հայ ազգայնականներ աջակցութիւն էին ստանում նաեւ Ռուսաստանի կողմից:

Չնայած մամուլի վրայ հաստատուած հսկողութեանը, հայկական ջարդերի մասին լուրերը տարածուեցին Եւրոպայով մէկ եւ Թուրքիայում եւրոպական երկրների դեսպանութիւնները ստիպուած եղան իրենց դիրքորոշումն արտայայտել այդ խնդրի շուրջ: 1915թ. յունիսին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վան Վանգէինհեյմը հաղորդում է Բեռլին, որ Թալէաթը խոստովանել է, որ հայերի տեղահանումները չէին բխում «լոկ ռազմական անհրաժեշտութիւններից»: Յուլիսին միեւնոյն դիւանագէտը յայտնում է, թէ «Կասկած չկայ, որ Բարձր Դուռը ձգտում է ոչնչացնել հայկական ցեղը Օսմանեան կայսրութեան տարածքում»: Այն ժամանակ, երբ գերմանացի պաստոր Յոհաննես Լեփսիուսը ապարդիւն կերպով փորձում էր միջամտել դէպքերի նման ընթացքին, գերմանական կառավարութիւնը պահպանում էր դաշնակցութիւնը Թուրքիայի հետ:

---

*Հունգարացիները ծագումով թուրքական ժողովուրդ են եւ ոչ թէ եւրոպացի: Նրանք ծագել են մի քանի թուրքական ցեղերի, ամէնից շատ հոների, համակցումից: Հոն Աթիլան ներկայումս Հունգարիայի ազգային հերոս է: Հունգարացիները ջանք չեն էլ թափում սքօղելու իրենց թուրքական ծագումը: Հունգարացիների թուրքական ծագումը հաստատելու համար լաւ աղբիւր է «Տասներեքերորդ ցեղը» գիրքը, որի հեղինակն է հռչակաւոր արծակագիր (այժմ վախճանուած) Արթուր Քոսթլերը: Հեղինակի ծան.

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ 2-ՐԴԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ:

1908թ.-ին թուրք յեղափոխականները, որոնք կոչւում էին երիտթուրքեր, պետական յեղաշրջում իրականացրեցին սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դէմ: Դրա արդիւնքը եղաւ Աբդուլ Համիդի սուլթանական տիտղոսի զուտ ձեւական պահպանումը, իսկ յաջորդ տարի՝ 1909թ.-ին, սուլթանի լիովին հեռացումը ասպարէզից: Ովքե՞ր էին երիտթուրքերը: Այդ հարցի պատասխանը տալիս է Առնոլդ Լեսսեյի յօդուածը՝ գրուած 1939թ. մարտի 1-ին: Յօդուածի վերնագիրն է «Իրական հրէայ. Դաս Թուրքիայից»:

«Սուլթանին գահազրկած թուրքական յեղափոխութիւնը իրականում հրէական էր: Հրէաները օգտագործեցին ֆրանկմասոնութիւնը որպէս գործիք, իսկ Միութիւն եւ առաջադիմութիւն կոմիտէն սուլթանի դէմ յեղափոխութիւն իրականացնելու ակտիւ քարոզչութիւն տանող գործակալութիւն էր: Ապստամբութեան կենտրոնը Սալոնիկն էր, որտեղ բնակչութեան մեծամասնութիւնը հրէաներ էին: Սուլթանին տապալելուց յետոյ Միութիւն եւ առաջադիմութիւն կոմիտէն թուրքական կառավարութիւնում իր ձեռքը վերցրեց ղեկավար լծակները՝ խամաճիկային սուլթան Մուհամմադ 5-րդի ձեւական իշխանութեան ներքոյ»:

«Ներքին գործոց նախարարը Թալէաթ բէյն էր: Դէ Նոգալէսը «իր Չորս տարի մահիկի տակ» աշխատութեան մէջ (Չարլզ Սքրիբների որդիներ հրատ., 1926թ., էջ 26) Թալէաթ բէյին ներկայացնում է որպէս սալոնիկցի հաւատափոխ հրէայ (շուռ տուած հրէայ կամ Donme), Թուրքիայ եկած եւ իսլամ ընդունած հրէայ փախստականների սերունդներից: Թալէաթի հրէայ լինելու այս փաստը հսկայական կարեւորութիւն ունի, սակայն քչերին է յայտնի: Բրիտանական հանրագիտարանի 12-րդ հրատարակութեան 31-րդ հատորի 1222 էջում Թալէաթի մասին ասւում է, որ նա «չարակամ անձնաւորութիւն էր, որը մեծապէս նպաստել է Օսմանեան կայսրութեան փլուզմանը»:

«Դէ Նոգալէսը իր վերոյիշեալ աշխատութիւնում գրում է. «Թալէաթը (քրիստոնէայ հայերի) կոտորածների ու տեղահանումների գլխաւոր կազմակերպիչն էր»: Դոկտոր Հ. Սթիւրմերը իր «Երկու պատերազմական տարիները Կ. Պոլսում» աշխատութեան (Յոդդեր & Սթոուիթ հրատ., 1917թ.) 72-րդ էջում գրում է. «Հայկական կոտորածների համար պատասխանատու էին Էնուէրը, եւ աւելի շատ Թալէաթը՝ որպէս Թուրքիայի փաստացի կառավարիչ»:

ԸՆԿԵՐ ԹՈՒՐՔ

Թուրքիայում իշխանութիւնը երիտթուրքերին անցնելուց յետոյ Դաշնակցութիւնը բերկրանքով ողջունում է նրանց՝ ասելով. «Այժմ մենք եղբայրներ ենք»: Կուսակցութիւնը գեներալ Անդրանիկին, որը այդ ժամանակ ՀՅԴ անդամ էր, առաջարկում է, որ իրենց հետ միասին բարեկամական յարաբերութիւններ հաստատի երիտթուրքերի հետ, սակայն Անդրանիկը այդ առաջարկը կտրականապէս մերժում է:

Ըստ պատմաբան Անդրանիկ Չալաբեանի՝ «1909թ.-ի Անդրանիկը ծպտուած եւ կեղծ անձնագրով մեկնում է Կ. Պոլիս (այդ ժամանակ նա բնակւում էր Բուլղարիայում, ծան. հեղինակի): Դաշնակցութեան ղեկավարները՝ է. Ակնունին, Վարդգէսը (Սերէնկուլեան), Ռուբէն Զարդարեանը, Արմէն Գարօն (Գարեգին Պաստրմաճեան) եւ այլք մօտ հինգ ժամ փորձում են Անդրանիկին յամոզել, որ երիտթուրքերի օրօք այլեւս կոտորածներ չեն լինելու Թուրքիայում: Անդրանիկը, սակայն, անդրդուելի մնաց իր այն յամոզմունքի մէջ, որ հայերը չպէտք է թուլացնեն զգօնութիւնը: «Եթէ երիտթուրքերը անկեղծ են իրենց կարգախօսներում, ինչու՞ նրանք չեն զինաթափում 160 000 զինուած քրդերին՝ Դիարբեքիրից մինչեւ Պարսկաստանի սահմանը»: Ապա իր իսկ հարցին պատասխանելով, Անդրանիկը շարունակում է. «Նրանք քրդերին զինուած են պահում մեզ կոտորելու համար, հէնց որ դրա համար յարմար առիթ ներկայանայ[1]»:

Ակնունին պատասխանում է. «Անդրանիկ ջան, այսուհետեւ ոչ մի հայի քիթ չի արիւնոտուելու, չեմ հասկանում, թէ ինչու ես դու այդպէս յոռետես»[2]:

Խորհրդարանի անդամ (թուրքական խորհրդարանի, ծան. հեղինակի) Վարդգէսը աւելացնում է. «Եթէ դու մնաս Պոլսում, ես քեզ կը ծանօթացնեմ քաղաքի ոստիկանապետ Ալի փաշայի հետ, եւ դու հաստատապէս լաւ աշխատանք կ'ունենաս կառավարութիւնում»: Անդրանիկը կրկին մերժում է [3]: Աւելի ուշ Անդրանիկը ասում է. «Ես տեղեկացուած եմ այդ Ալի փաշայի մասին, նա մէկն էր նրանցից, ովքեր կոտորեցին Զբօսանքի հայերի մէկ քառորդը եւ յետոյ այրեցին Տալորիկի եկեղեցում. ես երեք անգամ կռուել եմ նրա դէմ, իսկ այժմ նրանք (ՀՅԴ առաջնորդները) ցանկանում են, որ ես նրան «եղբայր» անուանեմ ու ձեռքը սեղմեմ»[4]:

Ապա Անդրանիկը մեկնեց Եգիպտոս եւ 45 օր յետոյ տեղի ունեցան Ադանայի կոտորածները: Դեռեւս Եգիպտոսում լսելով Ադանայի ջարդերի գոյժը, Անդրանիկը չեղեալ յայտարարեց հայ-թուրքական բարեկամութեան համաձայնագիրը:

Ըստ Չալաբեանի. «հայերը չէին կարողանում հաւատալ, որ օսմանեան սահմանադրութեան հռչակման օրերին կարող էին ջարդեր տեղի ունենալ Թուրքիայում՝ այն էլ այն զօրքի մասնակցութեամբ, որը քաղաք էր ժամանել քաղաքաբնակ հայերի անուտանգութիւնը ապահովելու առաքելութեամբ: Նախճիրը սկսուեց ապրիլի 1-ին եւ կրկնուեց ապրիլի 12-ին: Այդ ջարդերը մի քանի օրուայ մէջ խլեցին 30 հազար անմեղ հայերի կեանք: Թուրքական խորհրդարանի հայ պատգամաւորները, որոնց թւում Գրիգոր Զոհրապը (իրաւաբանութեան պրոֆէսոր եւ գրող), դոկտոր Տաղաւարէանը եւ Վահան Փափազեանը առաջին ջարդերից յետոյ բացատրութիւն պահանջեցին: Կառավարութիւնը յայտնեց իր «կսկիծն ու վրդովուածութիւնը» այդ «ամօթալի արարքի» համար, որը իրականացուել է երկրում առկայ «պահպանողական տարրերի» կողմից: Գրիգոր Զոհրապը պահանջեց անյապաղ հետաքննութիւն անցկացնել եւ վարչապետ Հիլմի փաշան համաձայնուեց բաւարարել այդ պահանջը»[5]:

ՀՅԴ ղեկավարներից Արմէն Գարօն, գովաբանելով Անդրանիկին, գրում է. « Այսօր ես չեմ կարող ժխտել այն փաստը , որ Անդրանիկը միակ մարդն էր, որ չխաբնուեց երիտթուրքերից եւ չտրուեց նրանց կեղծ խոստումներին»:

ՀՅԴ ականաւոր դէմքերից լրագրող-հրապարակախօս Ռուբէն Դարբինեանը (Արտաշէս Չիլինգարեան) 1917թ. սկզբներին գրում է. «Նոյնիսկ Ադանայի կոտորածները չընթափեցրեցին հայ քաղաքական առաջնորդներին դադարեցնելու իրենց համագործակցութիւնը երիտթուրքերի հետ»:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ղեկավարութիւնը ընդունելով թուրքերի արդարացումը Ադանայի կոտորածների վերաբերեալ, թէ իբր դրանց իրականացման համար պատասխանատու են միայն թուրք յետադիմական տարրերը, շարունակեցին համագործակցութիւնը երիտթուրքերի հետ:

Ուղիղ վեց տարի յետոյ՝ 1915թ. –ի ապրիլին, հայ բնակչութիւնը ոչնչացուեց եւ զանգուածաբար տեղահանուեց իր բնօրրանից:

ՀՅ Դաշնակցութիւնը, առաջնորդուելով իր ղեկավարներ Ռոստոմի, Չաւարեանի ու Միքայէլեանի մարքսիստական գաղափարներով, 1890թ. իր հիմնադրումից մինչեւ 1917թ. հայ ժողովրդին ներշնչում էին մարքսիստական-հրէական գաղափարներ: Այդ ուժերի կործանարար քարոզչութիւնը իրականում նպատակաուղղուած էր Ռուսաստանի քայքայմանն ու այնտեղ իշխանութիւնը աստիճանաբար իրենց ձեռքը վերցնելուն, եւ նրանք (մարքսիստական-հրէական կազմակերպութիւնները) գաղտնի համագործակցում էին հրէայ «Երիտթուրքերի» հետ:

Ռուսաստանը բացայայտ հակահայ գործողութիւնների դիմել է 19-րդ դարի վերջերից, երբ հայերին ռուսախօս դարձնելու նպատակով ռուսական կառավարութիւնը 1897թ.-ին փակեց հայկական դպրոցները, իսկ 1903թ. փակուեցին նաեւ որոշ հայկական եկեղեցիներ ու բռնագրաւուեց հայ եկեղեցուն պատկանող գոյքը: Մինչ այդ թերեւս ոչ մի հայ չէր կարող երազել անկախութեան մասին: 1877թ.-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զօրքերը հայ կամաւորների օգնութեամբ կարողացան Ռուսաստանի հսկողութիւնը հաստատել Արեւմտեան Հայաստանում՝ հասնելով մինչեւ Էրզրում եւ դրանից էլ անդին: Ռուսների այդ յաջողութիւնները, ինչպէս նաեւ սլաւոնների ազատագրումը ցնցեցին հայերին եւ նետեցին յեղափոխութեան եւ անկախութեան արիւնոտ ճամփաների մէջ: Հայերը որպէս իրենց նպատակների իրականացնող դեռեւս դիտարկում էին Մեծ Ռուսաստանը, որը, ըստ նրանց, մի օր պէտք է օգնէր հայերին Թուրքահայաստանի ազատագրման պատերազմում ընդդէմ Թուրքիայի: Հայերը ռուսական ոստիկանութեան անբարեյաճութեանը նայում էին հանդուրժողականութեամբ, կարծելով, թէ դա ընդամէնը ժամանակաւոր բնոյթ է կրում: Այժմ իսկ Աբովեան քաղաքի մօտ կայ մի հսկայական յուշարձան, որում պատկերուած են երկու զինուոր՝ մէկը հայ եւ միւսը ռուս, որոնք միասին բարձրացնում են իրենց զէնքը: Դա խորհրդանշում է հայ-ռուսական զինակցութիւնը 1877թ. –ի Թուրքիայի դէմ պատերազմում:

ԲՐԷՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Այս պայմանագիրը նպատակաուղղուած էր աւարտին հասցնել ցարական Ռուսաստանի ու Գերմանիայի միջեւ պատերազմը, քանի որ այդ ժամանակ արդէն Ռուսաստանում իշխանութիւնը անցել էր բոլշեւիկներին, որոնք բանակցում էին Գերմանիայի հետ՝ վերջնական հաշտութեան պայմանագիր կնքելու համար: Դաւադիր ու խարդախ քայլերով Ռուսաստանի հրէայ բոլշեւիկները համաձայնութեան եկան Թուրքիայի հրէայ ղեկավարներ Թալէաթի ու Էնւէրի հետ՝ զաւթելու Արեւմտեան Հայաստանի պատմական տարածքները: Հայաստանի գրաւումից յետոյ նրանք իրականացրին նաեւ Նախիջեւանի, Ղարաբաղի ու Բաքուի բռնազաւթումը:

Ներկայացնում ենք մի քանի յատուածներ Մոսկուայի «Հայկական սուրհանդակ» պարբերականում 1999-2000թթ. Կարէն Միքայէլեանի հրապարակած յօդուածից, որը հիմնուած է Յարութիւն Ներսիսեանի «Սիոնիզմը Թէոդոր Հերցլից մինչեւ Լորդ Ռոտշիլդը եւ հայկական հարցը» աշխատութեան վրայ:

«1918թ. մարտի 3-ին կնքուեց Բրէստ-Լիտովսկի պայմանագիրը: Այն վճռական դեր ունեցաւ հայ ժողովրդի ճակատագրում, մասնաւորապէս հայոց պատմական հողերի կորստեան առումով: Ի տարբերութիւն այդ պայմանագրով Ռուսաստանի զիջած այլ տարածքների, պատմական Հայաստանի տարածքները յետագայում չը վերադարձուեցին իրենց բնիկ տէրերին:

Բրէստ-Լիտովսկի պայմանագրի վերաբերեալ կայ բաւական մեծաքանակ գրականութիւն: Սակայն դրանցում, ինչպէս վերջին 80 տարիներին գրուած պատմական նշանակութեան համարէայ բոլոր աշխատութիւններում, թաքցուել է ճշմարտութիւնը՝ մասնաւորապէս հայկական հարցի վերաբերեալ այն մասին, որ ոչ թուրք ուժերը, թուրքերի հետ ձեռք ձեռքի տուած աշխատեցին մասնատել Հայաստանը:

1917թ. նոյեմբերի 20-ին Լենինը եւ Ստալինը կոչ ուղղեցին Ռուսաստանի եւ արեւելքի մուսուլմաններին, որտեղ ազդարարում էին.«Տապալուած ցարի գաղտնի պայմանագրերը Կ. Պոլսի գրաւման վերաբերեալ պէտք է չեղեալ համարուեն: Ռուսաստանը

եւ իր կառավարութիւնը՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդը, դէմ են օտար հողերի զաւթմանը: Կ. Պոլիսը պէտք է մնայ մուսուլմանների ձեռքին: Մենք Թուրքիան մասնատելու եւ Հայաստանի անվտանգութիւնը ապահովելու համաձայնագիրը յայտարարում ենք չեղեալ»:

Բրէստ-Լիտովսկում Թուրքիայի պատուիրակ Հաքքի փաշան իր ելոյթում յայտարարում է. «Ես խնդրում եմ, որ ռուսական պատուիրակութիւնը Ռուսաստանին ուղղուած իմ խօսքերում ոչ մի անհաճոյ ակնարկ չը դիտարկի: Չնայած Ռուսաստանը մեզ տհաճութիւններ է պատճառել անցեալում, մենք հասկանում ենք, որ դա նոյն Ռուսաստանը չէ, որի հետ մենք այժմ բանակցում ենք»: Պաշտպանելով Թուրքիայի իրաւունքները Կարսի, Արդահանի ու Բաթումիի գաւառների նկատմամբ, Հաքքի փաշան յայտարարում է, թէ «Այստեղ չկան յաղթողներ ու պարտուողներ, այստեղ բոլորս էլ եաղթող ենք»: Այս խօսքերը վերաբերում էին բոլշեւիկներին եւ երիտթուրքերին:

Ըստ էութեան 1917թ.-ին ցարական Ռուսաստանի փլուզումը սոցիալիստ-կոմունիստ-բոլշեւիկների ձեռքով ճակատագրական աղետ էր Հայաստանի ու նրա ժողովրդի ապագայի համար:

Այսօր Հայաստանի Դաշնակցութիւն կուսակցութիւնը լռելեայն մէկ կողմ է քաշուել, երբ Հայաստանի կոռումպացուած կառավարութիւնը վաճառում է ժողովրդի հարստութիւնը: Կառավարութեան անդամները հարստացել են Համաշխարհային բանկից ու Արժոյթի միջազգային հիմնադրամից ստացած վարկերը իւրացնելով, այն վարկերը, որոնք ուղղուած են լճացնելու երկրի ազգային տնտեսութիւնը: ՀՅԴ կուսակցութիւնը միտուած է համբերատար սպասելու մինչեւ ներկայիս կառավարութեան տապալումը, որպէսզի այնուհետեւ ընտրելով, իր ձեռքը վերցնի կառավարութիւնը: Մինչ նրանք սպասում են, ժողովուրդը հետզհետէ ընթանում է թուլացման ու քայքայման ճանապարհով. եւ դրանում Դաշնակցութիւնը մեղաւոր է ոչ պակաս, քան ներկայիս կառավարութիւնը: Այդպիսի պահուածքը թոյլ չի տալիս նրանց որակել որպէս ժողովրդի մասին մտածող կուսակցութիւն: Այլ խօսքերով, նրանք առաւել շա-

հագրգռուած են ստանալու կառավարական լծակներ, քան թէ իրապէս ընդդիմանալ երկրի ներքին գործերին միջամտող օտար կազմակերպութիւններից Հայաստանի կառավարութեան կախուածութեանը: Որտե՞ղ է դաշնակցութեան քաջութիւնն ու հայրենասիրութիւնը:

Հայաստանում կան անկեղծ հայրենասէրներից բաղկացած կազմակերպութիւններ, որոնք հայրենիքի իրական պաշտպաններ են եւ պատրաստ են իրենց կեանքը զոհել դրա համար: Նրանք փորձում են Հայաստանը պաշտպանել Արեւմուտքի քայքայիչ մշակութային ներխուժումներից, ինչպէս նաեւ Հայաստանի ինքնիշխանութեանը սպառնացող զանազան համաշխարհային կազմակերպութիւնների գրոհներից: Հէնց այդ ազնիւ անձինք էլ այսօր յաւերժացնում ու պատւում են Գարեգին Նժդեհի յիշատակը, որը 1921թ.-ին պաշտպանեց Զանգեզուրը՝ ներկայիս Հայաստանի հարաւային կէսը բոլշեւիկեան վտանգից:

Երբ հայրենասիրական ուժերը ընդդիմանում են արտաքին կամ ներքին թշնամիներին, նրանց անուանում են «ծայրայեղականներ»: Իրականում ծայրայեղականները նրանք են, ովքեր կողոպտում ու վաճառում են ժողովրդի հարստութիւնները՝ չկարողանալով պաշտպանել ժողովրդին արտաքին քայքայիչ ազդեցութիւններից: Արդեո՞ք տարօրինակ չէ, որ աշխարհի հարուստ հայերը գումարներ են տրամադրում թանգարանների, եկեղեցիների ու ծառատունկերի համար, սակայն հայրենիքի իրական պաշտպանների համար ծախսեր անելու պատրաստ չեն: Եթէ երբեւէ (Աստուած չանի) թշնամին յարձակուի Հայաստանի վրայ, այդ թանգարանները, եկեղեցիներն ու ծառերը՞ պիտի կրակեն թշնամու վրայ: Ամէն ինչ պէտք է անել ըստ առաջնահերթութեան՝ նախ եւ առաջ պաշտպանելով հայրենիքը ֆիզիկապէս եւ բարոյապէս, իսկ դրանից յետոյ մնացած ամէն ինչ կը ընկնի իր տեղը եւ եթէ դու հզօր ես, անկախ քո վիճակից անպայման յարգանքի կ'արժանանաս թշնամուց: Հայրենասիրութիւնը ամօթ չէ, երկիրը վաճառելն է ամօթ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը պիտի փոխի իր անունը եւ կոչուի «Հայ ազատութեան դաշնակցութիւն», որը ուղղուած պիտի լինի պաշտպանելու ոչ միայն ազգի ազատութիւնը, այլ նաեւ քաղաքացու, մարդու ազատութիւնը: Մարդու հանրային (սոցիալական) շփումները կառավարութեան պարտաւորութիւնների մէջ չեն մտնում: Մարդը ինքն է ստեղծում այդ շփումները այլ մարդկանց հետ՝ առանց պետութեան հանրայնացնող հսկողութեան: Սոցիալիզմը 20-րդ դարի մեծագոյն սուտն է: Խօստանալով հաւասարութիւն, եղբայրութիւն եւ ապահովութիւն, այն պատճառում է թշուառութիւն, բռնակալութիւն ու կախուածութիւն: Եւ սոցիալիզմի մէջ հաւասարութիւնը ձեռք է բերուել միայն այն հարցում, որ բոլորը հաւասարապէս թշուառ են: Իսկ իրական ազատութիւնը կարող է հաստատուել միայն ազատ մարդկանց (ժողովրդի) կողմից հսկուող կառավարական համակարգերի առկայութեամբ: Միայն ազատ մարդը կարող է հարստութիւն ստեղծել, ոչ թէ կառավարութիւնները: Մարդու գլխաւոր կարիքներից մէկը սեփականութեան անհրաժեշտութիւնն է, որը պէտք է պաշտպանի սահմանադրութիւնը եւ կառավարութիւնը:

«Այն կառավարութիւնն է ամենակատարեալը, որը առաւելագոյնս քիչ է կառավարում [մարդկանց] » (Թոմաս Ջեֆերսոն, ԱՄՆ 3-րդ նախագահը):

Կարլ Մարքսի կոմունիզմի տեսութեան հիմնական դրոյթներից մէկը անհատական սեփականութեան վերացման դրոյթն է: Ռուսական բոլշեւիկները խօստանում էին, որ ամէն ոք կը լինի հաւասար: Բոլշեւիկները ժողովրդի հարստութիւնը առգրաւեցին պետութեան օգտին, սակայն դրանով իսկ նրանք դարձան նոր հարուստներ: Նրանց սոցիալիզմը առաջ բերեց աւելի շատ բռնակալութիւն, աղքատութիւն ու դաժանութիւն, քան երբեւէ եղել է ռուս ժողովրդի ամբողջ պատմութեան ընթացքում:

ՀՅԴ-ն անմիջապէս պէտք է հրաժարուի համաշխարհային սիոնիզմից ֆինանսաւորուող «սոցիալիստական ինտերնացիոնալի» լծից: Հնարաւոր չէ ազատութեան ջատագով լինել՝ միաժամանակ հանդիսանալով սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ: Սոցինտերնին անդամագրուելով ակամայ ծառայում

են համաշխարհային դրամատէրերի աշխարհակարգը հաստատելուն ուղղուած նպատակներին: Դրանց իրականացման ճանապարհին անկախ ազգութիւններն ու ցեղերը պէտք է վերանան՝ ի շահ համաշխարհային դրամատէրերի ու նրանց բանկերի: Չեմ կարծում, թէ ՀՅԴ-ն կարող է այդպիսի ձգտում ունենա (իսկ միգուցէ իրո՞ք ունի):

Արտաւազդ Աւագեանը անկախ հետազօտող ու լրագրող է, բնակւում է ԱՄՆ –ում: Նա ՀՅԴ կուսակցութեան նախկին անդամ է եւ այդ կուսակցութեան բարեփոխման շարժման (Dashnak party reform movement) վարչութեան նախկին անդամ:

Ծանօթագրութիւններ

Անդրանիկ Չալաբեան, «Գեներալ Անդրանիկը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը», տպագրել է հեղինակը, 1988թ., Սաուրֆիլդ, Միչիգան, ԱՄՆ:

1. տես էջ 193, 2-րդ պարբերութիւն:
2. տես էջ 193, 3-րդ պարբերութիւն,
3. տես էջ 193, 4-րդ պարբերութիւն,
4. տես էջ 194, 2-րդ պարբերութիւն:
5. տես էջ 194:

Լիվոնիա, Միչիգան
Սեպտեմբեր 16, 2005թ.

ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1918թ. մարտի 3-ին ստորագրուեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այն վճռական դեր ունեցաւ հայ ժողովրդի ճակատագրում, մասնաւորապէս հայոց պատմական հողերի կորստեան համար: Ի տարբերութիւն Ռուսաստանի կողմից այդ պայմանագրով զիջած այլ տարածքների, պատմական Հայաստանի տարածքները յետագայում չվերադարձուեցին իրենց բնիկ տէրերին:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին կայ բաւական մեծաքանակ գրականութիւն: Սակայն ինչպէս վերջին 80 տարիներում գրուած պատմական նշանակութեան համարեա բոլոր նիւթերում, դրանցում եւս չի ասուել իրական ճշմարտութիւնը՝ մասնաւորապէս Հայկական հարցի վերաբերեալ: Այդ բացը որոշակիօրէն լրացուել է Յարութիւն Ներսիսեանի (1913-1993) ՝ «Սիոնիզմը Թէոդոր Հերցելից մինչեւ լորդ Ռոտշիլդը եւ Հայկական հարցը» «Сионизм от Теодора Герцля до лорда Ротшильда и Армянский вопрос» աշխատութեան մէջ,որը տպագրել է Կարէն Միքայէլեանը Մոսկուայում լոյս տեսնող Армянский Вестник պարբերականում: Դա - «Բալֆուրեան հռչակագիրը եւ Բրեստ- Լիտովսկի գաղտնիքները» «Бальфурская декларация и загадки Брест-Литовска» աշխատութեան համառօտ տարբերակն է:

1917թ.-ի ռուսաստանեան յեղափոխութիւնից յետոյ Լոնդոնում հրէական ազգային շարժման ղեկավարները իրենց առջեւ դրեցին հետեւեալ 2 նպատակները.

Թուրքիային համոզել հրէաներին փոխանցելու պաղեստինեան տարածքները, որքան հնարաւոր է երկարաձգել աւերիչ պատերազմը ցարական Ռուսաստանի եւ Գերմանիայի միջեւ:

Նպատակը Ռուսաստանի հսկայական բնական ռեսուրսներին արագ տիրանալն էր:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը այս նպատակները իրականացնելու բեմադրուած ներկայացում էր: Պայմանագրի բարեյաջող կնքման պատասխանատուութիւնը դրուած էր Տրոցկու վրայ:

Նրա խնդիրն էր նաեւ ապահովել պատերազմական վիճակը Ռուսաստանի եւ Գերմանիայի միջեւ, մինչեւ Թուրքիայի համար շահաւէտ պայմանագիր կնքելը:

Պատուիրակութիւնը բաղկացած էր երեք անհատներից. առաջինը Տրոցկու աշակերտ Եօֆֆէն էր, որն ունէր յատուկ պարտականութիւններ, երկրորդը հենց Տրոցկին էր, իսկ երրորդը տրոցկիական Սոկոլնիկովն էր: Սովետական պատուիրակութեան գլխաւոր խորհրդականն էր արեւելեան երկրների «մասնագէտ» Պաւլովիչը (Weltman): Իր ինքնակենսագրականում նա գրում է, որ հոկտեմբերեան յեղափոխութեան երկրորդ օրը Տրոցկին իրեն յանձնարարում է ցարական արխիւներից գտնել դիւանագիտական եզակի փաստաթղթեր եւ ներկայացնել իրեն: Պաւլովիչը այդ յանձնարարութիւնը կատարում է շատ կարճ ժամկէտում եւ այդ մասին Տրոցկին ռուսական եւ արտասահմանեան մամուլում գրում է. «այդ փաստաթղթերի մշակման գործը ես վերջացրեցի Բրեստի բանակցութիւններից առաջ եւ այնտեղ նշանակուեցի որպէս մասնագէտ» (ԼԳԱՕՐ ՍՍՍՐ, ֆ. 5402. Օп. 1, л. 1) (ԽՍՀՄ կենտրոնական պետական արխիւ):

Այդ փաստաթղթերի մէջ առաւել կարեւորներից էր Սայքս-պիկոյի համաձայնագիրը,որտեղ Անգլիան եւ Ֆրանսիան յաղթանակից յետոյ համաձայնւում են Ռուսաստանին յանձնել Կ. Պոլիսը, Բոսֆորը,Դարդանելի նեղուցը,ինչպէս նաեւ Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթները եւ Քուրդիստանի մի մասը: Գաղտնի համաձայնագրի հրապարակումը ուրախացրեց Էնուէրին, Թալէաթին եւ Ջեմալին: Գաղտնի համաձայնագիրը ներկայացնելով որպէս չարիք, նրանք հնարաւորութիւն ստացան մերժել այն: Ջեմալը ելոյթ ունենալով Բէյրութում գովաբանեց փաստաթղթերը հրապարակած անձանց:

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Տրոցկին «Բոլորին,բոլորին, բոլորին» ուղղուած իր կոչում յայտնում է, որ պէտք է վերջ տալ գաղտնի պայմանագրերին եւ սկսել վարել ազնիւ ու բաց դիւանագիտութիւն:

1917թ. նոյեմբերի 20-ին Լենինը եւ Ստալինը կոչ ուղղեցին Ռուսաստանի եւ արեւելքի մուսուլմաններին,որտեղ յայտնում էին .«Տապալուած ցարի գաղտնի պայմանագրերը Կոստանդնուպոլսի գրաւման վերաբերեալ պէտք է ոչնչացուեն: Ռուսաստանը եւ իր կառավարութիւնը՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդը դէմ են օտար հողերի գրաւմանը: Կ.Պոլիսը պէտք է մնա մուսուլմանների ձեռքում: Մենք յայտարարում ենք, որ Թուրքիայի մասնատման եւ Հայաստանի անվտանգութեան ապահովման դրոյթը չեղեալ է յայտարարւում»:

Գրչի մէկ հարուածով խորհրդային ղեկավարութիւնը վերջ դրեց համաշխարհային օլիգարխների «տաք ջրերին» հասնելու Ռուսաստանի երազանքներին:

Լորդ Քերզոնը թուրքերի ներկայութիւնը Կ.Պոլսում համարում էր Եւրոպայի կենտրոնում առաջացած չարորակ ուռուցք, որը թունաւորում է նրա կեանքը եւ առաջարկում էր վերացնել այն:

Բոլշեւիկներն ուզում էին ապահովել Օսմանեան կայսրութեան անվտանգութիւնը: Արեւելեան Հայաստանը, որը ազատագրուել է ռուսական զօրքերի օժանդակութեամբ, պէտք է ետ վերադարձուի թուրքերին: Խորհրդային պետութիւնը ուզում էր արաբական աշխարհը տարանջատել Օսմանեան կայսրութիւնից: Հայազգի բանաստեղծ եւ հասարակական գործիչ Վահան Տէրեանը ժողովրդական կոմիսարների խորհրդին առաջարկում էր որոշում կայացնել խորհրդային զօրքերի որոշ քանակ թողնելու Արեւելեան Հայաստանում: Լենինի ստորագրած «Արեւմտահայաստանի մասին դեկրէտում» այդ առաջարկութիւնը չի ներառուել: Ընդհակառակը, Լենինը կարգադրում է թուրքերին տալ «Օսմանեան սուրբ ղուրանը»: Երեք օր յետոյ նոյն առաջարկութիւնը հնչեցրեց լուսաւորութեան ժողկոմ Լունաչարսկին՝ առաջարկելով անմիջապէս կատարել «Օսմանեան սուրբ ղուրանի» վերաբերեալ Լենինի կարգադրութիւնը (В. И. Ленин. Биохроника. T.V.C. 114-120):

Այս բոլոր յայտարարութիւնները հիմնւում էին երիտթուրքերի «Առաջադիմական յեղափոխականութեան» վրայ, որոնք յաղթեցին ռուսական գաղութային քաղաքականութեանը: Պաւլովիչը,Ռադեկը եւ այլոք հանդէս եկան երիտթուրքերի պաշտպանութեամբ: Այս բոլոր թուրքամէտ անձինք միաժամանակ դարձան նաեւ ակտիւ հակահայեր:

Այսպիսին էր իրավիճակը, երբ Եօֆֆէն նշանակուեց գերմանական բլոկի հետ բանակցութիւնների սովետական պատուիրա-

կութեան նախագահ: Բանակցութիւնները ընթանում էին այսպէս կոչուած «Քաղաքական յանձնաժողովի» համագումարներում: Համագումարներին մասնակցում էին Թուրքիան, խորհրդային պետութիւնը, Բուլղարիան,Գերմանիան, Աւստրո-Հունգարիան: Սակայն բանակցութիւնների հիմնական կողմերն էին Գերմանիան եւ Սովետները:

1917թ. դեկտեմբերի 14-ին գերմանական կողմը ներկայացրեց հաշտութեան պայմանագրի իր տարբերակը, որը բաղկացած էր 16 յօդուածներից, որոնցից 14-ը արդէն ընդունուել էին Սովետների կողմից նախորդ համագումարներում: Տարածքային խնդիրներին առնչուող երկու յօդուածները առաջին անգամ ներկայացուելով Սովետներին՝ առաջացրեցին երկարատեւ բանավէճեր:

Ցանկանում ենք շեշտել հետեւեալը. գերմանացիները ռուսներից չէին պահանջում զօրքերը դուրս բերել Թուրքիայից եւ ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքից: Նրանք պահանջում էին զիջել միայն Ռիգան եւ Ռիգայի ծոցի կղզիները: Նրանք շեշտում են նաեւ Բալթեան երկրների եւ Լեհաստանի խնդիրը:

Սա էր Աւստրո-գերմանական բլոկի հետ Եօֆֆէի բանակցութիւնների վերջակէտը: Իսկ թուրքական կողմի հետ բանակցութիւնների արդիւնքի մասին կարելի է գաղափար կազմել բանակցութիւնների վերջին համագումարում Իբրահիմ Հաքքի փաշայի ելոյթից՝ 1917թ. դեկտեմբերի 15-ին:

«Այսօր,- ասում է Հաքքի փաշան,- կայացաւ թուրք-ռուսական համագումարը եւ ես այն համոզմունքին եմ, որ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ առկայ խնդիրները կը ստանան երջանիկ լուծում: Դա լաւ արդիւնք է: Ինձ թւում է, որ վերջին 6 օրուայ ընթացքում կատարուած աշխատանքը գովեստի տեղ ունի: Մենք արագօրէն կը հոգանք այդ հարցը: Այսպիսի բարեյաջող արդիւնք ստանալու գործում մեծ դեր ունեցաւ ռուսական պատուիրակութիւնը, որը ցուցաբերեց անկեղծութիւն, արդարամտութիւն եւ առողջ դատողութիւն: Ռուսական պատուիրակութեան պարոնայք ցոյց տուեցին,որ նրանք իրական ժողովրդավարութեան ջատագովներն են, ինչպէս նաեւ արտակարգ դիւանագէտներ եւ պետական գործիչներ» (Мирные переговоры в Брест-Литовске. М., 1920, т. 1, 39-40):

Եօֆֆէի վերաբերեալ թուրքական պատուիրակութեան անդամների արտայայտած կարծիքները ինչպէս հեշտութեամբ կարելի է նկատել, դուրս են դիւանագիտական բարեկրթութեան սովորական կանոններից: Իրօք, ֆօն Կուլմանը Հաքքի փաշային անուանում է «Եւրոպայի լաւագոյն դիւանագէտ»: Նրա ամենաակնառու գծերից էր այն, որ նա կարողանում էր արտասուել իսկական արցունքներով՝ որոշ կինոդերասանների պէս: Ինչեւէ, նա չկարողացաւ չափաւորել իր հիացական կարծիքը ռուսական պատուիրակութեան հանդէպ, քանի որ դրա համար ունէր լուրջ պատճառներ:

Իրօք որ կային բաւական ազդեցիկ պատճառներ: Թուրքերը չէին կարող շնորհակալ չլինել Տրոցկուց այն բանի համար,որ նա հրապարակել էր Սայքս-պիկոյի պայմանագիրը, որ հրաժարուել էր «Ռուսական տան բանալիներին» տիրելու գաղափարից, եւ որ հրաժարուել էր Արեւմտեան Հայաստանից: Գերմանացիները նոյնիսկ չէին բարձրրացրել Թուրքիայի տարածքից ռուսական զօրքերը դուրս բերելու հարցը եւ Բրեստի պայմանագիրը պէտք է եզրափակէր ռուսական կողմի զիջումները: Հաքքի փաշան ըստ ամենայնի այլ պահանջներ եւս դրել է ռուսական կողմի առաջ: Երբ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը առաջին անգամ տպագրուեց, այնտեղ չկային սղագիր արձանագրութիւններ, իսկ երկրորդ հատորը դեռեւս չի տպագրուել: Եօֆֆէն կարող էր որոշում կայացնել միայն կուլիսների ետեւում, բայց ոչ երբեք պաշտօնական բանակցութիւններին: Հնարաւոր է վճռուած լինի, որ Հաքքի փաշայի պահանջները կը դառնան ապագայ սովետա-թուրքական յարաբերութիւնների հիմք: Կողմերը միմեանց վերաբերւում էին կատարեալ ըմբռնումով: Անկասկած Եօֆֆէն եւ Հաքքի փաշան հող են նախապատրաստել Թալէաթի եւ Տրոցկու բարձր մակարդակի հանդիպման համար:

ՏՐՈՑԿԻ ԵՒ ՖՕՆ ԿՈՒԼՄԱՆ

Եօֆֆէն Բրեստ-Լիտովսկից վերադարձաւ Ամանորից առաջ եւ Տրոցկուն զեկուցեց գերմանական բլոկի հետ բանակցութիւնների արդիւնքի մասին: Յունուարի 7-ին ժողովրդական կոմիսարների խորհուրդը լսեց Տրոցկու զեկոյցը հաշտութեան բանակցու-

թիւնների մասին: Տրոցկին նշանակւում է սովետական պատուիրակութեան ղեկավար՝ յետագայ բանակցութիւնների համար: Նախքան հեռանալը Տրոցկին Լենինի իմացութեամբ հերթական նուէրն է անում թուրքերին՝ ռուսական զօրքերին կարգադրելով լքել Կովկասի տարածաշրջանը՝ հակառակ հայերի ցանկութեան:

Գերմանացիները անհամբերութիւն էին ցուցաբերում հաշտութեան համար, եւ ռուսական կողմի վրայ ճնշում գործադրելու համար առաջին անգամ բարձրացրեցին թուրքական խնդիրը: Նախքան այդ օրը, Գերմանիան երկրորդ պլանում էր պահում Թուրքիային: Ինչպէս Եօֆֆէն է ասում, «Թուրքիան եւ Բուլղարիան ոչ մի դեր չէին խաղում Բրեստ-Լիտովսկում» (Новый мир, 1927, 6, 143):

Քաղաքական յանձնաժողովի փետրուարի 9-ի նիստում ֆօն Կուլմանը առաջին անգամ արտայայտեց այն տեսակէտը, որ գերմանական կողմի համար անընդունելի կը լինի հաշտութեան պայմանագիրը առանց դիւանագիտական երաշխիքների, որ Պետերբուրգի կառավարութեան զօրքերը դուրս կը բերուեն իրենց դաշնակիցների գրաւուած տարածքներից: Պէտք է նշել,1. որ գերմանական կողմը պահանջում էր միայն դիւանագիտական երաշխիքներ՝ ռուսական զօրքի դուրս բերման վերաբերեալ, եւ ոչ թէ դրա անյապաղ իրականացում, 2. խօսքը գնում էր միայն պատերազմի ընթացքում Ռուսաստանի գրաւած տարածքների մասին:

Նոյն ֆօն Կուլմանի ելոյթը ցոյց է տալիս, որ Տրոցկին աւելի վաղ է նրան նման հաւաստիացումներ տուել, քան Արեւմտեան Հայաստանում գտնուող ռուսական զօրքերը կ'անցնէին սովետական իշխանութիւնների հսկողութեան տակ եւ ընդհանրապէս պետութեան գերագոյն շահը չէր պահանջում,որ Տրոցկին նման երաշխիքներ տա: Տրոցկին պատրաստւում էր աւելի հեռուն գնալ: Նա,պատասխանելով ֆօն Կուլմանին, նշեց. «Ինչ վերաբերում է թուրքական տարածքներից զօրքերի դուրս բերմանը, մենք ունենք յատուկ տեսակէտ այդ կապակցութեամբ (ընդգծումն Կ. Մ.-ինն է), որը մեզ թոյլ չի տալիս դիտարկել հայկական տարածքներից զօրքերի դուրս բերումը, որպէս փոխհատուցում ռուսական կայսրութեան այս կամ այն հատուածի համար: Քանի որ մենք արդէն դուրս ենք բերում մեր զօրքերը Պարսկաստանից, այդ նոյն կերպով մենք դա կանենք՝ սկսելով Հայաստանից: Ի հարկէ, մենք

այդ մասին կը յայտարարենք առաւել պարզ եւ Թուրքիայի հետ հաշտութեան պայմանագրի տարրին համապատասխան (Мирные переговоры ..., 185-186)»:

Թոյլ տուէք յիշեցնել, որ այդ ժամանակ ռուսական զօրքերը արդէն ազատագրել էին Մեծ Հայքի մեծ մասը եւ նրանց մնում էր մի վճռական մարշով միանալ պաղեստինեան ճակատում գտնուող անգլիական զօրքերին: Սակայն Տրոցկին պատրաստւում էր ուժասպառ ու անօգնական թուրքերին յանձնել ոչ միայն Արեւմտեան, այլեւ Արեւելեան Հայաստանները: Ի՞նչ էր Տրոցկին ենթադրում «յատուկ տեսակէտ» ասելով: Նոյն օրը՝ փետրուարի 9-ին,կայսր Վիլհելմ 2-րդը, հաշուի առնելով խորհրդային կողմի պատրաստակամութիւնը, ֆօն Կուլմանին կարգադրեց վերջնագիր ներկայացնել խորհրդային պատուիրակութեանը՝ բացի գրաւուած տարածքներից, զօրքերը անյապաղ դուրս բերել նաեւ Լատուիայի եւ Էստոնիայի հարաւային շրջաններից: Նոյն օրը ֆօն Կուլմանը յայտարարեց. «Մենք չենք կարող ընդունել անորոշ խաղաղութեան բանակցութիւնները, որոնք յաջող արդիւնքների չեն բերում», նա ներկայացրեց որոշ հանգամանքներ, որոնք պէտք է ընդունուէին որքան հնարաւոր է շուտ: Չերնինը (Աւստրո-Հունգարիայի արտաքին գործոց նախարարը, ծան. հեղինակի) հանդէս եկաւ նոյնատիպ պահանջով: Դրանով փետրուարի 9-ի համագումարը փակուեց: Մէկ այլ հետաքրքրաշարժ տուեալ. Չերնինի հետ հանդիպման ժամանակ Տրոցկու հետ էր նաեւ Կարախանը (Խորհրդային կառավարութեան մէկ այլ անդամ): Տրոցկին Կարախանին ասել է, որ նա հաշտութիւն չի կնքի գերմանացիների հետ, թէկուզ դա յանգեցնի Ռուսաստանում ստեղծուած նոր ռեժիմի տապալմանը: Փետրուարի 10-ի համագումարին գերմանական գեներալ Հոֆմանը բողոքեց Ֆինլանդիայի տարածքում խորհրդային զօրքերի աւելացման դէմ: Այնուհետեւ ֆօն Կուլմանը հանդէս եկաւ խորհրդային կառավարութեան եւ զինուորական ղեկավարութեան դէմ մեղադրանքով, որ վերջիններս գերմանացի զինուորներին հրահրում են իրենց սպաների եւ գեներալների դէմ: Վերջապէս ֆօն Կուլմանը առաջարկեց դադարեցնել բանավէճերը եւ քննարկել միայն այն կէտերը, որոնց շուրջ կարելի է հասնել որոշակի եւ կոնկրէտ արդիւնքների:

Այս բոլորը ասուել է վճռականօրէն եւ վերջնագրի ոճով: Այնուհետեւ Տրոցկին հանդէս է գալիս հետեւեալ յայտարարութեամբ. « Ռուսաստանի Դաշնային Հանրապետութեան կառավարութեան-ժողովրդական կոմիսարների խորհրդի անունից տեղեկացնում եմ մեզ հետ պատերազմի մէջ գտնուող, ինչպէս նաեւ չեզոք եւ դաշնակից պետութիւնների ժողովուրդներին եւ կառավարութիւններին, որ մերժելով ստորագրել միացման համաձայնագիրը, Ռուսաստանը յայտարարում է իր կողմից Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի, Թուրքիայի եւ Բուլղարիայի հետ պատերազմական վիճակը դադարեցուած: Միաժամանակ ռուսական զօրքերին կարգադրւում է ճակատի ամբողջ երկարութեամբ զօրացրուել: L. Տրոցկի, Ա. Եօֆֆէ, Մ. Պոկրովսկի, Ա. Բիցենկոյ, Վ. Կարելին»:(Ю. Ключников и А. Сабанин. Международная политика новейшего времени в договорах, нотах и декпараациях. М. 1926, ч. II, 112-114): Պատուիրակութեան քարտուղար Կարախանի ստորագրութիւնը բացակայում է: Նա հրաժարուել է ստորագրել այդ յայտարարութիւնը:

ՏՐՈՑԿԻ ԵՒ ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅ

Մեծ Վէզիր Թալէաթ փաշան յատուկ գնացքով ժամանեց Բրեստ-Լիտովսկ՝ Տրոցկու հետ հանդիպելու համար: 1918թ. յունուարի 8-ին Աւստրո-Հունգարիայի արտգործնախարար Չերնինը իր օրագրում գրում է. «Անցած գիշեր Թուրքիայի մեծ վէզիր Թալէաթ փաշան ժամանեց: Նա այցելեց ինձ: Թալէաթ փաշան ըստ երեւոյթին թուրք պաշտօնեաներից ամենաշնորհաշատն ու եռանդունն է » (О. Чернин. "В дни мировой войны. М-Л. 1923, 251):

Տրոցկու խօսքերով Հայկական հարցը «Մեծ դեր խաղաց թուրքական պատուիրակութեան հետ բանակցութիւններին՝ նախքան Ամանորեայ ընդմիջումը»եւ որ այս հարցը «Նորութիւն չէ բանակցութիւնների այս փուլում» (Мирные переговоры... 63): Ակնյայտ է, որ Հայկական հարցը քննարկուել է Եօֆֆէի եւ Հաքքի փաշայի միջեւ եւ բանակցութիւնների ընթացքում մշտապէս ունեցել է «մեծ դեր», բայց ոչ որոշիչ դեր: Իսկ ո՞րն էր գլխաւոր հարցը:

Գուշակելու կարիք չկայ. դա թուրք-հրէական յարաբերութիւն-

ներին վերաբերող հարցերն էին: Լոնդոնում դաշնակիցները որոշել էին ,ինչպէս ԱՄՆ նախագահ Վիլսոնն է ասել, «Պաղեստինում դնել հրէական ինքնավարութեան հիմքերը»: Այժմ անհրաժեշտ էր, որ Թուրքիան նրանց յանձնի տուեալ տարածաշրջանի կառավարումը: Եթէ Թուրքիան համաձայնէր, սիոնիստների յաջողութիւնը երաշխաւորուած էր:

Բանակցութիւնները թւում էր, թէ լինելու էին բաւական բարդ: Նախորդ զիջումները Թալէաթի համար բաւական չէին: Նա պահանջում էր նաեւ Հայաստանի արեւելեան շրջանները՝ Կարսը, Արդահանը, Վրացական Բաթումի նաւահանգիստը, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի որոշ շրջաններ՝ իր հայեցողութեամբ: (Հետաքրքիր է, որ ըստ Եօֆֆէի Թալէաթը անընդհատ յիշեցնում էր Տրոցկուն, որ ինքը եւս յեղափոխական է):

Այնուհանդերձ դեռեւս բաւական գործ կար անելու այնպիսի համակարգ ստեղծելու համար, որի մէջ կը մտնեն այս բոլոր խնդիրները: Սակայն գերմանացիները ակնյայտօրէն արհամարհում էին թուրքական շահերը եւ ռուսներից չէին պահանջում ազատել թուրքական տարածքները: «Համաժողովներին փաստօրէն թուրքերն ու բուլղարացիները չէին խօսում. նրանց շահերն արտայայտում էր գերմանական կողմը» (История дипломатии, т. 3, 75): Դրա բացատրութիւնը կարելի է գտնել գերմանական զինուած ուժերի գլխաւոր գեներալ-քվարտերմաստեր Սթաֆ Լուդենդորֆի՝ 1918թ. նոյեմբերի 2-ին Բունդեսթագում ունեցած մի ելոյթում, որտեղ նա նշում է. « Զինուորական տեսակէտից մենք Աւստրո-Հունգարիայի կարիքը չունենք, Բուլղարիայի օգտակարութիւնը չնչին է, իսկ Թուրքիան այժմ բեռ է, բայց նա արդէն մեծ գործ է կատարել» (Советско-германские отношения..., 177):

Գերմանիան ձգտում էր միայն մի բանի՝ Ռուսաստանի հետ հաշտութեան եւ այդ նպատակին հասնելու համար արհամարհում էր Թուրքիայի շահերը:

Տրոցկու եւ Թալէաթի միջեւ կայացած բանակցութիւններից յետոյ համակարգուեցին ռուսական զօրքերի ազատագրած տարածքներից դուրս գալու, ինչպէս նաեւ Կարսը, Արդահանը եւ Բաթումը թուրքերին յանձնելու պայմանները:

Ահա թէ ինչ է գրում Մեծ Բրիտանիայի Վարչապետ Լլոյդ Ջոր-

ջը. «1918թ. յունուարին Մեծ Վեզիր Թալէաթը ... տուեց... անորոշ խոստումներ օրէնք ընդունելու, որի համաձայն հրէաների օրինական երազանքները Պաղեստինի մասին կարող են իրականանալ»(Ллойд Джордж. Указ. соч., 303):

Թալէաթը սիոնիստներին աղօտ խոստումներ է տուել նաէեւ 1916թ. յունվարին եւ 1917թ. նոյեմբերի 7-ին: Նրա գլխաւորած ռազմական գերատեսչութիւնը հաստատել է հրէական ազգային շարժման հետ կնքուած ռազմաքաղաքական համաձայնագիրը:

Թալէաթի եւ Տրոցկու միջեւ բանակցութիւնների առեղծուածային քօղը փոքր-ինչ բարձրացրեց Հաքքի փաշան՝ Բրեստի խաղաղութեան համաձայնագրի ստորագրման վերջնական փուլում: Դրա մասին կը խօսենք աւելի ուշ: Այժմ կը խօսենք 1918թ. փետրուարի 10-ին Տրոցկու կատարած ներկայացման մասին, որտեղ նա բոլորին զարմացրեց իր «ոչ պատերազմ, ոչ խաղաղութիւն» յայտարարութիւնով: Յաջորդ օրը՝ փետրուարի 11-ին, Գերմանիայի ռայխկանցլերը հետեւեալ հեռագիրն ուղարկեց Վիլհելմ 2-րդ կայսերը. «Ես կարծում եմ, որ Տրոցկու յայտարարութիւնը վիժեցրել է բանակցութիւնները եւ փաստօրէն դա զինադադարի մերժում է: Այնպէս որ մենք կարիք չունենք չեղեալ յայտարարել զինադադարը... հետեւաբար մենք իրաւունք ունենք կատարելու մեր յետագայ քայլերը»: 1918թ. փետրուարի 13-ին Համբուրգում կայացած հանդիպմանը, որին ներկայ էին Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-ը, կանցլեր Գերթլինգը, ֆելդմարշալ Հինդենբուրգը, գեներալ Լիւդենդորֆը եւ այլոք, կայսրը չափազանց վրդովուած յայտարարեց. «Մենք չենք ստացել Տրոցկու ստորագրութիւնը եւ այդ պատճառով եթէ մենք ուզում ենք խաղաղութեան համաձայնագիր, պէտք է տապալենք բոլշեւիկներին: Ռուս ժողովուրդը մնացել է քինապահ հրէաների ողորմածութեանը, որոնք միացած են աշխարհի բոլոր հրէաների եւ մասոնների հետ»(Советско-германские отношения... 317-318, 327): Պարզ էր, որ գերմանական կայսրը ձգտում էր հաշտութեան Ռուսաստանի հետ, որպէսզի իր զօրքերը արեւելքից ուղղէր դէպի արեւմտեան ճակատը, սակայն այժմ նա հարկադրուած էր կատարել հակադարձ գործողութիւն՝ զօրքերը տեղափոխել արեւմուտքից արեւելք: Ոչ միայն կայսրն ու իր գեներալները, այլ նաեւ գերմանական քաղաքագէտներն էին հասկանում, որ Տրոցկին պարզապէս վիժեցրել է հաշտութեան բանակցութիւնները՝ յօգուտ Բալֆուրեան հռչակագրի:

Գերմանացիները արեւմտեան ճակատից արեւելեան ճակատ տեղափոխեցին 4 դիւիզիայ, եւ 1918թ. փետրուարի 18-ին վերսկսեցին գրոհը: 14 օրուայ ընթացքում նրանք գրաւեցին մի շարք շրջաններ Բալթեան հանրապետութիւններից, Բելոռուսիայից, Ուկրաինայից եւ Ռուսաստանից: Պետրոգրադը յայտնուեց վտանգի առաջ, եւ մայրաքաղաքը բոլշեւիկները տեղափոխեցին Մոսկուա:

Փետրուարի 18-ին կայացած բոլշեւիկեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէի համագումարին Լենինը առաջարկում է անյապաղ ստորագրել հաշտութեան պայմանագիրը: Այդ առաջարկութիւնը անցնում է 8 կողմ եւ 5 դէմ-ով: Հեռագիր է ուղարկւում Գերմանիա: Գերմանացիների պատասխանը հասաւ Փետրուարի 23-ին եւ ունէր չափազանց կոշտ բնոյթ:Կազմւում է պատուիրակութիւն՝ բանակցութիւնները վարելու համար եւ դրա ղեկավար է նշանակւում Գ. Յ. Սոկոլնիկովը: Լենինը նրան յանձնարարում է բանակցութիւնների ընթացքում փափկեցնել գերմանական չոր ուլտիմատումը: Սոկոլնիկովը համաձայնում է դրան՝ ասելով, որ մի ստորագրութեան համար ամբողջ պատուիրակութիւն չարժէ ուղարկել եւ որ ինքը կ'աշխատի որոշ արդիւնքների հասնել (VII экстренный съезд, 271): Դա խօսում է այն փաստի օգտին, որ Սոկոլնիկովը տեղեակ չէր Տրոցկու եւ Թալէաթի միջեւ կայացած գաղտնի բանակցութիւններից: Թէ ինչպէս վարուեց Սոկոլնիկովը Եօֆֆէի հետ անհատական խորհրդակցութիւնից յետոյ, կը տեսնենք յաջորդիւ:

ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐԸ

Գերմանական վերջնագրի համաձայն սովետական պատուիրակութիւնը պայմանագիրը կնքելու համար Բրեստ-Լիտովսկ ժամանելուց յետոյ միայն երեք օր ունէր: Մարտի 1-ին Ֆօն Ռոզենբերգի նախագահութեամբ անցկացուեց միացեալ համաժողով: Նա կարդաց փետրուարի 21-ին գերմանացիների ներկայացրած վերջնագրի 10 պայմանները: Հասնելով հինգերորդ կէտին՝ «Արեւելեան Անատոլիայի տարածքներից զօրքերի դուրս բերմանը», նա կատարում է հետեւեալ հաւելումը. «ներառեալ Կարսի,

Արդահանի եւ Բաթումի շրջանները: Սակայն մենք չենք պնդում նշուած տարածքներից ռուսական զօրքերի անյապաղ դուրս բերմանը՝ ձգտելով խուսափել յաւելեալ մեղադրանքներից»(Мирные переговоры... 219):

Ֆօն Ռոսենբերգից յետոյ ելոյթ է ունենում Հաքքի փաշան: Նա խօսում է «թուրք-ռուսական յատուկ բանակցութիւնների» մասին, անդրադառնալով այն հարցին, որ ինքը «պատիւ է ունեցել այդ ժամանակ ռուսական պատուիրակութեան ղեկավար պարոն Եօֆֆէին ներկայացնել առաջին թուրք-ռուսական ծագիրը», իսկ Եօֆֆէի մեկնումից յետոյ նա «պատիւ է ունեցել Տրոցկուն յանձնել նշուած ծրագրի առաւել աւարտուն տարբերակը, այդ պատճառով այժմ ռուսական պատուիրակութեան մօտ կայ համաձայնագրի երկու տարբերակ»:

Հաքքի փաշայի այս բացատրութիւնից յետոյ արդէն պարզ է դառնում. առաջին, որ թուրքերը առաջնորդւում էին Տրոցկու եւ Եօֆֆէի եւ հետ ունեցած գաղտնի բանակցութիւններով: Տրոցկուն ներկայացրած առաջարկում կարծես թէ ներառուած էր Արեւելեան Անատոլիան մաքրելու թուրքերի պահանջը: Այնուամենայնիւ այդ պահանջը ներառուած չէր փետրուարի 9-ի ռուս- գերմանական համաձայնագրում: Բայց բանակցութիւնների ձախողումից յետոյ այդ պահանջը գերմանացիները ընդգրկեցին 1918թ. փետրուարի 21-ի վերջնագրում:

Երկրորդ, երբ փետրուարի 9-10-ի ընթացքում Տրոցկին ժամանեց Բրեստ-Լիտովսկ, թուրքերը «Տրոցկուն ներկայացրին օսմանեան պատուիրակութեանը ձեռնտու առաւել աւարտուն պայմանագրի տարբերակ», որտեղ ընդգրկուած էին Կարսի, Արդահանի եւ Բաթումի նկատմամբ պահանջները: Նոյնիսկ այդ ժամանակ գերմանացիները հաշուի չէին առնում այդ պահանջները: Այստեղ հարց է առաջանում. ե՞րբ է գերմանական կողմը իր վերջնագրի մէջ ընդունել թուրքական նշուած պահանջները: Այս պահանջները ընդգրկուել են փետրուարի 21-ին կազմուած վերջնագրում եւ Պետերբուրգ է հասցուել փետրուարի 23-ի առաւօտեան: Այսուհանդերձ գերմանական պատուիրակութիւնը Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանները մաքրելու մասին յիշատակել է միայն մարտի 1-ի բանակցութիւններին՝ այն էլ միանշանակօրէն յայտարարելով, որ չեն պնդում, որ այդ տարածքներից ռուսական զօրքերը անյապաղ դուրս բերուեն:

Ակնյայտ է, որ գերմանացիները բաւարարաչափ տեղեկացուած չէին ռուս-թուրքական յատուկ բանակցութիւններից, որոնք կայացել էին Հաքքի փաշայի ու Եօֆֆէի եւ Տրոցկու ու Թալէաթի միջեւ: Այլապէս Սոկոլնիկովի պահուածքը նրանց մէջ չէր առաջացնի շփոթութիւն, ինչը կը տեսնենք քիչ յետոյ:

Երրորդ, հասկանալի է դառնում դեռեւս զինադադարի առաջին օրերից եւ նոյնիսկ բանակցութիւններից առաջ Տրոցկու կողմից Հարաւային Կովկասից զօրքերի դուրս բերման գաղափարը ընդունելու երեւոյթը: 1918թ. յունուարի 28-ի իր ելոյթում Տրոցկին «պարզ եւ հասկանալի կերպով» յայտարարեց, որ արդէն որոշուած է ռուսական զօրքերի դուրս բերման խնդիրը եւ որ ինքը «ռուսական զօրքերի դուրս բերման նկատմամբ ունի լուրջ սկզբունքային հայեացքներ... որոնք նրան թոյլ չեն տալիս հայկական տարածքներից զօրքերի դուրս բերումը համարել զօրքերի դուրս բերմանը փոխարինող արարք»:

Եկէք այնուամենայնիւ անդրադառնանք Սոկոլնիկովի գործունէութեանը: Հարց է առաջանում, թէ նա ինչպէս է արձագանքել ֆօն Ռոզենբերգի եւ Հաքքի փաշայի յայտարարութիւններին: Եօֆֆէի հետ խորհրդակցութիւնից յետոյ նա պատրաստ էր եւ արտայայտեց այն միտքը, թէ ինքը ցանկանում է ամենակարճ ժամկէտում, թէկուզ հէնց յաջորդ օրը ստորագրել հաշտութեան պայմանագիրը: Նա ցանկութիւն է արտայայտում արդէն սկսել պայմանագրի մշակման պրոցեսը (նոյն տեղը, 186,221,224):

Խորհրդային պատուիրակութեան ղեկավարի այսպիսի դիրքորոշումը զարմացրեց նոյնիսկ գերմանացիներին: Գեներալ Հոֆմանը իր նօթերում գրում է. «Այս անգամ բանակցութիւնները բաւական անսովոր էին: Հէնց առաջին հանդիպմանը գեներալ ֆօն Ռոզենբերգը առաջարկեց քննարկել գերմանական կողմի առաջարկած պայմանագրի պայմանները՝ հատուած առ հատուած: Սակայն Սոկոլնիկովը առաջարկեց կարդալ պայմանագիրը ամբողջութեամբ: Եւ երբ պայմանագիրը ընթերցուեց, Սոկոլնիկովը յայտարարեց, որ ինքը հրաժարւում է պայմանագիրը քննարկել հատուած առ հատուած եւ պատրաստ է այն ստորագրել անմիջապէս» (Гофман М. Записки и дневники 1914-1918 гг., Л., 1929, 136):

Միայն բանակցութիւնների երրորդ օրը՝ մարտի երեքին, երբ արդէն պէտք է ստորագրուէր հաշտութեան պայմանագիրը, Սոկոլնիկովը ցանկութիւն յայտնեց մի յայտարարութիւն անելու, որը նա արտաբերեց Տրոցկու ոճով: Նա յիշեցրեց, որ «Գերմանական կայսերապաշտութիւնը թոյլ չի տալիս յեղափոխական պրոպագանդան տարածել» ընդդէմ Գերմանիայի ու գերմանական զինուորական ղեկավարութեան, եւ որ «Կովկասի վերաբերեալ գերմանական կառավարութեան կազմած վերջնագիրը բացայայտ բռնութեան ակտ է, քանի որ Գերմանիան այս տարածաշրջանները կտրել եւ կցել է Թուրքիային, ինչը չի համապատասխանում Կարսի, Արդահանի եւ Բաթումի բնակչութեան իրական կամքին»: Հիմնականում նա գերմանացիներին մեղադրում էր այն բանում, որ վերջիններս ցանկանում էին ռուսական զօրքերի դուրս բերումը՝ ասելով թէ «չեն պնդում» դրանում:

Համագումարի նախագահ եւ Աւստրո-Հունգարիայի պատուիրակութեան նախագահ դոկտոր Գարցը ի պատասխան նկատեց, որ երեք օրը բաւական էր «պայմանագիրը հատուած առ հատուած քննարկելու համար» եւ որ խորհրդային պատուիրակութիւնը «հնարաւորութիւն ունէր չընդունելու այս կամ այն կէտը: Ռուսական պատուիրակութիւնը գերադասեց չքննարկել պայմանագրի կէտերը, այլ ընդունեց պայմանագիրը իր ամբողջութեան մէջ: Այդ պատճառով էլ նրանք լիակատար պատասխանատուութիւն են կրում դրա համար»:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Հաքքի փաշան՝ ասելով. «Ես կը խնդրէի, որ ռուսական պատուիրակութեան անդամները իմ ելոյթում որեւէ անհաճոյ ակնարկ չկարծեն իրենց հասցէին: Եթէ նոյնիսկ Ռուսաստանը ինչ-ինչ հանգամանքներում վիրաւորել է մեզ անցեալում, մենք հասկանում ենք, որ այսօր ուրիշ Ռուսաստանի հետ ենք բանակցում»:

Պնդելով Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանների նկատմամբ թուրքերի «իրաւունքի» մասին, նա ասաց. «Այստեղ չկան յաղթողներ եւ պարտուողներ. այստեղ բոլորս էլ յաղթող ենք» (Мирные переговоры... 230, 234): Նրա ասածը կարելի է մեկնաբանել որպէս «մենք հրէաներս յաղթող ենք», քանի որ եւ Երիտթուրքերը եւ խորհրդային ղեկավարները հրէաներ էին:

Ահա այսպէս Տրոցկու եւ Թալէաթի պլանը իր վերջնական հաստատումն ստացաւ փաստաթղթի տեսքով՝ այս երեք շրջանները թուրքերին յանձնելու Սոկոլնիկովի որոշմամբ:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրուեց հէնց նոյն օրը՝ 1918թ. մարտի 3-ին: Երկու տարի անց, երբ Սոկոլնիկովը հրատարակեց «Բրեստի հաշտութիւնը» աշխատութիւնը, նա, նկարագրելով այնտեղ իր ունեցած գործունէութիւնը, հպարտութեամբ մէջ է բերում Հաքքի փաշայի հետեւեալ խօսքը, թէ «Բրեստում չկային յաղթողներ եւ պարտուողներ. այստեղ բոլորս էլ յաղթող ենք»:

Բալֆուրի հռչակագրի հրապարակումից յետոյ Լոնդոնի Հրէական ազգային շարժման առաջնորդները Ռուսաստանի սիոնիստներին յանձնարարեցին հաստատելու նոր մեթոդներ եւ ձեւեր՝ Անգլիայի նոր նպատակներին համապատասխան:

Սիոնիստական կազմակերպութեան կենտրոնական կոմիտէի անդամներից մէկի՝ Ա. Դ. Իդելսոնի գաղտնի զեկոյցում, որը խուզարկութեան ընթացքում յայտնաբերել են խորհրդային ղեկավարները, պարզւում է, որ սիոնիստները Անգլիային խոստանում են «Խորհրդային համակարգում ընդգրկուած հրէայ աշխատակիցների միջոցով ճնշում բանեցնել ի նպաստ պատերազմը շարունակելուն»: Ի՞նչ աշխատակիցների միջոցով հարցին արձանագրութեան մէջ ազդու կերպով գրուած էր «չհրապարակել» (ЦГА, ИМЛ, ф. 445, оп. 1, д. 22, л. 35):

Ամփոփենք Գերմանիայի դէմ պատերազմում Ռուսաստանի արեւելեան ճակատում ծաւալուած դէպքերը:

Երբ 1918թ. փետրուարի 10-ի համաժողովին Տրոցկին հրաժարուեց ստորագրել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, նա հնարաւորութիւն ստացաւ շրջանցելու այնպիսի պայմանագիր, որում ներառուած չէր Արեւմտեան Հայաստանից ռուսական զօրքերի դուրս բերման պահանջ:

Եթէ Տրոցկին ստորագրեր փետրուարի 10-ին նրան առաջարկուած պայմանագիրը, ապա Ռուսաստանը զօրքերը դուրս կբերեր միայն 150 հազար քառակուսի կիլոմետր տարածքից: Սակայն կատարելով միանգամայն հակադիր քայլ՝ Ռուսաստանը կորցրեց մօտ մէկ միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ ահռելի մարդկային եւ նիւթական զոհերով: Այդ արարքը պէտք չէ մեկնաբանել Վինսթոն Չերչիլի պէս, որն ասում է, թէ «Ռուսաստանը իր ճակատում զբաղեցրած պահեց գերմանական զօրաբաժինների համարեայ կէսը՝ տալով այնպիսի մարդկային կորուստներ, ինչ-

պիսիք չտուեցին բոլոր դաշնակիցները միասին վերցրած»: Դա միայն արեւմտեան ճակատում: Իսկ ի՞նչ եղաւ հարաւային ճակատում: 1917թ. վերջնամասում ռուսական զօրքերը լքեցին հարաւային ճակատը եւ միաժամանակ խորհրդային կառավարութիւնը Հարաւային Կովկասի բանալիները յանձնեց թուրքերին՝ ստորագրելով վերանայուած Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Դա Թուրքիային կանաչ լոյս տուեց գրոհ սկսելու տարածաշրջանի դէմ: Վ. Չերչիլը գրում է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը «ծառայեց որպէս սկիզբ թուրքերի լայնամասշտաբ յարձակմանը դէպի արեւելք»(Վ. Չերչիլ, Համաշխարհային ճգնաժամ):

Տրոցկու եւ Թալէաթի միջեւ կնքուած գաղտնի համաձայնագիրը մի նոր ողբերգական էջ բացեց 20-րդ դարի հայոց պատմութեան մէջ: Մուստաֆա Քեմալի՝ Լենինին ուղղուած նամակից եւ ռուս-թուրքական «Եղբայրութեան եւ բարեկամութեան» պայմանագրի ստորագրումից յետոյ Թալէաթի ու Տրոցկու միութիւնը առաւել պաշտօնական ու դիւանագիտական կարգավիճակ ձեռք բերեց:

Ռուսաստանի խորհրդայնացումը, Բրեստի պայմանագիրն ու Աթաթուրք-Լենին համաձայնագիրը լրջօրէն փոխեց Ռուսաստանի աւանդական դիրքորոշումը արեւելքի նկատմամբ: Այն նաեւ մեծագոյն հարուած էր ռուս-հայկական դարաւոր բարեկամութեանը: «Բրեստի պայմանագիր» անուանուած ծաղրն ու «բարեկամութեան եւ եղբայրութեան պայմանագիրը» մինչեւ օրս ամբողջութեամբ չեն հասկացուած:Պատմաբանները պէտք է ջանան մերկացնել «Բրեստ-Լիտովսկի» պայմանագրի խարդախութիւնները, որպէսզի ճշմարտութիւնը ամբողջութեամբ յայտնի դառնա:

Ռուսերէնից թարգմանել է Կարէն Թովմասեանը, «Գոլոս Արմենիի» , 2004թ. մարտի 2:

Մեկնաբանութիւններով խմբագրել է Արտաւազդ Աւագեանը:

Պէտք է շեշտուի, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրում գաղտնի համաձայնութիւն է եղել Ռուսաստանի բոլշեւիկ առաջնորդների եւ Թուրքիայի երիտթուրք ղեկավարների միջեւ: Այս երկու կուսակցութիւնների ղեկավարների մեծագոյն մասը հրէաներ են: Եւ դա մի հրաշալի հնարաւորութիւն էր զաւթելու Պատմական Հայաստանի հողերի մեծ մասը՝ դուրս բերելով ռուսական զօրքերը

տարածաշրջանից՝ Էրզրումից, Մալաթիայից, Վանից, Արդահանից, Կարսից, Իգդիրից եւ Արդուինից եւ հաստատել դա «Բրեստ-Լիտովսկի» պայմանագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԵԱՀԿ-Ն

2006թ յունիսի 10-ին ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի կողմից հրապարակուած եւ «ԵԱՀԿ գրասենեակը բացում է իր առաջին ներկայացուցչութիւնը Հայաստանի մարզերում» վերնագիրը կրող հաղորդագրութիւնում նշւում է՝

«Այսօր ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրեախինը եւ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանեանը ստորագրել են ԵԱՀԿ-ի եւ Հայաստանի միջեւ Փոխըմբռնման յուշագրի լրացուցիչ արձանագրութիւն, որը իրաւական հիմք է տալիս ՀՀ-ում հիմնել ծրագրերի իրականացման գրասենեակներ:

ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի կողմից յունիսի վերջին Հայաստանի ամենահեռաւոր մարզի՝ Սիւնիքի մարզկենտրոն Կապանում կը բացուի ներկայացուցչութիւն, որի նպատակն է տնտեսական եւ բնապահպանական ծրագրերի նախաձեռնումն ու իրականացումը:

«Սոցիալ-տնտեսական կայունութեան ամրապնդումը անընդմէջ զարգացման եւ անվտանգութեան հիմնական նախապայմաններից է»,- ասաց դեսպան Վ. Պրեախինը,-«Մենք ակնկալում ենք Սիւնիքում իրականացնել նոր ծրագրեր, որոնք աւելի մեծ ներդրում կ'ունենան մարզի սոցիալական, տնտեսական եւ բնապահպանական ոլորտների զարգացման գործում»:

Արտգործնախարար Վարդան Օսկանեանն ասաց-«Կառավարութիւնը յատուկ ուշադրութիւն է դարձնում Հայաստանի մարզերի եւ գիւղական բնակավայրերի զարգացման գործընթացին, եւ մենք երախտապարտ ենք ԵԱՀԿ -ին այս հարցում աջակցելու համար: Այսօրուայ իրադարձութիւնը Հայաստանի եւ ԵԱՀԿ -ի միջեւ համագործակցութեան նոր փուլի սկիզբն է հանդիսանում»:

2004թ ԵԱՀԿ գրասենեակի աջակցութեամբ մէկ տարի շարունակ Սիւնիքի մարզում ուսումնասիրութիւններ են կատարուել սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում: Փաստաթուղթը երեւ-

ան հանեց մարզի կարեւորագոյն սոցիալական եւ տնտեսական խնդիրները, ուրուագծուեցին պոտենցիալ բիզնես-հնարաւորութիւնները եւ պարզուեցին առաջնահերթ նպատակները»

ԵԱՀԿ -ն ստեղծուել է 1990թ. նոյեմբերի 21-ին՝ դառնալով 1973 թուականին ստեղծուած Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան խորհրդաժողովի իրաւայաջորդը: Նրանք ընդամենը փոխարինել են խորհրդաժողով բառը «կազմակերպութիւն» բառով: Եւրամիութիւնը մեծ ծաւալներով ֆինանսաւորում է ԵԱՀԿ-ն եւ նրա անդամ-պետութիւններին: Միայն իր «Համագործակցութիւն Եւրոպայում» անուանումով իսկ այս կազմակերպութիւնը բաւականին հանելուկային ու շփոթեցնող է դառնում, քանի որ այն գրասենեակներ ունի Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում եւ այնպիսի երկրներում, ինչպէս Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը եւ Ուզբեկստանը:

Նրանք ապահովում են ներկայութիւնը, որպէսզի իրագործուէն ԵԱՀԿ -ի ծրագրերն այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսին Հայաստանն է: Թւում է, թէ նրանք բաւարարուած չեն նրանով, որ գրասենեակ ունեն Երեւանում եւ ցանկանում են Հայաստանի մայրաքաղաքից դուրս էլ տարածել «սոցիալ-տնտեսական կայունութեան ամրապնդումը»: Մի՞թէ Սիւնիքի մարզկենտրոն Կապանում իրավիճակը կայուն չէ: Ո՛չ, նրանց իրական նպատակն է իսկապէս ապազգայնացնել ու ապակայունացնել այն շրջանները, որտեղ մինչ այդ դեռ չէին կարողացել հասնել:

Դասախօսութիւն. բրիտանացի պրոֆեսոր Արթուր Նոբլ /1998թ, նոյեմբերի 7/

«Իմ դասախօսութեան իրական վերնագիրն է «Եւրոպական Միութեան ծրագիրը. ինչ պէտք է իմանայ իւրաքանչիւր քրիստոնեայ»: Ծաւալուն կերպով անդրադառնալ այսպիսի հսկայ թեմային մէկ ժամուայ ընթացքում, անշուշտ, գրեթէ անհնար է, այդ պատճառով ես ստիպուած պէտք է սահմանափակուեմ միայն հիմնական տեղեկութիւններով: Ինչպէս եւ բոլոր ծրագրերում, միշտ գոյութիւն ունեն բազմաթիւ մասեր ու փուլեր, որոնք միասին կազմում են մի ամբողջական ծրագիր: Դրանք միշտ փոխկապակցուած եւ միասնական են, բայց երբեմն որեւէ անմիջական

ձեւով ակնյայտ չեն: Ոչ միշտ են նրանք զուգահեռ կերպով ընթանում կամ զարգացում ստանում այնպէս, ինչպէս նախնական ծրագրում էր նախատեսուած: Ի սկզբանէ եւրոպական մտահղացումը, կարծես թէ, սկիզբ առաւ որպէս տնտեսական համագործակցութեան ծրագիր, սակայն շուտով այն ձեռք բերեց նաեւ սոցիալական դրսեւորում եւ արագօրէն վերածուեց ամբողջ մայրցամաքը քաղաքականօրէն միաւորելու մի առաջարկ-մտահղացման: Հիմքում ընկած կրօնական ասպեկտը եւ դրա ամբողջական ներմուծումը դեռեւս պէտք է իրագործուեն: Ես փորձում եմ ի ցոյց դնել այն, որ չնայած այս զարգացումները արտայայտում են նոր Եւրոպայի համար դրուած նպատակների ակնյայտ փոփոխումները, այնուամենայնիւ, նրանք զգուշօրէն նախագծուել կամ ծրագրաւորուել են հէնց սկզբից եւ իրագործուել են մեծ գաղտնիութեան ու կամքի ուժի պայմաններում: Իրար յաջորդող եւրոպական պայմանագրերը եւ ապագայի Եւրոպան ձեւաւորողների արտայայտութիւնները բացայայտ կերպով վկայում են այն մասին, որ Եւրամիութիւնն ի սկզբանէ նպատակ է ունեցել վերածուելու մի հսկայական ուժի, որն ի վերջոյ կնետեր Եւրոպայի բոլոր պետութիւնները մի տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ կրօնական միութեան մէջ անկախ նրանց ցանկութիւնից: Վերջնապատակի իրական պատկերը դաշնային գերտերութիւնն է: Սա մտադրուած կերպով ծածուկ եւ անորոշ կերպով է իրականացուում: Այն իրականացուելու է փոքր-փոքր քայլերով, ընտելացնելով նրանց, ովքեր երբեք չէին ընդունի այս միտքը, մինչեւ այն պահը, երբ շատ ուշ կը լինի այդ ամէնը հակառակ ուղղութեամբ տանելու համար»:

Նմանապէս անընդունելի է եւրոպական կառավարման գործընթացում քուէարկութեան արդիւնքում մեծամասնութեան յաղթանակը: Այս մեթոդը բերում է անպատասխանատուութեան, քանի որ երկրների ներկայացուցիչների կարծիքը կարող է հաշուի չառնուել Եւրախորհրդի քուէարկութեան արդիւնքում, եւ նրանք, այդպիսով, չեն կարող որոշումների համար պատասխանատու լինել իրենց ազգային խորհրդարանների առջեւ, իսկ Եւրախորհրդարանն էլ դառնում է անպատասխանատու ընտրող ժողովրդի, քուէարկողների եւ ազգային խորհրդարանների առջեւ:

Սրա արդիւնքում խզւում է տուեալ երկրում քուէարկողների եւ օրէնսդիր մարմնի միջեւ գոյութիւն ունեցող կապը, որը ցանկացած ժողովրդավարական հասարակութեան հիմնաքարն է»:

Եւրամիութիւնը՝ ԵԱՀԿ -ի «մայրը», էթնիկ միաւորների եւ պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող սահմանները վերացնող գլխաւոր միջոցն է: Նրա «զաւակի»՝ ԵԱՀԿ -ի խնդիրն է ներքաշուել եւ միջամտել Եւրոպայից դուրս գտնուող երկրների ներքին գործերին: Իհարկէ, Վարդան Օսկանեանը միշտ եղել է Հայաստանի եւրաինտեգրման անփոխարինելի դրօշակակիրը: 2003թ. հոկտեմբերի 21-ին նա եւրաինտեգրման կոչ էր անում հետեւեալ խօսքերով.«Առաջին հերթին հասարակութիւնը պիտի գիտակցի այն փաստը, որ Հայաստանը Եւրոպայի մասն է, եւ որ եւրաինտեգրումը չունի այլ տարբերակ»: 2003թ. նոյեմբերի 6-ին Օսկանեանն ասաց.«21րդ դարի սկզբից Եւրոպան դադարել է լինել տեղանուն եւ դարձել է հասկացութիւն: Այսօր «Եւրոպա» բառը նշանակում է ժողովրդավարութիւն, մարդու իրաւունքներ, օրէնքի գերակայութիւն: Եւրոպան հելսինկեան եզրափակիչ ակտն է եւ դրա անվտանգութիւնն ու համագործակցութիւնը: Եւրոպան միութիւն է եւ խորհրդարան: Եւրոպան այն բոլորս ենք, որ ցանկանում ենք ապրել առանց սահմանների ու ցանկապատի, առանց վախի ու ագրեսիայի, խաղաղ եւ ծաղկուն: Պատերազմող հարեւանները հասկացան, որ նրանք կարող են ընդունել նոր սահմաններ՝ հիմնուած իրականութեան վրայ, եւ առաջ ընթանալ: Եւրոպայի ազգային պետութիւնները հասկացան, որ նրանք կարող են անցնել սահմաններից այն կողմ»:

Վարդան Օսկանեանն ու Հայաստանի կառավարութիւնը աջակցող ռազմաջոկատներ են ուղարկել պատերազմի այնպիսի շրջաններ, ինչպիսիք են Կոսովոն եւ Իրաքը: Կոսովոյում ՆԱՏՕ-ի զօրքերն օգտագործուեցին, որպէսզի աջակցեն Ալբանիայի թուրքերին, որոնք տեղաբնիկ քրիստոնեայ սերբերին վտարել էին իրենց հնամենի տարածքներից: ՆԱՏՕ-ն ի սկզբանէ կազմաւորուել էր, որպէսզի սառը պատերազմի ժամանակ պաշտպանուէր Եւրոպան, բայց Կոսովոյում այն օգտագործուեց խաղաղ պայմաններում զգուելի ու ատելութիւն առաջացնող պատերազմ վարելու համար: Կոսովոն պատկանում էր Սերբիային դարեր շարունակ: Այն եղել է

նրանց ազգային հպարտութեան պատմական նստավայրը: Սերբ ժողովրդի ոգին այնտեղի եկեղեցիներում էր: Հարաւսլաւիայի ռմբակոծումը աւերեց Սերբիայի մեծ տարածութիւններ եւ դարձաւ 5000-7000 խաղաղ բնակիչների մահուան պատճառ: Այ՞դ էր Օսկանեանի այն օրինակը, թէ պատերազմող հարեւանները հասկացան, որ նրանք կարող են ընդունել նոր սահմաններ՝ հիմնուած իրականութեան վրայ, եւ առաջ ընթանալ: Եթէ նա չի ընդունում, որ պետութիւնների միջեւ սահմաններ պիտի գոյութիւն ունենան, ինչու՞ նա չի փոխում Հայաստանի սահմանները, որպէսզի տեղ լինի Ադրբեջանի համար, թէ՞ նա հէնց այդպէս էլ ուզում է վարուել...

Ինչ վերաբերում է Ամերիկայի յիմար պատերազմին աջակցութիւն ցոյց տալու նպատակով իմաստուն հայկական կառավարութեան որոշմանը առ այն, որ Իրաք ռազմաջոկատ ուղարկուի, կարող ենք վստահ լինել, որ նրանք այդպիսով Հայաստանի դէմ են լարել մահմեդականներին: Հայաստանը նոր թշնամիների կարիք չունէր: Մինչ նախագահ Քոչարեանը հաճոյեանում է Ռուսաստանի նախագահ Պուտինին, Օսկանեանը սէր է տածում արեւմուտքի հանդէպ, այն նոյն արեւմուտքի, որ Հայաստանը շրջանցող եւ Թուրքիայի տարածքով դէպի Միջերկրական ծով դուրս եկող նաւթամուղ կառուցեց: Նրա հարուստ ու առատ ճառերը եւ հայրենասիրութեան պակասը ի վերջոյ մաս-մաս կանէն Հայաստանը, եթէ այսպէս շարունակուի:

Հայաստանի պատմութիւնը լի է դէպքերով, երբ ազգի ներքին կարողութիւնները հզօրացնելու փոխարէն ձգտել են օգնութիւն ստանալ ոչ ազգային աղբիւրներից: Հայաստանը չպէտք է կախուած լինի այնպիսի առաջնորդներից, որոնք իրենց հետ բերել են «մէկաշխարհական» վնասակար ու օտարաշունչ հայեացքներ արտասահմանեան ուսումնական հաստատութիւններից: Հայաստանի երիտասարդների ուղեղները «մէկաշխարհական» բարձրագոյն դպրոցներում «լուալու» փոխարէն, Հայաստանի կառավարութիւնը պէտք է հետեւի, որպէսզի Երեւանի պետական համալսարանում ստեղծուի դիւանագիտական դպրոց՝ լի ազգային հպարտութեամբ, վերելքի ոգով ու իսկական հայրենասիրութեամբ: Դժբախտաբար, ներկայիս հանգամանքներում նման բան չի կարող պատահել:

Եւրամիութեան անդամ դառնալուց յետոյ, կարող ենք վստահ

լինել, Հայաստանը իշխուելու է նրանց կանոններով: Եւրախորհուրդը՝ Եւրամիութեան մի այլ թեւը, արդէն բազմաթիւ պահանջներ է ներկայացրել Հայաստանի կառավարութեանը:

2005թ. օգոստոսի 17-ին Ազգային արժէքների պաշտպանութեան դաշինքի գլխաւոր քարտուղար Իշխան Թովմասեանն արտայայտեց իր կարծիքը միութեան առաջին խորհրդաժողովի ժամանակ: Ըստ նրա՝ Եւրախորհուրդը յաճախ այնպիսի որոշումներ է կայացնում, որոնք օտար են հայ մարդու բնոյթին: Նա նշեց, որ իրենց գերագոյն նպատակը ազգային արժէքների պահպանումն է, եւ այս մտահոգացումը ծնուել է համատարած սեփականաշնորհման բացասական հետեւանքների դէմն առնելու ցանկութիւնից: Այս առումով Թովմասեանն աւելացրեց նաեւ, որ նոյնիսկ կարեւոր ռազմավարական նշանակութիւն ունեցող օբյեկտներն են ենթարկուել վտանգի: Նրա խօսքերով, ազգային արժէքների պահպանման կարեւոր երաշխիք է համապատասխան օրէնքի ընդունումը, որի նախնական ձեւն այժմ կազմւում է իրենց կողմից: Թովմասեանը յայտարարեց, որ նորաստեղծ կազմակերպութիւնը կը մասնակցի տեղական ինքնակառավարման եւ նախագահական ընտրութիւններին՝ առաջադրելով իրենց թեկնածուներին եւ ընդհանրապէս աջակցելով թեկնածուներից առաւել պիտանիներին, ինչպէս նաեւ պայքարելով յանուն հայերի ցեղասպանութեան եւ Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման: Առաւել քան 40 հասարակական կազմակերպութիւններ, հայրենակցական միութիւններ, բարեգործական կազմակերպութիւններ եւ աւելի քան 530 մարդ է միաւորուել Ազգային արժէքների պաշտպանութեան դաշինքի հովանու ներքոյ:

Լուծումներ՝

Պէտք է ծնուի իսկական հայրենասիրութեան զգացում:

Պէտք է ցանկանալ բոլոր պետութիւնների հետ ազատ համագործակցութիւն եւ առեւտրական փոխյարաբերութիւններ ունենալ, սակայն ոչ մի «համաշխարհային» կազմակերպութեան անդամ չդառնալ:

Պէտք է յաղթի այն միտքը, որ հարկաւոր է պահպանել ազգային ինքնութիւնը իր բոլոր դրսեւորումներով:

Պէտք է իշխանութիւնից հեռացուեն նրանք, ովքեր անձնական

հարստութիւններ են կուտակել՝ վաճառելով պետութեան ունեցուածքը:

Պէտք է ոչնչացնել խաբէութիւնը իշխանութեան կողմից եւ սկսել ազգային մշակոյթի հանդէպ օտար ազդեցութիւնից ծնուած կուրութեան վերացումը:

Պէտք է դանդաղեցնել ընթացքը եւ ի վերջոյ կանգ առնել ու այլեւս չընդունել ստրկութեան աստիճանին հասցնող պարտքեր համաշխարհային բանկերից:

Պէտք է անմիջապէս ազգայնացուեն Հայաստանի բնական պաշարները, ինչպէս օրինակ ոսկին: Խորհրդարանի վրայ յատուկ օրէնքների միջոցով պատասխանատուութիւն պիտի դրուի, որպէսզի ոսկին ապահով եւ պաշտպանուած լինի:

Պէտք է կառավարական շրջանակներում գողութեանն ու խաբէութեանը ամենայն խստութեամբ արձագանքել:

Հայրենասէրներին ու նրանց խմբերին չպէտք է բանտ նետել ու ճնշել իրենց հայեացքների համար: Միւս կողմից, պետական այն պաշտօնեաները, որոնք թոյլ են տալիս, որպէսզի ժողովրդի ունեցածը կողոպտուի ու ծախսուի Մոնտէ Կարլոյի խաղատներում, պէտք է բանտարկուեն:

Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեանը (ԵԱՀԿ), ինչպէս եւ բոլոր «մէկաշխարհական» կազմակերպութիւններին երբեք պիտի թոյլ չտրուի, որ հայոց հողի վրայ հիմնեն իրենց՝ ստուերում թաքնուած ու խորամանկ մասնաճիւղերը:

Երբ ազգիդ ճակատագիրը որոշում են արտաքին ուժերը, ազգդ ու պետութիւնդ ազատ չեն կարող լինել:

Լիվոնիա, Միչիգան
Յունիս 23, 2006

ԵՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Արժոյթի միջազգային հիմնադրամը եւ Համաշխարհային բանկը ստեղծուել են որպէս ՄԱԿ-ից անկախ կառոյցներ, բայց յետագայում ներմուծուել են ՄԱԿ-ի համակարգի մէջ: Մէկ աշխարհական ֆինանսական համակարգի ստեղծումը՝ ներառեալ համաշխարհային կենտրոնական բանկը եւ համաշխարհային դրամական միաւորը (վալիւտա), հանդիսանում է դաւադիրների վերջնական նպատակը:

Նրանց տնտեսագէտ մասնագէտները զարգացրել են մի երկարաժամկէտ ծրագիր, որով աշխարհում ձեւաւորւում են տարածաշրջանային տնտեսական գօտիներ՝ իրենց կենտրոնական բանկերով ու տարածաշրջանային դրամական համակարգերով (վալիւտա), որոնք յետագայում պէտք է միաւորուեն մէկ ամբողջութեան մէջ՝ կազմելով մէկ աշխարհական կառավարութիւն:

Այդ նպատակի իրականացման ուղղութեամբ արդէն կատարուել են առաջընթաց քայլեր, իսկ դրա իրականացման գործընթացը սկսուել է Եւրոպայում 1950-ականներին՝ ընդհանուր շուկայի ստեղծումով: Թէեւ եւրոպական շատ երկրներ անհանգստանում էին, խորհելով, թէ այդ ծրագիրը կարող է վտանգել նրանց ինքնիշխանութիւնը, սակայն ծրագրի հեղինակները բարեկրթօրէն նրանց համոզեցին, թէ դա ոչ այլ ինչ է, քան «ազատ առեւտրի» կազմակերպութիւն: Սակայն մի քանի տարի անց, երբ այդ կազմակերպութեանը միացան մի քանի այլ եւրոպական երկրներ, այն աւելի սկսեց նմանուել տարածաշրջանային կառավարութեան: Փոխուեց կազմակերպութեան անունը՝ դառնալով նախ Եւրոպական տնտեսական համայնք (European Economic Community), ապա եւրոպական համայնք, (European Community), իսկ վերջում Եւրոպական միութիւն (European Union), եւ այդ կազմակերպութիւնը սկսեց քարոզչութիւն տանել իշխանական այլ լծակների տիրանալու ուղղութեամբ: 1998թ. Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում ստեղծուեց Եւրոպական կենտրոնական բանկը, իսկ 2002թ. յունուարի 1-ից Եւրամիութեան երկրներում շրջանառութեան մէջ մտցուեց նոր տարադրամը՝ եւրոն: Ազգային տարադրամները, որոնցից ոմանք հարիւրամեակների պատմութիւն ունէին, անհետացան, այդ թւում նաեւ ֆրանկը, մարկը եւ լիրան:

Եւրամիութեան բարձրաստիճան պաշտօնեաները այժմ նախապատրաստում են այսպէս կոչուած «ինտէգրացիայի» յաջորդ փուլը, որով եւրոպական նախկինում անկախ ազգերի ինքնիշխանութեան մնացորդների վերացումն է ու ռասաների միախառնումը: Այդ աշխատանքների արդիւնքներից է նաեւ եւրոպական սահմանադրութիւնը, որը ուղղուած է օրէնքի ուժ տալու արդէն իսկ գոյութիւն ունեցող Եւրախորհրդարանին, Եւրախորհուրդին ու Եւրամիութեան դատարաններին:

Վերջնանպատակը ազգերի ու ռասաների ոչնչացումն է:

ԵՐԱՄԻՈՒԹԻՒՆ

Իւրի Լինայի «Կարիճի նշանի տակ» աշխատութիւնից, էջ 415

Եւրամիութիւնը կազմաւորուել է 1993թ. –ի նոյեմբերի 1-ին: Դժբախտաբար չափազանց շատ ընդհանուր գծեր կան Եւրամիութեան ու նախկին Խորհրդային Միութեան միջեւ:

Եւրախորհրդարանը լոկ խորհրդատուական մարմին է՝ զուրկ օրէնսդրական իշխանութիւնից: Նախկին Խորհրդային Միութեան նախկին իշխանական մարմինները (Գերագոյն խորհուրդ) նոյնպէս չունէր օրէնսդրական իշխանութիւն:

Եւրախորհուրդը (կառավարութիւնը) կախում ունի Եւրամիութեան յանձնաժողովներից եւ որոշումներ ընդունելու համար պէտք է ստանայ նրանց համաձայնութիւնը:

Խորհրդային Միութեան մինիստրների խորհուրդը նոյնպէս անկարող էր որոշումներ ընդունել, առանց ցուցումներ ստանալու պոլիտբիւրոյից:

Եւրամիութեան յանձնաժողովը կարող որոշում է ընդունել իր 17 անդամներից 8-ի ներկայութեան դէպքում: Քննարկումները զանգուածային բնոյթ չեն կրում:

Խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան գլխաւոր մարմինը՝ պոլիտբիւրոն (15 անդամներից բաղկացած) նոյնպէս իր ձեռքում էր պահում իրական իշխանութիւնը: Նրանց քննարկումները նմանապէս գաղտնի էին պահում:

Երբ Եւրամիութիւնը կազմաւորուեց 1993թ. նոյեմբերի 1-ին, Եւրամիութեան նախագահ Ժակ Դելորսը (ծածուկ սոցիալիստ)

առաւել շատ իշխանութիւն ստացաւ, քան եւրոպական երկրների կառավարութիւնները:

Խորհրդային Միութեան քաղբիւրոյի գլխաւոր քարտուղարը նոյնպէս ունէր ամբողջատիրական իշխանութիւն, ինչը մասամբ յիշեցնում է այն իշխանական լծակները, որոնք տրուեցին Եւրամիութեան յանձնաժողովի նախագահին, երբ 1992թ.-ին այն կազմակերպուեց:

Ըստ Բրայն Ֆրիմանթլի «Օկտուպոս. Եւրոպան կազմակերպուած յանցագործութեան մամլիչի տակ» գրքի (Լոնդոն, 1995թ.) Եւրամիութեան բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներ գաղտնի կազմակերպութիւնների միջոցով ներգրաւուած են կազմակերպուած յանցագործութեան մէջ:

Խորհրդային Միութեան բարձրաստիճան իշխանաւորները նոյնպէս յանցագործ գործունէութեամբ էին զբաղուում համագործակցելով քրէական կազմակերպութիւնների հետ:

Այսօր Հայաստանում կան ուժեր, որոնք բարձրաձայնում են Եւրամիութեանը անդամակցելու մասին: Նրանք կարծում են, թէ այդպիսով ձեռք կը բերեն միջազգային կարգավիճակ: Այնինչ ընդհակառակն է. Հայաստանը կը կառավարուի Եւրամիութեան կողմից: Այդ ուժերը չգիտեն, որ Եւրամիութիւնը նման է սարդոստայնի. եթէ մէկ անգամ ընկնես այդ ցանցը, ապա չես կարող փախչել եւ աստիճանաբար քեզ կուտեն:

Հայաստանը նախ պէտք է պայքարի երկրում առկայ անբարոյականութեան դէմ, ապա նոր մտածի Եւրամիութեանն ու նոր աշխարհակարգին անդամակցելու մասին, որոնց իրական նպատակները ազգերի ինքնիշխանութեան վերացումն է: Այնինչ հայ քաղաքական առաջնորդները խուսափում են հայրենասիրութիւնից, երբ որ անհրաժեշտ է լինում պաշտպանել ազգի պատիւն ու մշակոյթը արտաքին ապականիչ ազդեցութիւնից:

ԵՌԱԿՈՂՄ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ (The Trilateral Commission)

Եռակողմ յանձնաժողովը հիմնադրել են Արեւմտեան Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի եւ Ճապոնիայի քաղաքացի մի քանի անհատներ 1973թ.-ին: Յանձնաժողովի հիմնադիրը հանրայայտ միլիարդատէր Դաւիդ Ռոքֆելլերն է, որը հանդիսանում է Չեյս

Մանհեթթեն բանկի սեփականատէրն ու նախագահը, ինչպէս նաեւ տնօրինում է բազում այլ բանկերի աշխարհի տարբեր մասերում: Նրա նպատակն է այս երեք հատուածների միջեւ փոխադարձ համագործակցութիւնը զարգացնելը: Թէեւ ոչ մի պետութիւն պաշտօնապէս չի լիազօրել Եռակողմ Յանձնաժողովը հիմնադրած այդ անհատ քաղաքացիներին, այնուամենայնիւ վերջիններիս նպատակները իրենց անձնական շահից շատ աւելի հեռու են գնում՝ ներառելով համաշխարհային ազդեցութեան ոլորտներ:

Եռակողմ Յանձնաժողովի հիմնական նպատակը քաղաքական ազդեցութիւն ունենալն է: Դա նրանց հնարաւորութիւն է տալիս կառավարել աշխարհը իրենց ցանկացած ձեւով՝ իրենց շահերին առաւելագոյնս նպաստաւոր: Այդպիսի իշխանութիւնը հնարաւորութիւն է տալիս վերահսկել համաշխարհային տնտեսութիւնը:

Եւրոպայի որոշ զգօն քաղաքական գործիչներ անմիջապէս տեսան Եռակողմ Յանձնաժողովից եկող վտանգը՝ սեփական Նոր Աշխարհակարգ ստեղծելու միտումները, եւ իրենց բոլոր ջանքերը ներդրեցին շտապ կերպով Եւրոպական Համայնքը հաստատելու ուղղութեամբ: «Եւրոն» հաստատուեց ոսկու պաշարների հիմքի վրայ, որը հնարաւորութիւն տուեց միջազգային շուկայում մեծացնել ոսկու՝ որպէս փոխարժէքային միաւորի գործածութիւնը, եւ դրանով իսկ պաշտպանուած լինել խարդախութիւններից (սպեկուլեացիայ) եւ ազատուել ամերիկեան թուղթ դոլարի գերիշխանութիւնից, որը իրականում չունի իրական արժէք: Դոլարի իրական արժէքը դրա թղթի ու տպագրութեան արժէքն է, որը կազմում է ընդամենը մի քանի ցենտ:

ՈՍԿԻ

Տորոնտոյի (Կանադա) հեղինակաւոր Սփրոթթ Ասսէթ Մենեջմենթ կազմակերպութեան ներդրումների աւագ մասնագէտ Ջոն Էմբրին 2004թ.-ի օգոստոսին հարցազրոյց է տուել աշխարհում ոսկու փոխարժէքի վերաբերեալ: Նա առաջ քաշեց այն կարծիքը, թէ ոսկու շուկան համակարգուած կերպով ղեկավարւում է: Նրա այդ տեսակէտը արդէն երկար ժամանակ է, ինչ տեղի է ունենում: Նա ներկայացրել է համաշխարհային ֆինանսական շուկայի յանցագործ ոլորտները, որտեղ բանկերը ներկայացնում են լոկ ոսկու ուրուականը եւ

որտեղ աշխարհի խոշորագոյն դրամատէրերը միմեանց հետ կնքում են գաղտնի պայմանագրեր՝ ի նպաստ իրենց գործունէութեանը: Ոսկու կազմակերպութեան գործողութիւնները թոյլ են տալիս ենթադրել, որ ոսկու առեւտուրը շուկայի իշխանութեան տակ է:

Ջոն Էմբրին յայտնեց նաեւ, որ այժմեան իրավիճակը նման է 60-ականների վերջի կամ 70-ականների սկզբի իրավիճակին, երբ եւրոպական բանկերի միաւորումը, որը յայտնի էր Լոնդոն Գոլդ Փուլ անուանումով, ուժերը միաւորեց Միացեալ Նահանգների «Ֆեդերալ Ռեզերվ» բանկի հետ, որպէսզի ոսկու գինը սահմանուած մնա $35/ունցիա-ի վրայ: Անդամ բանկերը ոսկու պաշարներ ներդրեցին ընդհանուր կապիտալի մէջ, որպէսզի եթէ ոսկու գինը բարձրանայ, անմիջապէս իրենց ոսկու պաշարները վաճառեն շուկայում եւ այդպիսով կանխեն ոսկու գնի բարձրացումը:

Ներկայիս կենտրոնական բանկերը գործում են մօտաւորապէս նոյն կերպով՝ պարբերաբար շուկան ողողելով ոսկով: Անցեալի եւ ներկայիս գործընթացների միջեւ տարբերութիւնն այն է, որ եթէ նախկինում «ոսկու գնի կառավարման գործընթացը բացայայտ էր», միջդեռ այժմ «ամէն ինչ կատարւում է գաղտնի կերպով»:

Դրա արդիւնքը կարող է լինել համաշխարհային ֆինանսական իրավիճակի յետագայ վատթարացումը: Այս պարտքերի փուչիկը շարունակելու համար կարիք է առաջանում աւելի շատ թուղթ [փող] տպելու: Սա է հէնց այն գլխաւոր պատճառը, որով մարդիկ ոսկին կը սկսեն գերադասել թուղթ փողից: Եւ եթէ սա դիտարկենք ոսկու հանքերի պաշարների օրէցօր սպառուող միտումների համատեքստում, ապա առաջանում է մեծ հակադրութիւն նշուած փաստի եւ ոսկու՝ անընդհատ աճող բնական պահանջարկի հետ: Եւ եթէ կենտրոնական բանկերը չկարողանան լցնել այդ բացը, ապա արդիւնքները աղէտալի կը լինեն:

Բացի այդ կարծում եմ, որ արեւմտեան կենտրոնական բանկերից բացի կան նաեւ այնպիսիները, որոնք այդ հարցի վերաբերեալ ունեն սեփական՝ միանգամայն տարբեր տեսակէտներ, ինչպէս օրինակ Չինաստանի, Ռուսաստանի եւ այլ կենտրոնական բանկեր: Ես կարծում եմ, որ դրանք գնում են այն ոսկին, որն ամէն անգամ արեւմտեան բանկերը վաճառում են: Եւ երբ մի օր բոլորը բացէն իրենց խաղաքարտերը, ապա կը պարզուի, որ արեւմտեան կենտ-

րոնական բանկերում շատ փոքր քանակութեամբ ոսկի է մնացել, եւ ոսկու պաշարների զգալի մասը կուտակուել է արեւելքի բանկերում: Այդ ժամանակ ոսկու գինը հաստատապէս կը բարձրանայ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա սկսած 1991թ.-ից այն ոչ միայն չնչին գումարներով իր ժողովրդի ունեցուածքն է վաճառել արտասահմանեան ընկերութիւններին, այլ նաեւ իր ունեցած ոսկու հանքերը: Այդ ոսկու հանքերը հայ ժողովրդի համար կենսական նշանակութիւն ունէին: 2005թ.-ի մարտի 5-ին Հայաստանը իր ոսկու հանքերը վաճառեց օտար ընկերութիւններին եւ «Հայաստանի կենտրոնական բանկը այլեւս չի կարող ոսկի կուտակել»,- մամուլի ասուլիսում յայտարարեց ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսեանը: Նա յայտարարեց նաեւ, որ «Հայաստանի ոսկու պաշարները՝ 1.4 տոննա, վաճառուել են, երբ ոսկու գինը հասել է 400.00 ԱՄՆ դոլարի ունցիային»: Գործարքի արդիւնքում վերջնական օգուտը կազմել է 5.5 ԱՄՆ դոլար: Հարց է առաջանում, թէ ինչպէս է այդ 1.4 տոննա ոսկին ձեռք բերուել եւ թէ ուր է գնացել այդ 5.5 միլիոն դոլարը: Հայկական թուղթ դրամը ոսկով հիմնաւորուելու դէպքում այն աւելի հաստատուն կը լինէր: Դա լրացուցիչ խթան կը լինէր տնտեսութեան զարգացման համար, իսկ այժմ դրա փոխարէն Արժոյթի միջազգային հիմնադրամի ու Համաշխարհային բանկին կապուած լինելով տնտեսութիւնը լճանում է եւ կոռումպացւում:

Եւրամիութեան ստեղծումը եւ միջազգային դրամափոխների կողմից ոսկու արժէքի իջեցումը «Համաշխարհային կառավարութիւն» ստեղծելու դիւական ծրագրի բաղադրիչ պարագաներն են: Պատմութեան այս պահին պէտք է որ ակնյայտ լինի, որ «Մէկ աշխարհական կառավարութեան» ծրագիրը հաստատւում է ներկայիս աշխարհաքաղաքական իրողութիւններով: Քանի որ մշտական պատերազմները հանդիսանում են դրամատէրերի՝ «Մէկ աշխարհական կառավարութիւն» ստեղծելու երազանքի իրագործման կարեւոր բաղադրամասը:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
2005թ. ապրիլի 29

ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Համաշխարհային կառավարութեան գաղափարը մարդու դարաւոր երազանքներից մէկն է: Եւ դրա իրականացման գործընթացը սկիզբ առաւ 1889թ. մի ձմեռային առաւօտ, երբ երեք յարգարժան պարոնայք Լոնդոնում՝ Անգլիայում, մի կարեւորագոյն զրոյցի բռնուեցին: Հաւաքուածների առաջնորդը Սեսիլ Ռոդեսն էր, որը կարեւորագոյն անձնաւորութիւն էր Հարաւային Աֆրիկայում: Երկրորդը հանրայայտ լրագրող Ուիլեամ Թ. Սթեդն էր, իսկ երրորդը Ռեջինալ Բալիոլ Բրեթն էր, որը յետագայում յայտնի դարձաւ որպէս Լորդ Էշեր: Վերջինս Վիկտորիա թագուհու ընկերն ու վստահելի անձն էր եւ յետագայում դարձաւ նաեւ թագաւորներ Էդուարդ 7-րդի եւ Գեւորգ 5-րդի ամենաազդեցիկ խորհրդատուն: Այդ խօսակցութեան հետեւանքները մեծ ազդեցութիւն էին ունենալու Բրիտանական կայսրութեան եւ ամբողջ աշխարհի ապագայի վրայ:

Սեսիլ Ռոդեսը առասպելական հարստութեան տէր անձնաւորութիւն էր: Նա կառավարում էր Հարաւային Աֆրիկան՝ անգթօրէն հարստահարելով տեղացի սեւամորթներին ու օգտագործելով նրանց հողերը: Սեւամորթ ազգաբնակչութիւնը միայն տեսականօրէն էր կանգնած երկրի գլուխ, իսկ փաստացիօրէն այդ պետութիւնը կառավարւում էր եւրոպական ու ամերիկեան էլիտան: Դրանք երկրի կառավարումը իրականացնում էին իրենց կողմից նշանակուած խամաճիկ նախագահների միջոցով: Հարաւային Աֆրիկայի անկախութիւնը փաստօրէն խաբուսիկ բնոյթ էր կրում:

Սեսիլ Ռոդեսը անդամագրուած էր Օքսֆորդի եւ Քեմբրիջի համալսարանների բարձրաշխարհիկ շրջանաւարտների կողմից հիմնուած մի խմբակի: Նրանք հանդիսանում էին ուլտրայ սոցիալիստական հայեացքների տէր պրոֆէսոր Ջոն Ռոսկինի հետեւորդները: Վերջինիս հետ էլ յիշեալ խմբակը կազմակերպեց այսպէս կոչուած «Գաղտնի հասարակութիւնը», որը վերջնականապէս ձեւաւորուեց 1902թ.-ին՝ Սեսիլ Ռոդեսի մահուանից յետոյ: Իր՝«Համընդհանուր հայեացքի» իրականացմանը ուղղուած Ռոդեսի հիմնական քայլերից մէկը աշխարհի տարբեր մասերից հաւաքագրուած շնորհալի երտասարդներին Օքսֆորդի համալսարանում կրթութիւն ստանա-

լու հնարաւորութեան տրամադրումն էր: Այդ քայլի նպատակը համաշխարհային կառավարութեան Ռոդեսի երազանքի սերմանումն էր նրանց մէջ: Նա ընդունում էր, որ իր ծրագիրը համայն աշխարհի կառավարութեան ստեղծելու դաւադրութիւն էր: Ռոդեսը նախատեսում էր ստեղծել աշխարհի կառավարման մի մարմին, որն իր ձեռքում կ'ունենար անյաղթահարելի զինուած ուժեր:

Ռոդեսի կտակով իր հսկայական կարողութիւնը խնամակալութեամբ յանձնում էր ֆրանկմասոն Նաթան Ռոտշիլդին՝ պայմանով, որ այդ միջոցները կ'ուղղուեն ամբողջ աշխարհով մէկ օժանդակելու Ռոդեսի հետեւորդներին, որոնք կը պայքարեն իր ծրագրերի իրականացման համար: Ռոդեսի ցանկութեամբ Նաթան Ռոտշիլդը գաղտնի հասարակութեան ղեկավար է կարգում ֆրանկմասոն Ալֆրեդ Միլներին:

Իր նշանակումից յետոյ Միլլերը Օքսֆորդից եւ Թօնիբի Հոլլից հաւաքագրում է երիտասարդ կադրեր, որպէս օժանդակ ուժեր նոր հասարակութեան կառուցման համար: Բոլոր նորակոչիկներն էլ անխտիր անգլիական ֆրանկմասոններ էին: Դրանցից էին Արթուր Բալֆուրը, Ռուդեարդ Քիփլինգը, լորդ Ռոտշիլդը եւ ուրիշներ, որոնց ժամանակին անուանում էին «Միլների մանկապարտէզ»: Հէնց այդ խումբն էր, որ մի քանի այլ անգլիական մասոնների հետ 1909թ. հիմնեց «Կլոր սեղան» կազմակերպութիւնը, որը հանդիսացաւ մի շարք այլ անգլիական մասոնական կազմակերպութիւնների նախահայրը: «Կլոր սեղանից» առաջացած երեք հիմնական ճիւղերն են.

ա. Արտաքին գործոց թագաւորական ինստիտուտը, որը կազմաւորուել է 1919թ. Լոնդոնում,

բ. Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը՝ կազմաւորուած 1921թ. Նիւ Եորքում,

գ. Խաղաղօրկիանոսեան յարաբերութիւնների ինստիտուտ, որը կազմաւորուել է 1925թ. տասներկու երկրների ներգրաւմամբ, որի պատճառով կոչուեց նաեւ խաղաղօրկիանոսեան եզերք:

Նշուած կազմակերպութիւնների նպատակը Անգլիայի ու Ամերիկայի արտաքին քաղաքականութիւններին որոշակի ուղղորդում տալն էր, որի վերջնանպատակներն էին. ստեղծելու եւ իրենց ղեկավարութեան ներքոյ հաստատել մէկ աշխարհական

մի կառավարութիւն՝ մի միասնական եկեղեցով եւ դրամական համակարգով, հիմնովին վերացնել ազգային ինքնագիտակցութեան ու ազգային հպարտութեան երեւոյթները, որը առաջնային պայման կարելի է համարել համաշխարհային կառավարութեանը գաղափարը իրագործելու համար, նախաձեռնել առկայ կրօնների՝ մասնաւորապէս քրիստոնէութեան վերացումը՝ բացառութեամբ կրօնի իրենց ներկայացրած տարբերակի:

Ջանգուածային լրատուական միջոցների օգնութեամբ նրբօրէն իրենց ազդեցութեանը ենթարկել իւրաքանչիւր անհատի:

Խրախուսել եւ աստիճանաբար օրինականացնել թմրադեղերի օգտագործումը եւ պոռնոգրաֆիան՝ որպէս «արուեստի ձեւ» ընկալումը եւ հասարակութեան համար սրանք ընկալելի դարձնել որպէս սովորական երեւոյթ:

Թուլացնել ազգերի բարոյական ջիղը, գործադուլների միջոցով բարոյալքել ու իրենց աշխատանքային կարգից գցել բանուորներին՝ դրանով իսկ նրանց դրդելով ալկոհոլի ու թմրանիւթերի օգտագործմանը: Թմրադեղերի ու ռոք երաժշտութեան միջոցով խրախուսել աշխարհի երիտասարդութեանը ընդվզելու հասարակութեան դէմ՝ դրանով իսկ քայքայելով ընտանիքը:

Թափանցել աշխարհի բոլոր կառավարութիւնների մէջ՝ քայքայելով ժողովուրդների ազգային ամբողջականութիւնը եւ ազատութեան ու անկախութեան ձգտումները: Ազգայնականութիւնը եւ հայրենասիրութիւնը համարւում են նրանց գլխաւոր թշնամիները:

1796թ. սեպտեմբերի 17-ին Ջորջ Վաշինգթօնը ժողովրդին ուղղուած իր հրաժեշտի ելոյթում յայտարարեց. «Մեր ճիշտ քաղաքականութիւնը պահանջում է խուսափել արտաքին աշխարհի ցանկացած հատուածի մշտական դաշնակիցը լինելուց»: Դրանով նա ամերիկեան ժողովրդին զգուշացնում էր խուսափել Եւրոպայի գործերին միջամտելուց: Նա հասկանում էր, որ Ամերիկան այլ երկրների ներքին գործերին միջամտելու դէպքում անպայմանօրէն ձեռք կը բերի բազմաթիւ թշնամիներ:

Սակայն 1914թ.-ին կատարուեց այդ խորհրդին հակառակ քայլ: Ռոդեսի հետեւորդներն արդէն թափանցել էին աշխարհի տարբեր երկրների կառավարութիւնների մէջ եւ դրանց ծանօթացրել Ռոդեսի մէկ աշխարհական կառավարութեան գաղափարին:

Մինչեւ 1914թ. Առաջին համաշխարհային պատերազմը Ամերիկան պահպանում էր իր չեզոքութիւնը համաշխարհային խոշոր սկանդալներում:

Առաջին անգամ «համընդհանուր անվտանգութեան» սկզբունքի շուրջ համաշխարհային մի մարմնի ստեղծման գաղափարը առաջ եկաւ Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ՝ 1919թ.-ին, երբ նախագահ Վուդրոյ Վիլսոնը հռչակեց «Ազգերի լիգայի» ստեղծման մասին: Սակայն այդ ժամանակ Ամերիկան դեռեւս պատրաստ չէր հրաժարուել իր ինքնիշխանութիւնից եւ վտանգել իր սահմանադրութիւնը:

Միացեալ Նահանգների ծերակոյտը Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ չհամաձայնեց վաւերացնել Ազգերի Լիգայի ստեղծման մասին համաձայնագիրը: Ամերիկեան ժողովուրդը կասկածով էր վերաբերում մշտական խարդաւանքների մէջ գտնուող եւրոպական ուժերի գործերին միջամտելուն եւ գերտերութեան կարգավիճակ ձեռք բերելուն: Նրանք պարզօրէն տեսնում էին «խաղաղութեան» գայթակղիչ ու բարդ համաձայնագրերի իրական բնոյթը: Ամերիկացիները հասկանում էին, որ ցանկացած լիգայ, որը կ'ունենայ այնքան ուժ, որ կը կարողանայ «պարտադրել» խաղաղութիւնը, չի կարող իր առջեւ չունենալ համաշխարհային բռնատիրութեան հաստատման հեռանկար: Եւ որ այնուհետեւ ոչ մի ուժ չի կարող սանձել ու սահմանափակել դրա գործունէութիւնը:

Շարժուելով Վաշինգթոնի տուած խորհրդի ուղիղ հակադիր ուղով, Վուդրոյ Վիլսոնի կառավարութեան անդամները, մասնաւորապէս պետական քարտուղար Ուիլեամ Յեննիսգս Բրայնը, Ամերիկան ներքաշեցին Առաջին համաշխարհային պատերազմի յորձանուտները: Դա նորաստեղծ «Արտաքին յարաբերութիւնների խորհրդի» համար հրաշալի առիթ էր՝ առաջ քաշելու համաշխարհային կառավարութեան գաղափարը՝ որպէս աշխարհում առկայ հակամարտութիւնների լուծման լաւագոյն տարբերակ: Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը կազմաւորել են 1921թ. յուլիսի 29-ին մի խումբ «մտաւորականներ», որոնք գտնում էին, որ անհրաժեշտութիւն է առաջացել ստեղծել ազգային բնոյթ չունեցող համաշխարհային մի կառավարութիւն: Սակայն Ամերիկան պատ-

ռաստ չէր դրան: Քանի որ Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը կիսագաղտնի կազմակերպութիւն էր, ամերիկեան ժողովուրդը ի վիճակի չէր հետեւել դրա նրբին ու դաւադիր քայլերին՝ ուղղուած համաշխարհային կառավարութեան հաստատմանը:

Դժուարագոյն խնդիր էր աշխարհի ժողովուրդներին համոզել հրաժարուելու իրենց ինքնիշխանութիւնից եւ ընդունել համաշխարհային կառավարութեան գերիշխանութիւնը: Այնուամենայնիւ այդ գործը ծրագրողները այն չէին համարում անիրականալի: Այդ հարցը առաջ քաշողներից մէկը առաջարկել է նաեւ դրա լուծումը: Դա համաշխարհային առողջապահութեան կազմակերպութեան նախագահ դոկտոր Բրոք Քիսօլմն է, որը յայտարարել է. «Որպէսզի համաշխարհային կառավարութեան մտահղացումը ի կատար ածուի, անհրաժեշտ է մարդկանց մօտ վերացնել նրանց անհատականութիւնը, հայրենասիրութիւնը, ընտանիքի աւանդոյթներին նուիրուածութիւնը, կրօնական դոգմաները. մի խօսքով այն բոլոր գործօնները, որոնք իր գոյութեան առաջին 150 տարում Ամերիկան դարձրեցին ծաղկող ու բարգաւաճ»:

Բոլոր նրանք, ովքեր կարդում են Արտաքին յարաբերութիւնների խրհրդի եռամսեայ օրգան «Արտաքին գործերը» կամ ծանօթանում են ԱՀԽ-ի կողմից վերահսկուող ամերիկեան Ձլմ-ների հաղորդումներին, անպայման կ'իմանան, թէ որոնք են այդ կազմակերպութեան կողմից ընդունելի եւ քարոզուող քաղաքական հայեացքները: Այդ հայեացքները մօտաւորապէս հետեւեալներն են.

Կնքել հնարաւորինս աւելի շատ ԱՄՆ-ի ինքնիշխանութիւնը չէզոքացնող համաձայնագրեր ու պայմանագրեր:

Շարունակել գովաբանել ՄԱԿ-ը՝ նրա նկատմամբ վստահութեան աւելացման նպատակով:

ԱՄՆ-ի զինուած ուժերը հատուած առ հատուած յանձնել ՄԱԿ-ի հսկողութեանը ու հրամանատարութեանը:

Աւելացնել ԱՄՆ-ի կողմից այլ երկրներին տրուող օգնութիւնները (կաշառակերութիւնը) եւ յաւելել նորերը:

Չեզոքացնել ու մեկուսացնել բոլոր այն ազգային ղեկավարներին, որոնք կողմնակից չեն համաշխարհային նոր կարգերի ներքոյ համաշխարհային կառավարութեան գաղափարին:

Ենթարկուել ծայրահեղական բնապահպանների, բնակչութեան

պլանաւորման գործակալութիւնների, մարդու իրաւունքների պաշտպանների արմատական պահանջներին, որոնց վերջնանպատակը Ամերիկայի՝ որպէս ազատ ու անկախ պետութեան, վերացումն է:

Միացեալ ազգերի կազմակերպութիւն:

Միացեալ ազգերի կազմակերպութիւնը գոյութիւն ունի արդէն կէս դար, սակայն նրա արմատներն ու նպատակները դեռեւս շատ քիչ են հասկանալի:

Ներկայացուածը միայն թեթեւակիօրէն շօշափում է ՄԱԿ-ի իրական համակարգը եւ նպատակները:

ՄԱԿ-ի կազմակերպման սկզբնական ծրագրերը առաջ են քաշուել 1943թ.-ին Սան Ֆրանցիսկոյում ՄԱԿ-ի հիմնադիր համագումարի ժամանակ՝ ԱՄՆ նախագահ Ռուզուելտի պէտքարտուղար Քորդել Հալլի նախաձեռնած կառավարական գաղտնի մի կազմակերպութեան՝ ոչ պաշտօնական օրակարգային խմբի (Informal Agenda Gruop) կողմից:

Փաստօրէն Հիմնադիր համագումարի բոլոր 43 անդամները միաժամանակ Արտաքին յարաբերութիւնների խորհրդի անդամներ էին: Աւելին, գլխաւոր քարտուղարի պաշտօնին ներկայացուած Ալջեր Հիսսը նաեւ ընդյատակեայ մարքսիստ էր եւ խորհրդային գործակալ: Հէնց վերջինս էլ ներկայացրեց ՄԱԿ-ի կանոնադրութիւնը:

Զոն Ֆոստեր Դալլզը, որը Արտաքին յարաբերութիւնների խորհրդի հիմնադիր անդամներից էր եւ կանգնած էր նաեւ ՄԱԿ-ի կազմաւորման գործի ակունքներում, 1953թ. դարձաւ ԱՄՆ նախագահ Այզենհաուերի պետական քարտուղարը: Նա մասնակից անդամ է եղել նաեւ 1919թ. ապրիլի 29-ին Փարիզում կայացած Ազգերի լիգայի համաժողովին, որտեղ նրա գաղափարների նկատմամբ համաժողովի ազգային մտածելակերպով անդամների ատելութիւնն էլ պատճառ դարձաւ Ազգերի լիգայի նկատմամբ ժխտական վերաբերմունքի առաջացմանը: Այնտեղից ուղեւորուելով Օքսֆորդ, նա յայտնուեց միանգամայն այլ մթնոլորտում: Այստեղ նա Սեսիլ Ռոդեսի գաղափարների ազդեցութեամբ եկաւ այն եզրակացութեան, որ քրիստոնէական հաւատը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ համաշխարհային կառավարութեան գաղափարի իրականացման:

Քրիստոնէական հաւատքը ոչ մի իրական դեր չի ունեցել Զոն Ֆոստեր Դալլզի կեանքում: Սակայն նա յանգում է այն մտքին, որ «Համաշխարհային խաղաղութեան» դիմակի տակ կարելի է քրիստոնէական եկեղեցիները օգտագործել ի նպաստ մէկ աշխարհական կառավարութեան վերջնանպատակի: Հէնց այդ գաղափարից մղուած, նա ձեռնամուխ է լինում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Ազգային եկեղեցիների խորհրդի ստեղծմանը: Դալլզը երեւի թէ ամենանշանաւոր գործակալներից է, ովքեր սկսեցին իրական քրիստոնէական հաւատքի վերափոխման գործընթացը՝ այն դարձնելով գործիք՝ մէկ աշխարհական ստրկական համակարգին ուղղուած հասարակական վերափոխումներ քարոզելու համար: Դալլզը ծայրայեղ ազատական հակաքրիստոնէական մի խմբի՝ Եկեղեցիների դաշնային խորհրդի առաջնորդն էր: Հէնց այդ կազմակերպութիւնն էլ հիմք հանդիսացաւ Եկեղեցիների ազգային խորհրդի (National Council of Churches) ստեղծման համար: Դալլզը, ձգտելով եկեղեցին տարանջատել Աստուածաշնչից, ձգտելու էր նոյն փիլիսոփայութիւնը ներմուծել նաեւ ամերիկեան դիւանագիտութեան մէջ:

ՄԱԿ-ի այժմ գործող բոլոր գործակալութիւնները թուելը չափազանց դժուար գործ կը լինի, այդ պատճառով եկէք միայն անդրադառնանք դրանցից մի քանիսի գործունէութեանը:

Միացեալ ազգերի կազմակերպութեան երեխաների հիմնադրամ (UNISEF):

Միացեալ ազգերի կազմակերպութեան կրթութեան, գիտութեան եւ մշակութային կազմակերպութիւն (UNESCO):

UNISEF-ի՝ երեխաների հարցերով հետաքրքրութեան բուն պատճառը կարող է անակնկալ լինել բազմաթիւ մարդկանց համար: Եւ UNISEF-ը եւ UNESCO-ն, որոնք հանդիսանում են ՄԱԿ-ի ամենաակնառու կազմակերպութիւններից, իրենց պատմութեան ընթացքում երեխաներին քաղաքական նպատակներով շահագործելու բազմաթիւ դէպքեր ունեն: Ցուցադրական բարեգործութեան տակ ՄԱԿ-ը թաքցնում է իր իրական հայեացքները երեխաների նկատմամբ, որոնց այդ կազմակերպութիւնը իրականում ընդունում է որպէս պետական սեփականութիւն: ՄԱԿ-ի պաշտօնեաները ընտանիքները համարում են կառավարութիւններին մրցա-

կից կառոյցներ, որոնց մրցակցութեան առարկան երեխաների վստահութիւնն ու հաւատարմութիւնն է: ՄԱԿ-ի հիմնական գործելաոճերից է երեխաների մէջ գլոբալիստական գործընթացներից կախուածութիւն ներշնչելը՝ միաժամանակ չեզոքացնելով նրանց բնական կապուածութիւնը ընտանիքին, հայրենիքին եւ ազատութեան ու աւանդական բարոյականութեան այլ սկզբունքներին:

ՄԱԿ-ը մեծապէս հովանաւորում է շարունակուող «սեռական յեղափոխութեան» խոտոր գաղափարները դպրոցական անմեղ երեխաների հոգեկանը ներմուծելու գործընթացը: Աւելին, UNISEF-ը մաս է կազմում մանկական պոռնոգրաֆիայի այլանդակ ցանցերին, որոնք, օգտուելով ՄԱԿ-ի վաւերացրած անցաթղթերից, հնարաւորութիւն են ստանում իրենց նողկալի բիզնեսի համար նոր զոհեր ճանկել: 1987թ.-ին Բելգիայի UNISEF-ի գրասենեակի ղեկավար Ջոզեֆ Վերբեքը եւ UNISEF-ի կամաւոր Միշել Ֆետուն ձերբակալուեցին Բրիւսէլում, մեղադրուեցին այն բանում, որ չարաշահելով իրենց գրասենեակի հնարաւորութիւնները, զբաղուել են մանկական պոռնոգրաֆիական բիզնեսով: Նրանց միջազգային կազմակերպութիւնը կոչւում էր «Երեխաների եւ սեքսուալութեան հետազօտութեան եւ տեղեկատուութեան կենտրոն» եւ նրանք հանդէս էին գալիս UNISEF-ի նշանաբանով՝ «Ամէն երեխայ մեր երեխան է»:

ՄԱԿ-ի ամենաազդեցիկ մարմինը Անվտանգութեան խորհուրդն է: Այն կազմուած է ՄԱԿ-ի 15 անդամ երկրներից, որոնցից 5-ը՝ ԱՄՆ, Ֆրանսիայ, Չինաստան, Ռուսաստան եւ Մեծ Բրիտանիա, հանդիսանում են Անվտանգութեան խորհրդի մշտական անդամներ, մինչդեռ մնացած 10 անդամները ՄԱԿ –ի անդամ երկրներից ընտրւում են երկու տարի ժամկէտով: ՄԱԿ-ի կանոնադրութեամբ Անվտանգութեան խորհուրդը օժտուած է եւ օրէնսդիր, եւ գործադիր իշխանութեամբ: Խորհուրդը իրաւունք ունի նաեւ քննարկել ու հաստատել որոշումներ, որոնք ըստ ՄԱԿ-ի տեսակէտի օրէնքի ուժ ունեն եւ պարտադիր են ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների համար: Եթէ որեւէ պետութիւն չի ընդունում Անվտանգութեան խորհրդի հաստատած որոշումները եւ մերժում է կատարել դրանցով սահմանուած պարտականութիւնները, Խորհուրդը, ըստ ՄԱԿ-ի կանոնադրութեան 41 եւ 42-րդ յօդուածների, իրաւունք է ստանում

ամէն տեսակի պատժամիջոցներ կիրառել օրէնքը զանց առնողի դէմ՝ ընդհուպ մինչեւ պատերազմ սանձազերծելու սարսափի տակ տուեալ երկրին պարտադրելու ընդունել նշուած որոշումը:

Այլ խօսքով Անվտանգութեան խորհուրդը, ՄԱԿ-ի կանոնադրութեան համաձայն, վերջնական որոշողի իրաւունք ունի ամէն կարգի միջազգային հակամարտութիւնների, ինչպէս նաեւ ներքին տարաձայնութիւնների նկատմամբ, եթէ այն նշուած դէպքերը համարում է. «սպառնալիք խաղաղութեան համար», «խաղաղութիւնը խախտելուն ուղղուած քայլ», «ագրեսիայ»: Եւ Անվտանգութեան խորհուրդը իրաւասու է իր կամքը պարտադրելու համար պատերազմ հրահրել՝ մէկ այլ պատերազմ կանխելու համար: Սա ուղղակի ծիծաղելի է հնչում մի կազմակերպութեան համար, որի նպատակն է խաղաղութեան պահպանումը:

ՆԱՏՕ-ն որպէս ՄԱԿ-ի ռազմական ուժ:

ՄԱԿ-ի կանոնադրութեան 52-54-րդ յօդուածներում խօսւում է տարածաշրջանային կազմակերպութիւններ ստեղծելու մասին, հէնց այնպիսիք, ինչպիսին է ՆԱՏՕ-ն (The North Atlantic Treaty Organization): Այն ամերիկեան ժողովրդին ներկայացւում էր որպէս ռազմական դաշինք, որը կազմակերպուել է խորհրդային զօրքերի կողմից արեւմտեան ուղղութեամբ հնարաւոր առաջխաղացումները արգելելու համար: ԱՄՆ ծերակոյտը անմիջապէս հաւանութեան արժանացրեց ՆԱՏՕ-ի գաղափարը: Խորհրդային միութեան հաւանական քայքայումից յետոյ ՆԱՏՕ-ն նոյնպէս պէտք է կազմալուծուէր, սակայն դրա հիմնադիրների ծրագրերն այլ էին:

1949թ. մարտի 19-ին ԱՄՆ պետքարտուղար Դէն Էյքսոնը (Արտաքին յարաբերութիւնների խորհրդի անդամ), յայտարարեց, որ այդ դաշնագիրը «ծրագրուել է, որպէսզի ամրացնի ՄԱԿ-ի հիմքերը», եւ որ այն «յաւելեալ միջոց է ՄԱԿ-ի հզօրացման համար»:

2002թ. ՆԱՏՕ-ին անդամագրուեցին եւս 7 պետութիւններ, որով դրա անդամների թիւը հասաւ 26-ի: Փոքր պետութիւնները մտնում են ՆԱՏՕ-ի մէջ առաւել ապահով լինելու համար: Սակայն նրանք չեն գիտակցում, որ ներկայումս շատ քիչ ազգեր կան, որոնք ի վիճակի են դիմագրաւել ՆԱՏՕ-ի հզօրութեանը: Իրականում այդ փոքր ազգերը իրենց մահուան դատավճիռն են ստորագրում այն-

պես, ինչպես քրիստոնեայ Սերբիան: Այսպես շարունակուելու դէպքում ՄԱԿ-ին անհրաժեշտ կը լինի առաւել քիչ թուով ազգութիւնների ներգրաւմամբ ստեղծել իր սեփական ռազմական միաւորումը:

1996թ. աշնանը Գերմանիայի նախկին արտգործնախարար Հանս Դիտրիխ Գենշերը Վաշինգթոն Թայմզում տուած հարցազրոյցում յայտարարեց. «Բոսնիայ զօրք ուղարկելու ՆԱՏՕ-ի վճիռը, որը հիմնուած է ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի որոշման վրայ, կարելի է միայն ողջունել»: Այդ օրուանից ՆԱՏՕ-ն ստանձնեց ՄԱԿ-ի ռազմական միաւորի պարտականութիւնը եւ մինչեւ օրս էլ շարունակում է պահպանել այդ կարգավիճակը:

ՆԱՏՕ-ի իրականացրած համընդհանուր ահաբեկչութեան փաստը պարզօրէն երեւում է սերբական պատերազմի ընթացքում տեղ գտած հետեւեալ փաստերից:

Փիթսբուրգի համալսարանի Ռուսաստանի եւ արեւելեան Եւրոպայի երկրների հետազօտութիւնների կենտրոնի տնօրէն Ռոբերտ Հայդնը ասում է, թէ«պաշտօնական փաստաթղթերում շատ յաճախ հանդիպում էին թիւր տուեալներ»: Անդրադառնալով 100.000-500.000-ի հասնող ալբանացիների կոտորման հարցին, նա յայտարարում է, թէ այդ տուեալներն ուղղակի ծիծաղելի են: Մէկ այլ մասնագէտ, Մասսաչուսէթսի տեխնոլոգիական համալսարանի քաղաքագիտութեան պրոֆէսոր Բարրի Փոուզենը, որը մասնագիտացել է պատերազմների ուսումնասիրման մէջ, ասում է, թէ «անկախ վերահսկողութեան պակասի պատճառով ՆԱՏՕ-ի ներկայացրած պատմութիւններում շատ յաճախ կոպտօրէն խեղաթիւրուած է իրականութիւնը»: Նրա խօսքերով «ՆԱՏՕ-ն արդարանալու համար մեծ օգուտ է քաղում պատերազմի թատերաբեմը նկարագրող լուսանկարներից, որոնցում ներկայացուում են ողբերգական իրավիճակներ ու մարդիկ եւ դրա նպատակը իրենց սանձազերծած պատերազմի արդարացումն է»:

Յիշեալ պատերազմը յանգեցրեց ՆԱՏՕ-ի կողմից քրիստոնեայ Սերբիայի ոչնչացմանը: Այսպես կոչուած Կոսովոյի ազատագրութեան բանակը (ԿԱԲ) սերտօրէն համագործակցում էր ալբանական մարքսիստական նարկո-մաֆիայի ահաբեկիչների հետ: Ամերիկայի Միացեալ Նահանգների ռազմավարական հիմնահարցերի ուսումնասիրման կենտրոնի (SIRIUS) նախագահ Բեն

Ուորքսի խօսքերով. «Կոսովոյի ազատագրութեան բանակի (ԿԱԲ) իսլամական ուղղուածութիւնը հնարաւորութիւն է տալիս բացատրել այդ կազմակերպութեան կապերը Սաուդեան միլիոնատէր Օսամայ Բեն Լադենի հետ: Կասկած չի կարող լինել այն հարցում, որ Բեն Լադենի զինակցիները եղել են Կոսովոյում եւ մասնակցել են թուրք ալբանացիների կազմաւորած ԿԱԲ-ի մարտիկների զինման, հանդերձաւորման եւ վարժեցման գործերին»:

Հարաւսլաւիայի դէմ ՆԱՏՕ-ի իրականացրած պատերազմը իրականում ահաբեկչական գործունէութիւն էր, որտեղ ՆԱՏՕ-ն բացայայտեց իր ամբողջատիրական նկրտումները: ԱՄՆ նախագահ Քլինթընից սկսած ՆԱՏՕ-ի կողմից սերբական ռադիոհեռուստատեսութեան շէնքի պարբերական օդային ռմբահարումների փաստը իրենից ներկայացնում է ամբողջատիրութեան հիմնական սկզբունքներից մէկի արտայայտումը. կառավարութիւնը, այս դէպքում ՆԱՏՕ-ի ղեկավար էլիտան, իրեն է վերապահում մարդկանց մտածողութիւնը որոշելու եւ թոյլատրելու իրաւունքը եւ պատժում է նրանց, ովքեր «Մտքի ոճիր» են կատարում՝ այսինքն մտածում են այլախոհ կերպով: Բելգրադում «Լոնդոն ինդըփենդենթ» թերթի թղթակից Ռոբերտ Ֆիսքը, անդրադառնալով այս խնդրին, ասում է. «Այո, սերբական հեռուստատեսութիւնը կարող է լինել ատելի, վատ, սխալ, այն սեփականաշնորհուել է կառավարութեան կողմից: Սակայն եթէ դու մարդկանց կոտորում ես միայն այն բանի համար, որ չես հաւանում նրանց ասածները, ապա դու խախտում ես պատերազմի օրէնքները»:

Պատերազմը քրիստոնեայ Սերբիայի մտադրուած ոչնչացում էր եւ ըստ Բեն Ուորքսի, Կոսովոյի ազատագրութեան բանակը սերտօրէն կապուած էր ալբանական նարկոմաֆիայի հետ:

Բնապահպանութիւն:

1992թ. Բրազիլիայում (Ռիոյ դէ Ժանեյրոյում) կայացած ՄԱԿ-ի բնապահպանութեան եւ զարգացման համաժողովի (UNCED) , կամ այսպէս կոչուած Երկրի Գագաթաժողովի ընթացքում հռչակաւոր գիտնական դր. Դիքսի Լի Ռեյը վճռականապէս քննադատեց բնապահպան ծայրահեղականների անտրամաբանական պահանջներն ու վտանգաւոր առաջարկները: Որպէս կենդանա-

բանութեան հռչակաւոր պրոֆէսոր եւ մեկնաբան, Վաշինգթօն նահանգի նահանգապետ, Ատոմային էներգետիկայի յանձնաժողովի նախագահ եւ բազմաթիւ գիտական պարգեւատրումներ կրող, Դիքսի Լի Ռեյը առաջ քաշեց եւ բացայայտեց ՄԱԿ-ի գագաթաժողովում տեղ գտած մի քանի վտանգաւոր առաջարկներ: Նա նախազգուշացրեց համընդհանուր կանաչ օրակարգի վտանգների մասին: Իր՝ Բնապահպանական չարաշահումներ անուանումով մի հրապարակման մէջ նա գրում է. «Նախ եւ առաջ մենք պէտք է հասկանանք, որ բնապահպանական շարժումները համահունչ չեն փաստերին կամ տրամաբանութեանը: Արդէն աւելի ու աւելի է պարզ դառնում, որ նշուած շարժումները ՄԱԿ-ի գերիշխանութեան ներքոյ «Համաշխարհային նոր կարգեր» կամ համաշխարհային կառավարութիւն ծրագրողների կողմից որպէս միջոց են ծառայում՝ կազմալուծելու ինքնիշխան ազգութիւնները եւ վերադասաւորելու համաշխարհային ուժի կենտրոնները»:

Ներկայացնում ենք նաեւ Ուիլեամ Յեսփերի «ՄԱԿ-ի վտանգը» աշխատութիւնից Մորիս Սթրոնգին վերաբերող հետեւեալ հատուածը.

Համաշխարհային բնապահպանական շարժումների հովանաւորն ու կազմակերպիչը կանադացի միլիարդատէր Մորիս Սթրոնգն է: Նա արդիւնաբերող է, ծայրահեղական բնապահպան, Նոր Դարաշրջանի նուիրեալ, ՄԱԿ-ի պլուտոկրատ, ջերմեռանդ մէկ աշխարհական սոցիալիստ, վճռականօրէն տրամադրուած գլոբալիստ, Իսրայէլի մեծ բարեկամ ու հովանաւոր, Դաւիդ Ռոքֆելլերի ու Միխայել Գորբաչովի մօտ ընկեր:

1990թ. կանադացի լրագրող Դենիել Վուդը Մորիս Սթրանգից հարցազրոյց վերցրեց Կոլորադոյում գտնուող վերջինիս ընդարձակ կալուածքում: Հարցազրոյցի ընթացքում Սթրոնգը լրագրողին տեղեկացրեց, թէ պատրաստւում է մի ընդարձակ վէպ գրել: Դա լինելու էր այն մասին, թէ ինչպէս են աշխարհի մի քանի ազդեցիկ անհատներ որոշում, որ երկրագունդը բնապահպանական աղէտից փրկելու միակ ուղին երկրի արդիւնաբերապէս հզօր պետութիւնների տնտեսութիւնները խորտակելն է: Նովելի սիւժէն նկարագրելու ընթացքում Մորիս Սթրոնգը անդրադառնում է Համաշխարհային տնտեսական ֆորումին, որը գումարւում է ամէն տարի շուեցարական Դաւոս քաղաքում: Այստեղ ամէն տարուայ փետրուար ամսին հաւաքւում են բազմաթիւ երկրների ֆինանսների նախարարներ, վարչապետներ, հանրայայտ ակադեմիկոսներ, գիտնականներ՝ քննարկելու առաջիկայ տարուայ տնտեսական օրակարգերը: Այս կապակցութեամբ Մորիսը ասում է. «Իսկ ի՞նչ կը լինի, եթէ այստեղ (Դաւոսում) հաւաքուած պետութիւնների ղեկավարների մի փոքրիկ խումբ յանգեն այն եզրակացութեան, որ մեր մոլորակի համար հիմնական վտանգը գալիս է զարգացած պետութիւնների գործունէութիւններից: Եւ երկիրը փրկելու միակ ճանապարհը այն է, որ այդ պետութիւնները ստորագրեն համաձայնագիր՝ նուազեցնելու իրենց վնասակար ազդեցութիւնը շրջակայ միջավայրի վրայ: Արդեօ՞ք յիշեալ մեծ պետութիւնները կը կատարեն այդ պայմանը: Խումբը որոշում է, որ դա չի կատարուի, մեծ պետութիւնները չեն փոխի իրենց դարաւոր քաղաքականութիւնը: Այսպիսով, խումբը որոշում է, որ երկիրը վերահաս բնապահպանական աղէտից փրկելու համար միանշանակօրէն անհրաժեշտ է կործանել զարգացած արդիւնաբերական քաղաքակրթութիւնները»: «Արդեօ՞ք մենք պարտաւոր չենք այդպէս գործել»,- վերջում հաւելում է Մորիս Սթրոնգը՝ այդ պահը արտայայտելով ձեռքի այնպիսի թեթեւ շարժումով՝ կարծես թէ պատուհանից դուրս է նետում ծխախոտը,-գրում է լրագրող Վուդը: Այդ ժեստը նշանակում է, թէ միլիոնաւոր, նոյնիսկ միլիարդաւոր մարդկանց ճակատագրին կարելի է վերջ տալ մատների թեթեւ շարժումով, վերջ դնել նրանց ապրուստին, կեանքի ապահովագրմանը, նրանց բիզնեսին, տներին ու երազանքներին՝ այս բոլորը կատարելով ելնելով բարի մտադրութիւններից (փրկելու համար մոլորակը): Վուդը շարունակում է.«Ես նրան լսում էի յափշտակուած, որովհետեւ այդ ամէնը ասում էր ոչ թէ մի ինչ-որ գրող, այլ Մորիս Սթրոնգը, որը անձնապէս ճանաչում է այս աշխարհի առաջնորդներին, փաստօրէն հանդիսանում է Համաշխարհային տնտեսական ֆորումի փոխնախագահը եւ գտնւում է հզօրութեան բարձրակէտում: Նա ի վիճակի է դա կատարել»:

Հաւանաբար կարեւոր է այն հանգամանքը, որ ինչքան մենք ծանօթ ենք յարգարժան Մորիս Սթրոնգի գործունէութեանը, նա լրջօրէն հակուած է իրականացնելու իր մտադրութիւնները: Մորիս Սթրոնգը գլոբալ-էլիտայի տիպիկ ներկայացուցիչ է, գերհա-

ռուստ համայնավար եւ, լինելով չափազանց ամբարտաւան, համոզուած է, որ ինքը եւ մի քանի իր նման անհատներ ընտրուած են փոխելու աշխարհի կարգերը եւ դրանց փոխարէն իրականացնելու իրենց ուտոպիական ծրագրերը: Պէտք է նկատել, որ 1917թ. Տրոցկին նոյնպէս կարծում էր, թէ իրենց առաջ քաշած գաղափարները բարենպաստ են լինելու Ռուսաստանի համար:

Դեղատոմս բռնատիրութեան համար:

ՄԱԿ-ի բազում կողմնակիցներ անկեղծօրէն հաւատում են, որ համաշխարհային կառավարութեան հաստատման դէպքում աշխարհում կը դադարեն պատերազմները եւ կը յարատեւի խաղաղութիւնը: Սակայն իրականում այս ուտոպիական տեսակէտները առաջ են քաշում գլոբալիզացիայի ջատագովները՝ թաքցնելու համար դաժան իրականութիւնը: Այսինքն՝ եթէ մի կառավարութիւն ի վիճակի է պարտադրել համաշխարհային խաղաղութիւն, ապա նոյն յաջողութեամբ այն ի վիճակի կը լինի պարտադրել նաեւ իր համաշխարհային գերիշխանութիւնը: Այդ պարագայում, երբ գոյութիւն չի ունենայ որեւէ ուժ, որը կը պայքարի իշխանութեան չարաշահման դէմ, ՄԱԿ-ը կը վերածուի պատերազմ հրահրող մեխանիզմի, որը ուղղուած կը լինի մարդկանցից խլելու իրենց իրաւունքները: Խաղաղութեան դիմակի տակ կը հաստատուի համաշխարհային բռնատիրութիւն:

ՄԱԿ-ի գերակայութեան ներքոյ համաշխարհային Ֆեդերացիայ ստեղծելու ծրագիրը հիմնուած է սխալ սկզբունքների վրայ, քանի որ նախատեսւում է, որ օրէնքները պէտք է տրուեն կառավարութեան կողմից: Դրանից հետեւում է, որ եթէ մեր օրէնքները հաստատում է կառավարութիւնը, ապա այն ցանկացած պահի կարող է դրանք վերափոխել, սահմանափակել կամ վերացնել:

ՄԱԿ-ը համարում է, որ կառավարութիւնը շնորհում է օրէնքները: Սակայն կառավարութիւնների դերը մարդկանց բնական օրէնքները նուիրելը չէ, այլ այդ օրէնքների իրագործումը ապահովելը եւ պաշտպանելը: Ֆրանսիացի տնտեսագէտ Ֆրեդերիկ Բաստիեն ներկայացնելով 1850թ. գրած իր «Օրէնքը» աշխատութեան հիմնական սկզբունքները, ասում է. «Կեանքը, ազատութիւնը եւ սեփականութիւնը գոյութիւն չունեն, որովհետեւ մարդը

ստեղծեց օրէնք»: Սակայն Բաստիեն նկատում է. «եւ պարադոքս է, որ դրանք գոյութիւն ունէին նախօրօք եւ հէնց այդ հանգամանքն էլ մարդուն ստիպեց հնարել օրէնքը»: Իր ասածները պարզաբանելու համար Բաստիեն օրինակ է բերում Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ ասելով. «Նայեցէք Ամերիկային. այն աշխարհի միակ պետութիւնն է, որտեղ օրէնքը կիրառւում է իր բուն նպատակով՝ պաշտպանելու իւրաքանչիւր անհատի ազատութիւնը եւ սեփականութիւնը»: Բաստիեն կարող էր այս փաստը նկատի առնել, քանի որ Ամերիկայի հիմնադիր հայրերը ոչ միայն կարողացան անկախութեան հռչակագրի իդէալները նիւթականացնել իրենց կազմած կառավարութեան մէջ, այլ նաեւ ապահովեցին դրանց շարունակելիութիւնը:

ՄԱԿ-ի մարդու իրաւունքների յանձնաժողովները նոյնպէս խոստանում են հասարակական բարեկեցութիւն՝ սահմանելով մարդու այնպիսի «իրաւունքները», ինչպիսիք են աշխատանքի իրաւունք, կրթութեան կամ բուժուելու իրաւունքներ եւ այլն: Սակայն խնդիրն այն է, որ այդ իրաւունքները կարող են ապահովուել միայն սոցիալիստական կառավարութեան վերահսկողութեան պայմաններում: Օրէնքի այսպիսի այլասերումը կարող է ՄԱԿ-ի միջոցով կազմակերպուած համաշխարհային կառավարութիւնը վերածել անարդարութեան գործիքի: Բաստիեն նկատում է, թէ օրէնքը պէտք է լինի արդարացի՝ որպէսզի պաշտպանի մարդկանց իրաւունքները: Ցանկացած օրէնք, որը խախտում է մարդու հիմնական բնական իրաւունքները, միանշանակօրէն անարդարացի է: Մատնանշելով այդպիսի օրէնքները, Բաստիեն նշում է. «Այդ օրէնքները կարելի է ճանաչել այսպէս. եթէ նրանք վերցնում են այն, ինչը պատկանում է մի անձի եւ տալիս են մէկ այլ անձի այն, ինչը իրեն չի պատկանում, ապա դա հէնց յիշատակուած անարդարացի օրէնքն է»:

Հարստութիւնը բաշխելու սոցիալիստական անարդարացի գաղափարը գործնականում մարդու աշխատանքով ստեղծած հարստութեան վերահսկման ծրագիր է: Հարստութիւնը վերաբաշխելու համար նախ անհրաժեշտ է այն բռնագանձել: Եկէք պատկերացնենք, թէ գոյութիւն ունի մի կառավարութիւն, որը այնքան հզօրութիւն ունի, որ կարողանում է, ենթադրենք, հար-

կահանման խիստ համակարգով բռնագանձել հարստութիւնները: Ապա այդ պարագայում որտեղից պէտք է հանդէս գա այն ուժը, որը տուեալ կառավարութեանը կը պարտադրի վերաբաշխել իր բռնագանձած հարստութիւնը:

ՄԱԿ-ի համաշխարհային կառավարութեան կողմից անարդարացի օրէնքի հարկադրման համար անհրաժեշտութիւն պիտի առաջանայ ստեղծել նաեւ մի կուռ ոստիկանական համակարգ, որը պէտք է ճնշի այդ բռնութեան դէմ ցանկացած ընդվզում: Եթէ ՄԱԿ-ը յաջողութեան հասնի համաշխարհային կառավարութեան ստեղծման գործում, ապա նրան այլեւս հարկաւոր չի լինի ունենալ իր ընդհանուր բանակը, որպէս ճնշամիջոցների իրականացման գործիք: Ազգերի զինաթափումը, որը իր մէջ ներառում է նաեւ մարդկանց զինաթափում, ազգերին կը զրկի միմեանց դէմ պատերազմելու հնարաւորութիւնից, սակայն դրա փոխարէն կը ստեղծուի պատերազմի մի նոր տեսակ. ՄԱԿ-ի կողմից իրականացուող պատերազմ աշխարհի՝ այլեւս անորոշ բնակչութեան դէմ: Իսկ ՄԱԿ-ի մշտական բանակը կը ծառայի որպէս «խաղաղութիւնը պահպանող» ուժ: Այն ունենալով հսկայական մարդկային ու տեխնիկական հնարաւորութիւն, ցանկացած ազգի կամ անհատի կը զրկի իրենց նկատմամբ իրականացուող ագրեսիայից պաշտպանուելու հնարաւորութիւնից: Համաշխարհային կառավարութիւնը, դադարեցնելով միջազգային պատերազմները, պատճառ կը դառնայ մի եզակի պատերազմի՝ համայն մարդկութեան վարած պատերազմի: Իսկ վերջին հաշուով աշխարհում կտիրի ՄԱԿ-ի ամբողջատիրական իշխանութիւնը:

Ֆինանսական խաբէութիւն

(Սթիւ Բոնթայի «ՄԱԿ-ի ներսում» աշխատութիւնից):

1944թ. կայացած Դումբարթոն Օքսի համաժողովից մէկ ամիս առաջ փակ հաւաքոյթ է տեղի ունեցել Նիւ Համփշիրի Բրեթթոն Վուդզ քաղաքի Մաունթ Վաշինգթոն հիւրանոցում: Հաւաքոյթը պաշտօնապէս կոչուեց ՄԱԿ-ի դրամական եւ տնտեսական համաժողով: Այդ համաժողովի նպատակը համաշխարհային Ֆինանսական հսկողութեան սահմանումն էր, որը էլ աւելի պէտք է ամրապնդէր ՄԱԿ-ի քաղաքական ու ռազմական վերահսկողութիւնը:

Բրեթթոն Վուդզում տեղի ունեցած դէպքերի մեծ մասը դեռեւս անյայտ է մնում: Համաժողովից պահպանուել են միայն կցկտուր ձայնագրութիւններ ու պատճէններ: Համաժողովում Միացեալ Նահանգները ներկայացնում էին Հարրի Դեքսթեր Ուայթը, որը ԱՄՆ նախագահ Ռուզուելտի գանձատան քարտուղարն էր (յետագայում դիմակազերծուեց որպէս խորհրդային գործակալ), պատուիրակութեան միւս անդամը Ռայմոնդ Մայքսելն էր, որը համառօտ յուշագրութիւններ գրեց կայացած համաժողովի վերաբերեալ: Դեքսթեր Ուայթը ինքն էր որոշում իր անելիքը եւ Ամն-ի որեւէ այլ գերակայ մարմնի առջեւ հաշուետու չէր:

Բրեթթոն Վուդզում Ուայթը ներկայացրեց մի ընդարձակ ծրագիր, որով առաջարկում էր ստեղծել մի մարմին, որը կը վերահսկի համաշխարհային տնտեսութիւնը, կը վերացնի պետութիւնների ֆինանսական անկախութիւնը եւ հարուստ երկրներից գանձելով նրանց հարստութիւնը՝ կը բաշխի աղքատ երկրների միջեւ: Դեքսեր Ուայթը իր նախագիծը անուանեց Արժոյթի միջազգային հիմնադրամ(International Monetary Fund): Արժոյթի միջազգային հիմնադրամը (այսուհետեւ ԱՄՀ) ներկայացնում էր իբրէեւ համաշխարհային խաղաղութիւն հաստատելու գործիք, իսկ իրականում այն կարելի է առանց չափազանցութեան համարել համաշխարհային սոցիալիզմի գործիք: Բրեթթոն Վուդզը կապելով խաղաղութեան շարժման հետ, Ամն-ի գանձատան աշխատակազմը հնարաւորութիւն ստացաւ ամերիկեան ժողովրդին համոզելու օժանդակել Արժոյթի միջազգային հիմնադրամի կազմակերպմանը:

Միջազգային Դրամային Հիմնադրամը ամերիկեան կոնգրսին ու ժողովրդին ներկայացուեց որպէս միջազգային առեւտուրը եւ տարադրամային փոխարժէքները «հաւասարակշռող» կառոյց եւ Ժողովուրդն ընդունեց, որ կայունութիւնն ու հաւասարակշռութիւնը այդ քառասային օրերին չափազանց տեղին ու անհրաժեշտ են: Իսկ իրականութիւնն այն է, որ Ամի-ն միտուած էր աշխարհում հաստատել մշտական անկայունութեան իրավիճակ `աղքատ պետութիւններին իրենցից կախուածութեան մէջ գցելով, փոխառութիւններ տրամադրելու միջոցով, իսկ հարուստ երկրների՝ մասնաւորապէս Ամն-ի տնտեսութիւնը թուլացնելով: Այդպիսի քայքայիչ գործունէ-

ութեան շնորհիւ Արժոյթի միջազգային հիմնադրամը համաշխարհային մասշտաբով ստեղծուած անկայունութիւնը պիտի գործածէր թէ հարուստ եւ թէ աղքատ պետութիւնները մի միասնական տնտեսական համակարգի մէջ ներկրելու համար: Ամի-ի տրամադրած փոխառութիւնները վարկառու երկրին անմիջական կախուածութեան մէջ են գցում Ամի-ից: Դրանից բացի վարկառու երկրի առաջ դրւում են ահաւոր պայմաններ, ինչպիսիք են հարկերի բարձրացումը, անահատ ծեռներէցութեան նկատմամբ ճնշումների աւելացումը, կրթական համակարգի վերափոխումները եւ այլն:

Կառավարութեան (ամերիկեան) կողմից այլ երկրներին տրուող օգնութիւնները բարոյապէս դատապարտելի են, որքան էլ որ դրա կողմնակիցները փորձեն այն գովաբանել: Արտաքին օգնութիւնները բարեգթութեան ակտեր չեն՝ չնայած հէնց այդ համատեքստում են ներկայացւում: Բարեգործութիւնը այն է, երբ կամովին օգնութիւն է ցոյց տրւում նրան, ով իրականում կարիք ունի օգնութեան: Իսկ ամերիկեան կառավարութեան կողմից տրուող արտաքին օգնութեան գումարը գոյեանում է ամերիկեան հարկատուներից համապատասխան բռնի գանձումներ կատարելով, եւ այդ օգնութիւնը տրւում է աղքատ պետութիւնների ամենաքիչ կարիքաւոր զանգուածին՝ կոռումպացուած իշխանութիւններին, որոնք այդ գումարների միջոցով շարունակում են զաւթած պահել իրեն կառավարական աթոռները: Այդ օգնութիւնները նպաստում են միայն այն անձանց շահերին, ովքեր ամենից շատ են պատասխանատու իրենց երկրների քայքայուած վիճակի համար: Դա խրախուսում է կաշառակերութիւնը եւ յիշեալ ծրագիրը մտահղացողների ցանկութեամբ երկիրը գցում կախուածութեան մէջ:

Չնայած այն հանգամանքին, որ Արժոյթի միջազգային հիմնադրամը եւ Համաշխարհային բանկը ստեղծուել են որպէս ՄԱԿ-ից անջատ կազմակերպութիւններ, սակայն դրանք երկուսն էլ յետագայում մտցուել են ՄԱԿ-ի համակարգի մէջ, որպէս դրա մասնաճիւղեր: Համաշխարհային ֆինանսական միասնական համակարգի ստեղծումը, որի մէջ մտնում են նաեւ համաշխարհային կենտրոնական բանկը եւ համաշխարհային միասնական տարադրամը, Բրեթթոն Վուդզում հաւաքուածների հիմնական նպատակն էր: Այդ նպատակին հասնելու համար նշուած ուժերը մշակել են երկարաժամկէտ ռազմավարական ծրագիր, որով նախատեսում էին աշխարհը բաժանել մի քանի տնտեսական տարածաշրջանների՝ իրենց կենտրոնական բանկերով ու տարածաշրջանային տարադրամներով, որոնք ապագայում կը միաձուլուեն մէկ ընդհանուր համաշխարհային համակարգի մէջ: Իրենց վերջնանպատակին հասնելու ճանապարհին այս ծրագրի մշակողներն արդէն ունեն որոշակի ձեռքբերումներ: Իրենց գործունէութիւնը Եւրոպայում նրանք սկսեցին 1950-ական թուականներին՝ Ընդհանուր շուկայի ձեւաւորման գործընթացով: Որոշ եւրոպական երկրներ մտավախութիւն յայտնեցին, թէ այդ կազմակերպութիւնը կարող է բացասաբար ազդել իրենց ինքնիշխանութեան վրայ, սակայն Ընդհանուր Շուկայի հիմնադիրները նրանց հաւաստիացրեցին, թէ իրենց հիմնած կառոյցը ընդամէնը «ազատ առեւտրի կազմակերպութիւն» է: Սակայն մի քանի տարի անց, երբ այդ կառոյցին միացան աւելի շատ երկրներ, այն սկսեց աւելի շատ նմանուել տարածաշրջանային կառավարութեան: Այն փոխեց իր անուանումը՝ նախ կոչուելով Եւրոպական տնտեսական համայնք « European Economic Community », ապա Եւրոպական Համայնք, իսկ վերջում՝ Եւրոպական միութիւն «European Union»: Ապա այդ կառոյցն սկսեց շարունակաբար յաւակնութիւններ ցուցաբերել՝ տիրանալու իշխանութեան այլ լծակների: 1998թ. Ֆրանկֆուրտում (Գերմանիա) ստեղծուեց նաեւ եւրոպական կենտրոնական բանկը, իսկ 2002թ-ին՝ եւրոպական միասնական տարադրամը՝ «եւրոն»:

Այժմ Եւրամիութեան բարձրաստիճան պաշտօնեաները ծրագրում են իրենց կողմից որպէս «ինտէգրում» ներկայացուող գործընթացի յաջորդ փուլը, որը պէտք է լինի եւրոպական՝ նախկինում անկախ ազգութիւնների ինքնիշխանութեան մնացորդների վերացումը: Մշակւում է նաեւ եւրոպական սահմանադրութիւնը, որը օրէնքի ուժ կը տայ արդէն գոյութիւն ունեցող եւրոպական խորհրդարանի եւ եւրոդատարանների վճիռներին:

Այդ ծրագրերն իրականացնող ուժերը նախագծել են Եւրոպայի օրինակով աշխարհի մնացած հատուածներում եւս ստեղծել տարածաշրջանային տնտեսական գօտիներ, որոնք հիմք կը հանդիսանան ապագայ տարածաշրջանային կառավարութիւնների հա-

մար, իսկ դրանց կազմաւորումից յետոյ ստեղծուած տարածաշրջանային միաւորները պէտք է համախմբուեն մէկ համակարգի մէջ:

Ամերիկայի Միացեալ Նահանգների 60-ամեայ ներգրաւուածութիւնը ՄԱԿ-ի համակարգում եւ այդ կառոյցի մէջ ունեցած հասարակական, օրէնսդրական ու ռազմական մասնակցութիւնները Ամերիկային տուել են միայն աւելորդ գլխացաւանքներ եւ ոչ մի նկատելի օգուտ: ՄԱԿ-ը Ամերիկային անընդհատ ներգրաւել է պատերազմների մէջ, վատնել է նրա դրամական ու տնտեսական միջոցները, ջանացել է փոխել Ամն-ի օրէնքները եւ աստիճանաբար քայքայել է այդ երկրի ինքնիշխանութիւնը: Խաղաղութեան փոխարէն մենք ստանում ենք անընդմէջ պատերազմներ, միջազգային ֆինանսական կայունութեան փոխարէն մենք տեսնում ենք քաոս եւ անկախութեան փոխարէն մենք ստանում ենք այն, ինչը որ միջազգայնականներն անուանում են «միջազգային կախուածութիւն» (interdependence):

Սակայն ՄԱԿ-ը նոյնպէս դեռեւս անկախ չէ: Այն կարողանում է պահպանել իր գոյութիւնը, անխափանութիւնն ու եռանդը ի շնորհիւ Ամերիկայի Միացեալ Նահանգների, որը ՄԱԿ-ի գործունէութիւնը արդիւնաւէտ դարձնելու համար տրամադրում է իր ֆինանսները, ռազմական ու քաղաքական հզօրութիւնը: Կենսաբանական մակաբոյծի նման ՄԱԿ-ը, իր գոյութիւնը ապահովելու համար ամրացել է աւելի հզօր մի օրգանիզմի եւ պարբերականօրէն ծծում է վերջինիս կենսահիւթերը: ՄԱԿ-ը, որպէս մակաբոյծ, իր ռազմական պոտենցիալով պարտական է ամերիկեան զինուժին, ռազմական տեխնոլոգիաներին, Ամն-ի ռազմական մտաւորականութեանը եւ անձնակազմին՝ յատկապէս այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Բալկանները կամ Մերձաւոր Արեւելքը: ՄԱԿ-ի ֆինանսական համակարգը մեծաւ մասամբ գոյեանում է ամերիկեան հարկատուներից գանձուող գումարներց: ՄԱԿ-ի գլխաւոր գրասենեակները գտնւում են ամերիկեան հողի վրայ: Բացի այդ՝ ՄԱԿ-ի կազմակերպչական ծախսերի համար անհրաժեշտ գումարներ, որոնցով վճարւում են ինչպէս Իսթ Ռիւերում գտնուող ՄԱԿ-ի շքեղ շտաբ-բնակարանների, նրա բազմաթիւ տարածաշրջանային գրասենեակների վարձերը, այնպէս էլ կազմակերպութեան հազարաւոր աշխատողների աշխատավարձերը:

Քաղաքացիների զինաթափումը:

ՄԱԿ-ի զինաթափման ծրագրերի նպատակը առանձին անհատներից, ինչպէս նաեւ ազգային զինուժերի ձեռքերից զէնքերի խլումն է՝ համաշխարհային կառավարութեանը դարձնելով ուժի մենասեփականատէր (մոնոպոլիստ): ՄԱԿ-ի հիմնած Համընդհանուր կառավարման յանձնաժողովի (Commission on Global Governance) 1995թ.-ին ներկայացրած «Մեր ընդհանուր հարեւանները» զեկոյցում կոչ է արւում միջոցներ ձեռնարկել քաղաքացիների կողմից մահացու զէնքերի անուերահսկելի ձեռքբերման ու օգտագործման դէմ: Այնինչ քաղաքացիները ստիպուած են այդ քայլին դիմելու փողոցային խուլիգաններից, քրէական խմբերից, քաղաքական ընդդիմադիրներից, ահաբեկիչներից եկող վտանգից ապահովուելու համար: Երբ քաղաքացիների զինաթափման կապակցութեամբ ՄԱԿ-ին ընդդիմանալով «ոչ» են ասում, ապա այդ «ոչ»-ը ՄԱԿ-ը ընդունում է որպէս «դեռ ոչ»: Այս ամէնը պարզ է դառնում պաշտօնաթող կոնգրէսական Չարլզ Փաշայեանի՝ Փոքր բանակների համաժողովում արտասանած ճառից, որտեղ նա ներկայացել էր որպէս պատուիրակ: Փաշայեանը իր խօսքում զգուշացնում է, թէ այս բոլոր երեւոյթները «Պատերազմ սկսելու բացայայտ քայլեր են: Այս ամէնը պէտք է հասկանալ նաեւ որպէս դէպի մի իրավիճակ ընթացող գործընթացի մաս, որով համաշխարհային կառավարական մարմինը իրաւունք ձեռք կը բերի իր կամքը պարտադրել ազգային ու տեղական օրէնքների վրայ»:

Համաշխարհային պատմութիւնը ցոյց է տալիս, որ ցանկացած բռնապետ ձգտում է զինաթափել իր ենթականերին: Իսկ առնուազն մի քանի տասնեակ միլիոն մարդիկ իրենց մաշկի վրայ են սովորել այն ճշմարտութիւնը, որ ցեղասպանութիւններից առաջ անպայման զինաթափման է ենթարկւում ցեղասպանութեան ենթակայ ազգութիւնը կամ համայնքը:

Համընդհանուր յարկահանութիւն:

Գլոբալ կառավարութեան նախագծի մշակողները ծրագրել են նաեւ համընդհանուր հարկահանութեան ծրագիրը, որը պէտք է նպաստի ՄԱԿ-ը համաշխարհային կառավարութեան վերածելուն:

Համաշխարհային հարկահանութեան առաջին եւ ամենակոնկրէտ նախագիծը առաջ է քաշել Յեյլի համալսարանի տնտե-

սագէտ Ջեյմս Թոբինը՝ 1970-ական թթ.: Թոբինը առաջարկում էր միանման փոխարժէքային յարկեր սահմանել աշխարհի բոլոր տարադրամների նկատմամբ: Դ ա նպատակաուղղուած է քայքայել առաւել արդիւնաւէտ ու բարգաւաճ միջազգային դրամային շուկաները եւ ճանապարհ հարթել դէպի մի միասնական համընդհանուր տարադրամը, համընդհանուր ֆինանսական ոստիկանութիւնն ու տնտեսական ինտէգրումը:

Իր իւրօրինակ նախագծի մէջ Թոբինը առաջարկում է համաշխարհային հարկահաւաքի դերը շնորհել կամ Արժոյթի միջազգային հիմնադրամին կամ Համաշխարհային բանկին: Սակայն Թոբինի ծրագրի արդիականացուած տարբերակներում այն տեսակէտն է հնչում, որ այդ գործառոյթը իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել միանգամայն նոր բիւրոկրատական մարմին: Յամենայն դէպս երկու դէպքում էլ հիմնական շահոյթը գնալու է դեռեւս սաղմնային համաշխարհային կառավարութեան՝ ՄԱԿ-ի գանձարանը:

Ծայրահեղական բնապահպանական շարժումները վերջերս սկսել են օժանդակել զանազան համընդհանուր հարկային ծրագրերի: Ակնառու օրինակ է այսպէս կոչուած կարբոնի յարկը: Դա հարկահանութեան մի ծրագիր է, որը կատարւում է հետեւեալ կերպ: Շահարկելով երկրագնդի համընդհանուր տաքացման միտումը, կարբոնի յարկը ուղղուած է լինելու պատժել այն երկրներին, ովքեր ենթադրաբար աւելի մեծ ներդրում ունեն մոլորակի գլոբալ տաքացման գործընթացում: Այդ երկրների ունեցած հանածոյ վառելիքի մէջ կարբոնի պարունակութիւնը համապատասխան աւելացւում է նրա վճարելիք հարկի չափը: Այդպիսի յարկը նպատակաուղղուած է գլոբալիստական ծրագրերի իրականացման համար եկամտի նոր աղբիւր ստեղծելուն, ինչպէս նաեւ հզօր արդիւնաբերական երկրներին ստիպելու ծնկի իջնել ծայրահեղական բնապահպանական կազմակերպութիւնների անտրամաբանական պահանջների առաջ: Այլ խօսքերով մարդկային գործունէութեան հարկման ոչ մի աստիճան չի կարող բաւարարել նրանց, ովքեր մարդկային ցեղը համարում են մայր երկրագնդի վրայ մի անպիտան ու արատաւոր բիծ:

Եթէ մենք կարծում ենք, թէ օդը, որը մենք շնչում ենք, ձրի է, աւ-

ելի լաւ է վերանայենք մեր տեսակէտը: ՄԱԿ-ին կից Համընդհանուր քաղաքականութեան ֆորումի անդամ Քեւին Բաումերտը, մատնանշելով համընդհանուր հարկահանման կողմնակիցների կողմից կիրառուող խաբուսիկ քաղաքականութիւնը, պարզ է դարձնում գլոբալիստների գործելակերպը՝ ուղղուած մարդկային գործունէութեան բոլոր ոլորտներում հարկման ելուստներ գտնել՝ ասելով, թէ դա պատկանում է «համընդհանուր հասարակութեանը» հետեւաբար պէտք է տնօրինուի հէնց դրա կողմից:

Համաշխարհային նոր կարգերի ճարտարապետների կողմից նախագծուող ու քայլ առ քայլ իրականացուող համընդհանուր հարկման համակարգը անպայման վերածելու է միջազգային հարկահանութեան դաժան ու բռնակալական մի համակարգի: Գլոբալիստները, հմտօրէն շահարկելով տեղական մակարդակներում կազմակերպուող ծայրահեղական նախաձեռնութիւնները, նրբօրէն մշակուած հայեացքներով ու խաբուսիկ բառերով հասարակութիւններին համոզում են յանձն առնել համաշխարհային նոր կարգերի առաջարկած հարկերի ու ծախսերի համակարգերը:

Միացեալ ազգերի կազմակերպութիւնը ոչ թէ խաղաղութեան, այլ պատերազմի կազմակերպութիւն է. յարատեւ պատերազմ՝ յարատեւ խաղաղութեան համար:

ՄԱԿ-ը բոլոր ազատասէր անհատների թշնամին է:

Կազմեց Արտաւազդ Աւագեանը
Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
դեկտեմբերի 26, 2004թ.

ԱՄԷՆ ՈՔ ՊԷՏՔ Է ԻՄԱՆԱՅ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Կան բազում մարդիկ, որոնք գտնում են, որ գոյութիւն ունի առաւել կազմակերպուած մի գերակայ ուժ, որն ուղղորդում է Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքական ուղղութիւններն ու նպատակները, ինչպէս նաեւ Հանրապետական ու Դեմոկրատական կուսակցութիւններին՝ երկիրը կառավարելու նպատակով: Այս գրքոյկը նպատակ ունի մատնանշել այդպիսի կազմակերպութիւններից մէկը: Դա մօտաւորապէս 3 հազար անդամ ունեցող «Արտաքին յարաբերութիւնների խորհուրդ» յորջորջուող կազմակերպութիւնն է: Դա առաւել քիչ յայտնի կազմակերպութիւններից մէկն է, ինչը պայմանաւորուած է ամերիկեան ժողովրդի քիչ տեղեկացուածութեամբ:

Այն կազմակերպուել է 1921թ. յուլիսի 29-ին մի խումբ «Մտաւորականների» կողմից, որոնք գտնում էին, որ կարիք կայ ստեղծելու ազգային դիմագծից զուրկ համաշխարհային մի կառավարութիւն, չնայած որ Ամերիկայի ժողովուրդը պատրաստ չէր դրան:

Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը ամերիկացիները հետեւում էին իրենց նախագահ Ջորջ Վաշինգթոնի՝ 1796թ. սեպտեմբերին ժողովրդին ուղղած հրաժեշտի խօսքում արտայայտած խելամիտ խորհրդին: Նա ասել է. «Մեր ճիշտ քաղաքականութիւնն այն է, որ մենք զերծ մնանք արտաքին աշխարհի ցանկացած հատուածի հետ մշտական դաշինքներից: Յանուն ինչի մենք պէտք է մեր նպատակները միահիւսենք Եւրոպայի այս կամ այն հատուածի հետ, մեր խաղաղութիւնն ու բարեկեցութիւնը խառնենք Եւրոպայի պատուախնդրութեան, մրցակցութեան, շահերի, ցանկութիւնների եւ քմահաճոյքների թակարդին»: Վաշինգթօնը գիտակցում էր, որ այլ պետութիւնների ներքին գործերին միջամտելով միաժամանակ թշնամիներ ու ատելութիւն կը ստեղծի Ամերիկայի հանդէպ:

Վուդրոյ Վիլսոնի կառավարութեան անդամներից շատերը, այդ թւում պետական քարտուղար Վիլեամ Ջեննինգս Բրայնը, ուղղակիօրէն մերժելով Վաշինգթօնի պատգամը, նպաստեցին ԱՄՆ-ի

մասնակցութեանը 1-ին համաշխարհային պատերազմին՝ այլ երկրների ներքին գործերին միջամտելու նպատակով: Առաջին համաշխարհային պատերազմը նպաստաւոր հնարաւորութիւն տուեց նորաստեղծ Արտաքին Յարաբերութիւնների Խորհրդին բարձրացնելու համաշխարհային կառավարութիւն ստեղծելու հարցը, որպէս աշխարհի խնդիրների լուծման լաւագոյն եղանակ: Միեւնոյն ժամանակ ԱՀԽ-ի քոյր կազմակերպութիւնն ստեղծուեց Մեծ Բրիտանիայում, որն անուանուեց «Արտաքին յարաբերութիւնների թագաւորական ինստիտուտ»:

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

1925թ.-ին Չեանգ Կայ-Շէկը ստեղծեց առաջին Չինական սահմանադրական հանրապետութիւնը: 1937թ. օգոստոսին Ճապոնացիները ներխուժեցին Չինաստան: Այդ նոյն ժամանակ Չինաստանի կոմունիստները կազմակերպւում էին Չեանգի դէմ: Յուսահատուած Չեանգը օգնութեան դիմեց ԱՄՆ-ին՝ իր ազգային դրամը կայունացնելու համար նրանից 250 միլիոն դոլար փոխառնելով: Այն մարդը, որին վստահուած էր ամերիկեան կոնգրէսի կողմից հաստատուած դրամական օգնութիւնը տեղ հասցնել, խախտեց օրէնքը՝ չտեղափոխելով գումարը: Այդ մարդը պետական գանձատան քարտուղարի տեղակալ Հարրի Դեքստեր Ուայթն էր, որը միաժամանակ նաեւ խորհրդային գործակալ էր ու Արտաքին յարաբերութիւնների խորհրդի (այսուհետեւ՝ ԱՀԽ) անդամ: 1946թ. գեներալ Ջորջ Մարշալը (ԱՀԽ) յայտարարեց. «Իբրեւ շտաբի ղեկավար ես զինել եմ հակակոմունիստական 39 դիվիզիաներ. այժմ գրչի մէկ հարուածով ես նրանց կը զինաթափեմ»: Արդիւնքը եղաւ կոմունիստներ Չուի եւ Մաոյի կողմից մօտ 64 միլիոն չինացիների մահը՝ ըստ դատական յանձնաժողովի:

ԱՀԽ-ի անդամ պէտքարտուղար Դէն Էյքսոնը (1945-1953) դաւաճանեց հակակոմունիստ Չեանգ Կաի-Շէկ-ին՝ յօգուտ չինական կոմունիստների:

ԱՀԽ-ի անդամ Դէն Ռասքը (1961–1963) կազմակերպեց Հիւսիսային Կորէայի պատերազմը (որը այդպէս էլ յաղթող չունեցաւ) եւ գեներալ Մաք Արթուրի հեռացումը, քանի որ վերջինս Հյ. Կորէայի եւ Չինաստանի կոմունիստներին արդէն յաղթելու եզրին էր:

ԱՀԽ-ի անդամներ Ջոն Ֆոսթեր Դալլզը եւ Ալեն Դալլզը, ԱՀԽ-ի մէկ այլ անդամ, Դուայթ Էյզենհաուերի կառավարութիւնում զբաղեցնելով բարձր պաշտօններ, 1956թ.-ին դաւաճանեցին Հունգարիայի ազատութեան մարտիկներին եւ գիտակցաբար աջակցեցին կոմունիստ Ֆիդել Կաստրոյին 1958-1959թթ. իշխանութեան գալու Կուբայում:

ԱՀԽ- անդամներ էին նաեւ նախագահներ Նիքսոնը, Ջերալդ Ֆորդը, Դէն Ռասքը, Ռոբերտ Մաք Նամարան, Հենրի Քեբոթ Լոդջը եւ Հենրի Քիսինջերը, որը կազմակերպեց Վիետնամի անօգուտ պատերազմը, ինչին զոհ գնացին մօտ 55.000 ամերիկացի զինուորներ:

ԱՀԽ-ի անդամներ նախագահ Ջիմի Քարթերը, Հենրի Քիսինջերը եւ Սօլ Լինովիչը 1978թ.-ին ձեռնարկեցին Պանամայի ռազմավարական նշանակութիւն ունեցող ջրանցքի, ինչպէս նաեւ անհատոյց 400 միլիոն դոլարի յանձնումը Պանամայի Մարքսիստական դիկտատուրային:

ԱՀԽ-ի անդամներ ազգային անվտանգութեան խորհրդական Զբիգնիեւ Բրժեզինսկին, պետական փոխքարտուղար Ուորրեն Քրիստոֆերը եւ Հենրի Քիսինջերը տապալեցին Ամերիկամէտ Անաստոսիոյ Սոմոզային Նիկարագուայում եւ Շահին՝ Պարսկաստանում, որոնց փոխարինեցին կոմունիստամէտ ղեկավարութիւնը Նիկարագուայում եւ կրօնական ֆանատիկների կառավարութիւնը Իրանում, որոնք ատելութիւն են տածում Ամերիկայի նկատմամբ:

Արտաքին յարաբերութիւնների խորհրդի անդամ Ջորջ Բուշը եւ իր կառավարութիւնը աներկբայօրէն մասնակցել են Հարաւային Աֆրիկայում պատմականօրէն ձեւաւորուած համակարգուած ու տնտեսապէս առաջատար հասարակութեան անկման գործընթացին՝ իշխանութեան բերելու համար ճանաչուած մարքսիստ եւ յիշեալ հասարակութեան դէմ աւերիչ բռնութիւններ կիրառելու համար դատուած մի անհատի: ԱՀԽ-ի անդամներ գեներալ Քոլին Փաուելը, Բրենթ Սքոուքրոֆը, Լուրենս Իգլբուրգերը եւ ԱՀԽ-ին հակուած տեղեկատուական մամուլը նոյնիսկ այժմ գովաբանում են Հարաւային Աֆրիկայում քաոսի պատճառ հանդիսացող մարքսիստ եպիսկոպոս Տուտուին:

Նախագահ Բուշը, արհամարհելով ԱՄՆ կոնգրէսը, դիմեց ՄԱԿ-ին՝ Իրաքի դէմ պատերազմ սկսելու թոյլատուութեան համար՝

Ամերիկայի սահմանների փոխարէն պաշտպանելու Քուէյթի սահմանները: Պատերազմը արդարացնելու համար ամերիկեան Զլմ-ները հիստերիկ աղմուկ բարձրացրեցին Սադամի թափած արեան կապակցութեամբ, որի մասին նախկինում չէին էլ լսել: Իսկ Բուշը բացեիբաց յայտարարեց, որ իր նպատակը «համաշխարհային նոր կարգեր» ստեղծելն է:

1972թ. մայիսի 18-ին Նիքսոնի կառավարութիւնում կառավարման եւ բիւջէի ներկայացուցիչ Ռոյ Մ. Նեշը յայտարարեց համաշխարհային կառավարութեան կայացման ժամկէտի իր կանխատեսումները, ըստ որոնց. «մօտ երկու տասնամեակից(ըստ երեւոյթին մօտաւորապէս 1992թ.) համաշխարհային տնտեսական համայնքի կառուցուածքային հիմքը կայացած կը լինի»: Ռոյ Մ. Նեշի կանխատեսումները իրականացան: «Համաշխարհային նոր կարգերի» կողմից Ամերիկայի կապիտուլացիայի ակներեւ օրինակ կարելի է դիտարկել ՄԱԿ-ի թոյլատրած պատերազմները, որոնցում օգտագործւում են ԱՄՆ զինուած ուժերն ու ֆինանսները: Ամերիկայի սահմանադրութեան, Կոնգրէսի եւ ժողովրդի փոխարէն ՄԱԿ-ի թոյլտուութիւնն է որոշում պատերազմ սկսելը:

Բարդագոյն խնդիր է աշխարհի ժողովուրդներին համոզել հրաժարուել իրենց ինքնիշխան պետութիւններից եւ միանալ համաշխարհային կառավարութեան գաղափարի շուրջ: Այնուամենայնիւ դրա ծրագրողները այն համարում են իրականանալի: Այդ խնդիրը կանխատեսողներից մէկը տուել է նաեւ դրա լուծումը: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան նախագահ դր. Բրոք Քիսօլմը այդ առիթով յայտարարել է.«Որպէսզի իրականացուի Համաշխարհային կառավարութեան գաղափարը, անհրաժեշտ է մարդկանց մտքերից հանել անհատականութիւնը, ընտանեկան աւանդոյթներին հաւատարիմ մնալը, հայրենասիրութիւնը եւ կրօնական դոգմատիզմը. այն բարոյական հիմքերը, որոնց շնորհիւ Ամերիկայի հանրապետութիւնը իր գոյութեան առաջին 150 տարում այդպիսի յաջողութիւնների հասաւ»:

Ռոքֆելլերների հիմնադրամի նախագահ Ջոն Նոուլսը իր ամենամեայ զեկոյցում յայտարարեց. «Քանի որ առաւել բարեկեցիկ ազգերը վարժուել են խնայողաբար օգտագործել իրենց կարողութիւնը, ապա նրանցից կարելի է վերցնել աւելորդ հարստու-

թիւնը եւ տալ աւելի կարիքաւոր երկրներին»: Հէնց այդ հարստութեան բաժանման մեթոդն էլ կոչուեց «Նոր համաշխարհային տնտեսական կարգեր» (այս տերմինը առաջին անգամ կիրառել է ԱՀԽ-ի անդամ, սենատոր Չարլզ Փերսին):

ՍՈՂՈՍԿՈՂ ԲՌՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ամերիկացիները միշտ կարծել են, թէ իրենց երկրում հնարաւոր չէ բռնապետութիւն հաստատել, քանի որ ամերիկեան սահմանադրութիւնը ունի վերահսկողութեան ու հաւասարակշռութեան հիանալի համակարգ: Կառավարութեան երեք ճիւղերից իւրաքանչիւրը իրաւունք ունի վերահսկելու մնացած երկուսի գործունէութիւնը: Սահմանադրութեան մէջ այս դրոյթը պատահականօրէն չի ներառուել: Դաշնային թղթերում Ջեյմս Մեդիսոնը գրում է. «Օրէնսդիր, գործադիր եւ դատական ամբողջ իշխանութեան կենտրոնացումը նոյն ձեռքում՝ լինի դա մէկ անհատ, մի քանի հոգի թէ բազում մարդիկ, կամ լինի դա ժառանգական, ինքնանշանակ թէ ընտրովի, միանշանակօրէն կը յանգեցնի բռնապետութեան»: Սակայն Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը իր անդամների միջոցով կենտրոնացնում է հէնց այնպիսի բռնապետական ուժ, ինչից որ վախենում էր Մեդիսոնը:

ՎԵՐԱՀՍԿՈՒՈՂ ՁԼՄ-ՆԵՐ

Որն է պատճառը, որ ամերիկացիները այդքան նուազ տեղեկութիւններ ունեն ԱՀԽ-ի նման հսկայական գործունէութեան ոլորտ ունեցող կազմակերպութեան մասին: Ինչպէս է հնարաւոր, որ ամերիկեան համակարգը ոչնչացնել ձգտող եւ Ամերիկան դէպի մարքսիստական մղձաւանջ առաջնորդող կազմակերպութիւնը ձեռք բերի այդպիսի մեծ վերահսկողական ազդեցութիւնը՝ առանց ժողովրդի իմացութեան: Եւ ինչու՞ կարծեցեալ «խիզախ» լրատուամիջոցները չեն լուսաբանել այս խնդիրը:

Պատասխանը հետեւեալն է. ուղեղ լուացող Ձլմ-ները միայն հազուադէպ են հաղորդում որեւէ նիւթ՝ կապուած ԱՀԽ-ի հետ, որովհետեւ լրատուամիջոցների հարիւրաւոր լրագրողների անուններ գտնւում են ԱՀԽ-ի անդամների ցուցակներում:

Ներկայացնում ենք այդ ցուցակներից յայտնիներին:

Տպագիր մամուլ:

Վաշինգթոն Փոստ

Քեթրին Գրահամ-սեփականատէր
Ռիչարդ Սմիթ-փոխտնօրէն
Ռոբերտ Քեյզեր-գլխաւոր խմբագիր

Նիւ Եորք Թայմզ

Ռիչարդ Գելբ- վարչութեան անդամ
Ջոսեֆ Լելիւելդ-գործադիր խմբագիր
Ջէք Ռոզենթալ- օժանդակ խմբագիր

Նիւ Եորք Փոստ, Բոսթոն Գլոբ, Լոս Անջելես Թայմզ, Իւ էս Նիւզ եւ Ուորդ Ռեփորթ, Թայմ, Նիւզուիք, Ամերիքան Սփեքթաթոր, Դոու Ջոնս եւ Ուոլթ Սթրիթ Ջուրնալ:

Հեռուստատեսութիւն

CBS, NBC, ABC, CNN, Թայմ Ուորներ, Հանրային հեռարձակման ընկերակցութիւն, Ուոլթ Դիսնեյ ընկ.:

Հեռուստատեսային հաղորդավարներ

Թոմ Բրոքոու, Դայեան Սոյեր, Բարբարայ Ուոլթերս, Ջեյմս Լեհրեր, Ուիլեամ Բաքլի կրտսեր, Մորթոն Քոնդրեյք, Ջերալդին Ֆերրարոյ, Ջեսս Ջեքսոն, Բեռնարդ Քալբ, Բիլլ Շնայդեր, Ֆրենք Սեսնոյ, Դէն Ռաթեր, Թօնի Սնոու, Դեյուիդ Բրինքլի:

Կառավարութիւն

գործադիր

Բիլլ Քլինթոն, Մադլեն Օլբրայթ, Սթրոբ Թելբոթ, Ռոբերթ Ռուբին, գեներալ Բարրի Մաք Քէֆրի, Դոննայ Շալաթայ, Բրիւս Բեբբիթ, Բորիս Մայսներ, Ալան Գրինսփան, Ալիս Ռիւլին:

Օրենսդիր (սենատ)

Քրիս Դոդդ, Բոբ Գրահամ, Ջոն Քերրի, Ջոյ Լիբերման, Դանիէլ Մոյնիհան, Չարլզ Ռոբ, Ջոն Ռոքֆելլեր, Ուիլեամ Ռոթ, Չարլզ Շումեր, Օլիմպիայ Սնոու, Բոբ Տորիչելլի, Չաք Հեգել:

Սպիտակ Տուն

Ռիչարդ Գեֆարդ, Հոուարդ Բերման, Բերնի Ֆրենք, Սեմ Գեջդենսոն, Ջիմ Լիչ, Սիւզան Մոլինարի, Չարլզ Ռենջել, Լուիս Սթոուքս:

Դատական իշխանութիւն (գերագոյն դատարան)

Սանդրայ Դեյ Օքոննոր, Ռութ Բադեր Գինսբուգ, Սթիւեն Գ. Բրեյեր:

Զինուած Ուժեր

Ուիլեամ Քոհեն – պաշտպանութեան քարտուղար
գեներալ Ուեսլի Քլարք
Փոլ Սթէին-ռազմաօդային ուժերի ակադեմիայ

Հանրային ոստիկանական կազմակերպութիւններ

Ջորջ Շուլց, Ալեքսանդր Հեյգ, Քոլին Փաուել, Դեյուիդ Գերգեն, Դիք Չեյնի, Իրուինգ Ռ. Լեւայն, Էնդրիւ Եանգ, Բիլ Քրիսթոլ, Ջեյն Քիրքփաթրիք, Զբիգնիեւ Բրժեզինսկի:

ԳԱՂՏՆԻՈՒԹԻՒՆԸ

Արտաքին Յարաբերութիւնների խորհուրդը այսօր ամերիկեան ժողովրդի համար առեղծուած ու չբացայայտուած գաղտնի ուժ է մնում նաեւ այն պատճառով, որ այդ կազմակերպութեան կանոնադրութեան մէջ (կանոնադրութեան երկրորդ յօդուածը) ամրագրուած է գաղտնիութեան սկզբունքը: Այդ սկզբունքի համաձայն Արտաքին յարաբերութիւնների խորհրդի իւրաքանչիւր

անդամ պարտաւոր է գաղտնի պահել կազմակերպութեան ժողովներին վերաբերուող տուեալները: Իւրաքանչիւր ոք, ով կը խախտի նշուած պայմանը, ենթակայ է անյապաղ վտարումի:

Արտաքին յարաբերութիւնների խորհրդի պաշտօնական տպագիր օրգանը համարւում է «Արտաքին Գործեր» անուանումով պարբերականը: Այն չի տպագրւում համամերիկեան սպառման համար, այլ կազմակերպութեան կիսագաղտնի անդամների, ինչպէս նաեւ ակադեմիական ու գիտական շրջանակների համար: Այդ փաստը այնուամենայնիւ հնարաւոր է դարձնում նշուած պարբերականի հետ ծանօթանալը

ԳԱՂՏՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Կազմակերպութեան ղեկավարութիւնը պարբերաբար յայտարարում է, թէ այն չի մասնակցում մեր երկրի (Ամերիկայի) արտաքին քաղաքականութեան ուղղորդման գործընթացին: Սակայն դեռ այն ժամանակ, երբ քննարկւում էին Ամերիկայի Միացեալ Նահանգների արտաքին քաղաքականութեան փոփոխման միտումները, Արտաքին յարաբերութիւնների խորհրդի խօսնակ Փիթեր Գ. Պետերսոնը կազմակերպութեան 1989թ.-ի ամենամեայ զեկոյցում յայտարարեց. «Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը պէտք է մասնակցութիւն ունենա Ամերիկայի Միացեալ Նահանգների նոր արտաքին քաղաքականութեան օրակարգային ուղեգիծը որոշելու գործընթացին»:

Հարց է ծագում, եթէ Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը իրօք արտաքին քաղաքականութիւնը համակարգելու լծակներ չունի , ինչպէս է պատրաստւում մասնակցել դրա ուղեգիծը որոշելու գործընթացին: Պատասխան՝ դա հնարաւոր չէ: Արտաքին յարաբերութիւնների խորհրդի կողմից ցանկացած պնդում այն կապակցութեամբ, թէ իրենց կազմակերպութիւնը ընդամենը բաց խորհուրդ է ցանկացած գաղափարի քննարկման համար, պարզապէս ցնդաբանութիւն է: Վաշինգթոն Փոսթի թղթակից Ռիչարդ Հարուուդը իր մի յօդուածում թուարկել է մի շարք ԱՀԽ-ի անդամ լրագրողների, որոնք իր ձեւակերպմամբ «ոչ թէ միայն մեկնաբանում ու վերլուծում են արտաքին քաղաքականութիւնը, այլեւ ուղղակի կերպով օժանդակում են դրա իրականացմանը»:

Արտաքին յարաբերութիւնների խորհրդի գործունէութեանը իրենց մասնակցութիւնն են բերում նախագահի աշխատակազմի աշխատակիցներ, կոնգրէսականներ, բարձրաստիճան զինուորականներ եւ կառավարութեան այլ անդամներ: Մի ինչ-որ մասնաւոր կազմակերպութեան շահերի պաշտպանութեան համար տեղի ունեցող այդպիսի գաղտնի հաւաքոյթները, այն էլ այնպիսի մի կազմակերպութեան, որի հիմնադիրը Վուդրոյ Վիլսոնի գլխաւոր խորհրդական Եդուարդ Մանդելլն էր (որի երազանքը «Կարլ Մարքսի փափագած սոցիալիզմի կառուցումն» էր) լիովին հակամէտ է ազատ երկրի քաղաքացիներին վայել վարքագծին:

Արտաքին յարաբերութիւնների խորհրդի իւրաքանչիւր անդամի հրահանգուած է ձերբազատուած լինել ցանկացած որոշակի հայեացքներ կրելուց: Փոխարէնը կառավարութեան անդամները եւ հանրայայտ լրագրողները կուտակում են անհրաժեշտ հեղինակութիւն՝ պէտք եղած պահին իրենց հակառակ տեսակէտի նկատմամբ ժխտողականութեան ու արհամարհանքի զանազան մակարդակներ ցուցաբերելու համար: Փառամոլ քաղաքական գործիչները, լրագրողները, իշխանական կազմակերպութիւնները, մտաւորականները եւ այլք անպատասխանատու կերպով ստանձնում են իրենց համար պատրաստուած դիրքերը՝ յաճախ տեղեակ չլինելով նոյնիսկ, թէ ում կեցուածքն են կրկնօրինակում: Այս կերպով է, որ օրակարգը իրօք կայացել է, եւ քաղաքականութիւնները հաստատուել:

Հիմնական գաղափարների աննշան կերպով փոփոխուած տարբերակները որպէս կանոն ողջունւում ու խրախուսւում են, սակայն գոյութիւն ունեն որոշակի խստօրէն ամրագրուած սահմաններ, որոնցից դուրս եկող գաղափարների նկատմամբ սկսւում է արհամարհանքի ու ծաղրի աննախադէպ արշաւ: Օրինակ, ԱՄՆ-ի կողմից ՄԱԿ-ին կամ այլ միջազգային օժանդակող կազմակերպութիւններին տրուող օգնութեան չափերի նուազեցման կամ աւելացման վերաբերեալ քննարկումներն ու բանավէճերը հանդուրժւում եւ նոյնիսկ խրախուսւում են: Սակայն եթէ որեւէ մէկը փորձի հարց բարձրացնել աշխարհի «մարմնից» Ամերիկային ետ քաշելու, կամ այլ երկրներին տրուող նիւթական օգնութիւնները դադարեցնելու մասին, ապա նա ժողովրդի ամենահեղինա-

կաւոր անձանց առաջ լրջօրէն կը վտանգի իր վարկանիշը: Դրանք այն անձինք են, որոնք զբաղւում են ուժի, իշխանութեան աճուրդով, կամ աւելի ճիշտ կը լինի ասել՝ «բրոկերութեամբ»: Ժողովրդի աչքում այս կամ այն անհատին բարձրացնելը կամ վարկաբեկելը հիմնականում այդպիսի մարդկանց ձեռքին է:

Այն մարդիկ, ովքեր կարդում են Արտաքին յարաբերութիւնների խորհրդի կողմից հրատարակուած պարբերականները կամ տեղեկանում նրա կողմից վերահսկուող ինֆորմացիոն միջոցների առաջնային հաղորդումներին, հաստատապէս տեղեակ են, թէ որոնք են ԱՀԽ-ի կողմից առաւել ընդունուած դիրքորոշումները: Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը եւ դրա կարգի այլ կազմակերպութիւններ ըստ ամենայնի առաջ են քաշում եւ պաշտպանում են հետեւեալ պետական-քաղաքական կեցուածքները. կնքել առաւելագոյն քանակութեամբ դաշնագրեր, պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնք կը վարկաբեկեն ԱՄՆ-ի ինքնիշխանութիւնը, շարունակել ՄԱԿ-ի անընդհատ գովաբանութիւնը եւ խորացնել վստահութիւնը նրա նկատմամբ, աստիճանաբար ՄԱԿ-ի վերահսկողութեան տակ տեղափոխել ԱՄՆ-ի զինուած ուժերը, արդիականացնել ԱՄՆ-ի կողմից տրուող միջազգային օգնութիւնները եւ ծրագրել նորերը, ասպարէզից հեռացնել եւ մեկուսացնել իւրաքանչիւր ազգային մտածելակերպով քաղաքական գործչի, որը հակուած չէ սոցիալիզմի եւ «Համաշխարհային նոր կարգեր» հասկացութեան ներքոյ համաշխարհային կառավարութեան մէջ մտնելու գաղափարին, հնազանդուել էկոլոգիական ծայրահեղականութեանը, մարդու իրաւունքների առաջամարտիկներին ու բնակչութեան պլանաւորման գործակալութիւններին, որոնց առաջ քաշած գաղափարները երբեք չեն բաւարարուի, քանի դեռ ԱՄՆ-ն չի վերականգնել իր ազատութիւնն ու անկախութիւնը:

Այս քաղաքական կուրսին հետեւող մարդիկ աներկբայօրէն օժանդակում են Կարլ Մարքսի եւ Արտաքին յարաբերութիւնների խորհրդի հիմնադիրների հետապնդած նպատակների իրագործմանը: Բայց ներկայ քաղաքական դաշտում առկայ այն գործիչները, ովքեր ընդդիմանում են յիշեալ քաղաքական ուղեգծին, հիմնականում ինքնակոչ անձինք են, որոնց նպատակը միայն վե-

ընտրուելն ու կարիերայում առաջխաղացումն է: Նրանք շատ էլ մտահոգուած չեն Սահմանադրութիւնով կամ ժողովրդի ապագայով ու ընդհանրապէս ազատութեամբ:

Ամերիկայի Միացեալ Նահանգները արտաքին յարաբերութիւնների խորհրդի հիմնադրումից առաջ դիտարկւում էր որպէս «բարի» երկիր: Ամերիկայի կողմից այլ երկրների ներքին գործերին միջամտելը նրան ոչինչ չտուեց, բացի իր հանդէպ աշխարհի օրէցօր աճող ատելութիւնը:

1919թ. իր սկզբնաւորման օրից Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը անընկատելիօրէն իրականացնում է Ամերիկայի վերափոխումը դէպի մի հսկայական գործիքի՝ նրա ինքնիշխանութիւնը ծառայեցնելով համաշխարհային կառավարութեան գաղափարի իրականացման օգտին:

Փաստօրէն Երկրորդ համաշխարհային պատերազմից սկսած Ամերիկայի Միացեալ Նահանգներում տեղի ունեցող նախագահական ընտրարշաւներում ընդգրկուած նախագահները, նրանց տեղակալներն ու աշխատակազմի մեծ մասը Արտաքին յարաբերութիւնների խորհրդի անդամներ են լինում: Դա վերաբերւում է նաեւ 2000թ.-ի նախագահական ընտրութիւններին:

Ըստ էութեան Արտաքին յարաբերութիւնների խորհուրդը ճիշտ կրկնօրինակն է 1900-ական թուականների սկզբներին ի յայտ եկած մարքսիստական գաղափարները պրոպագանդող շարժումների, որոնք աշխարհի բարեփոխման լաւագոյն ծրագրային տարբերակ էին համարում մարքսիզմը: Նրանք նուազ քանակութեամբ էին, սակայն շնորհիւ լաւ ծրագրուած խաբէութեան ու համակարգուածութեան, 1917 թ. շատերին համոզեցին տապալել ցարական կարգերը Ռուսաստանում: Այդ ուժերը յեղափոխութեան ընթացքում սպանեցին ոչ միայն ցարին ու նրա ընտանիքը, այլ նաեւ միլիոնաւոր անմեղ մարդկանց, որոնք իրենց հայեացքներով հակադրւում էին մարքսիստական գաղափարախօսութեանը: «Յեղափոխականները» առաջ քաշեցին աշխարհում մինչ այդ չլսուած մի տնտեսական համակարգ՝ սոցիալիզմ, որը ի վերջոյ տապալուեց շռնդալից կերպով՝ իր հետեւից թողնելով միլիոնաւոր թշուառ, տառապեալ ու յուսահատ բազմութիւններ, որոնք դաստիարակուել էին հէնց այդ սիստեմի կողմից շահարկուող

հաւասարութեան ու արդարութեան սկզբունքներով:

Այլ խօսքերով մարքսիզմի առաջամարտիկները կարծեցեալ չարիքը փոխարինեցին իրենց սեփական չարիքով:

Գոյութիւն ունեն նաեւ այլ համանման կազմակերպութիւններ, որոնք նպատակաուղղուած են «Համաշխարհային կառավարութեան» գաղափարի իրականացմանը: Դրանցից են «Եռակողմ յանձնաժողով» անուանեալ կազմակերպութիւնը, որը հիմնադրուել է 1972թ. յուլիսի 23-ին Դեյուիդ Ռոքֆելլերի կողմից եւ «Բիլդերբերգներ» կազմակերպութիւնը, որը հիմնադրել է 1954թ.-ին Հոլանդիայի արքայազն Բերնեարդը:

Այս յօդուածի նպատակն է ամերիկեան ժողովրդի առաջ ներկայացնել Արտաքին յարաբերութիւնների խորհրդի գործունէութիւնը, որպէսզի հնարաւոր լինի կանխել Ամերիկայի Միացեալ Նահանգների հանրապետութեան ինքնիշխանութեան կորուստը, հանրապետութեան, որի հիմնադիր հայրերը այնքան խնամքով ու իմաստութեամբ են դրել նրա հիմքերը:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
Հոկտեմբեր, 2002թ.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցների համաշխարհային խորհուրդը ի սկզբանէ կոչուած է բարձրացնելու եկեղեցու առաքելութիւնը սոցիալական խնդիրների լուծման հարցերում: Բազմաթիւ եւ կրօնական բարձր պաշտօնեաներ եւ առաջնորդներ սկսեցին ժխտել եկեղեցու աւանդական առաքելութիւնն ու դերը: Նրանցից շատերը սկսեցին միանալ տարբեր շարժումների, զբաղուեցին քաղաքացիական անհնազանդութեան եւ սոցիալական ծայրահեղականութիւնով, մարդկանց աւետարանը քարոզելու փոխարէն: Սոցիալական հաւատամքը ունէր շատ արտայայտումներ եւ ներկայացուցիչներ: Նրանցից առաւել երեւելի էր ԱՄՆ Օհայոյ նահանգում ձեւաւորուած «կիրառական քրիստոնէութեան» շարժումը: Սոցիալական հաւատամքի կարկառուն ներկայացուցիչներից է Ուոլտեր Ռոշենբուշը՝ Ռոչեստրի համալսարանի դիւանագէտ-մասնագէտ, որը հիմնադրեց «Ռոչեստրեան Թէօլոգիական սեմինարիան»: Այստեղ հրատարակուած 1907թ.-ի «Քրիստոնէութիւնը եւ սոցիալական ճգնաժամը» աշխատութիւնը Ռոշենբուշին բերեցին լայն հասարակական ճանաչողութիւն: Ուոլտեր Ռոշենբուշը եւ դոկտ. Հարրի Վարդը 1908թ.-ի դեկտեմբերի 2-ին ձեւաւորեցին Ամերիկայում Քրիստոսի դաշնային խորհուրդը: Նրանք դարձան եկեղեցիներում սոցիալական շարժման առաջնորդները, որի հիմնական նպատակ յայտարարուեց վերացնել քրիստոնէական անհատականութիւնը եւ շրջադարձ կատարել դէպի ուղիղ կոլեկտիվիզմ՝ որպէս միջոց օգտագործելով եկեղեցին: Տուեալ դէպքում սոցիալիզմը նրանց համար առաջնային նպատակ էր եւ նախկինում գործող միւս բոլոր սուտ մարգարէների նման, նրանք էլ օգտագործեցին յայտնի խայծը կամ սուտ իդէալը. դա այսպէս կոչուած «Աստծոյ թագաւորութիւնն» էր: Թագաւորութիւնը չէր ենթադրում հոգեւոր հանրոյթ, որտեղ մարդիկ ծնւում են որպէս անհատներ՝ որպէս Փրկիչ Յիսուս Քրիստոսի հետ իրենց անձնական յարաբերութիւններով: Նոր ստեղծուելիք հասարակարգը պէտք է հիմնուած լինէր կոլեկտիվիզմի սկզբունքների վրայ, որը հասանելի կը լինէր աղքատութեան վերացման, հարստութեան վերաբաժանման, արտադրական անարդարութեան վերացման եւ «տնտեսական արդարադատութեան» սկզբունքների ապահովումով: Եկեղեցիների դաշնային խորհրդի բարձր պաշտօնեայ Ջոն Ֆոստեր Դալզը, որը նաեւ նախագահ Այզէնհաուերի օրօք պետքարտուղար էր, Հարրի Դեկստեր Ուայթի եւ այլոց հետ աշխատում էր ԱՄՆ-ի պետական դէպարտամենտում: Այստեղ է Դալզը իր համախոհների հետ ծրագրաւորել Միացեալ ազգերի կազմակերպութեան գաղափարը, որով աշխարհում պէտք է հաստատուէր նոր համաշխարհային կարգը, ուր բացառւում էր Աստուած: Ամերիկայի քրիստոնեաները սկսեցին նկատել Եկեղեցիների դաշնային խորհրդի վրայ հակաքրիստոնէական ուժերի մեծ ազդեցութիւնը: Տեսնելով այդ, Եւրոպայի Ռոթցիիլդ դրամատունը իր ամերիկեան եղբայր մոնոպոլ դրամատների հետ միասին 1922 թուականին սկսեցին պաշտպանել Ամերիկայի գլխաւոր աստուածաբանական համալսարաններում աշխարհիկ հումանիզմի եւ ազատական աստուածաբանութեան ուսուցման ծրագրերը, որպէսզի հիմք պատրաստեն Եկեղեցիների «Դաշնային» խորհրդի փոխակերպմանը «Ազգայինի»:

Եւ ահա 1950 թուականի նոյեմբերի 29-ին Եկեղեցիների դաշնային խորհուրդը ի վերջոյ վերանուանուեց Եկեղեցիների ազգային խորհրդի: 1952 թ. սեպտեմբերի 30-ին մեծ շուքով լոյս տեսաւ ամերիկեան հասարակութեանը ներկայացուեց Աւետարանի ստանդարտ վերանայուած տարբերակը, ԱՄՆ-ի Քրիստոսի ազգային խորհրդի (դաշնային խորհրդի իրաւայաջորդը) հեղինակային իրաւունքով: Այս հրատարակման մէջ առկայ էին յատկապէս քրիստոնէական ուսմունքին վերաբերող բազմաթիւ էական բացթողումներ:

Ժնեւահիմն Եկեղեցիների համաշխարհային Խորհուրդը (ԵՀԽ) ներառում է 263 բողոքական եւ արեւելեան ուղղափառ եկեղեցիներ՝ 101 երկրներից: ԵՀԽ անդամ եկեղեցիների հաւատացեալներից շատերը մեծ տարակուսանքով էին մօտենում այն փաստին, որ այս խորհրդում փաստօրէն իրենց ուշադրութիւնը շեղւում է իրական հաւատքի հարցերից, եւ ուղղակիօրէն անտեսւում են նրանց հոգեւոր խնդիրները եւ վերաբերմունքը: Եւ ահա ԵՀԽ-ի

սկզբունքների եւ նպատակների՝ նոյնիսկ հպանցիկ ուսումնասիրումը ապացուցում է վերոյիշեալ ենթադրութիւնների արդարացիութիւնը: Գլոբալիստ – միաշխարհական ուժերի նպատակն է եկեղեցու միջոցով քարոզելով սոցիալական հաւատամքը, հասնել հարստութեան վերաբաշխմանը համաշխարհային մակարդակով: Եւ այս նպատակին հասնելու համար քրիստոնէական համայնքների, ընտանիքների եւ այլ ամուր ներհասարակական բջիջների վրայ հիմնուելու փոխարէն, նրանք ուղղակի օժանդակութիւն են փնտրում հէնց պետութիւնից: Այսպիսի շարժումներից մէկը, որ ԵՀԽ-ը մեծ ջերմեռանդութեամբ օժանդակեց, տիեզերական շարժումն էր, որը փաստացի նշանակում է քրիստոնէական դաւանանքով բոլոր եկեղեցիների միաւորում մէկ համընդհանուր մարմնի մէջ: Դր. Իւջին Քարսոն Բլեյքը, ԵՀԽ-ի պաշտօնաթող գլխաւոր քարտուղարը Նիւ Եորքի Ռիւերսայդ եկեղեցում իր կոչը տարածեց, ուր մասնաւորապէս արտայայտւում էին նրա վերաբերմունքն ու մտքերը ժամանակակից ամերիկեան ապրելակերպի վրայ ԵՀԽ-ի ազդեցութեան ժամանակարգի եւ փուլերի վերաբերեալ: Դր. Բլեյքը նշում էր, որ. « Ամերիկեան քրիստոնեաները պէտք է հասկանան եւ ընկալեն էկումենիկ շարժման սկզբունքները, որպէս 20-րդ դարի վերջին քառորդում համամարդկային խնդիրների լուծման հնարաւորութիւն». իսկ թէ ինչու դա պէտք է այդպէս հասկացուի, կոչում չի բացատրւում: Այնինչ վերոյիշեալ «Համամարդկային խնդիրները» Քրիստոսի ուսմունքի հիմնաքարը չեն՝ աւելին որեւէ կապ չունեն այդ ուսմունքի հետ: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդունած սոցիալական հաւատամքը ենթադրում է, որ այս կազմակերպութիւնն ընդունել է սոցիալ-տնտեսական փիլիսոփայութիւնը, որպէս կենսակերպի իդէալ: ԵՀԽ-ը իր խոր անհանգստութիւնն է յայտնել կապիտալիստական երկրներում առկայ սոցիալական անհաւասարութեան եւ անարդարութեան վերաբերեալ: Դրանով հանդերձ կազմակերպութիւնը փոքր ինչ անհանդուրժողականութիւն չի ցուցաբերել ԽՍՀՄ-ում առկայ անհատական ազատութեան մասսայական խախտումների վերաբերեալ: Ցիծաղելի չէ՞ արդեօք, որ այսպիսի կապիտալիստները, ինչպիսիք են էլլի Լիլեյը, Ռոքֆելլերը եւ այլն, ակտիւ օժանդակութիւն են ցուցաբերում ԱՄՆ-ում ազատական աստուածաբանութեան ուսուցման աւելի քան 200 սեմինարիաներին: Հեգնական է այն փաստը, որ որոշ եկեղեցական սեմինարիաներ գործում են այնպիսի մարդկանց օժանդակութեամբ, որոնց նմաններին Քրիստոսը ժամանակին վռնդեց Աստծոյ տաճարից:

ԵՀԽ-ի կողմից յաճախ քննադատւում են պետական որոշ նախարարներ՝ պատճառաբանութեամբ, որ նրանք հնարաւորինս չեն օգտագործում իրենց իշխանութիւնը՝ պակասեցնելու սոցիալական դժգոհութիւնները պետութիւններում: Այնինչ Սովետական Միութեան մէջ ապրող հազարաւոր քաղաքացիներ, որոնք զրկուած էին իրենց աստուածութեան պաշտամունքի հնարաւորութիւնից, չեն զգացել ԵՀԽ-ի հզօր ճնշիչ ապարատի գէթ փոքր-ինչ օժանդակութիւնը: ԵՀԽ-ը սոցիալական արդարութիւն հաստատելու համար փորձում է միջնորդի դեր կատարել մարդկանց եւ Աստծոյ միջեւ, այնինչ այդ դերը պատկանում է միայն Յիսուս Քրիստոսին: Տարածելով այնպիսի արտայայտութիւններ, ինչպիսիք են՝ «սոցիալական համակարգեր», «ազատականութիւն», «պայքար յանուն սոցիալական արդարութեան» եւ այլն, նրանք փաստօրէն շեղում են մարդկութեանը իրական քրիստոնէական հաւատամքից, ուր սոցիալական կամ դրամական հաւասարութեան իդէալ գոյութիւն չունի: Փորձելով առաջ մղել դրամի իդէալը, որոշ ուժեր երկրորդական դեր են մղում Քրիստոսի՝ հոգու ազատութեան հաւատամքը:

Ահա աւելի քան 2 հարիւրամեակ շարունակւում է պայքարը ընդդէմ քրիստոնէութեան, որի վերջին արտայայտութիւնը իւրաքանչիւր տասներորդին մահապատժի ենթարկելն էր Սերբիայում, որը քրիստոնեայ ազգ է: Այստեղ անհրաժեշտ է ցուցաբերել զգոյշ հետաքրքրութիւն. ո՞վ էր այս պատերազմի հիմնական օժանդակողը: Արդեօ՞ք Ամերիկան օգտագործւում է չար ուժի կողմից իր նպատակներին հասնելու համար: Արդեօ՞ք այս երկիրը կորցրել է իր «Բարի» քրիստոնէական ժառանգութիւնը:

ԵՀԽ-ը ունի բազմաթիւ փաստաթղթեր, որոնք վերաբերում են Սովետական Միութիւնում հազարաւոր քրիստոնեաների հալածանքներին. եւ այս ամենը ուղղակի արհամարհուել է այստեղ: Փորձենք ուսումնասիրել սոցիալ-մարքսիզմի գաղափարախօսութիւնը, որն այնքան հարազատ է խորհրդի ղեկավարներին:

Խորհրդի արեւելա-հնդկական մասի գլխաւոր քարտուղար դր. Ֆիլիփ Փոթթերը Սովետմիութիւն իր վեց այցելութիւններից յետոյ յայտնել է, որ հիւրաքանչիւր այցելութիւնից յետոյ նա մեծ ներշնչուածութիւն է ստացել ԽՍՀՄ-ից:

Հայերը, որ դարեր շարունակ ինքնակառավարուել են իրենց ազատ-ինքնիշխան եկեղեցով՝ թէ որպէս ազգային ինքնակառավարման եւ թէ հոգեւոր պաշտպանութեան առումով, շատ են բախուել օտար զաւթիչների դէմ, բայց երբեք բախում չի եղել հակաքրիստոսի հետ: Ահա եկել է այդ ժամանակը, հետեւաբար որեւէ հայ երբեք չպէտք է բանակցի այսպիսի ուժերի հետ, քանզի ճշմարիտը՝ Քրիստոսը երբեք չպէտք է ընկալուի բանակցութիւնների միջոցով, այլ Նրան պէտք է հաւատալ ինչպէս երէկ, այսօր եւ յաւիտեանս յաւիտենից:

Հայ ժողովուրդը մշտապէս պաշտպանել է իր ազգային եկեղեցին, որը պահպանել է մեր ազգային ինքնութիւնը՝ սոցիալ-տնտեսական փիլիսոփայութեան եւ ազատական աստուածաբանութեան իդէալներ հետապնդող խորհուրդներում ներգրաւուելու փոխարէն ազգին ուսուցանելով հոգեւոր այնպիսի արժէքներ, որոնք գալիս են մեր Տէր Աստծուց: Կարեւոր չէ, թէ ինչ գիտական աստիճան ունեն մեր եկեղեցու առաջնորդները, կարեւորը նրանց՝ Աստծոյ խօսքին ճշտութեամբ հետեւելն է:

Հայ եկեղեցու՝ ԵՀԽ-ի հետ համագործակցութեան առաջին փորձը դեռ 20-րդ դարի կէսերից է գալիս: 1945թ.-ին Ջ. Ռոքֆելլերը, որպէս բարեկամ ԵՀԽ-ին է նուիրաբերում 1մլն. ԱՄՆ դոլլար, որից յետոյ խորհուրդը որոշում է Ժնեւում բացել միջազգային կրօնական ուսուցման կենտրոն, որը «Կ'օժանդակի բոլոր ազգերի եկեղեցիներին առաւել եռանդուն ջանքերով հասնելու պետութիւնների միջեւ իրականացուող քաղաքականութեան մէջ քրիստոնէական խղճմտանքի ձեւաւորման գործում»: Եւ այսպիսով կենտրոն հրաւիրուեցին ուսանողներ նաեւ Բէյրութում եւ Լիբանանում գործող հայկական հոգեւոր դպրոցներից, որով եւ սկսեցին համագործակցութեան առաջին քայլերը մեր եկեղեցու եւ ԵՀԽ-ի միջեւ:

Մեր եկեղեցին ընդհանուր եզրեր է փնտրում ԵՀԽ-ի հետ, իր արժէքային սկզբունքների՝ համաշխարհային ընդունելութեան

հասցնելու համար: Աւելի պատկերաւոր ասած՝ ենթադրենք դուք հիւր էք կանչել նախաճաշին եւ մատուցելու համար ունէք շատ թարմ ձուեր, այնինչ դուք մտածում էք, որ դրանցից շուկայում չկան, հետեւաբար անհրաժեշտ էք գտնում խառնել ձեր թարմ սնունդը շուկայի հին մթերքի հետ՝ գտնելով որ միայն այդպէս ձեր հիւրերը հասու կը դառնան ձեր սննդին: Հետեւաբար ոչ ոք չի կարող համագործակցել չարի հետ, առանց նրան որեւէ բան տալու: Այդպէս է եւ մեր եւ մեր եկեղեցու դէպքում: Ռուսաս Ոշտունին, Ամերիկայի յարգուած հայ քրիստոնեայ առաջնորդներից մէկը շատ ճիշտ նկատում է, թէ «Քրիստոնէութեան թշնամիների նախաձեռնութիւնն է՝ ստեղծել նոր համաշխարհային կարգ, առանց Քրիստոսի: Մարդը հաւատում է, որ ծրագրաւորելով եւ ղեկավարելով կարող է ստեղծել աւելի լաւ կարգ, Աստուածային Երրորդութիւնը: Ի հարկէ այն, ինչ նա ստեղծում է, տիեզերք չէ, այլ աւելի շուտ ընդարձակ ու չար անկարգութիւն»:

Հայերը պէտք է պահանջէն իր ազատ եւ անկախ կարգավիճակին Հայոց եկեղեցու վերադարձը: Դա կը կենտրոնացնի մեր ազգի հոգեւոր եւ կրօնական արժէքները, ինչպէս եղել է մեր պատմութեան ընթացքում, իսկ արդիւնքում հզօրանում է ազգը: Միայն սրանով աշխարհը կ'ընդունի հայ հոգու մեծութիւնը, հակառակ դէպքում մենք օգնում ենք քրիստոնէութեան թշնամիներին՝ թուլացնելով ինքներս մեզ:

Օգնեցէք Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ընթանալ եւ առաջնորդել հայ ազգը միայն իր պատմական ճիշտ ճանապարհով առ Աստուած:

Լիվոնիա, Միչիգան
8 սեպտեմբերի, 1999թ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԾԳՆԱԺԱՄԸ

Վերջերս Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու բազմաթիւ պարբերականներ հանդէս եկան յայտարարութիւններով, որոնցում մասնաւորապէս նշւում էր, որ Հայաստանեայց եկեղեցուն անդամակցելու համար պարտադիր չէ ազգային պատկանելիութիւնը:

Այս նախապայմանը, փաստօրէն, հրաւէրք է օտար բոլոր ազգերին եւ ռասսաներին՝ անդամակցելու Հայաստանեայց առաքելական եկեղեցուն: Այսպիսով տեսանելի եւ շօշափելի է դառնում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ մեր եկեղեցու առաջնորդների վերջին 50 տարիների սերտ յարաբերութիւնների հետեւանքը: Հայ հոգեւորականութիւնը այսօր կրում է որոշ կեղծ-քրիստոնէական աստուածաբանական հաստատութիւնների ազդեցութիւնը, որոնք քրիստոնէական հաւատքի մէջ ներարկելով սոցիալական հաւասարութեան գաղափարներ, փորձում են ոչնչացնել քրիստոնէութեան անհատականութեան արժէքը՝ այն փոխարինելով սոցիալ-կոլեկտիվիզմի միատարր սկզբունքների՝ այդ նպատակի համար որպէս գործիք օգտագործելով եկեղեցին:

Այսպիսով մի՞թէ Հայ Առաքելական եկեղեցին, ընդառաջ գնալով վերոնշեալ սոցիալական համընդհանրութեան գաղափարներին, ի վերջոյ չի կորցնելու իր ինքնութիւնը, որը հայոց մեծ Սփիւռքի գոյութեան ամենակարեւոր գրաւականներից է: Իսկ ինքնութեան կորստի դէպքում եկեղեցու գոյութիւնը ինչո՞վ պիտի արդարացուի:

Ինչպէս Մեծի տանն Կիլիկիոյ, այնպէս էլ ս. Էջմիածնի կաթողիկոսները բաւական եռանդուն մասնակցութիւն են ցուցաբերում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ծրագրերին: Նրանք չեն կարող կտրուկ քայլերի դիմել մեր եկեղեցու համընդհանրացման համար եւ դա անում են զգոյշ-աննշան ձեռնարկումներով՝ որպէսզի սփիւռքի եւ Հայաստանի հայերի մէջ տագնապ չը յարուցեն: Այսպիսով նշուած քայլերը անուղղակիօրէն տանում են եկեղեցու ապազգայնացմանը: Սա միայն կարագացնի քրիստոնեայ աշխարհի պատմականօրէն ամենաազատ, ինքնատիպ ու հին եկեղեցու վերացումը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայոց եկեղեցին, որ հիմնադրուել է մ.թ. 301թ., հաւատարիմ է եղել Աստծոյ ուսմունքին եւ նրա որդուն՝ Յիսուս Քրիստոսին: Դարեր ի վեր այն եղել է ազգի ոգեկոչման հիմնական աղբիւրը, գոյատեւել եւ վերապրել է բազմաթիւ փորձութիւններ, ականատես եղել թշնամի ժողովուրդների ասպատակութիւններին:

Մարդիկ այստեղ ըմբռնել են կեանքի իրական ճշմարտութիւնը երկրի վրայ եւ երկնային կեանքի յաւիտենականութիւնը՝ համաձայն Քրիստոսի ուսմունքի: Քրիստոնեայ աստուածաբանները բարձր են գնահատել Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնները՝ բնագրին հոգեհարազատ մնալու համար: Նախքան Հայ եկեղեցու եւ նրա հոգեւորականութեան վերաբերեալ դատողութիւններ կատարելը՝ անհրաժեշտ է անդրադառնալ մի շարք պատմական իրադարձութիւնների, որոնք առնչւում են այսօրուայ «Նոր քրիստոնէութիւն» հասկացութեան ձեւաւորմանը:

Աստծոյ ճշմարիտ համակարգի դէմ ամենայն հետեւողականութեամբ հանդէս է եկել 1748թ. փետրուարի 6-ին Բաւարիայի Ինգոլշտադտ քաղաքում ծնուած Ադամ Վեյսհաուպտը: Վերջինս համոզուած էր, որ մարդկային հասարակութիւնն անդառնալիօրէն կորստեան է գնում, եւ միակ փրկութիւնն արմատական վերակառուցումն է: Նա այն առաջին ուտոպիստներից էր, ովքեր ունէին աշխարհի ըմբռնման ընդգրկուն մտածողութիւն, եւ անհամբերութեամբ սպասում էր այն օրուան, երբ իր խումբը կեանքի կը կոչեր «Համաշխարհային նոր համակարգ» («Novus Ordo Seclorum»): Նրա կազմակերպութիւնը, որը կոչւում էր «Իլիւմինաթի» («Illuminati»), վեց հիմնական նպատակ ունէր՝

1. միապետութեան եւ օրինական վարչակարգերի վերացում,
2. մասնաւոր սեփականութեան եւ ժառանգութեան իրաւունքի վերացում,
3. հայրենասիրութեան եւ ազգայնականութեան վերացում,
4. ընտանիքի եւ ամուսնութեան վերացում,
5. հանրակրթական համակարգի կազմակերպում,
6. բոլոր կրօնների վերացում:

Մինչեւ 1750թ. Ռոթշիլդների բանկային հաստատութիւնը, ինչպէս նաեւ աշխարհի բազմաթիւ այլ բանկային կարտելներ, սկսել էին աշխարհի համալսարաններում ֆինանսաւորել չաստուածութեան մտածողութիւն՝ հակադրելով այն իսկական քրիստոնէական մտքի անաղարտութեանը: Խոշոր գումարներն օգտագործում էին՝ աշխարհով մէկ ստեղծելու թեմական դպրոցներ (սեմինարիաներ)՝ երիտասարդ սաներին ներարկելու սոցիալիստական աստուածաբանութեան գաղափարախօսութիւն, որը յետագայում անուանուեց «Սոցիալական աւետարան»:

Սքոֆիլդի «Աստուածաշունչը»:

Սայրես Սքոֆիլդը ծնուել էր 1843թ. Ամերիկայում, մահացել է 1921թ.: Նա վերլուծել է Ջեյմս թագաւորի Աստուածաշնչի բնօրինակը: Նրա ջանքերը նպատակաուղղուած էին պարտաւորութիւններից ազատուելու գաղափարների տարածմանը: Սքոֆիլդի Աստուածաշնչի (ինչպէս այն անուանուեց յետագայում) համար ֆինանսական օժանդակութիւն է յատկացրել վեց մտաւորականներից բաղկացած գաղտնի խումբը Բոստօնից (Մասաչուսէթս): Սքոֆիլդի Աստուածաշունչը տպագրել է Լոնդոնի Օքսֆորդի համալսարանի հրատարակչութիւնը 1909 թ.: Աստուածաշունչը խեղաթիւրելու նրա ջանքերը հիմք հանդիսացան «հրէա-քրիստոնէութիւն» արտայայտութեան հիմնաւորման եւ տարածման համար, թէեւ բուն Աստուածաշնչում «հրէա-քրիստոնէութիւնը» ոչ մի տեղ չի յիշատակւում: Աստուածաշունչը վերափոխելու Սքոֆիլդի փորձերը, յետագայ փոփոխութիւնների եւ շեղումների նպատակով, նրա մահից յետոյ բացայայտել են Քրիստոսին չհաւատացող անձինք:

Աւետարանը քննարկման առարկայ էր դարձել նաեւ հասարակամէտ հոգեւորականութեան շրջանակներում:

Նրա առաւել հանրայայտ ներկայացուցիչներից մէկը՝ Վաշինգթօն Գլադդենը (1836-1918), 36 տարի Կոլումբիայի (Օհայոյ) միաբանութեան հոգեւոր հովիւն էր, կիրառական քրիստոնէութեան» առաջնորդներից: «Սոցիալական Աւետարանի» ճանաչուած այլ «մարգարէներից» էր «Ռոչեսթր» համալսարանի եւ «Ռոչեսթր աստուածաբանական սեմինարիայի» (երկուսն էլ բապտիստական ինստիտուտներ էին) շրջանաւարտ Վոլթեր Ռաուշենբուշը:

«Քրիստոնէութիւն եւ սոցիալական ճգնաժամ» աշխատութիւնը, որը տպագրուել էր 1907 թ., նրան համաժողովրդական ճանաչում բերեց: 1908 թ. դեկտեմբերի 2-ին նա եւ դոկտոր Հարրի Վորդը հիմնադրեցին «Քրիստոսի եկեղեցիների դաշնային խորհուրդը»: Նրանք եկեղեցական սոցիալական շարժման առաջնորդներ էին, շարժում, որը որոշեց հեռանալ քրիստոնէական անհատականացումից (ինդիւիդուալիզմ) դէպի բացայայտ կոլեկտիվիզմ՝ իրենց համար գործիք դարձնելով եկեղեցին: Սոցիալիզմը նրանց առաջին եւ միակ մտահոգութիւնն էր: Բոլոր կեղծ մարգարէների նման, ովքեր դարեր շարունակ ներթափանցել էին քրիստոնէութեան մէջ, նրանք քօղարկուել էին խաբեբայութեան դիմակներով եւ երկրի վրայ միաւորուել «Երկնքի արքայութիւն» ընդհանուր անուանմամբ: Նրանց «արքայութիւնը» ներկայանում էր ոչ իբրեւ հոգեւոր հասարակութիւն, որտեղ տղամարդիկ եւ կանայք ձեւաւորւում էին իբրեւ անհատներ՝ Յիսուս Քրիստոսի՝ Փրկչի հետ հաղորդակցութեան միջոցով, այլ որպէս կոլեկտիւ, սոցիալիստական հասարակութիւն:

1950-ական թուականների վերջերին, Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռի երիտասարդ միաբան Գարեգին վրդ. Սարգսեանը, ենթադրեալ լաւորակ բարձրագոյն աստուածաբանական կրթութիւն ստանալու նպատակով, ուղարկուեց Լոնդոն՝ Օքսֆորդի Աստուածաբանական դպրոցում սովորելու, թէեւ այդ գիտելիքները նրան կարող էր տալ բազմադարեան Հայ եկեղեցին: Օքսֆորդում գիտական աստիճան ստանալուց յետոյ ժամանակի ընթացքում նա դարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, այնուհետեւ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս: Նա դարձաւ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի» (ԵՀԽ) մեծանուն դէմքերից, որը քրիստոնէութեան մէջ թափանցած միւս կեղծ մարգարէների նման յօրինեց Միասնական համաշխարհային եկեղեցին, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կեղծ աստուածների դիմակ, որը քրիստոնէութիւնն ատողներն օգտագործում են դարեր շարունակ:

«Նոր դարաշրջանի» մեր լուսաւորեալ հոգեւոր գործիչները մոռացել են իրական Աստծոյ արքայութեան մասին, որովհետեւ «աստուածային» գիտելիքները ձեռք են բերել աշխարհի վաշխառուներից հովանաւորուող եւ նրանց ազդեցութեան տակ գտ-

նուող հաստատութիւններում: Այդ թունաւորուած հաստատութիւնների պատերի ներսում նրանց դասաւանդուել է աշխարհիկ կարգի մարդասիրութիւն եւ (սոցիալիստական) ազատական աստուածաբանութիւն: Աշխարհիկ մարդասիրութիւնը հակասում է Աստծոյ խօսքին: Յիսուսի խօսքում չեն յիշատակւում մեր աշխարհի փոխյարաբերութիւնները: Յիսուսը խօսում է Աստծոյ հետ հոգեւոր հաղորդակցման մասին: Քրիստոսը համաշխարհային Մարքս չէր, այլ մարդկութեան լուսատու:

ԵՀԽ-ի որդեգրած ուղին դէպի Համաշխարհային կառավարութիւն հայ ժողովրդի համար աղէտալի է դարձել եւ՝ տնտեսական, եւ՝ մշակութային, եւ՝ կրօնական առումներով: Այսօր Ս. Էջմիածինը սատարում է ՀՀ կառավարութեանը՝ սոցիալական ապահովութեան կոդի ներդրման եւ անհատական քարտերի համակարգ մտցնելու նպատակով: Դա ողջ ազգաբնակչութեան վրայ վերահսկողութիւն հաստատելու նպատակով նոյնականացման (իդենտիֆիկացիայ) համակարգի ձեւաւորման սկիզբն է: Դա հող է նախապատրաստում աստիճանաբար (համաշխարհային - խմբ.) բռնակալ պետութեանը յարկեր վճարելու համար: Աստիճանակարգուած յարկեր առաջադրել է նաեւ Կարլ Մարքսը իր «Կոմունիստական մանիֆէստում»: Սա հրաշալի օրինակ է, որը ցոյց է տալիս, թէ ինչպէս է Հայ առաքելական եկեղեցու բարձրագոյն նուիրապետութիւնը կիրառում սոցիալական ազատականութեան աստուածաբանական գաղափարը՝ ներգրաւելով այդ կառավարութեան մէջ: Հայ ազգային եւ Հայ բողոքական (Հայ Առաքելական եւ Հայ Աւետարանական – խմբ.) եկեղեցիների ղեկավարները նոյնպէս թոյլատրում են գաղտնի կազմակերպութիւններին (օրինակ՝ մասոնութիւն – խմբ.) սողոսկել Հայ եկեղեցու մէջ:

2003թ. օգոստոսի 11-ին ԵՀԽ գլխաւոր քարտուղար, ռեւիզիոնիստ, դոկտոր Քոնրադ Ռայզերը հրաւիրեց մասնակցելու «էկումենիկ շարժման բարեփոխումները» («Reconfiguring the Ecumenical Movement») թեմայով համաժողովին, որը տեղի ունեցաւ Անթիլիասում (Լիբանան) նոյեմբերի 17-20-ը: Այն վարում էր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ը՝ դառնալով ԵՀԽ ջատագովներից: Քննարկման ժամանակ յաճախ էր օգտագործւում «յաղթահարուող ինստիտուցիոնալիզմ» արտայայտութիւնը: Այն նշանակում է Հայ

եկեղեցու «հնաոճ» հաստատութիւնների վերացում, իսկ շարժման էկումենիկ (ecumenical) անուանումը՝ համաշխարհային:

Արդեօ՞ք մենք՝ հայերս, ցանկանում ենք, որ Հայ եկեղեցին դառնա համաշխարհային եկեղեցու մի մասնիկը: Եթէ այո, ինչու՞ այդ դէպքում նշեցինք հայոց հինաւուրց «անկախ» եկեղեցու 1700-ամեակը:

Պէտք է վերջապէս ընդունել, որ ԵՀԽ-ն հիմնադրել են հզօրագօր (անհաւատ) վաշխառուները՝ ժամանակի ֆինանսական մագնատները: Արամ Ա կաթողիկոսին պէտք է յայտնի լինէր, որ Քրիստոսը չէր ընդունում, այլ Աստծոյ բացի իսկական Աստծուց: Անհնար է, որ քրիստոնեան միանգամից ծառայի երկու կամ երեք աստուածների (տէրերի): Այսօր մենք տեսնում ենք վերջին յիսուն տարիների մեր եկեղեցու ղեկավարների՝ ԵՀԽ-ի հետ ունեցած փոխյարաբերութիւնների արդիւնքը:

Անհրաժեշտ է յիշել, որ արքեպիսկոպոս Տիրան Ներսոյեանը, երբ բնակւում էր Լոնդոնում, 1942թ. գրել է «Քրիստոնէական մօտեցում կոմունիզմին» աշխատութիւնը:

Պետրոս առաքեալը երբեք չի յաճախել թեմական դպրոցներ, երբեք աստուածաբան չի եղել, այլ հասարակ ձկնորս ու ականջալուր էր Աստծուն եւ ս. Հոգուն: Բայց ո՞վ կը համարձակուի կասկածի տակ առնել նրա քարոզը: Ս. Պետրոսը եւ միւս աշակերտները, ովքեր երեք տարի աշակերտել են Քրիստոսին՝ Ուսուցչին, արհեստաւորներ էին: Եթէ մեր հայ աստուածաբանները փորձեն աշխատել ԵՀԽ-ի ղեկավարների նման մարդկանց հետ՝ ձգտելով փոխել նրանց կամ փորձել նրանց հետ ընդհանուր լեզու գտնել, հաւատացած եղէք, նրանց գործելակերպը կը նմանուի այն բանին, որ առողջ խնձորը նետես նեխած խնձորներով լի տակառի մէջ եւ յուսաս, որ երբեւէ այդ նեխած խնձորները, առողջի ազդեցութեամբ, կ'ապաքինուեն: Հնարաւոր չէ դաշինք կնքել չարիքի հետ. դրա հետեւանքով շատ մեծ բան ես կորցնում:

Վանեցիների ժառանգորդ Ռուսաս Ջ. Ռշտունին, որն Ամերիկայում մեծապէս յարգուած քրիստոնեայ առաջնորդներից է, այս խնդիրը բնորոշել է այսպէս. «Քրիստոնէութեան թշնամիների նպատակը համաշխարհային նոր համակարգի ստեղծումն է՝ առանց Յիսուս Քրիստոսի: Մարդը համոզուած է, որ իր ծրագրաւ-

որման եւ վերահսկողութեան շնորհիւ կարող է ստեղծել լաւ աշխարհակարգ, աւելին, քան արարել է Աստուածային երրորդութիւնը: Ի հարկէ, այն, ինչ մարդն է ստեղծում, տիեզերք չէ, այլ չարին ծառայող մի հզօր եւ դաժան համակարգ»:

Եկեղեցիների համընդհանրացման (գլոբալացման) գաղափարի ընդունմամբ ռեւիզիոնիզմն ապազգայնացնում է միայն Հայ եկեղեցին: Այն արագացնում է պատմականօրէն ամենաազատ, իւրօրինակ եւ հինաւուրց քրիստոնէական եկեղեցու խարխլումն ու ոչնչացումը:

Հայ ժողովուրդը պէտք է պահանջի իր Եկեղեցուց վերադառնալ իր պատմական, ազատ եւ անկախ կարգավիճակին: Հայ եկեղեցին քրիստոնէութեան թշնամիներին սատարելու փոխարէն պարտաւոր է նպատակաուղղել իր ջանքերը մեր ժողովրդի կրօնական եւ հոգեւոր արժէքների զարգացմանը: Այդ նպատակին հասնելու դէպքում միայն աշխարհը կը ճանաչի Հայ եկեղեցու եւ հայ ժողովրդի մեծութիւնը:

Թոյլ տուէք՝ Հայ եկեղեցին վերադառնա իր վաղ քրիստոնէութեան ակունքներին, որը հնարաւորութիւն կը տայ նրան՝ ստանալ Աստծոյ օրհնութիւնը եւ դրանով իսկ կրկին դառնալու ճշմարիտ քրիստոնեաներ եւ ջահակիր՝ աշխարհին համակած քաոսի մէջ:

Բոքա Ռեյթըն, Ֆլորիդա
2004թ. փետրուար

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ

Յարգարժան հայրենակիցներ ամբողջ աշխարհում,

Ամերիկայի Միացեալ Նահանգների հարաւային մասի հայոց եկեղեցու ներկայացուցչութիւնը հանդէս է եկել յայտարարութեամբ, ուր մասնաւորապէս ասւում է. «Հայկական ծագումը պարտադիր պայման չէ Հայ առաքելական սուրբ եկեղեցուն անդամագրուելու համար»: Սա նշանակում է, որ բոլոր հայկական եկեղեցիները պէտք է բաց լինեն աշխարհի բոլոր ազգութիւնների համար: Սա հայոց եկեղեցու պատմական ուղուց հիմնական շեղումն է:

Հայոց եկեղեցին իր սկզբնաւորման օրից ազգային էր: Հայոց եկեղեցին սպասարկել է ոչ թէ աշխարհի բոլոր քրիստոնեայ ազգերին, այլ հայ ժողովրդին բացառապէս: Հայկական ծագում ունեցող բոլորը հանդիսանում էին հայոց առաքելական սուրբ եկեղեցու հետեւորդները: Հայոց եկեղեցին իր 1700-ամեայ ազգային ուղին չի անցել աշխարհի բոլոր ազգութիւնների համար. այն զուտ հայկական բնոյթ ունի եւ սա մեր եկեղեցու հիմնարար սկզբունքներից է: Հայոց եկեղեցու հակահայկականացման այս նենգ քայլի հիմնական պատասխանատուութիւնն ընկած է միաշխարհական հակազգային այնպիսի ուժի վրայ, ինչպիսին է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, որի հիմնական նպատակն է շեղումը քրիստոնեական սկզբունքներից յօգուտ աշխարհիկ հումանիզմի եւ ազատ աստուածապաշտութեան: Այս կառոյցի հայկական մասով հիմնական նպատակը հայոց եկեղեցու ազգային հիմքի թուլացումն է, որն իր հերթին կտանի հայոց ազատագրական պայքարի գործում եկեղեցու ունեցած մեծ դերի անհամեմատ թուլացմանը:

«Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է, այս յատկանիշը իւրայատուկ է հին աւանդոյթ ունեցող բոլոր եկեղեցիներին»,- գրում է Մաղաքիա Օրմանեանը (Арка{Дуга}. Maghakia Ormanian в "армянской Церкви" p.214 Шестая публикация, Монреаль, 2001.):

Գլոբալիստ-միաշխարհական ուժերի նպատակն է՝ նախ եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջոցով թուլացնել, ապա լիովին վերացնել ազգային եկեղեցին:

Հայոց պատմութեան մէջ Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու դէմ թշնամիների դաւերի օրինակները շատ են՝ սկսած Սասանեան Պարսկաստանից, Օսմանեան Թիւրքիայից մինչեւ Սովետներ: Այժմ հայոց եկեղեցին ենթարկւում է աւելի նուրբ ու թաքնուած յարձակման, որը ուղղուած է եկեղեցին ներսից քանդելուն՝ եկեղեցու հիմնական՝ ազգային բնոյթի վերացման միջոցով: Այսպիսով փորձ է արւում հոգեւոր նուաճման ենթարկել ողջ հայութեանը՝ հոգեւոր զինաթափման ճանապարհով: Հայաստանում հայոց եկեղեցու պահապան ձեռքի թուլացմամբ միաշխարհական գաղտնի ուժերը կոտրում են այն հզօր հազարամեայ դաշինքը պետութեան, ազգի եւ եկեղեցու միջեւ. դաշինք, որին պարտական ենք մեր ներկայով:

Սփիւռքում հայոց եկեղեցին այն միակ կառոյցն է, որ հոգեւոր համախմբման է ենթարկում բոլոր հայերին եւ օգնում նրանց պահպանել իրենց ազգային դիմագիծն ու ինքնութիւնը: Հետեւաբար աշխարհի բոլոր շրջաններում հայերը պէտք է պատրաստ լինեն դիմակայելու այն արտաքին ճնշմանը, որն ուղղուած է հայոց եկեղեցու դէմ:

Մենք չպէտք է թոյլ տանք արտաքին մութ ուժերին լուանալու մեր ուղեղները «աշխարհիկ հումանիզմի» եւ «էկումենիզմի» կոչերով, կոչեր, որոնք թաքուն նրբանկատութեամբ ուղղուած են Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու վերջնական փլուզմանը: Քրիստոնէական աշխարհի հետ մեր եկեղեցու ցանկացած երկխօսութեան ժամանակ պէտք է պահպանուեն նրա ինքնուրոյնութեան եւ ազգային սկզբունքները: Մենք ակնկալում ենք, որ մեր եկեղեցական վերնախաւը կը կենտրոնացնի իր ուժերը եկեղեցու հաւատաբանական հիմքերը պահպանելու եւ ամրացնելու համար, դրանով հանդերձ պաշտպանելով ազգին արտաքին հոգեւոր-կրօնական յարձակումներ-ից: Նրանք ընտրուած են որպէս մեր եկեղեցու հազարամեայ աւանդոյթի պահապաններ եւ պէտք է շարունակեն մեր հոգեւոր մեծ հայրե-րի ազգապահպան գործը եւ չենթարկուեն արտաքին հոգեորս ուժերի սուտ մարգարէութիւններին եւ իդէալներին:

Մենք պէտք է ամրացնենք հայոց եկեղեցու ինքնութիւնը, հետեւելով Ս. Վարդանի եւ Ս. Ղեւոնդ Երէցի օրինակին 5-րդ դարում եւ Խրիմեան Հայրիկի օրինակին՝ 20-րդ դարում: Հակազդեցութիւնը պէտք է լինի արագ եւ ամուր, քանի դեռ ուշ չէ:

Մեր կոմիտէն կապեր է հաստատել ԱՄՆ-ում, Կանադայում, Եւրոպայում եւ Հայաստանում, որպէսզի պահպանենք հայոց եկեղեցու դարաւոր ազգային սկզբունքներն ու անկախութիւնը:

Հայոց եկեղեցու իրական հովիւները հայ ժողովուրդն է: Հէնց ժողովուրդը պէտք է պաշտպանի իր ճակատագիրը եւ՝ Հայաստանում, եւ՝ Սփիւռքում:

Աստուած մեզ պահապան:

Հայոց եկեղեցու ազգային ինքնութեան պաշտպանութեան կոմիտէ:
Անդրանիկ Պետրոսեան, Մոնրէալ, Կանադա
Արտաւազդ Աւագեան, Ֆլորիդա, ԱՄՆ
Մայիս 2001թ.,

Արտաւազդ Աւագեան

Հայաստանը իր ազգի եւ պետականութեան պաշտպան

ARDAVAST AVAKIAN

ARMENIA IN DEFENSE OF ITS STATEHOOD AND THE RACE

Էջադրումը եւ շապիկի ձեւաւորումը
Արամայիս Համբարձումեանի

Արտավազդ Ավագյան

Արտաւազդ Աւագեանի հայրը Խարբերդից Ամերիկա է գաղթել 1892թ.-ին: Մայրը եւս Խարբերդից էր՝ Մեզիրէ գիւղից: Նրանց առաջնեկը՝ Զաւէնը, ծնուել է 1911թ.-ին, իսկ Արտաւազդը՝ 1917թ.-ի դեկտեմբերի 20-ին՝ Դեթրոյթում:

Ստանալով տեխնիկական բարձրագոյն կրթութիւն, աւելի քան 50 տարի գեղազարդող է աշխատել այնպիսի հանրայայտ աւտոմոբիլաշինական ընկերութիւններում, ինչպիսիք են Ֆորդը, Ջեներալ Մոթորսը, Քրայսլերը:

Նա մշտապէս գործուն մասնակցութիւն է ունեցել տեղի հայկական համայնքի գործերին՝ երգելով հայկական եկեղեցու երգչախմբում, ըստ ամենայնի օժանդակելով համայնքի հասարակական գործունէութեանը: Դեռեւս վաղ տարիքից նա մեծ հետաքրքրութեամբ ուսումնասիրել է Հայոց պատմութիւն, հետեւել Հայաստանի քաղաքական դէպքերի զարգացումներին: Սակայն իր քաղաքական հայեացքները ազգայնացել են, երբ 1933թ.-ին տեսել է Գարեգին Նժդեհին, լսել նրա հրաշունչ խօսքը եւ նրանից ստանալով հայրենասիրական անմար լիցքեր, անդամագրուել է «Ցեղակրօն ուխտերին»:

Շատ է զբաղուել ընթերցանութեամբ, յատկապէս խորութեամբ է ուսումնասիրել պատմութիւն, տնտեսագիտութիւն եւ քաղաքագիտութիւն:

Ունի երեք դուստր, տիկնոջ՝ Շիրլիի հետ բնակւում է Ֆլորիդա նահանգի Բոքայ Ռեյթըն քաղաքում: ԱՄՆ եւ հայաստանեան մամուլում պարբերաբար հանդէս է գալիս քաղաքագիտական յօդուածներով, որոնց մի մասը ներկայացնում ենք ձեր ուշադրութեանը: